

**ՆԿ ՓԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՆԱՅՈՑ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՆԱՐՅԵՐ**

16



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF HISTORY

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ
(ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ)

THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA
(A COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES)

ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ
(СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ)

16

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇԻԱՆ
ՄԱՏԵՆԱԾԱՐ



ARCH. MESROB ASHIAN
BOOK SERIES

133

133

ԵՐԵՎԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
2015

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա.Ա. Մելքոնյան (նախագահ), ՀՀ ԳԱԱ
թղթակից անդամ Ա.Ա. Խառատյան, պ.գ.դ. Է.Լ. Դանիելյան, պ.գ.դ.
Հ.Մ. Հարությունյան, պ.գ.թ. Կ.Հ. Խաչատրյան (նախագահի
տեղակալ), պ.գ.թ. Ա.Ի. Շահնազարյան, պ.գ.թ. Հ.Ղ. Մուրադյան,
պ.գ.թ. Հ.Կ. Սուրիասյան:

Редакционная коллегия

Академик НАН РА А.А. Мелконян (председатель), член-кор.
НАН РА А.А. Харатян, д.и.н. Э.Л. Даниелян, д.и.н. Г.М. Арутюнян,
к.и.н. К.Г. Хачатрян (заместитель председателя), к.и.н. А.И.
Шахназарян, к.и.н. А.Г. Мурадян, к.и.н. А.К. Сукиасян.

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» տարե-
գրքի հերթական 16-րդ հատորում գետեղված աշխատությունները սկզբնաղբ-
յուրների, մամուլի հրապարակումների, հայրենի և համաշխարհային պատմա-
գիտական գրականության լայն հենքի վրա լույս են սփռում Հայոց պատմության
առանձին հիմնահարցերի վրա:

Տարեգրքում գետեղված են նաև ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆի-
նանսական օժանդակությամբ տեղի ունեցած ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտու-
տի երիտասարդ գիտաշխատողների XXXVI գիտական նստաշրջանի (3-5 հուլի-
սի 2015 թ., Աղվերան) զեկուցումները:

Մ.թ.ա. VIII Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ – VII Դ. ԱՌԱՋԻՆ
 ԿԵՍԻՆ ԳԱՀԱԿԱԼԱԾ ՎԱՆԻ ԱՐՔԱՆԵՐԻ
 ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՉ

Վանի (Արարատյան) թագավորության պատմության խնդիրների ուսումնասիրության ծիրում իր ուրույն տեղն ունի մ.թ.ա. VIII դարի երկրորդ կեսի և VII դարի առաջին կեսի բիայնական արքաների հաջորդականության ժամանակագրությունը: Պատմագրության մեջ, նախկինում եղած կարծիքի համաձայն, Վանի թագավորության արքաների գահակալության ժամանակագրությունը հասցվում է մինչև մարա-յուդիական պատերազմի սյարիները՝ մ.թ.ա 590-585 թթ., աղերսելով մարերի կողմից Վանի թագավորության նվաճման հետ¹: Այնուամենայնիվ, մի շարք հարցեր՝ հատկապես թագավորության վերջին արքաների գահակալության ժամանակաշրջանի վերաբերյալ շարունակում են մնալ վիճարկելի: Մասնավորապես խնդրահարույց են Ռուսա II-ին ենթադրաբար հաջորդած՝ Արարատյան (Բիայնական) թագավորության արձանագրություններից հայտնի Սարդուրի III-ի, Սարդուրի IV-ի, Էրիմենայի, Ռուսա III-ի և Ռուսա IV-ի գահակալության և ժամանակագրության վերաբերյալ մեկնությունները²:

¹ Steu Lehmann-Haupt C. F., Armenien einst und jetzt, II, 1, Berlin-Leipzig, 1926, S. 25. Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 195: Плотровский Б., Ванское царство (Урарту), Москва, 1959, с. 42.: Арутюнян Н. В., Биайнили (Урарту), Ереван, 1970, с. 334:

² Հետազոտողների մեծ մասը հակված էր նման ժամանակագրական հաջորդականության անվան և հայրանվան նույնականացման հիման վրա: Ի. Դյակոնովը Ռուսա II-ից հետո իշխած արքաների հաջորդականությունը վերականգնում էր այլ կերպ. Ռուսա II-ն ունեցել է երկու որդի՝ Ռուսա և Սարդուրի, որոնցից գահակալել է Սարդուրին, նրան հաջորդել է Էրիմենան՝ Ռուսա II-ի *եղբայրը կամ հորեղբայրը*, Էրիմենային հաջորդել է որդին՝ Ռուսա III-ը, իսկ թագավորության վերջին գահակալը եղել է Սարդուրի III-ի որդին:

Վան քաղաքի մերձակա Հավաձոր բնակավայրից 2006 թ. հայտնաբերվեց մի նոր արձանագրություն՝ կազմված *Էրիմենայի որդի Ռուսայի* անունով³, որում Ռուսան ներկայանում է որպես «Ռուսայի ծով» կոչվող ջրամբարի, ջրանցքի, ինչպես նաև Ռուսախինիլի քաղաքի կառուցող. «[(i)]-u^m ru-sa-ḫi-ni-li šī-du-u-[(i)]»⁴:

Մինչ այդ Ռուսախինիլի քաղաքի մասին եղած առաջին հիշատակությունը վերագրվում էր Ռուսա II-ին. արքան «Ռուսայի Փոքր քաղաքից» գտնված արձանագրությունում փաստում էր, որ ինքն է Ռուսախինիլին դարձրել արքայական նստավայր⁵: Այս երկու տեղեկությունները ժամանակագրական առումով կրում են հակասական բնույթ, եթե Էրիմենայի որդի Ռուսան է Ռուսախինիլի քաղաքի իրական հիմնադիրը, և մեզ հայտնի Ռուսա II-ն է այն դարձրել արքայանիստ քաղաք, ապա Ռուսա Էրիմենաորդու գահակալության ժամանակաշրջանը հարկ է թվագրել Ռուսա II-ից վաղ:

Սարդուրի II-ը մ.թ.ա. 743 թ. պարտություն կրեց ասորիքյան Արպադ քաղաքի մատույցներում⁶, որով պետք է պայմանավորված լինի մ.թ.ա. 740-ական թվականների վերջից Վանի թագավորության պատմության վերաբերյալ նյութերի գրեթե բացակայությունը, այդ իսկ պատճառով՝ վիճարկելի է համարվում նաև Սարդուրի II-ի ժառանգորդի խնդիրը: Սարդուրի II-ի անունը վերջին անգամ հիշատակվում է ասորեստանյան արքա Թիգլաթպալասար III-ի (մ.թ.ա. 745-727 թթ.) արձանագրության մեջ՝ մ.թ.ա. 735

Սարդուրի IV-ը: Հեղինակը արքայացանկում չի ներառել Ռուսայի որդի Ռուսային նրան չհամարելով գահակալ (մանրամասն տե՛ս Дьяконов И. М., Урартские письма и документы, М.-Л., 1963, с. 32-34):

³ Տե՛ս Salvini M., *Corpus dei testi urartei*, Roma, 2008, A14-2:

⁴ Նույն տեղում:

⁵ Տե՛ս Арутюнян Н. В., *Корпус урартских клинообразных надписей* (այսուհետև՝ КУКН), Ереван, 2001, N 412 a:

⁶ Տե՛ս Арутюнян Н. В., *Биайнили (Урарту)*, с. 266:

թ.⁷: Սարգուրի II-ի՝ 735թ. հիշատակությունից հետո, Վանի թագավորության արքաների գահակալության ժամանակագրության շուրջ առաջարկվել են մի քանի տարբերակներ՝ պայմանավորված Էրիմենայի որդի Ռուսայի գահակալության ժամանակաշրջանի թվագրությամբ:

Արարատյան թագավորության արձանագրություններից հայտնի հաջորդ արքան, ով կրում է Սարդուրորդի անվանումն իր արձանագրություններում՝ մեզ հայտնի Ռուսա I-ն է⁸: Ասորեստանյան արձանագրություններում՝ Սարգոն II-ի գահակալության (մ.թ.ա. 722/1-705 թթ.) 6-րդ տարվա եղելություններում, հիշատակվում է Ուրսա (Ռուսա) անունով Վանի թագավորության արքան⁹:

Դեռևս 20-րդ դարասկզբին ականավոր արևելագետներ Կ.Ֆ. Լեհմանն-Հաուպտը և Ֆ. Թյուրո-Դանժենը կարծում էին, որ Սարդուրի II-ի գահակալության վերջում՝ ասորեստանյան արշավանքից հետո, ներքին անկայուն իրավիճակով պայմանավորված, գահն անցել է Ռուսա I-ին, ով Սարդուրիի անմիջական ժառանգր չի եղել: Կ.Ֆ. Լեհմանն-Հաուպտը կարծում էր, որ Ռուսան սերում է Իշպուինի որդի Սարդուրից¹⁰, որի արձանի Մուծաձիրում գտնվելու մասին վկայում է Սարգոն II-ը¹¹: Կ.Ֆ. Լեհմանն-Հաուպտը նոր մայրաքաղաք Ռուսաիսինիլիի կառուցումը վերագրում էր սույն Ռուսային: Ֆ. Թյուրո-Դանժենը՝ Սարդուրի II-ին հաջորդած արքա համարում էր Էրիմենայի որդու Ռուսային՝ ի դեմս նրա նոր

⁷ Տե՛ս Дьяконов И. М., Ассиро-вавилонские источники по истории Урарту (այսուհետև՝ АВИИУ), «Вестник древней истории», Москва, 1951, N 1, էջ 42:

⁸ Տե՛ս КУКН, 387, 388, 389:

⁹ Տե՛ս АВИИУ, 46 (52):

¹⁰ Տե՛ս Lehmann-Haupt C. F., Armenien einst und jetzt, II, 2, Berlin-Leipzig, 1931, S. 461, 685:

¹¹ Տե՛ս АВИИУ, 49 (367):

արքայատոհմի հիմնադիր տեսնելով¹²: Հեղինակները հենվում էին Սարգոն II-ի այն վկայության վրա, որ Մուծաձիբի տաճարում գտնվել է Ռուսայի արձանը, որի վրա նշված է եղել, որ Ռուսա արքան նվաճել է Վանի թագավորությունը¹³: Հիշյալ վկայություններից կարելի է միայն հստակ փաստել, որ նոր գահ բարձրացած Ռուսա I-ը ստիպված է եղել կտրուկ միջոցներ ձեռնարկելու. «Կենքի միջոցով վերամիավորելով մասնատված երկիրը»¹⁴:

Հետազոտողներից Մ. Ռոաֆը, նորագույն տվյալների հիման վրա, հետևելով Ֆ. Թյուրո-Դանժենի տեսակետին, նույնպես գտնում է, որ Էրիմենայի որդի Ռուսան գահակալել է Սարգոնի II-ից հետո և նա է եղել Սարգոն II-ի հակառակորդը, իսկ մեզ հայտնի Ռուսա Սարգուրորդին հաջորդել է նրան և կառավարել մ.թ.ա. 714/3-709 թթ.¹⁵: Սարգոն II-ը, իր հակառակորդ Ռուսային (Ռուսա Սարգուրորդուն) «նսեմացնելու համար», բառեր չի խնայում, սակայն արձանագրության մեջ ոչ մի խոսք չկա այն մասին, որ վերջինս գահին տիրացել է անօրինական եղանակով¹⁶:

Էրիմենայի որդի Ռուսայի գահակալության ժամանակաշրջանը Ու. Ջայդլը թվագրում է մ.թ.ա. 714/3-709 թթ. ընկած

¹² Տե՛ս Thureau-Dangin F., Une relation de la huitième campagne de Sargon. Paris, 1912, p. XIX: Ֆ. Թյուրո-Դանժենն, իր տեսակետը փաստարկելու համար, նաև վկայակոչում էր այն հանգամանքը, որ Սարգոն II-ի 8-րդ տարվա արշավանքի նկարագրության մեջ, Արմարիլի մարզում հիշատակվում է Ռուսայի հայրենական քաղաք Արբուն և Սարգուրի քաղաք Ռեհարը, որի շրջակայքում ապրում էին նրա եղբայրները (տե՛ս АВИИУ, 49-269): Ըստ հեղինակի՝ Ռուսայի հայրական քաղաքը հակադիր է Սարգուրի քաղաքին (մանրամասն տե՛ս Thureau-Dangin F., նշվ. աշխ., էջ IX): Հարկ է նաև նշել, որ Ֆ. Թյուրո-Դանժենին անհայտ էին այն արձանագրությունները, որոնցում Ռուսան իրեն կոչում է Սարգուրորդի:

¹³ Տե՛ս АВИИУ, 49 (367):

¹⁴ Պետրոսյան Ս., Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, Երևան, 2006, էջ 202:

¹⁵ Տե՛ս Roaf M., Thureau-Dangin, Lehmann-Haupt, Rusa Sardurihi and Rusa Erimenahi, Aramazd, vol. V., Erevan, 2010, p. 78:

¹⁶ Տե՛ս Ադունց Ն., նշվ. աշխ., էջ 191-192:

ժամանակահատվածում, կամ VII դարի առաջին քառորդում: Նման թվագրման համար՝ հեղինակը հիմք է ընդունում նշված արձանագրության կրկնօրինակում Ռուսախինիլի քաղաքի հիշատակությունը, առանց որևէ տարբերակիչ լեռան՝ Կիլիքանի կամ Էիդուրու, ինչը ըստ հեղինակի փաստարկ է, որ երկրորդ համանուն քաղաք գոյություն չի ունեցել¹⁷: Հեղինակն իր տեսակետը փաստարկում է նաև Արգիշտի II-ի և Էրիմենայի որդի Ռուսայի արձանագրությունների և բրոնզե վահանների վրա առյուծների պատկերագրության ոճաբանական նմանությամբ:

Ռուսա I-ի՝ մ.թ.ա. 714 թ. կրած պարտությունից և մահվանից հետո, տևական ժամանակահատված արձանագրությունները «լռում են»: Էրիմենայի որդի Ռուսայի գահակալությունը Սարգոն II-ի արշավանքից հետո, մինչև մ.թ.ա. 709 թ. ընկած կարճատև ժամանակահատվածը թվագրելը¹⁸, Մ.Սալվինին համարում է չհիմնավորված: Քանի որ արքային, ասորեստանյան արշավանքից հետո, նման շինարարական գործունեություն ծավալելու համար տևական ժամանակահատված էր հարկավոր¹⁹: Հետևաբար, անհրաժեշտ է որոշ վերապահումով մոտենալ այն վկայությանը, որ Ռուսախինիլի քաղաքի կառուցումն սկսվել է հենց Էրիմենայի որդու Ռուսայի օրոք:

Ասարհադոնի (մ.թ.ա. 681-669թթ.) արձանագրությունում մ.թ.ա. 673/672 թ. Վանի թագավորությունում, Արմե-Շուպրիայի իրադարձությունների հետ կապված, հիշատակվում է Ռուսա

¹⁷ Sè u Seidl U., Wer gründete Rusaḫinili/Toprakkale?, *Aramazd*, vol. II, Erevan, 2007, S. 140-141:

¹⁸ Սարգոն II-ի արձանագրությունում՝ մ.թ.ա. 709 թ. ներքո, հիշատակվում է Վանի թագավորության արքա Արգիշտին, ով իր թողած արձանագրություններում, իրեն հիշատակում է որպես Ռուսայի որդի (տես *ΛΒΙΙΙΥ*, 54 (112), *ΚΥΚΗ*, 406, 407):

¹⁹ Sè u Salvini M., Argisti, Rusa. Erimena, Rusa und die Löwenschwänze: Eine urartäische Palastgeschichte des VII. Jh. v. Chr., *Aramazd*, vol. II, Erevan, 2007, S. 158:

անունով գահակալ²⁰: Սույն արքան, իր թողած արձանագրություններում, հիշատակում է իրեն որպես Արգիշտիի որդի և նշում է, որ ժառանգել է հայրական գահը²¹: Ասորեստանյան աղբյուրներում Ռուսա անունով արքա հանդիպում է ևս մեկ անգամ՝ մ.թ.ա. 653/652 թ., երբ Ասորեստանը ջախջախել էր Էլամը և ընդունել Ռուսայի դեսպաններին²²: Ռուսա II-ի գահակալման ժամանակաշրջանն ընդունված էր պայմանականորեն թվագրելու մ.թ.ա. 685-645 թթ.: Ռուսա II-ը, Վանի թագավորության արքաներից միակն էր, որի գահակալման ժամանակահատվածն ընդգրկում է նման երկարատև շրջան²³:

Մ. Սալվինին, հետևելով Ֆ. Քյոնիգին գտնում է, որ Նինվեում էին Վանի թագավորության նոր գահակալ Էրիմենայի որդի Ռուսա III-ի դեսպանները²⁴: Մ. Սալվինին Ռուսախինիյի քաղաքի կառուցող համարում է Ռուսա II-ին, իսկ վերակառուցող՝ Էրիմենայի որդի Ռուսային: Ռուսախինիյի քաղաքի հիշատակման հանգամանքն արձանագրության մեջ, առանց տարբերակիչ լեռան, հետազոտողը բացատրում է այն իրողությամբ, որ մյուս համանուն քաղաքն այդ շրջանում արդեն կործանված էր²⁵:

Բիայնագիտության վիճահարույց խնդիրներից մեկը շարունակում է մնալ Ռուսայի հայր Էրիմենայի անձի պարզաբանումը²⁶: Մինչ օրս, Էրիմենային վերագրվող, միակ արձանագրություն-

²⁰ ՏԵՍ ԱՅԻԿԿ, 67:

²¹ ՏԵՍ ԿՅԿԻ, 424:

²² ՏԵՍ ԱՅԻԿԿ, 76:

²³ Ֆ. Քյոնիգը տարբերակում է ասորեստանյան արձանագրություններում մ.թ.ա. 673/672 թ. և 653/652 թ. նշվող Ռուսա արքաներին որպես Ռուսա II և Էրիմենայի որդի Ռուսա (մանրամասն տե՛ս König F. W., Handbuch der chaldischen Inschriften, I, Craz, 1955, S. 1):

²⁴ ՏԵՍ Salvini M., Geschichte und Kultur der Urartäer, Darmstadt, 1995, S. 110:

²⁵ ՏԵՍ Salvini M., Argisti, Rusa, Erimena, Rusa und Löwenschwärze, S. 159:

²⁶ ՏԵՍ Մուշեղյան Ա., «Արամ» անունը հայ ժողովրդի երկրորդ ցեղանուն, «Պատմա-բանասիրական հանդես», N 1, Երևան, 2007, էջ 233:

նր (կապե նամակի վրա կնիք), որը հետազոտողներին հիմք է տվել նրան Վանի թագավորության գահակալ համարելու, գտնվել է Ռուսա II-ի կառուցած Թեյշեբաինիից (Կարմիր բլուր)²⁷: Սակայն, ինչպես Ա. Մովսիսյանն է նշում, Էրիմենայի թագավորելու միակ ապացույցն, որպիսին համարվում է նշված արձանագրությունը, իրականում գոյություն չունի, դրանով իսկ հետազոտողը հորինված է դիտարկել Էրիմենային վերագրվող գահակալության ժամկետները (մինչև 20-25 տարի)²⁸: Կնիքների գործածումը Վանի թագավորությունում, կիրառությունն գտավ Ռուսա II-ի օրոք, իսկ վերոհիշյալ արձանագրության կնիքն էլ իր ոճով արքայազնի է²⁹: Սույն փաստարկները վկայում են, որ Էրիմենայի որդի Ռուսան եղել է Ռուսա II-ի ժամանակակիցը³⁰: Մինչ իր գահակալությունը Էրիմենայի որդի Ռուսան (III), դատելով արձանագրություններից, որոնցում նա չի կրում արքայական տիտղոսաշար, վարչական կարևոր դիրք է զբաղեցրել թագավորության հս.-արլ. երկրամասերում որպես իշխող հարստության ներկայացուցիչ³¹:

Ռուսա II-ից հետո, դեռևս մեզ անհայտ հանգամանքներում³², հայրական գահը չեն ժառանգել նրա որդիները՝ Սարդու-

²⁷ Տե՛ս Дьяконов И. М., Урартские письма и документы, с. 28:

²⁸ Տե՛ս Մովսիսյան Ա., Կարևոր մի ուղղում (Կարմիր բլուրի սեպագիր սայիկներից մեկի առնչությամբ), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XIX, Երևան, 2000, էջ 138: Հեղինակը նաև գտնում է, որ սույն արձանագրությունը նույնպես պատկանում է Էրիմենայի որդի Ռուսային և այն Էրիմենային վերագրելը հիմնավոր չէ (տե՛ս նույն տեղում):

²⁹ Տե՛ս Hellwag U., „Sohn der Königin“¹⁰ A.NIN-li oder „Wasserwirtschaftsminister“¹⁰ A.ZUM-li? Überlegungen zu einem „fragwürdigen“ Amt am urartäischen Königshof, „Akkadica“ 117, 2000, S. 21, 29: Kroll S., Urartus Untergang in anderer Sicht, IstMitt, 34, 1984, S. 162:

³⁰ Տե՛ս Медведская И.Н., Древний Иран накануне империи (IX—VI вв. до н. э.). История Мидийского царства, Санкт-Петербург, 2010, с. 150:

³¹ Տե՛ս КУКН, 443, 444:

³² 1970-ական թվականներին «Ռուսայի Փոքր բաղաբում» սկսված պեղումները հնարավորություն ընձեռեցին վերանայելու Վանի թագավորության պատմության վերջին շրջանի մասին եղած պատկերացումները: Պեղումների

րին և Ռուսան: Էրիմենայի որդու Ռուսայի գահակալության առավել հավանական տարբերակ վերոնշյալներից կարելի է համարել Ռուսա II-ից հետո մոտավորապես մ.թա. 653-646/642 թթ.³³: Մ.թ.ա. 646/642 թ. ասորեստանյան արձանագրություններում նշվում է Վանի թագավորության արքայի Իշտարդուրիի (Սարդուրի) անունը³⁴: Վանի թագավորության սեպագիր արձանագրություններից մեզ հայտնի են 2 Սարդուրիներ՝ Ռուսաորդի և Սարդուրորդի: Ռուսայի որդի Սարդուրին, Կարմիր բլուրից գտնված արձանագրություններում, չի կրում արքայական որևէ կոչում և նրան Վանի թագավորության գահակալ համարելու դեռևս որևէ փաստ առկա չէ³⁵: Սարդուրիի որդի Սարդուրին կրում է Վանի թագավորության արքաներին բնորոշ «Տերը Տուպա քաղաքի» տիտղոսը³⁶: Կարմիր բլուրի արձանագրություններից հայտնի Ռուսայի որդի Ռուսային, Ն. Հարությունյանը համարում էր Վանի թագավորության վերջին արքա, որի գահակալության օրոք կործանվել է Թեյշեֆահինին³⁷: Թե՛ մարական տիրապետության հաստատման և թե՛ դրա հետևանքով նրան Վանի թագավորության վերջին արքա համարելու բավարար փաստեր

արդյունքում պարզվեց, որ քաղաքը կառուցվել և կործանվել է Ռուսա II-ի կառավարման օրոք, քանզի գտածոները թվագրվում էին միայն նրա կառավարման ժամանակաշրջանով (մանրամասն տե՛ս Kroll S., Bastam II, Ausgrabungen in den urartäischen Anlagen 1977-1978. Berlin, 1988, S. 78, 173): Այս հանգամանքը հնարավորություն ընձեռեց ենթադրելու, որ Ռուսա II-ի հիմնադրած Թեյշեֆահինին ու Ռուսախինիյի Էիդուրուկան Այանիսը, նույնպես կործանվել են «Ռուսայի Փորը քաղաքի» հետ միաժամանակ, քաղաքների կործանման շուրջ առկան են տարբեր տեսակետներ (տե՛ս Медведская И. Н., նշվ. աշխ., էջ 144, 146):

³³ Տե՛ս Hellwag U., Der Niedergang Urartus, "Bianili-Urartu", Peeters, 2012, S. 231:

³⁴ Տե՛ս АВИИУ, 72:

³⁵ Տե՛ս КУКН, 430, 431: Kroll S., Urartus Untergang in anderer Sicht, S.169:

³⁶ Տե՛ս КУКН, 428:

³⁷ Տե՛ս Арутюнян Н. В., Некоторые вопросы последнего периода истории Урарту. "Древний Восток", Ереван, 1976, с.112:

նույնպես առկա չեն³⁸: Վանի թագավորությունում 646/642 թ. Սարգուրիի հիշատակությունից հետո արձանագրությունները «լուրմ են», և այլ արքաների մասին վկայություններ դեռևս առկա չեն: Ենթադրելի է, որ Սարգուրիի որդի Սարգուրին եղել է Ռուսա II-ի ժառանգներից կամ՝ ազգականներից³⁹:

Ռուսա II-ի արձանագրությունում⁴⁰ հիշատակվող «Šaga-DUMU-ի հետ է Հ. Կարազյոզյանը նույնացրել Պատմահոր հիշատակած Սկայորդի Հայկազունուն՝ Հայոց Պարույր թագավորի հորը⁴¹: Հայոց պետականության պահպանման և զարգացման համար, մ.թ.ա. VII դ. քաղաքական իրադարձությունների առումով, կարևոր էր Սկայորդի Հայկազունու և հատկապես նրա որդու Պարույր Հայկազունու ներդրումը, Ասորեստանի դեմ Մարաստանի և Բաբելոնի հետ միասին մղած պայքարում, որն ավարտ-

³⁸ St u Hellwag U., Der Niedergang Urartus, S. 231: St u Kroll S., "Medes and Persians in Transcaucasia: archaeological horizons in northwestern-Iran and Transcaucasia", in: G.B. Lanfranchi, M. Roaf, R. Rollinger, Continuity of Empire (?). Assyria, Media, Persia, Padova, 2003, p. 285:

³⁹ St u Kroll S., Urartus Untergang in anderer Sicht, S.165:

⁴⁰ St u KYKH, 412:

⁴¹ St u Կարազեոզեան Յ., Սեպագիր տեղանուններ, Երևան, 1988, էջ 273-276: Հեղինակը, մինչ այդ առաջարկված տառադարձությունները ու թարգմանությունները՝ Սազաշթարա, Շազաթա՝րա, Շազա, համարում է անբավարար (տե՛ս Меликишвили Г.А., Урартские клинообразные надписи, Москва, 1960, N 286, Дьяконов И. М., Урартские письма и документы, N12, König F. W., նշվ. աշխ., N 131) և նրանց հիման վրա կատարված եզրակացությունները՝ անհիմն: Սակայն, միևնույն ժամանակ Մ.Սալվինին արձանագրության այսին հատվածը տառադարձում է որպես՝ Շազապուտարա (Salvini M., Argisti, Rusa, Erimena, Rusa und Löwenschwänze, S. 150): Ա. Մուշեղյանը, նշելով, որ Մովսես Խորենացին Պարույրին հիշատակելով «սկայորդի» հասկանում է «հսկայի որդի», որի նախասահայր Հայկը ինքը ևս հսկա էր և աստվածներից սերած հսկաների ցեղից, կարծր է հայտնել որ Šaga-ն ո՛չ հատուկ անուն է և ո՛չ առավել ևս «սակ» կամ «սկյութ», այլ նշանակում է «հսկա», զրաբար «սկայ - Ռուսան հսկա»: Նա այսպիսի եզրակացության է եկել սեփական անձի և երկրի հզորությունն արտահայտող ասորեստանյան DAN.NU գաղափարագրը և վանյան ŠAGA-ն համարժեք համարելով (մանրամասն տե՛ս Մուշեղյան Ա., Մովսես Խորենացու դարը, Երևան, 2007, էջ 163-165):

վեց Նինվեի անկմամբ մ.թ.ա. 612 թ. և Պարույր Հայկազունու Հայոց թագավոր ճանաչմամբ⁴²:

VAHE SARGSYAN

TO THE PROBLEM OF THE SUCCESSION OF THE BIAINIAN
KINGS IN THE SECOND HALF OF THE 8th – THE FIRST HALF
OF THE 7th CENTURY B.C.

SUMMARY

In the sphere of research of the problems of the history of the Van (Ararat-Urartu) Kingdom is specified the chronology of the succession of the Biainian kings. According to previously spread opinion, in historiography the chronology of the last period of the enthronement of the kings of the Kingdom of Van, as a subject of studies, goes to the years of the war between Media and Lydia, i.e. 590-585 B.C., period of, as had been supposed, with the conquering of the Kingdom of Van by the Medes. However, at present dating 590-580 B.C as the end of chronicle of enthronement period of the kings of the Kingdom of Van contradicts the updated data of archaeological and cuneiform materials. In inscriptions evidence of ruling royal dynasty ends in the second half of the 7th century B.C. For maintenance and development of the Armenian state, in the aspect of political events of the 7th century B.C., it was important participation of Skayordi Haykazuni and particularly, his son, Paruyr Haykazuni, in the struggle against Assyria together with Media and Babylon which ended with falling of Nineveh in 612 B.C. and recognition of Paruyr Haykazuni as the Armenian king.

⁴² Տե՛ս Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1991, էջ 65:

О ВОПРОСЕ ПОСЛЕДОВАТЕЛЬНОСТИ ЦАРЕЙ
ВАНСКОГО ЦАРСТВА, ПРАВЯЩИХ ВО ВТОРОЙ
ПОЛОВИНЕ VIII В. – ПЕРВОЙ ПОЛОВИНЕ VII В. Д.Н.Э.

РЕЗЮМЕ

Хронология последовательности царей Биайнили, правивших во второй половине VIII в. и первой половине VII в. д.н.э., имеет свое особое место в рамках исследования задач истории Ванского (Арарат-Урарту) царства. В историографии, согласно ранее имеющимся мнениям, хронология конца периода царствования царей Ванского царства датируется периодом войны между Мидией и Лидией - 590-585 гг. д.н.э., и совпадает, как предполагают, с завоеванием мидийцами Ванского царства. Однако, в настоящее время, датирование конца эпохи царствования царей Ванского царства к 590-580 гг. д.н.э, противоречит новейшим данным археологических и клинописных материалов. В клинописях, свидетельства, относительно правящей царской династии, заканчиваются во второй половине VII в. д.н.э. Для сохранения и дальнейшего развития Армянского государства, в аспекте политических событий VII в. д.н.э., было важным участие Скайорди Айказуни и особенно его сына Паруйра Айказуни, в борьбе Мидии и Вавелона против Ассирии, которая закончилась падением Ниневии в 612 г. д.н.э. и признанием Паруйра Айказуни Армянским царем.

ЭДУАРД ДАНИЕЛЯН, АЛИСА ДУМИКЯН

НЕКОТОРЫЕ АНГЛОЯЗЫЧНЫЕ ВОСТОКОВЕДЧЕСКИЕ
ТРУДЫ, ФРАНЦУЗСКИЙ ПЕРЕВОД «АШХАРАЦУЙЦА»,
НЕОПУБЛИКОВАННЫЙ СБОРНИК “НАДПИСИ
ГАНДЗАСАРА И ЂАВОЦПТУКА” ПРОТИВ
АЗЕРБАЙДЖАНСКИХ ФАЛЬСИФИКАЦИЙ

В мировой науке о достижениях принято говорить в связи с новыми открытиями. В противоположность этому, в современном Азербайджане, с каждым новым витком фальсификаций истории и исторической географии, все более выявляется несостоятельность воинствующего невежества¹. За неимением собственной истории и, следовательно, источниковедческой базы, новоиспеченные азербайджанские псевдо-исследователи на этот раз объектом своих фальсификаций избрали некоторые труды англоязычной востоковедческой литературы, “Ашхарацуйц” в переводе Сен-Мартена с древнеармянского на французский и неопубликованный сборник И.А.Орбели “Надписи Гандзасара и ЂАвоцптука”.

В частности, азербайджанским фальсификаторам не дает покоя интерес проявляемый английскими и французскими учеными к истории Армении. Пытаясь подвести «основы» под свои произвольные трактовки, азербайджанские псевдо-исследователи, в частности, оспаривают точки зрения зарубежных авторов по

¹ Развернутую критику см.: Даниелян Э., Историческая справедливость против воинствующего мракобесия. – “21-й век”, N 3, 2011, с. 90-110, Danielyan E., Turkish-Azerbaijani falsifications of the Armenian toponyms as an indication of the genocidal policy. - Բանբեր հայազգիտություն, N 1, 2013, pp. 159-179, Danielyan E., Historical Truth against Turkish Falsifications in Information Warfare. - «21st CENTURY», № 1, 2014, pp. 105-131 и др..

истории Ирана. Например, Н. Гезалова, сетуя по поводу отсутствия “комплексного монографического исследования” проблем “по истории азербайджанских ханств”, будто-бы, “существовавших в период со второй половины XVIII до первой трети XIX веков”, пишет: “В англоязычной историографии прошлое Азербайджана описывается в контексте истории Ирана”². Взяв на себя непомерную ношу, и, вступив на стезию критики англоязычной историографии, она заключает: “Англоязычных трудов по иранской истории много, но не все они равноценны и объективны с точки зрения освещения истории Азербайджана”³.

Но можно ли требовать от представителей англоязычной историографии результатов по несуществующей истории “Азербайджана” и “азербайджанских ханств”⁴? Ведь общеизвестно, что до середины 1918г. не было территории с названием “Азербайджан” вне пределов Атропатены-Атрпатакана на северо-западе Иранского нагорья⁵.

² Гезалова Н., Карабахское и Эриванское ханства в англоязычной историографии. – Источники, 2009, N 6 (42), с. 44, <http://irs-az.com/new/pdf/100331140624.pdf>

³ Там же.

⁴ Н. Гезалова представляет поколение азербайджанских фальсификаторов, включивших в свой клеветнический арсенал нападки на некоторые труды представителей западной историографии, тем самым, продолжая мараение истории своими старшими коллегами, которые занимаются фальсификацией истории армянских княжеств (меликства), представляя их, якобы, “албанскими образованиями”. Критику подобных измышлений, в частности, публикаций О. Эфендиева (Еще раз о так называемых. – «Гарабагских меликствах», «Гарабаг: Курекчай - 200», Баку, 2005, с. 85-90.) и Г. Мамедова (К вопросу о христианских меликах и меликствах Северного Азербайджана в XVIII в. – «Гарабаг: Курекчай - 200», Б., 2005, с. 68-84) см. Магальян А., Фальсификация истории меликств Арцаха в азербайджанской историографии, - *Ədəbiyyat Uşuqluğu*, 20, 2014, с. 83-94.

⁵ Со второй половины 1918г., украденное название северо-западной области [Атропатена (в армянских источниках Атрпатакан) – Азербайган – Азербайджан] Ирана было использовано для клонированного в пантюркистских

Более того, Н. Гезалова, горя желанием видеть «азербайджанские территории» на месте армянских земель, пишет: «Наиболее часто встречаемой ошибкой англоязычной историографии является утверждение о существовании армянских земель на Южном Кавказе в XVIII в.. Так, М. Аткин делит весь Южный Кавказ на три пограничные зоны – Грузия, Иранская Армения (Гянджа, Гарабаг, Иреван и Нахчыван) и наследие Ширванского государства (Ширван, Шеки, Дербенд-Губа и Баку)». Гезалова продолжает: «Несомненно, следует указать, что никакой “Иранской Армении” не существовало, а все земли, указанные в составе этой зоны являлись неотъемлемой частью азербайджанских территорий. Заблуждение англоязычных авторов, указывающих на существование какой-то “Иранской Армении”, мы склонны объяснять, во-первых, “удачной” фальсификацией армянами исторических фактов в своих интересах, во-вторых, не достаточным знакомством англоязычных авторов со всем комплексом источников и, как следствие, с трудами азербайджанских историков. Тенденция рассматривать исконно азербайджанские земли как

целях государственного «формирования» «кавказских татар» в прикаспийских степях юго-восточного Закавказья, планируя также аннексию соседних территорий, в том числе того же Иранского Азербайджана (Бартольд В. В., Курс лекций, 1924г., Соч., т. II, часть I, М., 1963., с. 703, 775-776). Этот «топонимический» грабеж тогда же вызвал официальный протест Ирана [Bayat K., Storm over the Caucasus, Tehran, 2002, 66-67; Kaveh Bayat, Storm over the Caucasus: A Glance at the Iranian Regional Relationship with the Republics of Azerbaijan, Armenia and Georgia in the First Period of Independence 1917-1921, Tehran: Ministry of Foreign Affairs, 2002, pp. 45-47. (in Persian), Touraj, Atabaki. Azerbaijan. Ethnicity and the Struggle for Power in Iran, London and New York: I. B. Tauris, 2000, pp. 2, 25, Moghaddam, Where is the Real Azerbaijan, Bonn: Aseman, 2008, p. 38 (In Persian), см: Rouben Galichian, The Invention of History, London, 2010, pp. 6-7].

армянские в англоязычной историографии, несомненно – заслуга армянской пропагандистской машины»⁶.

Однако, эти измышления Н. Гезаловой абсолютно не выдерживают критики. Во-первых, в книге М. Аткина не упоминается термин “Южный Кавказ”, ибо он пишет: «In refering to the disputed border zone, I have used the term eastern Caucasus rather than the Russian name *Transcaucasia*» (“Относительно спорной пограничной зоны, я использовал термин *восточный Кавказ*, вместо русского названия *Закавказье*... ”)⁷. Тем самым, М. Аткин использует термин *восточный Кавказ*, однако Гезалова в своих переводах, цитируемых из его книги отрывков, неверным образом настойчиво протискивает термин “Южный Кавказ”. Более того, наряду с фальсификацией исторических фактов, в ее тексте наличествует полная неразбериха в цитируемой литературе. Например, она пишет: “Как указывает М. Аткин, “все ханства Южного Кавказа, за исключением Грузии, находились под властью мусульманских правителей, их владения охватывали большую часть территории Южного Кавказа и имели более многочисленное население, чем Грузия”; или же “особую группу англоязычных публикаций составляют труды армянских авторов по истории Южного Кавказа, в том числе Азербайджана. Среди них привлекают внимание несколько работ Дж.Борнотьяна”⁸. Как в первом, так и во втором случае ссылки даны не на труды М. Аткина и Дж. Бурнотьяна, а на книгу Г. Саркисяна, К. Худавердяна, К. Юзбашяна «Потомки Хайка. Очерк истории и культуры Армении с древнейших времён до

⁶ Гезалова Н., “Вопросы истории Азербайджана XVIII века в англоязычной историографии”. Автореферат дис. канд. ист. наук, Б., 2010, с. 25-26.

⁷ Atkin M., *Russia and Iran 1780-1828*, Minneapolis, 1980, p. 10 p. xi.

⁸ Гезалова Н., 2009, с. 45. Фамилию Дж. Бурнотьяна (G. Bournoutian) Н. Гезалова приводит в неверной форме.

становления Третьей республики», (Ереван, 1998), в которой нет ни слова, ни о цитируемых ею предложениях, ни об этих авторах.

Н. Гезалова, упомянутые в книге М.Аткина названия приводит в искаженной форме: вместо Yerevan (Ереван) использует форму “Иреван”, вместо Qarabagh (Карабах) – “Гарабаг”, вместо Nakhijevan⁹ она приводит “Нахчыван”.

Общеизвестно, что издревле в трудах и картографических материалах Геродота¹⁰, Эратосфена (276–194 BC)¹¹, Страбона (64 BC – 24 AD)¹², Птолемея (83-161 AD)¹³ и других античных, а также, в дальнейшем, средневековых авторов четко упоминается Армения – Великая Армения и Малая Армения. М. Аткин в свою очередь ссылается на труды сведущих в исторической географии английских авторов, в которых четко упоминается Армения¹⁴.

То, что в азербайджанской “историографии” измышляется и представляется как “Азербайджан” вне пределов иранской области Атропатены-Атрпатакана и вообще вне истории Ирана, является составляющей частью фальсификаций истории и искон-

⁹ У Аткина точно соответствует армянской форме названия Նախիջուան (Нахиджеван) (Atkin M., op. cit., p. 10).

¹⁰ Карта древнего мира по Геродоту см. в кн.: Das Geschichtswerk des Herodotos von Halikarnassos, Berlin, 1964, Геродот, История в девяти книгах, Л., 1972.

¹¹ Карта мира Эратосфена (Eratosthenes' *Geography*: Fragments Collected and Translated, with Commentary and Additional Material by Duane W. Roller, Princeton and Oxford, 2010, pp. 256-257).

¹² The Geography of Strabo, with an English translation by H. L. Jones, Camb., Mass., London, in eight volumes, vol. V, 1954, XI, 12. 3; 14. 14-15.

¹³ ΚΛΑΥΔΙΟΥ ΠΤΟΛΕΜΑΙΟΥ ΓΕΩΓΡΑΦΙΚΗ ΥΦΗΓΗΣΙΣ. Parisiis, M DCCCCI, V, 12.

¹⁴ Morier J. J., *Journey through Persia, Armenia and Asia Minor to Constantinople*, London, 1812; J.J. Morier, *A Second Journey through Persia, Armenia and Asia Minor to Constantinople*, London, 1818; R.Ker, *Travels in Georgia, Persia, Armenia, Ancient Babylonia, etc., during the Years 1817, 1818, 1819, and 1820* (2 vol., London, 1821) и др.

ной топонимики Армянского нагорья и Кавказа¹⁵, так как никакого историко-географического понятия под названием “Азербайджан” (“Адербайган”) вне территории Атропатены-Атрпатакана ни в XVIII в., ни в предыдущих, ни в последующих веках (до сер. 1918 г.) не было и не могло быть.

М. Аткин представляет Восточную Армению в пределах от Еревана до Гандзака, отмечая в ее составе Нахиджеван и Арцах (Карабах), как ее органические части. Он пишет, что в Сефевидскую эпоху, *Иранская Армения* была разделена на две административные единицы: *Ереван* и *Гандзак*. Далее отмечает, что Нахиджеван был частью административной единицы *Ереван*, а Карабах – административной единицы *Гандзак*¹⁶.

Ясно видно, что Гезаловой и ее коллегам вообще не дают покоя армянские топонимы и, в частности, их упоминание в английской и французской историографии. Ибо камня на камне не остается от азербайджанских измышлений о несуществовавшем “Азербайджане” на территориях Армянского нагорья и соседнего с ним Кавказа. Директор Института политических и социальных исследований Черноморско-Каспийского региона, В. Захаров пишет: «В запале Ильхам Алиев доходит до антиисторических заявлений, а уж кому-кому, а ему, выпускнику МГИМО, стыдно не знать истории. Ведь ему преподавали выдающиеся историки. Нет, ничтоже сумняшеся азербайджанский лидер 20 ноября 2009 г.

¹⁵ Манипулирование (с целью фальсификации) названиями провинциальных делений периода Сефевидского государства, а также представление иранской Сефевидской династии, якобы, “азербайджанской” в нынешних азербайджанских публикациях (например см. War against Azerbaijan: Targeting Cultural Heritage, compiled by Kamala Imranli, in a series The True Facts about Garabagh, Baku, 2007) разоблачены в историографии (см. R. Galichian, op. cit., p. 39 и др.).

¹⁶ Atkin M., op. cit., p. 19.

сказал: “Всем прекрасно известно, что нынешняя Армения создана на исконных азербайджанских землях. Иреванское ханство, Зангезурский махал – это азербайджанские земли. В 1918г. Иреван был подарен Армении. С того времени не прошло и 100 лет, а против нас выдвигаются новые притязания. На азербайджанских землях было создано армянское государство. А теперь хотят создать второе. Это не поддается никакой логике, азербайджанский народ, азербайджанское государство никогда не согласятся на это”. Осуждая антиисторические выпады президента АзР, В. Захаров заключает: “Стыдно читать эту историческую несурезицу... Подтекст в этом выступлении очевиден: Алиев пытается обосновать претензии азербайджанской стороны уже не только на Карабах, но и на территорию самой Республики Армения”¹⁷. Однако Алиев не остановился и в следующем году (14 октября 2010 г.) выступил с умопомрачительной установкой уже обращенной к будущим поколениям (“Нынешняя Армения, территория, именуемая на карте Республикой Армения, - это исконно азербайджанская земля. Это истина. Конечно, Зангезур, Иреванское ханство - это наши земли!... Наши дети должны знать все это, должны знать, что нынешняя Армения располагается на исконных азербайджанских землях” и т.д.)¹⁸, которая была подхвачена и рабо-

¹⁷ Нагорно-Карабахской Республике 20 лет, М., 2011, с. 4, 53-58.

¹⁸ Виктор Шнирельман: Ну, зачем же приписывать господствующие в Азербайджане взгляды “мировой науке”? <http://regnum.ru/news/1624198.html> Ильхам Алиев повторил ту же самую чушь в 2015г. 06.26 в поселке Пута Гарадагского района Баку, где состоялось открытие новой базы и воинской части: “Нашим является не только Нагорный Карабах, но даже нынешняя Армения...” (<http://www.armenianreport.com/pubs/109585/>), а также 09.12, в Астане, на V Саммите Совета сотрудничества тюркоязычных государств: “... Нагорный Карабах – исконно азербайджанская земля. Азербайджанский народ веками жил и творил на этих землях. Не только Нагорный Карабах, но и Зангезур, древний тюркский край, - наша исконная

лелю привелена в действе азербайджанскими прислужниками антинауки. Кстати, Н. Гезалова наряду со своими коллегами по фальсификации истории, "распоряжением президента Азербайджана Ильхама Алиева за научные труды по истории Карабахского, Нахчыванского и Иреванского ханств удостоилась государственной премии в области науки"¹⁹. Взращенные на лженауке и арменофобии президентские "дети" заняты убийством топором спящего человека²⁰, а также публикацией книг и статьей, основанных на фальсификациях и измышлениях.

Н. Гезалова и Р. Гусейнов вступили в сравнительно "новую" область искажения исторических реалий Армении, ибо излюбленным коньком азербайджанских фальсификаторов является измышление об "албанизация армянского наследия"²¹. Ныне же с

земля. С отделением в начале XX века Зангезура от Азербайджана и передачей его Армении, по существу, была прервана географическая связь всего тюркского мира". <http://www.armenianreport.com/pubs/114329/> Эти периодические приступы воинствующего невежества и безграмотности говорят о серьезных психических нарушениях, вызванных поражением Азербайджана в развязанной им же войне (1991-1994 гг.) против армянского народа.

¹⁹ <http://vesti.az/news/118808/news.php?id=122812>

²⁰ 19 февраля 2004 года лейтенант ВС Армении Гурген Маргарян, проходивший курсы английского языка, организованные в рамках программы НАТО «Партнерство во имя мира» в Будапеште, был зверски зарублен топором азербайджанским офицером, старшим лейтенантом Рамилем Сафаровым. 13 апреля 2006 года убийца армянского офицера был приговорен Будапештским городским судом к пожизненному заключению без права на амнистию в течение 30 лет. Однако, пожизненно осужденный преступник Сафаров 31 августа 2012 года был экстрадирован из Венгрии в Азербайджан, на следующий день был помилован указом президента, получил звание майора, квартиру и жалование за последние 8 лет" (подробно см.: <http://www.panarmenian.net/rus/news/188437/>). Потерпевший сокрушительное поражение в Арцахской Освободительной войне (1991-1994 гг.) агрессор Азербайджан во главе со своими пресловутыми лидерами, в полном бешенстве вымещают свою ярость и бессилие в человеконенавистнических, антиармянских действиях.

²¹ Мамедова Ф., Политическая история и историческая география Кавказской Албании. III в. до н.э. — VII в. н.э., Баку, 1986.

сочинением мифа о “Западном Азербайджане”²², якобы занимавшем территорию Армении, появился мозговой зуд, сопряженный с потребностью применения по отношению к Армении, имеющей тысячелетия собственной истории, совершенно чуждых ей “географических” названий и понятий. Как антинаучные поползновения по “албанизации армянского наследия”, так и миф о “Западном Азербайджане”, абсолютно не выдерживают критики на основе достоверных исторических источников²³. Тут самое время вспомнить крайне отрицательную характеристику данную В. Захаровым азербайджанским антинаучным публикациям: “... Ни в одном уважаемом западном академическом центре не читают подобную литературу. Врученные участникам любого форума образцы бакинских изданий, оседают в гостиничных номерах или оказываются в мусорных ящиках”.²⁴

В последнее время на поприще фальсификационного подхода к французской историографии, в частности, к переводам Сен-Мартена и его интерпретациям, особую приткость выказывает Р. Гусейнов²⁵. Он пишет: «Отметим, что Антуан Жан де Сен-Мартен (1791-1832 гг.) является для армян важным авторитетным источником, на который они очень часто ссылаются, стремясь доказать древность своей истории, в том числе и на Кавказе.... Ведь поздние армянские переводчики, мягко говоря, лукавили: не только неверно переводили труды Хоренского, но да-

²² Одной из таких фальшивок является книга А. Alakbarli. *Les Monuments d'Azerbaijan d'Ouest*, Baku, 2007.

²³ Подробный анализ источников и литературы из многочисленных трудов см. В. Шнирельман, Албанизация армянского наследия. Албанский миф, – в кн. “Войны памяти. Мифы, идентичность и политика в Закавказье”, М., 2003, с. 201-222. и др.

²⁴ “Нагорно-Карабахской Республике 20 лет”, с. 130-150.

²⁵ http://www.rizvanhuseynov.com/2012_05_01_archive.html

же «подправляли» их названия, в частности, перевели как “История Армении” труд Хорейского, который в оригинале назывался “Патмутюн Хайоц” – то есть “История Хаев”. Тем самым армянские исследователи пытаются скрыть истинную историю и самоназвание нынешнего армянского народа”. Гусейнов продолжает: “Ведь неискушенные читатели, да и многие специалисты, до сих пор не знают разницы между армянами и хаями. Дело в том, что самоназванием нынешних армян является слово “хай”, а страной Хаястан, которые не имеют отношения ко всей древней армянской культуре, истории и географическому ареалу...”²⁶. Здесь Гусейнов пытается протолкнуть несколько фальшивок, которые к французскому арменоведу не имеют никакого отношения, ибо (а) Сен-Мартен, считая Мовсеса Хоренаци автором V века, четко перевел его труд *Histoire d'Arménie*²⁷; (б) новоявленный “критик” Гусейнов, касательно, сочиненного им же самим различия между *армянами* и *хаями*, напрасно старается вбить клин между Сен-Мартеном и другими арменистами, якобы, “пытающимся скрыть истинную историю и самоназвание нынешнего армянского народа”. В действительности такого различия не существует. Сен-Мартен четко пишет об [h]Айке (Haïg/Haïk), его потомке Араме (Aram) и Армении (Arménie) – стране нации [h]Айкян (nation Haïganienne). Следуя концепции Мовсеса Хоренаци²⁸, французский арменовед пишет: “Quoi qu'il en soit, au rapport des écrivains Arméniens, le premier chef ou prince qui gouverna leur pays fut un certain Haïg, fils de Thaglath, qui selon

²⁶ Эта фальшивка Гусейнова озаглавлена: “Критика армянских первоисточников в трудах западных и российских ученых”, ч. I, 2012,

<http://www.rizvanhuseynov.com/2012/05/i.html>

²⁷ Saint-Martin A.- J., Mémoire historique et géographique sur l'Arménie, Imprimerie Royale, t. I, Paris, 1818, p. 4.

²⁸ Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1991, էջ 37, 42:

eux, est le même que le patriarche Thogorma... Bélus, roi d'Assyrie... rassembla une nombreuse armée et vint attaquer Haïg jusque dans son nouvel établissement: le sort des armes fut contraire au roi d'Assyrie; il fut vaincu, et périt dans une grande bataille qui se livra sur les bords du lac des Peznouniens (Ванское озеро-авт.), qui porte actuellement le nom de lac de Van... Après un règne fort long, il laissa ses états à son fils Arménag, qui donna des apanages et des établissements à ses frères dans les diverses parties de l'Arménie. Aussi plusieurs familles nobles de ce pays prétendaient-elles descendre de Haïg par ce prince. Le cinquième successeur d'Arménag, nommé Aram, se distingua tellement entre tous les descendants de Haïg par ses grandes actions, que, depuis son règne, les peuples étrangers appelèrent Arménie le pays habité par la nation Haïganienne".²⁹

Из приведенных строк следует, что Сен-Мартен наследие hАйка и его Арама видел воедино, ибо он отлично знал, что Мовсес Хоренаци *страну Армения* называет [h]Айк'-Айастан, и это было известно, как ее коренной нации (բնիկ ազգ) - [h]айам (hш)- армянам, так и другим народам с древнейших времен³⁰.

²⁹ Saint-Martin A.-J., Mémoire historique et géographique sur l'Arménie, t. I, pp. 281-282.

³⁰ Մոսթուտու Խորենացի, էջ 37, 230, 358. Основа имени Родины (Армения) армян [h]Айк'-Айастан (от имени эпонима армян Հայր - ([h]Айк, см. Մոսթուտու Խորենացի, էջ 37) засвидетельствована в клинописных источниках III тыс. до н.э. в имени бога *Науа* (подробно см. Մոսթուտուտու Ա., Սրբազան Խորենացիի հայապատմությունը Արարիկի հնագույն հոգևոր ընկալումներում, Երևան, 2006, էջ 49-52), а также в хеттских источниках сер. II тыс. до н.э. (см. Кананцян Г., Хайаса колыбель армян). Армения (имея в основе имя Арама - Արամ, потомка [h]Айка, см. Մոսթուտու Խորենացի, էջ 49) также упоминается в клинописных источниках III тыс. до н.э. - *Арманум, Армани* [Кифишин А. Географические воззрения древних шумеров при патеси Гудеа (2162-2137 гг. до н. э.). - Палестинский сб., вып. 13 (76), 1965, с. 64; Иванов Вяч. Вс. Выделение разных хронологических слоев в древнесармянском и проблема первоначальной структуры гимна Вахаггу. - Պատմա-բանասիրական հանդես, 1983, N 4, էջ 32-33 և այլն]:

Тем самым, разглагольствования Гусейнова по этому поводу не могут скрыть фальсификацию фактов в его вышеуказанных высказываниях. Много еще небылиц можно встретить в изложении Гусейнова, однако остановимся на трех из них, достаточных для иллюстрации абсурдности его измышлений.

Ему кажется, что, подав французский перевод Сен-Мартеном "Ашхарацуйца" в искаженном виде, он якобы сможет доказать, что Атропатена (*Атрпатакан*) находилась на Кавказе. Мотивы его тщетных усилий исходят из его болезненного воображения, в котором ему мерещится призрак "Азербайджана" вне северо-западной области Атропатена-Атрпатакан Ирана, находящейся с юго востоку от озера Урмии (Капутан).

Итак, очередной "жертвой" измышлений Гусейнова стал следующей отрывок из "Ашхарацуйца" в переводе Сен-Мартена: "La grande Arménie est à l'orient de la Cappadoce et de la petite Arménie, sur le bord de l'Euphrate, et près du mont Taurus, qui la sépare de la Mésopotamie: du côté du midi, elle est limitrophe de l'Assyrie; en allant par l'Aderbadagan vers la Médie, elle s'étend jusqu'à l'embouchure de l'Araxes dans la mer caspienne: au nord, elle est borné par l'Albanie, l'Ibérie et la Colchide, ou Éger, jusqu'au lieu où l'Euphrate se dirige vers le midi"³¹.

Перевод Гусейнова: "Армения великая находится на востоке от Каппадокии и малой Армении, на берегу Евфрата, около горы Торус, которая разделяет Месопотамию; с южной стороны она граничит с Ассирией; и идёт от Адербадагана в сторону Мидии, простираясь до места впадения Аракса в Каспийское море; на се-

³¹ Saint-Martin A.- J., Mémoire historique et géographique sur l'Arménie, t. II, pp. 359-361.

вере она ограничивается Албанией, Иберией и Колхидой или Эгером, до места, где Евфрат направляется в сторону юга”³².

Из подпорченного им же самим перевода (с французского перевода Сен-Мартена), Гусейнов заключил: “М. Хоренский, говоря о землях, некогда захваченных “Великой Арменией”, упоминает об Азербайджане и локализует его севернее Мидии, а именно НА КАВКАЗЕ. Тем самым “отец армянской истории V века” или тот, кто за него писал эту книгу, констатирует существование Азербайджана на Кавказе в раннем средневековье или в более поздний период!”³³. Сколь бы ни восклицал махинатор, ни Атропатена не передвинется на север, ни Кавказ не переместится на юг. Ибо в “Ашхарацуйце” (Географический атлас) речь идет об [h]Айк-Айастан-Армении, которая состояла из Великой Армении и Малой Армении, как засвидетельствовано в вышеупомянутых историко-картографических источниках античности, а также средневековья. Из приведенного текста французского перевода абсолютно не следует, что речь идет о пресловутом “Азербайджане” и Кавказе. Более того, испокон веков известно, что Кавказ находится к северу и северу-востоку от р. Куры и ни одна часть Армянского нагорья не входит в ареал Кавказа. Вместе с тем, огромен вклад Армении и армян в цивилизационном развитии стран Кавказского региона (*собственно Алуанк и Иверия*).

Французский перевод указанного отрывка из “Ашхарацуйца” в нашем переводе: “Великая Армения находится *к востоку* от Каппадокии и Малой Армении, на берегу Евфрата, около горы *Тавр*, который ее отделяет от Месопотамии; с южной стороны она граничит с Ассирией; и, проходя от Атрпатакана вблизи Мидии

³² <http://www.rizvanhuseynov.com/2012/06/3.html>

³³ Там же.

[в тексте древнеармянского оригинала: “ըշննիշ ին Արքիշնիշնիշնի ընդ Մարի”, “...поворачиваясь от Атрпатакана при [территории] *маров* (мидийцев)”], простирается до места впадения Аракса в Каспийское море; на севере она граничит с Албанией (ընն Արքիշնիշնի-собственно Алуанк), Иберией и Колхидой или Эгером, до места, где Евфрат направляется на юг”.

Как можно убедиться, своими измышлениями Гусейнову было не по плечу перетащить Кавказ на юг и иранскую область Атропатену-Атрпатакан на север - на Армянское нагорье.

Дальше из перевода Сен-Мартена следует: “Le Vasbouragan est à l'occident de la Persarménie et près des frontières de la Gordjaïkh: il contient trente-sept provinces, qui sont Erschdouni, Dosb, Poutouni, Adjischagovid, Aghavis, Parhizagovid, Gaghanovid, Tarhni, Palakhovid, Arhperhani, Pajouni, Arhnoïodn, Andsevatsi, Aderbadouni, Erovantouni, Markasdan, Ardawagé, le grand Aghpag, Andakhadsor, Thrhounavan, Djovaschrhod, Gerdjouni, Medzouni, Balouni, Kougan, Aghovankrhod, Barsbarouni, Ardaschisan, Ardavanjan, Pakhan, Kapithian, Kawriken, Dangriaïn, Varajnouni, Koghten, qui est fertile en vin, Nakhtchovan, où se trouve la ville du même nom, et Marant”³⁴.

Правильный русский перевод “Ашхарацуйца” с французского перевода Сен-Мартена о Васпуракане, восьмой провинции Великой Армении, гласит: “Васпуракан находится к западу от Парскаһайка у границ Корчайка...”. И, далее среди гаваров Васпуракана Сен-Мартен упоминает Արքիշնիշնիշնի (Атрпатуник) в форме Aderbadouni³⁵.

³⁴ Saint-Martin A. - J., Mémoire historique et géographique sur l'Arménie, t. II, pp. 364-365.

³⁵ Ibid., pp. 362-363.

Полностью исказив смысл “Ашхарһацуйца” и перевод Сен-Мартена, Гусейнов «комментирует»: “М. Хоренский, описывая область Васбураган на востоке от Персидской Армении и вблизи границы с Горджайком Чпрбшр (Грузия), среди ее провинций упоминает Адербадунни (Азербайджан), вновь локализуя его на Кавказе”³⁶.

Во-первых, occident означает запад, а не восток.

Во-вторых, речь не о Персидской, т.е. восточной части Великой Армении, которая после ее византийско-персидского раздела в конце IV в. оказалась в сфере персидского влияния, а в “Ашхарһацуйце” говорится о Парскаһайке (называемом также Норширакан, седьмой провинции Великой Армении)³⁷, к востоку от Васпуракана.

В-третьих, Корчайк, шестая провинция Великой Армении³⁸ и абсолютно не имеет никакого отношения к Грузии.

В-четвертых, “Արշախանիք” или более точно Трпатуник, действительно является одним из гаваров Васпуракана и не имеет никакого отношения к выдуманному Гусейновым “Азербайджану”. В большинстве рукописей “Ашхарһацуйца”, Атрпатуник/Արշախանիք упоминается как Трпатуник - գՏրշախանիք³⁹.

В переводе Сен-Мартена: “L'Artsakh est voisine de la Siounie; elle contient douze provinces ...”. Затем в перечислении гаваров Арцаха, в связи с упоминающимся последним Чпршр, говорится: “յորուն լինի քարախունկ. Сен-Мартен перевел: “Gokhth, dans

³⁶ <http://www.rizvanhuseynov.com/2012/06/3.html>

³⁷ Երեմյան Ս. Տ., Հայաստանը ըստ “Աշխարհացոյց”-ի, Երևան, 1963, էջ 108:

³⁸ Там же.

³⁹ Մատենադարան Մխիթարեանց, Վեկետիկ – Ս. Ղազար, ձեռ. N 1245, ք. 51.

laquell vient le *k'harakhung*"⁴⁰. В кривом зеркале Гусейнова вся фраза исказившись до умопомрачения ("...Арцах по соседству с Сюником, он состоит из двенадцати провинций, ... в которых проживают каракоюны"), перерасла в кромешный маразм: "Как видим, "отец армянской истории", которого ученые Армении упорно называют автором V века, упоминает об азербайджанском племени кара-коюнлу известном лишь с XIII- XIV вв.!"⁴¹.

Во-первых, "յրրւմ" переводится в единственном числе, как правильно перевел Сен-Мартен, тем самым, правильный перевод: "... Кохт, в котором ..."

Во-вторых, в тексте "Ашхарацуйца" говорится о բարձրակարգ-ում, который означает *bdellium, lacrima, gummi*⁴². Правильный перевод всей фразы: "... Кохт, в котором есть *ароматическая смола (мирра)*"⁴³. Таким образом, в "Ашхарацуйце" нет и не могло быть речи о племени "кара-коюнлу".

Гусейнов разнузданным образом фальсифицирует также сообщения об источниках "Ашхарацуйца".

Сен-Мартен, касаясь сочинения Паппа Александрийского "Христианская топография", как одного из источников "Ашхарацуйца", пишет: "... il nous est impossible de savoir si l'ouvrage de Pappus a été traduit en son entier, ou s'il a été seulement abrégé par le translateur Arménien. Nous sommes assez portés à admettre cette dernière opinion; car le titre de Chronographie universelle que Suidas donne à l'original Grec, promet *un ouvrage bien plus*

⁴⁰ Saint-Martin A.-J., Mémoire historique et géographique sur l'Arménie, t. II, p. 365. Сен-Мартен ограничился пометкой: "J'ignore ce que ce que c'est que le բարձրակարգ k'harakhung" (Ibid., p. 389, n. 74).

⁴¹ <http://www.rizvanhuseynov.com/2012/06/3.html>

⁴² Ար բարձրակարգ Հայկազեան լեզուին, Վենետիկ, 1995: *Бдолах* - драгоценное вещество, с которым сравнивается *манна* (Числа, гл. 11, стих 7).

⁴³ <http://www.kniga-zelii.ru/basics/essence/?myrrh>

considérable que celui que nous avons. Nous croyons que le traducteur n'aura conservé que les grandes divisions, et qu'il aura supprimé tous les détails pour les pays éloignés de l'Arménie⁴⁴. Il résulte assez évidemment de ce fait que l'auteur Arménien ne s'est servi, pour composer son ouvrage, que de celui de Pappus d'Alexandrie, qu'il s'est borné à traduire et à abrégé. Nous allons examiner maintenant les diverses additions qu'il y a faites; et elles nous prouveront que ce traducteur ne peut être le célèbre Moïse de Khoren.

Le traducteur Arménien place les Francs dans les Gaules. En supposant que ce traducteur soit Moïse de Khoren, il se pourrait à la rigueur qu'il eût parlé des Francs comme habitans de la Gaule, quoiqu'ils n'y fussent pas encore bien puissans en l'an 460; ce qui rend difficile de croire qu'on ait pu les connaître alors en Arménie⁴⁵.

Дословный перевод текста Сен-Мартена: "...невозможно знать, был ли переведен труд Паппа в полном объеме, или был лишь сокращен армянским переводчиком. Для нас вполне вероятно принять последнюю точку зрения... Мы считаем, что переводчик сохранил только важные части и удалил все детали касательно удаленных от Армении стран. Из этого естественно следует, что армянский автор при составлении своего труда пользовался сочинением Паппа Александрийского; он ограничился переводом и сокращением. Теперь мы рассмотрим различные дополнения, которые он сделал и они нам доказывают, что этот переводчик не может быть знаменитый Моисей Хоренаци. Армянский переводчик помещает франков в Галлии. Если предполагать в качестве этого переводчика Моисея Хоренского, он, в крайнем случае, мог бы говорить о франках, как жителях Галлии,

⁴⁴ Saint-Martin A.-J., *Mémoire historique et géographique sur l'Arménie*, t. II, p. 303.

⁴⁵ *Ibid.*, p. 305.

хотя они в 460 году не были столь могущественны, что делает трудным поверить, что о них могли бы знать в Армении”.

Как ясно видно, в тексте Сен-Мартена говорится: “Le traducteur Armenien place les Francs dans les Gaules» (перевод: “Армянский переводчик помещает франков в Галии”).

В переводе же Гусейнова текст Сен-Мартена исковеркан до неузнаваемости: “Армянский переводчик был родом из Галлии, местным франком... и насколько верно говорить (в труде М. Хоренского) о местности Франков, и жителях Галлии, хотя тогда, в 460 году, она не была еще достаточно могущественна; и тому, кто поведал об этом, трудно поверить, что он видел и знал в то время Армению”⁴⁶.

После таких безграмотных интерпретаций Гусейнову хватает смелости нагло заявлять об “Ашхарацуйце”: “...еще раз становится ясным, что этот труд никак не может претендовать на достоверность и древность”⁴⁷. Оказывается фальсификационная лихорадка не позволяет ему видеть историческую истину.

“Кульминацией” антиисторических поползновений азербайджанских фальсификаторов и псевдонаучной общественности является инсинуация против истины об армянской принадлежности и древности города Ереван. Древность и идентичность *Эребуни-Ереван* стали костью в горле у азербайджанских фальсификаторов. Зарвавшийся Гусейнов, смешивая все и вся, пришел к той абсурдности, что название города Еревана в форме Иреван возник в начале XVI в., когда “сефевидский шах Исмаил поручил своему полководцу Ревангулу-хану построить на этой территории крепость. Крепость была возведена за 7 лет на скалистом берегу в юго-восточной стороне реки Занги, ныне

⁴⁶ <http://www.rizvanhuseynov.com/2012/05/2.html>, ч. 2.

⁴⁷ Там же.

переименованной армянами в Раздан. Построенная крепость была названа Реваном в честь Ревангулу-хана..."⁴⁸.

Гусейнов, пытаясь найти подтверждения своим сумасбродным выдумкам, сочинил очередную ложь о якобы позднем происхождении названия реки Раздан, однако известно, что Раздан упоминают Мовсес Хоренаци (V в.)⁴⁹ и Себеос (VII в.)⁵⁰

Данные биайнских клинописных надписей, обнаруженных на стелле в церкви св.Саһака в Ване, в Хорхорской летописи, при раскопках на холме Арин-берд, на юго-восточной окраине Еревана⁵¹, свидетельствуют об основании в 782 г. до н. э. царём древнеармянского государства Арарат (Урарату) (Ванское царство) Аргишти I (786-764 гг. до н.э.), крепости Эребуни в Араратской долине, на холме Арин-Берд, в окружении гор Арарат-Масис, Арагац, Ара⁵², а также об идентичности Эребуни-Ереван⁵³.

⁴⁸ <http://www.rizvanhuseynov.com/2012/05/2.html> Вся эта жалкая ложь использована в низкопробном "фильме" см. <https://www.youtube.com/watch?v=a2NmhFbiDB8>

⁴⁹ Մովսէս Խորենացի, էջ 42, 121:

⁵⁰ Պատմութիւն Սէրտուի, Երևան, 1979, էջ 84:

⁵¹ Пиотровский Б., Ванское царство, М., 1959, с. 69-70, Арутюнян Н., Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001, с.504.

⁵² Согласно Г.Капанцяну, все эти названия возникли от имени Ара Прекрасного (Արա Գեղեցիկ) (См. Ղափանցյան Գ., Արա Գեղեցիկի սլաշտամուկըրը. Երևան, 1945, էջ 98-99). М. Израелян считала, что название Эребуни означает *победа* (Իւրաշէլյան Մ., Էրեբունի բերդ-բազարի պատմութիւն, Երևան, 1971, էջ 13). Можно полагать, что название города-крепости Эребуни также происходит от имени древнеармянского божества Ара (см. Ղանիելյան Է., Հին Հայոց դիցարանական պատկերացումները աստղային երկնքի մասին. – ՊԲՀ, N 3, 1989, էջ 111). Здесь нужно принять во внимание, что Платон упоминает имя героя *Эр, сына Армениуса* (The Republic of Plato. Second edition, translated with notes and An Interpretive Essay by Allan Bloom, Basic Books, A Division of Harper Collins Publishers, 1968, Book X, p. 297), который своей смертью на поле битвы и воскресением.

⁵³ König F., Die Gründung der Stadt Erivan (ca 785 v.C.). – "Հանդէս ամսօրեայ", 1954, N 7-8, S. 291, Пиотровский Б., ук.соч., с. 31, Redgate A. E., The Armenians, Oxford, 1998, 2000, pp. 17, 54 и др.

Ереван упоминается также в раннесредневековых и более поздних источниках⁵⁴, т.е. за многие века до образования государства Сефевидов (1501-1736гг.) в Иране.

Что же касается упомянутого названия "Рован" (или "Реван"), который в "Ашхарацуйце" упоминается в форме *Руан* (с рукописными разночтениями), то этот топоним находясь вне территории Армении, не имеет никакого отношения к Еревану.

Важно обратить внимание на тот факт, что упоминаемые в "Ашхарацуйце" страны описываются в отдельности. После описания Великой Армении следует сведение о территории *маров*. Перевод Сен-Мартена: "La Médie, qu'on appelle Khousdi-khabgokh, est voisine de l'Arménie et de la mer Caspienne. On y trouve les provinces d'Aderbadagan, de Rhé, de Kilan, de Mougan, de Tiloum, d'Ahmadan, de Tampvar, de Sbarasdan, d'Aml, de Khschosch et de Rhovan. Elle renferme des montagnes des fleuves, le lac de K'habodan, et beaucoup de villes, parmi lesquelles est Kandsagschaahasdan"⁵⁵. Как было сказано также выше, здесь четко приво-

⁵⁴ Об истории Еревана в армянской историографии важное значение имеет исследование Ерванда Шаһазиза (Древний Ереван, Ер., 1931), в котором приведены письменные источники, упоминающие Ереван: в документах Двинского III Собора (609 г.) упоминается иерей Давит Ереванци (Ереванский), в сообщениях Себеоса (VII в.), Гевонда (VIII в.), Асогика (XI в.), Самвела Анеци (XII в.), в Гомилиарии (1341 г.), рукописях и колофонах XIV-XVIII вв. (Երվանդ Շահազիզ, Հին Երևանը, Երևան, 1931, էջ 68-76).

⁵⁵ Saint-Martin A.-J., Mémoire historique et géographique sur l'Arménie, t. II, p. 371. Сен-Мартен, считая "Rhovan" или "Реван" одним из "делений Атропатены", привел также представление мусульман о, якобы, его нахождении "в той части Армении, столицей которой являлся Ереван..." (Ibid., p. 315, п.3), что, однако, неверно. Необходимо обратить внимание, то, что Сен-Мартен в выражении "... la portion de l'Arménie dont Erivan était la capitale" глагол être привел в имперфекте, имея ввиду древность Еревана. Гусейнов же, неправильно переводя этот глагол в настоящем времени, и, полностью исказив смысл этого выражения, сделал фальсифицированные выводы.

дится местоположение Армении по отношению к “Мидии” и ни в коем случае не смешиваются их провинции.

Об этом свидетельствуют как та рукопись, которой пользовался Сен-Мартен, так и все рукописи “Ашхарһацуйца”, которые хранятся в Матенадаране им. Месропа Маштоца (далее: ММ) в Ереване. Для примера, приведем некоторые из них касательно указанного отрывка из “Ашхарһацуйца”.

ММ, N 1898, л. 2716: Մարք են որ կոչին բուստիկք [կ]ապկոխ յելից կալով հայոց. և առ երի կասբից ծովուն. և ունի աշխարհս զայսոսիկ. զատրպատական. զոէ, զգերան, զոսկան, զդիլումս, զահմատան, զդարավադ, զտապարաստան զամլ, զբշառշ, *զոուան*:

ММ, N 1267, л. 359: Մարք. որ կոչին բուստիկք [կ]ապկողք. յելից կալով հայոց. և առ երի կագբից ծովուն. և ունի աշխարհս զայսոսիկ զատրպատական. զոէ. զգելան, զմուկան, զդիլումս, զահմադան, զդամբ վար, զտապարաստան, զամեդ, *զոուէդ*:

ММ, N 1486, л. 103: Մարք որ կոչին բուստիկք [կ]ապկողք. յելից կալով հայոց. և առ երի կասբի՞ժ⁵⁶ ծովուն. և ունի աշխարհս զայսոսիկ զատրպատական, զոէ, զգելան, զմուկան, զդիլումս, զահմադան, զդամբվար, զտապարաստան, զամեդ, *զոուէդ*:

ММ, N 1883, л. 1546: Մարք են որ կոչի բուստիք [կ]ապաւիս յելից կալով հայոց և յերի կասբից ծովուն. և ունի աշխարհս զայսոսիկ. Ջատրպատականն, զոէ և զգիլան, զվրկան, զդիլումա՛յ զահմատան, զդամբաւան, զհեմիան, զտապարաստան, զամէ՛դ, *զովան*:

ММ, N 1864, л. 290-291: ... զոուան...

ММ, N 1717, л. 168: ... զուան...

⁵⁶ В рукописях: կագբից և կասբի՞ժ то же самое կասբից.

Из сравнительного анализа рукописей “Ашхарһацуйца” следует:

1. Так как, ко времени создания “Ашхарһацуйца”⁵⁷ Мидия давно уже не существовала, то армянские авторы упоминают *ма-ров* и территорию их обитания описывается как, находящаяся к юго-востоку от Армении, отдельная географическая единица – ограниченная в пределах территории простирающейся от юго-востока бассейна оз. Урмия до юга бассейна Каспийского моря;

2. упоминаемые провинции и топонимы являлись частями иранского государства: Атрпатакан (Атропатена), Рей, Гилан, Мукан⁵⁸, Дилум (Дилман), hАмадан (Экбатаны), Дамбвар, Тапарастан (Табаристан), Амел, Руан;

3. во всех рукописях упоминается *Атрпатакан*,

4. В рукописях “Ашхарһацуйца” вышеупомянутый топоним приведен в форме *Руан* (Руех, Рван).

5. *Руан* (*Рован*)⁵⁹ локализуется в Иране⁶⁰.

⁵⁷ Авторы: Мовсес Хоренаци (V в.) и продолжатель его труда Анания Ширакаци (VII век).

⁵⁸ Из описываемых местностей *Мовкан* или *Мукан* раньше был в составе Пайтакарана, крайней, юго-восточной провинции Великой Армении (Ս.Երեմյան, Հայաստանը ըստ “Աշխարհացոյց”-ի, էջ 71), Հակոբյան Թ., Սելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, Երևան, հ. 2, 1988, էջ 36, հ. 3, 1986, էջ 867. Йакуби упоминает Мукан в составе провинции Арминии (см. Тер-Гевондян А., Армения и Арабский халифат, Ереван, с. 157).

⁵⁹ Rowan (Persian: روعان, also Row'ān, Rawān and Ro'ān) (https://en.wikipedia.org/wiki/Rowan,_Iran). Есть еще один Rawān далее на восток, в Тохаристане (см. J.Marquart, Erānšahr nach der Geographie des Ps. Moses Xorenac'i, Berlin, 1901, S. 237).

⁶⁰ <https://ru.wikipedia.org/wiki/Табаристан#/media/File:Tabaristan-EN.svg>
https://en.wikipedia.org/wiki/Rowan,_Iran



В крайне несуразном положении оказался также Ф. Ахундов, набросившийся на краткую, информативную статью российского политолога Антона Евстратова, в которой автор представляет свои личные впечатления касательно состояния религиозной ситуации в Арцахе. Ахундова взбесила приведенная А. Евстратовым правдивая информация об Арцахе и Гандзасарском монастыре: “Нагорно-Карабахская республика (НКР, армянское название региона – Арцах) со времен обретения ею независимости воспринимается как один из оплотов Армянской Апостольской Церкви (ААЦ)... На данный момент в Нагорном Карабахе христиан – 99,9 %.... ААЦ действительно сыграла важнейшую роль в истории Арцаха и всего армянского народа – зачастую помимо религиозных функций она в периоды утери государственности брала на себя и политические. К примеру, расположенный в Мартакертском районе НКР монастырь Гандзасар стал настоящим политическим центром средневековой Армении – именно гандзасарский католикос Есаи Асан-Джалалян организовал переговоры армян с российским

императором Петром I, инициировал сопротивление персам, туркам и соседним тюркским племенам и даже изгнал захватчиков лишь силами войск Арцаха и Сюника на 20 лет.

В эпоху национального движения и войны с Азербайджаном 1988–1994 годов Апостольская церковь также выступила в поддержку армян Нагорного Карабаха. В народе до сих пор помнят диаконов Раффи и Тер-Корюна и священника Тер-Григора, взявших в руки оружие во имя своего народа. Излишне говорить, что во многом активности церковных деятелей способствовало мусульманское (пусть и формальное) вероисповедание азербайджанцев, которое видится в армянской среде как символ захвата и порабощения. На данный момент ААЦ имеет в независимом Карабахе статус национальной Церкви. Этот ее исключительный статус отражен в пункте 2 главы 10 Конституции НКР. Представлена Церковь на территории республики Арцахской епархией, возглавляемой архиепископом Паргевом Мартиросяном. В ее распоряжении – кафедральный собор Святого Христа Всеспасителя в Шуши, собор Святого Иоанна Крестителя на горе Гандзасар, церковь Святого Акопа в Степанакерте и др”.⁶¹

Ф. Ахундов, пройдя школу лжи в качестве завсектора администрации президента Азербайджана И. Алиева, выказывая полное незнание, пишет: “Возникает закономерный вопрос: “А где же тогда Эчмиадзин (или Вагаршапат)?” Ответ очень прост – за тысячу километров, у берегов реки Евфрат...”⁶². “Мишенью” его антинаучных выпадов стал Вагаршапат, который из покон

⁶¹ Антон Евстратов, “Колокольни и минареты Карабаха”, Независимая газета, НГ Религии, http://www.ng.ru/ng_religii/2015-08-19/6_karabah.html

⁶² Фуад Ахундов, “Гайна исчезновения книги Орбели раскрыта”, Независимая Газета, 02.09.2015 http://www.ng.ru/ng_religii/2015-09-02/7_orbel.html (далее: ФА).

веков находится в Араратской долине, где и был воздвигнут Св. Эчмиадзин. Однако вдруг, одним росчерком пера Ф. Ахундова Вагаршапат “оказался” “за тысячу километров, у берегов реки Евфрат, в средневековой Византии, там, где проживали и сами армяне до их переселения в XV веке на территории Эриванского ханства. Кстати, на всех документах о приобретении армянскими церковниками участков земли, территории, на которые они переселялись, в том числе и сама Эривань, назывались Азербайджаном, а не Арменией”⁶³. После таких абсурдных заявлений этот высокопоставленный чиновник, выказывая непочтительность по отношению к объективному изложению А. Евстратова, пишет: “Вот такая короткая, но очень антинаучная фраза получилась у господина Евстратова. А теперь некоторые подробности”⁶⁴.

Однако, наоборот, у него самого, Ахундова в его “подробностях” антинаучность и, вообще абсурдность, доходят беспредела, ибо, как он разглагольствует: “Дело в том, что до XV века армянские духовные центры располагались в Малой Азии, где, собственно говоря, и проживали сами армяне, в том числе и сам Вагаршапат, находившийся у берегов реки Евфрат. В преддверии падения Византийской империи и взятия Константинополя османами армянские церковники искали защиту у правителей азербайджанского государства Кара-Коюнлу, которые в рамках своей борьбы с османами были заинтересованы в поддержке Армянской церкви. Таким образом, правители Кара-Коюнлу предоставили Армянской церкви убежище на Кавказе, в Азербайджане, в селе Учкилиса, ныне Эчмиадзин, о чем сохранилось немало документов”.

⁶³ Там же.

⁶⁴ Там же.

Здесь фальсификация, наряду с искажением истории, предстает в качестве информационной лжи. Сведущий читатель "Независимой газеты" без всяких проблем может распознать всю несуразность этой свалки отбросов антимышления.⁶⁵ Ибо известно, что название Вагаршалата связано с именем армянского царя Вагарша I (117-140 гг.), который основал город Вагаршапат (ставшей, наряду с древним Арташатом, столицей Великой Армении) близ Вардгесавана (рядом с Шреш-Блуrom), известного еще со времен Армянского царства [h]Айкян-Ервандакан⁶⁶. В дальнейшем, св. Григор Лусаворич (Просветитель), после провозглашения христианства в Армении первой в мире государственной религией (301 г.), в 303 г., согласно видению, на месте сошествия Единородного,⁶⁷ основал в Вагаршапате Кафедральный собор и от этого город получил также имя Эчмиадзин. Таким образом, все эти события, согласно источникам, произошли в IV в. в Армении, в Араратской долине, у подножья горы Арарат-Масис. Как мог оказаться Вагаршапат [называемый также "Новый город" (Καίτη πόλις), согласно Диону Кассию]⁶⁸, вместе со своим армянским населением и строениями, а также, вдобавок (если бы только Ф. Ахундов мог знать) с греческой и латинской надписями [о временно размещенных (в 70-80х гг. IIв.) там двух отрядах

⁶⁵ Необходимо отметить, что есть множество городов с двумя и более именами. Например, Мажак – Кесария (Каппадокийская), Аргенторат-Страсбург, Воскресенск-Истра и т.д.. А теперь представьте! Кому-то вздумается родной город Василия Великого (330-379 гг.), Кесарию из Малой Азии "представить" в какой-либо другой стране и молоть вздор, наподобие Ахундову.

⁶⁶ Մոսիսու Խորենացի, էջ 199:

⁶⁷ Ազարանգեղայ Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1909, էջ 386-387:

⁶⁸ Подробный анализ сообщения Диона Кассия см. Հ.Սանաթյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 35-39.

римских легионов XV Apollinarius, XII Fulminata], “за тысячу километров, у берегов реки Евфрат” ???

Учитывая всю безграмотность состряпанной статейки Ф. Ахундова, любой уважающий себя исследователь не вошел бы с ним в полемику. Однако, так как он вступил в информационную войну, необходимо показать его настоящее место на мусорной свалке информационных вирусов. Ибо понятен уровень его “исторической подготовки”: он латает свое “изложение” все новыми измышлениями и в результате получается мозаика фальсификаций. Вместе с тем, выясняется секрет его столь быстрого и неадекватного реагирования на статью А. Евстратова. Оказывается Ахундов желает выставить напоказ свое сочинительство об И. Орбели. Ведь первая попытка не удалась, ибо его вывели на чистую воду основатель и бессменный руководитель аналитического портала “Восканапат” политолог Левон Г. Мелик-Шахназарян⁶⁹ и С. Тарасов⁷⁰. А после кончины Л. Мелик-Шахназаряна (12 августа 2015 г.) Ф. Ахундов вспорхнул и в начале сентября набросился на А. Евстратова. Предметом приступа фальсификаций Ахундова является “новая” волна фальсификаций посредством очернения научного наследия и светлой памяти И. Орбели.

⁶⁹ Мелик-Шахназарян Л., Академия мошенников. Азербайджан пытается совокупить историю с топором или О книге академика И. Орбели «Надписи Гандзасара и hАвоцлтука» <http://voskanapat.info/?p=83>

⁷⁰ “...азербайджанский народ является не прямым потомком албан... Азербайджан подвергает ревизии устоявшуюся в историографии версию о своей национальной идентичности, занят поисками “новой исторической родины”, считая себя чуть ли не правопреемником всего культурно-исторического наследия Кавказской Албании” (Тарасов Станислав, Зачем Азербайджану новая “историческая родина”).

<https://www.google.com/search?client=opera&q=ЗАЧЕМ+АЗЕРБАЙДЖАНУ+НОВАЯ+«ИСТОРИЧЕСКАЯ+РОДИНА»+%2F+СТАНИСЛАВ+ТАРАСОВ&sourceid=opera&ie=UTF-8&oe=UTF-8>

При этом Ахундов ни слово не говорит о статье Л. Мелик-Шахназаряна, который своей основательной критикой развенчал и разгромил его фальсификационную публикацию.

Ф. Ахундову показалось, что после кончины Л. Мелик-Шахназаряна, он может без всякой ответственности перед научной и широкой читательской общественностью продолжать свою клевету в адрес И. Орбели, ибо он вновь пишет: “В 1919 году И. Орбели издал книгу “Надписи Гандзасара и һавоцптука” и сразу же уничтожил весь тираж. Около 100 лет в научных кругах эта книга считалась утерянной. Поэтому я решил разыскать ее и обнаружил в архивах Петербурга. В своем исследовании я показал причины столь странного поступка, а также привел переводы нескольких надписей из этой книги”⁷¹.

Все фальсификации Ф. Ахундова и информационная шумиха вокруг искусственно раздутой проблемы по поводу неопубликованного сборника И. Орбели разваливается, когда, наряду с аргументированной критикой Л. Мелик-Шахназаряна, открываем изданную за несколько десятков лет до этого, фундаментальную книгу Б. Улубабяна “Княжество Хачена в X-XVI веках” (Ереван, 1975, на армянском языке). Армянский историк, досконально изучивший политическую историю, материальную и духовную культуру Арцаха, в связи с исследовательской работой И. Орбели, отметил: “С целью изучения богатого лапидарного материала Хачена... Орбели в начале августа 1909 г. прибывает в Хачен. Он здесь остается лишь 17 дней и записывает около 270 надписей: 84 из Гандзасарского монастыря, 21 из Вачара, Хачхута и села Цмакаһох, 13 из һАваптука (һАвоцптук), 36 из анапата Кошик, 37 из монастыря св Акоба Мецаранка, 11 из святых мест Джухт-хача

⁷¹ ФА.

и Ханчал-хача, 35 из Хатраванка и 33 из Дадиванка. Все эти надписи (кроме надписей Гандзасара и hАвоцптука) И. Орбели, со свойственной ему добросовестностью и заботой, переписал в общей тетради малого размера, на титульной странице которой написал "Армянские надписи Хачена". По-видимому, из этой тетради должен был сразу сделан набор в типографии, поскольку как раз под заглавием записано поручение автора об обстоятельствах в связи с выбором букв и набора... Эта тетрадь находится в архиве Института Востоковедения Ленинградского отделения Академии наук СССР. В том же архиве находится также коллекция надписей Гандзасара и hАвоцптука в форме скорректированного типографского оттиска. Дело в том, что еще в 1909 г. Орбели отложил издание первой тетради и данного сборника готовых к печати вследствие отсутствия соответствующего типографического шрифта и снова обратился к ним в 1919 г., решив все собранные лапидарные надписи издать отдельными маленькими сборниками. Он в первый сборник из этой серии включил надписи Гандзасара и hАвоцптука. Однако, к несчастью, по каким-то причинам издание этого сборника также не было осуществлено и остался лишь скорректированный оттиск, состоящий из 42 страниц малого формата⁷². Как следует из некоторых подробностей, связанных с текстом тетради И. Орбели, Б. Улубабян исследовал неизданный сборник, находящийся в архиве Института Востоковедения⁷³.

Таким образом, достаточно этих строк из труда Б. Улубабяна, чтобы свести на нет все разглагольствованиа Ф. Ахундова о том, что "100 лет в научных кругах эта книга считалась

⁷² Ալուրաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XV դարերում, Երևան, 1975, էջ 21-22:

⁷³ Там же.

утерянной”. Более того, как отметил Левон Мелик-Шахназарян, “В 1919 году в Петрограде случилось наводнение, вода залила типографию, безнадежно испортив многие шрифты, в том числе и армянский. Издание книги пришлось отложить до 1922 года. Ахундов, получивший копии гранок, знает эту историю, и от этого его ложь выглядит еще более мерзостной... Мы вынуждены сильно огорчить и разочаровать всю эту шайку мошенников от истории: совсем недавно редакция Voskanapat.info приобрела тот же “единственный в мире” экземпляр, который столь старательно “цитируется” азербайджанскими историками. И теперь мы имеем возможность с фактами, то есть, гранками книги Орбели на руках доказать, что все инсинуации азербайджанских политиков и историков вокруг этой книги являются наглой ложью... В предисловии к самой книге, написанной, кстати, самим И. Орбели, есть такие строки: “При списывании надписей выяснилось, что в Хачене, более чем в какой-либо другой области Армении, надписи гибнут и исчезают”. И. Орбели имеет в виду естественную гибель десятков надписей, “вырезанных на слоистом, крошащемся камне”. Азербайджанские мошенники от истории цитировать эти строки из “найденной книги”, конечно, не будут, но, как мы видим, Орбели не сомневается в принадлежности Хачена Стране Армянской. Убеждение выдающегося ученого основывается не на эмоциях, а на глубоком знании истории края, в том числе тщательном изучении надписей на Гандзасаре и других храмах региона”⁷⁴.

В заключении необходимо отметить, что разоблачение турецко-азербайджанских фальсификаций находится в сфере информационной войны, в которой победа на стороне истории и исторической географии Армении (Великая Армения, Малая Армения и Киликия), засвидетельствованных письменными, материальными и духовными первоисточниками и памятниками исторического наследия Айастан-Армении, находящейся у истоков мировой цивилизации.

⁷⁴ Мелик-Шахназарян Л., Академия мошенников. <http://voskanapat.info/?p=83>

SOME ENGLISH-LANGUAGE ORIENTOLOGICAL WORKS,
FRENCH TRANSLATION OF "ASHKHARHATSUYTS",
UNPUBLISHED COLLECTION "GANDZASAR AND
HAVOTSPTUK" VERSUS AZERBAIJANI FALSIFICATIONS

SUMMARY

It is usual to speak about achievements in connection with new discoveries in the world science. As opposed to it, in artificially-formed Azerbaijan with each new turn of falsifications of history and historical geography more and more is disclosed the untenability of bellicose ignorance. Newly-fledged Azerbaijani "researchers" in the absence of their own history and, consequently, historical sources, this time have chosen as objects of falsifications some English-language orientological works, the translation of "Ahskharhatsuyts" (Geographic Atlas) from old Armenian (grabar) to French by Saint-Martin and the unpublished manuscript "Ganzasar and hAvotsptuk" by I. A. Orbeli.

Unmasking the Turkish-Azerbaijani falsifications is within the sphere of information warfare, in which victory is on the side of the history and historical geography of Armenia (Great Armenia, Armenia Minor and Cilicia) attested by the written, material and spiritual sources and the monuments of the historic heritage of Hayastan-Armenia, which is at roots of world civilization.

ԷԴՈՒԱՐԴ ԴԱՆԻԵԼՅԱՆ, ԱԼԻՍԱ ԴՈՒՄԻԿՅԱՆ

ԱՆԳԼԱԼԵԶՈՒ ՈՐՈՇ ԱՐԵՎԵԼԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ,
«ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ի ՖՐԱՆՍԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ,
ՉՂԱՏԱՐԱԿՎԱԾ «ԳԱՆՁԱՍԱՐԻ ԵՎ ՀԱՎԱՊՏՈՒԿԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ԸՆԴԴԵՄ
ԱԴԲԵԶԱՆԱԿԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՄՓՈՓՈՒՄ

Համաշխարհային գիտության մեջ ձեռքբերումների մասին ընդունված է խոսել նոր հայտնագործությունների առումով: Հակառակ դրան, արհեստաձին Աղբբեջանում պատմության և պատմական աշխարհագրության կեղծարարության յուրաքանչյուր նոր փուլով սովելի է բացահայտվում մարտնչող տգիտության սնանկությունը: Չունենալով սեփական պատմություն և հետևաբար՝ սկզբնաղբբյուրային հիմք, նորաթուխ աղբբեջանցի «հետազոտողներն» այս անգամ որպես իրենց կեղծարարությունների առարկա են ընտրել անզլալեզու արևելագիտական որոշ երկեր, «Աշխարհացոյց»-ի՝ զրաբարից ֆրանսերեն Սեն-Մարտենի կատարած թարգմանությունը և Հ.Ա. Օրբելու՝ «Գանձասարի և Հավապտուկի արձանագրությունները» չիրատարակված ժողովածուն:

Թուրք-աղբբեջանական կեղծարարությունների դիմակազերծումը տեղեկատվական պատերազմի ոլորտում է, որում հաղթանակը Հայոց պատմության և պատմական աշխարհագրության (Մեծ Հայք, Փոքր Հայք և Կիլիկիա) կողմն է, վկայված՝ համաշխարհային քաղաքակրթության ակունքներում գտնվող Հայաստան-Արմենիայի պատմական ժառանգության՝ զրավոր, նյութական և հոգևոր սկզբնաղբբյուրներով ու հուշարձաններով:

ՀՄԱՅՆԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայ ժողովուրդը, անցնելով պատմական բարդ ու բազմաբովանդակ ուղի, կերտել է իր հարուստ մշակույթը: Հազարամյակների խորքից եկող իր լեզվով, գրով և մշակութային նոր արժեքներ ստեղծելով: Գիրն, իրավամբ, դասվում է մարդկության մեծագույն նվաճումների շարքը: Գիրը հնարավորություն է տվել հազարամյակներով պահպանել մարդկային մտքի նվաճումները: Իր ունեցած քաղաքակրթական դերի համար ժողովուրդների հավատալիքներում գիրը սրբացվել է և համարվել աստվածաստեղծ: Այս մասին են վկայում նաև հեթանոսության ժամանակներում շատ ժողովուրդների դիցապաշտական համակարգում գոյություն ունեցած գրիք, դպրությունն ու իմաստությունը հովանավորող աստվածությունները, ինչպիսիք են հայկական Տիրը, եգիպտական Թոտը, բաբելոնյան Նաբուն, հնդկական Սարասվատին, հունական Հերմեսը և այլն:

Արդեն քրիստոնեության դարաշրջանում ստեղծվեց սրբերի և սրբացման մի համակարգ, որի մեջ ուրույն տեղ ունեցան գրի արարումն ու դպրությունը մարմնավորող մարդիկ, որպիսիք են օրինակ՝ հայոց մեջ Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևը, Վոստիշապուհ արքան, թարգմանիչները, սլավոնների միջավայրում՝ Կյուրեղն ու Մեթոդիոսը և ուրիշներ: Պատմական այս ժամանակահատվածը մի շարք հարցեր է թողել, որոնք կարոտ են ուսումնասիրության: Դրանցից է նաև նախամաշտոցյան գրի հարցը, որը հայագիտության հանգուցային խնդիրներից է. քրիստոնեությունից առաջ հայ ժողովուրդն ունեցե՞լ է, արդյոք, սեփական գիր ու գրականությունը, թե՞ օգտվել է ուրիշ գրերից և այլալեզու գրություններից:

Ա. Գարագաշյանն, անդրադառնալով նախամետրոպյան շրջանում հայկական գրի գոյության հարցին, անվերապահորեն համարում է, որ չէ ճշմարիտ այն, որ ընդհանրապես կը կարծուի, թե Հայք յառաջ քան զՄետրոպ չունեին նշանագիր, ուստի և էին անմասն դպրութենէ: Նայելով հանգամանաց հայերէն լեզուին յառաջ քան զՄետրոպ՝ անհնար էր լեզուին առանց դպրութեան հասնել յայն աստիճան զարգացման՝ յորում կը գտնենք զնա ի հատուկոտորս երգոց վիպասանաց, որոնց կատարեալ նմանութիւն է թարգմանչաց լեզուին»¹:

Ակադեմիկոս Ն. Մառն էլ կարծում է, որ «ողջ Կովկասը, ներառյալ նաև Հայաստանը, կուլտուրական են եղել դեռևս ասորաբաբելական քաղաքակրթության ժամանակաշրջանում: Հայաստանում մայրենի լեզվով գրականության գոյություն ունեւր մեր թվարկությունից դեռևս մի քանի դար առաջ»²: Լեոն, իր հերթին, խոսելով հին հայոց հեթանոսական մշակույթի մասին, եզրահանգում է. «Կարելի է ուրեմն, ավելի մեծ հավանականությամբ ենթադրել, որ հայկական նշանագրեր գոյություն ունեին հին ժամանակներից... Որ հայ ժողովուրդը պիտի ունենար իր գրականությունը. այդ թելադրում է ասել և նրա լայն տարածված և ներքնապես զարգացած հեթանոսական պաշտամունքը»³:

Ուրիշ շատ հետազոտողներ են ենթադրություն կամ համոզմունք հայտնել նախամաշտոցյան գրի գոյության վերաբերյալ: Ականավորի հնագետ Հ. Մարտիրոսյանը, իր աշխատության մեջ մատնացույց անելով մի շարք ժայռագիր նշաններ, հանգում է այն մտքին, որ «Նախնադարյան Հայաստանում, սկսած երրորդ հա-

¹ Գարագաշյան Ա., Քննական պատմություն Հայոց, Դ մաս. Թիֆլիս, 1895, էջ 39:

² Март Н. Я., Ани, Книжная история города и раскопки на месте городища, М.-Л., 1934, էջ 5:

³ Լեո, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1966, էջ 507:

գարամյակից մեր թվարկությունից առաջ, գործ էին անում հիերոգլիֆ նշաններ, իսկ հետագայում նաև գրություն»⁴:

Հեթանոսական Հայաստանի գրի և գրականության հարցը մեծապես կապված է մեհենական մատենագրության հետ: Ինչպես բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանում մեհյանները, կրոնական կենտրոններ յինելուց բացի, եղել են նաև մշակութային կենտրոններ: Հայաստանի քրմական դասը, ելնելով իր օրակարգային արարողությունների անհրաժեշտությունից, պետք է որ ունեցած լիներ ծիսարարողակարգային բովանդակությամբ գրքեր, սոմարական հաշվումների մատյաններ, օրենսգրքեր և այլն:

Ազաթանգեղոսի վկայության համաձայն՝ քրիստոնեության ընդունումից հետո հայկական մեհենագրերը, որոնք ընկալվում էին իբրև հին՝ նախաքրիստոնեական պաշտամունքի հիմնական կրողները, ոչնչացվեցին նոր կրոնի տարածման առաջին սարիներին: Ավերվեցին նաև հեթանոսական տաճարները, և առաջիններից եղավ Տիրի՝ դպրության աստծո տաճարը Երազմույնում: Տրդատ արքան, իր գորքի զուխ անցած, Գրիգոր Լուսավորչի հետ միասին, քանդում, ավերում էին հեթանոսական մեհյանները և դրանց տեղերում քրիստոնեական վանքեր, եկեղեցիներ, ժամատներ կառուցում: Այսպես, Ազաթանգեղոսը պատմում է. «Ապա յինքն իսկ թագաւորն խաղայր գնայր ամենայն զօրօքն հանդերձ ի Վաղարշապատ քաղաքէ՝ մեհյաններ քանդելու: Արտաշատի ճանապարհի վրա նրանք նախ Տիր աստծո տաճարը «քուկեալ աւերեալ քանդեցին», իսկ Արտաշատում՝ «ամենայն շինուածք մեհենին ի հիմանց դղրդեալ տապալեցան»⁶: Անիում կործանեցին Արամազդի տաճարը, Երիզա ավանի մեհյանում փշրեցին Անահիտի ոսկյա արձանը, ավերեցին Միհրի տաճարը Բագահատի-

⁴ Мартиросян А. А., Первобытныи иероглифы Армении и их урарто-армянские двойники, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1971, N 9, էջ 74:

⁵ Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909, էջ 404:

⁶ Անդ:

ճում, Սենյակ Աստղկա և Վահագնի կոչված մեիյանը Աշտիշատում, Նանեի մեիյանը՝ Թիլ ավանում, Դարանաղյաց գավառի Թորոյան գյուղում՝ «սպիտակափառ» Բարշամինա աստծո մեիյանը, «կործանեին, և գպատկերն նորին փշրեին»⁷: Այս և շատ այլ հեթանոսական տաճարներ ավերելով, դրանց ունեցվածքն ու հարստությունները փոխանցում էին եկեղեցուն:

Սակայն է. Դանիելյանը «Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու հոգևոր ակունքները» գրքում, հետագոտելով Մովսես Խորենացու հաղորդումները, նշում է, որ 3-րդ դարի երկրորդ կեսին, Սասանյանների նվաճողական քաղաքականության հետևանքով, Հայաստանում ստեղծվում է քաղաքական խառնաշփոթ վիճակ: Պարսկաստանի քաղաքական ճնշման հետևանքով Հայոց գահին հաջորդաբար նստեցին մի քանի Սասանյան թագաժառանգներ (Որմիզդ-Արտաշիր և ուրիշներ): Նրանց գահակալության տարիներին, Սասանյանների կիրառած բռնությունների հետևանքով, կործանվեցին հայոց ազգային (հեթանոսական) պաշտամունքի շատ կենտրոններ: Շապուհ Առաջինը իր որդիների անուններով հիմնադրում էր անվանական շինություններ: Պարզ է, որ դրանք կառուցվում էին պարսիկ գրադաշտական մոզերի կողմից քանդվող հայկական ազգային սրբությունների տեղում⁸:

Պատմական այդ շրջանից մի դրվագ է արձանագրում Պատմահայրը՝ գրելով, որ Որմիզդ-Արտաշիրը «զմեհենիցն պաշտամունս ստաւել ևս յորդորէէ. այլ և զհուրն որմզդական, որ ի վերայ բազնին որ ի Բագտան, անշէջ հրամայէ լուցանել: Բայց զանդրիսն, զոր արար Վաղարշակ պատկեր իւրոց նախնեացն հանդերձ արեգակամբ և լուսնիւ յԱրմաւիր, և փոխեցան յԱրմաւրայ ի Բա-

⁷ Անդ, էջ 404-409:

⁸ Դանիելյան Էդ., Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու հոգևոր ակունքները, Երևան, 1996, էջ 14:

գարան և դարձեալ յԱրտաշատ՝ գայնոսիկ փշրէ Արտաշիր: Եւ գերկիրս գրով ընդ հարկաւ իւրով արկանէ, և ամենևինք զիւր անունն հաստատե՛: Վերջում էլ հավելում է, որ նա մեր երկիրը կառավարեց պարսիկ գործակալների ձեռքով, ինչպես իր երկրներից մեկը, քսանվեց տարի, նրանից հետո էլ մեկ տարի թագավորեց նրա որդին՝ Շապուհը, մինչև Տրդատի թագավորելը⁹:

Այս ամենը հաշվի առնելով, է. Դանիելյանը եզրակացրել է, որ ազգային սրբավայրերը Հայաստանում քանդվել էին նախքան քրիստոնեությունը պետական կրոն հռչակելը, և դրանք քանդողները եղել են, ամենայն հավանականությամբ, զրադաշտական մոզերը, այլ ոչ Ս. Գրիգոր Լուսավորիչը և նրա հետևորդները, ինչպես նրանց վերագրվել է որոշ սկզբնաղբյուրներում և, դրան հետևելով, հետագա գրվածքներում¹⁰:

Ավերվելով ու ոչնչացվելով հանդերձ, շատ մշակութային տարրեր ու երևույթներ պահպանվեցին քրիստոնեության դարաշրջանում, այդ թվում և մեհենագրերը, որոնք իսպառ դուրս չեկան գործածությունից, պահպանվելով հատկապես ժողովրդական հավատալիքների ոլորտում: Քրիստոնեության պետական կրոն հռչակումից հետո սկսվում է մեհենագրության պատմության նոր՝ գաղտնի փուլը, որը տարբեր դրսևորումներով շարունակվում է մինչև մեր օրերը: Այդ դրսևորումներից սույն հողվածի մեջ քննության կառնենք հմայագրերը:

Հմայագրերը հանդիպում են ժապավենաձև և գրքային հմայլիներում, որոնք բովանդակում են կախարդական և մոգական նշանակությամբ աղոթքներ, հմայանքի ու թովչանքի բանաձևեր և նշանագրեր¹¹: Սրանք գալիս են նախաքրիստոնեական

⁹ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Բնական բնագիրը և ներածութիւնը Ս. Աբեղեանի և Ս. Հարութիւնեանի, Տիղիս, 1913 (վերահրատ. Երևան, 1991), Բ, 2Է, էջ 216:

¹⁰ Դանիելյան Է., նշվ. աշխ., էջ 15:

¹¹ Մովսիսյան Ա., Հայկական մեհենագրություն, Երևան, 2003, էջ 129:

ժամանակներից, հ պատահական չէ, որ հայ եկեղեցին իր գոյության ողջ ընթացքում պայքարել է հմայիլների և հմայագրության կիրառման դեմ:

Հայ մատենագրության հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի գրական երկերից պահպանվել և մեզ է հասել «Խրատագիր և զգացուցիչ» շրջաբերական թղթերից մի փոքրիկ հատված, որն ուղղված է հեթանոսական հավատալիքների և, մանավանդ, հմայության ձևերի դեմ. «Երազք եւ հմայք եւ յոտութք եւ դիւութիւնք եւ թովչութիւնք եւ հարցուկք եւ ձեռնաձուրք եւ դեղահատք եւ խտիրք եւ որ ինչ նման են սոցին»: Մաշտոցը հայտնում է, որ բոլոր նրանք, ովքեր հավատում են կամ իրենք են կատարում այդպիսի հմայություններ, «նզովեալ են ի սուրբ եկեղեցոց և արտաքս ընկեցեալ յաստուածային հրամանց»¹²:

Հարուստ հայ մատենագրությունը հնարավորություն է ընձեռում հետևելու հեթանոսական հավատալիքների ու պատկերացումների դեմ պայքարի առանձին դրվագներին, նոր տվյալներ քաղելու մեր ժողովրդի հնամենի պատկերացումների, ծեսերի, կախարհության, մոզական բժշկության ձևերի ու եղանակների և հարակից այլ հարցերի մասին:

V դարի հայ նշանավոր մատենագիր Եղիշեից պահպանվել է մի ընդարձակ աշխատության, հավանաբար «Արարածոց մեկնութեան» մասը կազմող մի արժեքավոր պատառիկ: Այստեղ Եղիշեն ժողովրդական սնահավատությունների մասին հետաքրքիր կարծիք է հայտնել՝ «Թէ որ այլանդակապէս ընդ այս մտածութիւն անցանէ ատար խորհրդովք՝ նշանագիրս զծել կամ մարգարեանալ առ յապայս եւ երագահմայ լինել... այն արտաքոյ է քրիստոնէութեան»¹³: Այսպիսով, V դարի 80-ական թվականնե-

¹² Խուչիկյան Լ., Նախամեսրոպյան գրի հարցը և հմայագրերը, - "Պատմաբանասիրական հանդես", 1963, N 4, էջ 147:

¹³ Մատենագրութիւնք Եղիշեի, Վենետիկ, 1896, էջ 376:

րից ուղղակի վկայություն ունենք ինչ-ինչ նշանագրերի մասին, որոնք գրվում էին «օտար խորհրդով» (իմա՝ հեթանոսական խորհրդով) այնպիսի մարդկանց կողմից, որոնց եկեղեցական հեղինակը համարում է «արտաքոյ քրիստոնեություն»:

Նշանագրերի մասին հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել նաև Հովհան Մանդակունուն (V դ.) վերագրվող, բայց Հովհան Մայրավանեցուն (VII դ.) պատկանող «Թուղթ վասն հմայից դիւթականց և անօրէն յուռութողաց» ճառի մեջ¹⁴:

Ճառի հեղինակը շատերի նման ձգտում է համոզել, որ դյութերը, թովիչները, հարցուկներն ու բոլոր հմայիչները սատանայի պաշտոնյաներ են, քրիստոնյաները չպետք է խաբվեն նրանց պատիր հմայություններով, պետք է խորշեն նրանցից՝ որպես հեթանոս խաբեբաներից: Նա գրում է՝ «Իսկ եթէ անձամբդ առ դիւթս եւ առ թովիչս եւ առ հարցուկս եւ առ ուռութն եւ առ խտիրս եւ առ հմայս գերեցիս, ոչ եւս պարտ է գանձն կոչել քրիստոնեայ, զի հեռացեալ ես ի Քրիստոնէ»¹⁵: Այնուհետև հեղինակը ճառի մեջ թվարկում է բազմաթիվ հմայական ձևեր ու եղանակներ, որոնցից ուշագրավ է հատկապես «գիր պահարան ընդ անձն արկանել»-ը¹⁶:

Մայրավանեցին խաբված է համարում նրանց, ովքեր «գիր պահարան» գրողներին բժշկի տեղ են ընդունում, քանի որ այդ գրերը բնավ չեն կարող որևէ ներգործություն ունենալ հիվանդների վրա, քանի որ իսկական բժիշկները բուժում են սպեղանիով: Մայրավանեցին նկարագրում է այդ «գիր պահարանների» կիրառության ձևերը, որոշ չափով նաև բովանդակությունը, ճառի ստորև բերվող հատվածում. «Գրեալ պահարանս ի փողս ցաւածիցն արկանեն և ժամուկես մտացածին բանից եւ գանուան Քրիստոսի ընդ նոսին արկանեն, զի գրածն աստուածական համարեցի»¹⁷:

¹⁴ Խաչիկյան Լ., Նախամեսրոպյան գրի հարցը և հմայագրերը, էջ 147-148:

¹⁵ Ճառք տեառն Յովհաննու Մանդակունույ, Վենետիկ, 1836, էջ 184:

¹⁶ Անդ, էջ 185:

¹⁷ Անդ, էջ 187:

Հմայագրերի հարցի հետ կապված բացառիկ նշանակություն ունի XIII դարի նշանավոր առակագիր և քարոզիչ Վարդան Այգեկցու «Վասն կոապաշտութեան» անտիպ քարոզը: Այգեկցու հաղորդած տվյալները վկայում են, որ անգամ քրիստոնեության ընդունումից դարեր անց էլ ժողովրդի առօրյայում դեռևս կենսունակ էին հեթանոսական պատկերացումները, ծեսերն ու սովորույթները: Ըստ Այգեկցու, սատանայի սերմանած չարիքներից է և այն, որ «մնաց առ ազգս կանանց, նաև յազգս արանց՝ ուսումն ծրարագործութեան»¹⁸ եւ այլ փաթեթք սատանայականք եւ խաբանաւք ուսուցանեն մի գմի եւ գտգէտս կործանեն ի նոյն չարն»¹⁹:

Կոապաշտության սյուներն են՝ աստղաբաշխությունը, կախարդությունը, մարդկանց ճակատագրի գուշակությունը և այլն: Այդ սյուները, սակայն, արձակել են բազմաթիվ ճյուղեր, որոնք թվարկված են Այգեկցու կողմից. «Դեղատութիւնն, եւ ձեռնածութիւնն, եւ լուսնագիտութիւնն, եւ աստղաբաշխութիւնն, եւ չարասել գօրն եւ կամ գպահն, ... հայել ի կենդանակերպս եւ ասել բախտարկութիւն եւ ճակատագրութիւն իմն՝ չարի պատահել կամ բարոյ, քննել ախտարացոյցս եւ ծննդաբանել գթիվ ամաց մարդկան եւ այլ ծրարք և հանգուցակք իմն եւ լեզուակապք եւ քաղցրադէղք եւ անասնակապք իմն, գոր գայլակապս կոչեն, նաեւ կապեն գայր, զի թուլացեալ ի կին մերձենալ ոչ կարէ, եւ այլ անբավ հեթեթանք»²⁰:

Այգեկցու վկայությամբ՝ իր ժամանակակիցները անվերապահորեն հավատում էին հմայություններին և կախարդություններին և զգալի չափով հեռացել էին եկեղեցուց և քրիստոնեությունից: Նգովքը, արտաքսումը եկեղեցուց, յոթնամյա ապաշխարությունը և սահմանված այլ պատիժներն անգամ ի գորու չեղան արմատախիլ

¹⁸ Քարոզի մեկ այլ հատվածում «ծրարագործութեան» փոխարեն ասված է «ղիւաց շունչ ծրար»:

¹⁹ Մատենադարան, ձեռագիր N 8030, էջ 209 ա:

²⁰ Մատենադարան, ձեռագիր N 8030, էջ 209 բ:

անելու հազարամյա հնությունից եկող հեթանոսական հավատա-
լիքներն ու պատկերացումները ժողովրդի գիտակցությունից:

Հմայությունների և կախարդությունների գոյության և կիրառման վերաբերյալ վկայություններ կան նաև այլ ձեռագրերում: Կախարդության և գուշակության դեմ «Կանոնագիրք Հայոց»-ի մեջ ներմուծվել են նաև մի շարք կանոններ, որոնցից երկուսը սերտորեն առնչվում են քննարկվող նյութին: «Հարցմունք պեսպեսու եւ պատասխանիք Աթանասի Աղեքսանդրացոյ եպիսկոպոսի» խորագրով կանոնախմբի մեջ, օրինակ, կա այսպիսի հարց և պատասխան. «Հրց. Վասն պահպանաց երդմունս իմն եւ պահպանութիւն գրեն եւ անուանս ազգի ազգիս, զոր մեր ոչ գիտեմք. պա՞րտ է համարձակ թողուլ զնոսա առնել զայն եւ կարճել: Պատ. Լզովել պարտ է եւ յեկեղեցվոյ եւս հանել»²¹:

Մեկ այլ կանոնախմբի մեջ կարդում ենք. «Որ զհետ դիւթաց երթան եւ կամ զգիրս կախարդաց եւ կամ զիրս կախարդութեան ուսանին եւ զղջան ի բոլոր սրտէ, է (7) ամ ընդ ունկնդիրսն ապաշխարե»²²:

Այսպիսով՝ ուսումնասիրված նյութերը վկայում են այն մասին, որ հայ մատենագրության սկզբնավորման ժամանակաշրջանից մինչև ուշ միջնադար, հայ բախտագուշակներն ու մոզական բժշկությամբ զբաղվող անհատները, ի թիվս այլ կախարդությունների, գծել են նաև ինչ-ինչ նշանագրեր (Եղիշե), հիվանդների վզներին «գրեալ պահարան»-ներ են արկանել (Հովհան Մայրավանեցի), «դիւաց շունչ ծրար»-ներ ու «սատանայական փաթեթ»-ներ կազմել (Վարդան Այգեկցի), «զգիրս կախարդաց գրել և ուսուցանել («Կանոնագիրք Հայոց»)» և այլն:

Հնարավոր է արդյոք պարզել, թե ինչ են եղել և ինչ տեսք են ունեցել հայ եկեղեցու վարդապետների վկայությամբ հեթանոսա-

²¹ Մատենադարան, ձեռագիր N 6409, էջ 60 բ:

²² Մատենադարան, ձեռագիր N 7066, էջ 11 բ:

կան հնությունից ժառանգված կախարդական կամ հմայական այդ գյուերը:

Այս հարցին պատասխանելու համար առաջին հերթին դիմելու ենք բազմաթիվ ձեռագիր օրինակներով մեզ հասած հմայիների և ախտարական ձեռագրերին: Հմայիլները գրավում են մեր ուշադրությունը նախ և առաջ իրենց արտաքին տեսքով: Ի տարբերություն բոլոր մյուս ձեռագրերի՝ նրանք ժապավենաձև փաթեթների տեսք ունեն (շուրջ 10 սմ լայնքով և երբեմն 10 մ ավելի երկարությամբ):

Հայ գրականության սկզբնավորման ժամանակաշրջանում թե՛ Հռոմեական կայսրության մեջ, թե՛ Ասորիքում, ամենուրեք տարածված էին առանձին տետրակներով և նրանց միացումով ստեղծված գրքերը: Փաթեթավոր գրքերն, ընդհանրապես, հմայիլները, մասնավորապես, իրենց արտաքին ձևով գրքի ավելի հին տիպի ներկայացուցիչներ են: Առավել հետաքրքրական են հմայիլներն իրենց բովանդակությամբ²³:

Մանուկ Աբեղյանը, որ նույնպես անդրադարձել է հմայագրերին, հասկապես դրանց կիրառմանը ժողովրդական սովորութակարգում, բացատրում է, թե ինչպիսին են դրանք և ինչպես են օգտագործվել. «Հմայական ասույթները, որոնք աղոթք են կոչվում, տակավին շատ են գործածական: Դրանք կամ գրավոր են կամ բանավոր: Առաջինները հմայողների կողմից գրվում են թղթի երկար շերտերի վրա, որ ծալած կարում են հագուստի մեջ և հագնում: Հմայական բերանացի աղոթքներն ապրում են հենց իրեն՝ ժողովրդի բերանում, և հարկ եղած դեպքում ասվում: Գրավոր հմայիլների վրա գրվում են նաև քրիստոնեական աղոթքներ, սակայն բուն երդմնեցուցական բանաձևերը նույն բովանդակությունն ունեն, ինչ ժողովրդական բանավոր հմայական աղոթքները: Միայն թե՛ գրավոր հմայական աղոթքների մեծ մասը արձակ է,

²³ Խաչիկյան Լ... Նախամեսրոպյան գրի հարցը և հմայագրերը, էջ 150:

մինչդեռ բանավորներն, ընդհակառակն, թողցիկ ոտանավորներով են հորինված և խոր հնության դրոշմ են կրում: Դրանք մեծ մասամբ երկխոսության ձև ունեն, կամ սկսվում են վիպական մի նախաբանով: Բովանդակությունն ինքնին հաճախ անհասկանալիության չափ աղավաղված է: Հմայական աղոթքներն ուղղված են չար ոգիների դեմ, որոնք վնասում են մարդկանց և հիվանդություններ բերում»²⁴: Եվ բերում է հմայական աղոթքների օրինակներ, որոնցից՝

Որդի Գալուստին, / Հովիվ էր Քրիստոսին,

Նստեր օխտը ճաշփին, / Կը լար, կ' ողբար:

– Հէ՛ր լաս, հէ՛ր ողբաս, - / Հարցուց նրան Քրիստոս:

– Իմ տեր, կը լամ, կ' ողբամ, / Կը վախեմ գելից-գազանից,

Եվ ամենայն ջանավարից, / Որ շուտ գան մեջ գիշերին:

– Գնա՛, մտի՛ր սուրբ Սիմեոնին, / Առ երկթե ժնջիլ,

պոպտե բալնիք,

Դի՛ր գողն ի ոտին, գելն ի բերան, / Եվ ամենայն ջանավարին,

Որ ժուտ կգան մեջ գիշերին²⁵:

Ժապավենաձև, ապա նաև սովորական տեսք ստացած հմայիչներն են, որ պահպանել են հեթանոսական հավատքի խոր կնիքը կրող մեծաքանակ այնպիսի հմայական բանաձևեր, պահպանիչ գրեր ու աղոթքներ, որոնց մասին իրենց ճառերում ակնարկներ ունեին հեթանոսական հավատալիքների դեմ պայքարող վերոհիշյալ հայ մատենագիրները: Ահա այդ կարգի հմայական մի քանի բանաձևեր.

1. ԳԻՐ ՉԱՐ ԱՉՔԻ

²⁴ Աբեղյան Մ., Հայ ժողովրդական հավատքը, Երկեր, հ. է., Երևան, 1975, էջ 91-92:

²⁵ Անդ, էջ 94 (վերցված է Նավասարդյան Տ., Հայ ժողովրդական հեքիաթներ, գրույցներ, երգեր, աղոթքներ, ավորություններ և այլն, գիրք VI, Թիֆլիս, 1890, էջ 147):

Ազի , մազի, գարեխի, գմրուխի,

Ել հովին Օիրանի,

Արածէր յովիտն Օիրանի

Ցանխախաց պանիր եհաց,

Որ որ տեսաւ գարմացաւ,

Որ որ կերաւ պատառեցաւ:

Ամենայն չար ակն նոյնպէս պատառեցի ի դիմաց
ծառայիցս

Աստուծոյ (այս անուն)՝ ընտանեաց եւ անասնոց եւ խաշանց

Եւ կաթին եւ մայրեաց եւ երվարաց եւ շտեմարանաց

Եւ ամենայն գոյին, յանուն Հար եւ Որդոյ եւ Հոգոյն²⁶:

2. ԳԻՐ ՋԵՐՄԱՆ

Մահխահի, շարահի ահի, սպանութեանահի, անդոնի ահի.
ալիխթի ահի,

վասն ձեր արևուտ՝ թողէք զծառայս աստուծոյ²⁷:

3. ԳԻՐ ԿԱՊԻ

Բազրուկ, տապտուկ, սաղուկ, սիրառ, փիրակ, կանաբուկ,

անտիրաթիր, իղամիրամ, լորինակաւոր²⁸:

4. ԳԻՐ ԳԼԽԱՑԱԻԻ

Օտո մի կայր ի մէջ երկրի,

Որ ոչ ճիւղ ունէր եւ ոչ տերեւ եւ ոչ արմատ.

Արծիւ մի նստեալ էր ի վերայ նորա,

Որ ոչ զլուխ ունէր եւ ոչ թեւ եւ ոչ ոտք:

Հարցուք եղեն արծիւն այն եւ ասեն.

Որ նստեալդ ես ի ծառդ, որ ոչ չիւղ ունի եւ ոչ տերեւ եւ ոչ
արմատ:

Ասէ արծիւն՝ այն պեղծն.

²⁶ Մատենադարան, ձեռագիր N 4600, էջ 68 ա:

²⁷ Նոյն տեղում, էջ 71 բ:

²⁸ Նոյն տեղում, էջ 70 բ:

Երթամ նստիմ ի գլուխ մարդոյն,
Ամիսն ուսեմ եւ զրդեղն ծծեմ
Եւ զաչաց լոյս պակասեցուցանեմ:
Եւ լսեցին զայն հրեշտակք եւ հրեշտակապետք եւ ասացին.
Կապեմք զքեզ ԴՃԿԵ սրբօքն, որ կան ի սիրտ արեգա-
կանն...²⁹

Հմայիլների օրինակները բազմաթիվ են և լրացնում են մեկը մյուսին: Բերված օրինակները, լինելով հմայական բժշկության դեղատոմսեր, ուղղված են տարբեր հիվանդությունների դեմ: Հմայական այս բանաձևերը, իրենց հիմնական մասով, հազարամյակների հնության կնիքն են կրում և չեն առնչվում քրիստոնեական ըմբռնումների հետ: Արտավազդի մասին հնագույն հայկական առասպելներում կան տվյալներ, որ նա կոչվել է նաև Շիդար անունով և ահա «գիր կապի» հմայական բանաձևի մեջ, ի թիվս հնության դրոշմ կրող այլ ավանդակոչումների (տապտուկ, սաղուկ, փիրակ, կանաքուկ և այլն), հանդիպում ենք նաև Սիթառին, որ հիշեցնում է մեզ վերոհիշյալ Շիդար-Արտավազդին: Գլխացավի հմայական բանաձևի մեջ նկարագրվում է կենաց ծառի հակոտնյա մահվան ծառը, «որ ոչ ճիւղ ունէր և ոչ տերն և ոչ արմատ» և չարագուշակ ու մահաբեր սանդարամետյան արծիվը, «որ ոչ գլուխ ունէր և ոչ թև և ոչ ոտք» և այլն³⁰:

Հմայիլ կոչվող ժապավանաձև ու գրքանման ձեռագրերը հիմնականում պահպանվել են նորագույն ժամանակների (XV-XVIII դդ.) ընդօրինակություններով, իրենց մեջ բովանդակում են հեթանոսական ըմբռնումների ու պատկերացումների արգասիք հանդիսացող հմայական ու մոգական զանազան աղոթքներ ու բանաձևեր³¹:

²⁹ Մատենադարան, հմայիլ N 11 (A) և ձեռագիր N 3248, էջ 51 ք (B):

³⁰ Խաչիկյան Լ., Նախամետրոպյան գրի հարցը և հմայագրերը, էջ 151:

³¹ Հարությունյան Ս., Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Երևան, 2006:

Նշենք նաև, որ հմայիլներից շատերի մեջ կան տարօրինակ նշանագրեր, որոնք արված են դարձյալ հմայական ու բուժական նպատակներով՝ չար աչքից գերծ մնալու, չար ոգի թպղիին հալածելու, կատաղած շնից անվանաս մնալու, դիվահարներին բուժելու, սիրածի սերը նվաճելու և բազմաթիվ այլ ակնկալություններով:

Ծանոթանանք նաև այդ կարգի մի քանի հմայագրերի.

1. Այս թլիսմա, որոյ վերայ կենայ, կախարդութիւն ոչ բանի յինքն³²:

Զ Ե Մ Ի Թ Լ Վ Լ Կ
 Կ Կ Կ Կ Կ Կ Կ Կ Կ Կ
 Ե Զ Ի Կ Լ Կ Լ Կ Լ Կ
 Ե Զ Ի Կ Լ Կ Լ Կ Լ Կ
 Ե Զ Ի Կ Լ Կ Լ Կ Լ Կ

2. Այս թլիսմա գրիր ի վերայ հացի, տուր շան, որ ուտէ, կապուի լեզուն չարայկամին³³:

Ե Զ Ի Կ Լ Կ Լ Կ Լ Կ
 Ե Զ Ի Կ Լ Կ Լ Կ Լ Կ
 Ե Զ Ի Կ Լ Կ Լ Կ Լ Կ

3. Գիր սիրոյ, ջուրն ձգէ, տուր խմէ՝ սիրէ³⁴:

Ե Զ Ի Կ Լ Կ Լ Կ Լ Կ
 Ե Զ Ի Կ Լ Կ Լ Կ Լ Կ

³² Մասունադարան, հմայիլ N 5:
³³ Մասունադարան, ձեռագիր N 4322, էջ 30ա:
³⁴ Նույն տեղում, ձեռագիր N 9072, էջ 26բ:

Բազմաթիվ հմայական գրեր կան Մատենադարանի մի շարք ձեռագրերում, օրինակ՝ ձեռագիր N N 4322, 6867, պահպանված ուշագրավ մի բնագրին առընթեր, որի բովանդակությունից տեղեկանում ենք, որ տասներկու Կենդանակերպերից ամեն մեկի տակ ծնված մարդիկ ունեն իրենց հատուկ թշնամի ու հիվանդաբեր դներ, որոնք բնակվում են տարբեր վայրերում՝ դրան շեմին, կրակի եզրին, ջրին մերձ, հորի մեջ, ավերակ ջրադացներում և այլուր: Սողոմոն Իմաստունը հանդիպում և հարցաքննում է այդ դներին, սովորում նրանց հիվանդաբեր ներգործությունից մարդկանց փրկելու եղանակները և հաղորդում մարդկանց: Դներին դիմագրավելու համար մարդիկ պետք է իմանան դրանց հալածող 3 կարգի հմայական գրերը՝ թիխամները, առաջինը պետք է պահել հիվանդի գլխի վրա, երկրորդով պետք է լողացնել հիվանդին, իսկ երրորդը՝ լուծել ջրի մեջ և տալ հիվանդին խմելու³⁵:

Մատենադարանում պահվող մյուս հմայիլների համակողմանի քննությունը հնարավորություն կտա ինչ-որ չափով ծանոթանալու դրանց նշանակությանն ու կիրառությանը նախաքրիստոնեական շրջանում:

Այսպիսով, Եղիշեի, Հովհան Մայրավանեցու, Վարդան Այգեկցու և այլ հեղինակների մեզ արդեն ծանոթ վկայությունների լույսի ներքո հմայագրերը դադարում են անիմաստ ու մտացածին խզբզանքներ համարվելուց և որոշակի նշանակություն ստանում՝ հայ ժողովրդի գրավոր մշակույթի սաղմնային վիճակի, մասնավորապես ախտարական գրականության մասին շոշափելի տվյալներ պարունակելու առումով: Ճիշտ է, առայժմ մենք չգիտենք հմայական այդ նշանագրերի վերծանման գաղտնիքը, և դժվար թե դա հնարավոր լինի, քանզի գաղտնագրման բանալին, ամենայն հավանականությամբ, կամ շատ թաքնված է, կամ էլ ուղղակի կորսվել է: Այնուհանդերձ, գիտենք արդեն դրանց գուգահեռ՝ մեսրոպաստեղծ այբու-

³⁵ Խաչիկյան Լ., Նախամեսրոպյան գրի հարցը և հմայագրերը, էջ 153:

բենով գրանցված հմայական զանազան բանաձևերի և մոզական բժշկության դեղատոմսերի բովանդակությունը, ինչը վկայում է, որ դարեր շարունակ ժողովրդական պատկերացումներում ու հավատալիքներում դրանք որոշակի նշանակություն են ունեցել և տարբեր նպատակներով օգտագործվել նաև քրիստոնյա հայոց ամենօրյա կյանքում ու կենցաղում:

TATEV MKRTCHYAN

THE CULTURE OF INCANTATION IN ANCIENT AND MEDIEVAL ARMENIA

SUMMARY

In ancient Armenia since the III millennium BC temple scriptures were in use, and with the adoption of Christianity they did not cease to be applied, continuing to exist in different manifestations. Incantations, known in Armenia under the name Akhtark'. Occur in the form of book or tape-shaped amulets, and contain magic and sorcery prayers, witchcraft and divination formulas. Many of these texts, that are kept in Matenadaran, have their roots in pre-Christian times and still have not been deciphered. Armenian Church struggled against them for centuries, seeing them as spells from the pagan past.

In the light of some evidences conveyed by Yeghishe, Hovhan Mayravanetsi, Vardan Ayegektsi and other medieval authors, incantations have certain significance – as carriers of the Armenian writing culture rudiments that keep the traces of ancient literature. In parallel with pre-Christian texts, various witchcraft formulas and recipes of magical medicine recorded in Mashtots letters are also known, that testifies to their use in different spheres of life of the Armenian people in the Christian era. These prayers, incantations and magical texts have played a certain role in customary and ritual culture of the Armenians in ancient and medieval times.

КУЛЬТУРА ЗАКЛИНАНИЙ
В ДРЕВНЕЙ И СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ

РЕЗЮМЕ

В древней Армении начиная с III тыс. до н.э. пользовались храмовыми писаниями, которые с принятием христианства не вышли из применения, продолжая свое существование в разных проявлениях. Заклинания, известные в Армении под названием Ахтарк, встречаются в виде лентообразных или книжных амулетов и содержат магические и колдовские молитвы, формулы чародейства и ворожбы. Многие из этих текстов, хранящихся в Матенадаране, уходят корнями в дохристианскую эпоху и до сих пор не расшифрованы. Армянская церковь боролась против них в течение веков, усматривая в них колдовские чары языческого прошлого.

В свете сведений, переданных Егише, Ованом Майраванеци, Варданом Айгекци и другими средневековыми авторами, закливания представляются с определенным значением – как носители зачаточной письменной культуры армянского народа, хранящие следы древней литературы. Параллельно с дохристианскими текстами известны также разного рода колдовские формулы и рецепты магической медицины, записанные уже маштоцовским письмом, что свидетельствует об их применении в разных сферах жизни армянского народа уже в христианскую эпоху. Эти молитвы, закливания и магические тексты играли определенную роль в бытовой и обрядовой культуре армян в древности и в средние века.

ԲՈՒՆ ԱՂՎԱՆՔԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՇՈՒՐՁ

Բուն Աղվանքի սահմանների հարցը պետականության ժամանակահատվածում՝ մ. թ. ա. 1-ին դարի 80-ական թվականներ – մ. թ. 5-րդ դարի կեսեր¹, պատմական աշխարհագրության չլուծված հարցերից և իր վրա է բեռել բազմաթիվ ուսունասիրողների ուշադրությունը: Դա շարունակվում է մինչ օրս: Եթե անտիկ և հայ հեղինակները մեկը մյուսին լրացնելով, տալիս են Աղվանքի հյուսիսային, հարավային և արևմտյան սահմանների նկարագիրը, ապա այլ է խնդիրն արևելյան սահմանի տեղորոշման հարցում: Հույն աշխարհագրագետ Ստրաբոնը (մ. թ. ա. 63-մ. թ. 20 թթ.) առաջին հեղինակն է, որ մանրամասն նկարագրում է Աղվանքի սահմանները. «ալբանացիները... ապրում են իգերների ու Կասպից ծովի միջև, արևելքում նրանց երկիրը հասնում է ծովին...»²:

Աղվանքի արևելյան սահմանը Կասպից ծով է հասցնում մեկ այլ նշանավոր աշխարհագրագետ՝ Կլավդիոս Պտղոմեոսը (83-162 թթ.)՝ նկարագրելով Աղվանքի աշխարհագրական դիրքը. «Ալբանիան հյուսիսից սահմանակից է Սարմատիային, արևմուտքից Իբերիային, հարավից Մեծ Հայքի մի մասին ձգված Իբերիայի սահմանից մինչև Վրկանա ծով՝ Կուրի գետաբերանը, որ գտնվում է 79°40Բ-44°30Բ-ի տակ, արևելքից՝ Վրկանա ծովի մի մասով, որ տարածվում է այդտեղից մինչև Սուանաս գետ»³: Ստրաբոնի և Պտղոմեոսի նկա-

¹ Ավագյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն (ինագույն շրջանից - VIII դարը ներառյալ), Երևան, 2006, էջ 201-202, Վարդանյան Ա., Աղվանքի պատմա-աշխարհագրական քննություն, Երևան, 2013, էջ 148:

² Страбон, География в 17 книг /այսուհետև՝ Страбон/, перевод статья и комент. Г. А. Стратановского, Ленинград, 1964, XI, IV, 1. Ստրաբոն, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյանը, Երևան, 1940, էջ 31:

³ Claudii Ptolemaei Geographia, e codicibus recognovit, prolegomenis annotatione indicibus, tabulis instruxit Carolus Mullerus. vol. primi, pars II. Parisiis, 1901, գիրք V,

րագրությունները լրացնելով իրար ցույց են տալիս, որ բուն Աղվանքի արևելյան սահմանը հասել է Կասպից ծովին:

Աղվանքի արևելյան սահմանի ուսումնասիրության համար կարևորագույն ու առանցքային սկզբնաղբյուր է VII դարում ստեղծված «Աշխարհացոյց»-ը, որի ընդարձակ խմբագրությունում նշվում է. «ԻԱ. Աշխարհ Աղբանիա, այսինքն Աղուանք, յելից Վրաց, յերի Սարմատիոյ առ Կաւկասով. մինչե ցՀայոց սահմանաւ, առ Կուր գետով. թեպէտ եւ աստի ցԿուր գամենայն սահմանս հանել է ի Հայոց: Բայց մեք ասասցուք զբուն աշխարհն Աղուանից որ ընդ մէջս է մեծի գետոյս Կուրայ եւ Կովկաս լերինն...»⁴: Նույն պատկերն է «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության մեջ. «ԻԶ Աղբանիա, այս ինքն է Աղուանք, յելից կալով Վրաց առ երի Սամատիոյ առ Կաւկասաւ մինչև ցԿասքից ծովն և ցՀայոց սահմանսն առ Կուր գետով»⁵:

Ավելորդ չենք համարում մեջբերում կատարել վերջերս լույս տեսած «Աշխարհացոյց»-ի գիտա-բնական բնագրից. «ԻԶ Աշխարհ՝ Աղբանիա, այսինքն՝ Աղուանք, յելից Վրաց, յերի Սամատիոյ] առ Կաւկասով, [մինչեւ ցԿասքից ծովն եւ] մինչեւ ցՀայոց սահմանն առ Կուր գետով, թեպէտ եւ աստի [ց]Կուր գամենայն սահմանս հանեալ է ի Հայոց»⁶:

«Աշխարհացոյց»-ի հեղինակը թեպէտ համառոտ խմբագրությունում, նշում է որ Աղվանքի արևելյան սահմանը հասել է Կասպից ծով, սակայն տալիս նաև արևելյան զավատների նկարագրությունը՝ ի հակադրություն Աղվանքի մյուս զավատների, որն «Աշխարհացոյց»-ում ներկայացրել է ամենայն մանրամասնությամբ:

·É. 11. 7. Известия древних писателей греческих и латинских о скифии и Кавказе, собрал и издал к русским переводом В. Лавшинев, СПб. 1893, с. 242-243:

⁴ Աշխարհացոյց Մովսէսի Խորենացոյ յաւելուածովք նախնեաց (այսուհետև՝ «Աշխարհացոյց»), Վենետիկ, 1881, էջ 28-29:

⁵ Патканов К. Армянская география VII века, СПб; 1877, с. 40: Հավելված՝ «Աշխարհացոյց»- է դարու, էջ 17:

⁶ Յակոբեան Ա., Անանուն (է դար), Աշխարհացոյց. Գիտաբնական բնագիր, Հանդես Ամսօրեայ, 2013, N 1-12, էջ 120:

Հայ աշխարհագրագետը գավառները ներկայացրել է մինչև Աղուան գետը, թեպետ ինչպես տեսանք, օտար սկզբնաղբյուրներն արևելյան սահմանը հասցնում են Կասպից ծով: Ինչպես ճիշտ են նկատել մերօրյա հետազոտողները՝ բուն Աղվանքի արևելյան մասն արտացոլված չէ «Աշխարհացոյց»-ում և գրչական մեղանչման հետևանքով կորսված է շուրջ երկու պարբերություն, առաջինը բուն Աղվանքի նկարագրության վերջում, երկրորդը՝ Մեծ Հայքի նկարագրության սկզբում⁷: Եվ այս հանգամանքն էլ հետագայում ուսումնասիրողներին թույլ չի տվել ամենայն ճշտությամբ տեղորոշելու Աղվանքի մերձկասպյան գավառները:

Ս. Երեմյանն իր «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի աշխատությունում և դրան կից քարտեզում բուն Աղվանքի սահմանը հասցնում է մինչև այժմյան Աղ-սու կամ Աղուան գետ՝ պետության տարածքը հաշվելով 23.002կմ² ⁸: Սրանով բուն Աղվանքի կազմից դուրս թողնվում մերձկասպյան շրջանները, այլ խոսքով հեղինակն Աղուան գետից արևելք ընկած շրջանները բուն Աղուանքի մաս չի համարում: Կարծում ենք, որ մեծավաստակ գիտնականին շփոթության մեջ է գցել այն հանգամանքը, որ «Աշխարհացոյց»-ի թե՛ համատոտ և թե՛ ընդարձակ խմբագրություններում Աղվանքի գավառների նկարագրությունը և Աղուան գետով ավարտվում է:

Իր մի շարք աշխատանքներում խնդրո առարկա հարցին է անդրադարձել նաև Բ. Հարությունյանը: Հեղինակը նույապես բուն Աղվանքի մաս չի համարում մերձկասպյան տարածքները: Ըստ նրա. «Սկզբնաղբյուրների քննությունը ենթադրել է տալիս, որ Լփինքը պետք է գտնվեր բուն Աղվանքից արևելք, ուստի Բաղա-

⁷ Տես՝ Խորիկյան Հ., Բաղասական աշխարհի տարածքը, Պատմաբանասիրական հանդես, 2010, N 2, էջ 158-159, Յակոբեան Ա., Սիսական -ի Կոտակ եւ Արցախի հարսուային միւս գաւառների տեղորոշումն ըստ «Աշխարհացոյց»-ի, Հանդես Ամսօրեայ, 2008, N 1-12, էջ 93-94, ծանոթ. 4:

⁸ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Երևան, 1963, էջ 34, 120 և կից քարտեզը:

սականը պետք է տեղադրել Լփինքի և Կասպից ծովի միջև»⁹ : Նա մի փոքր անց գրում է. «Հարկ է կարծել, որ բուն Աղվանքից արևելք՝ մինչև Կասպից ծով ընկած տարածքը հանդես է գալիս Լփինք կամ Լփնաց աշխարհի անունով»¹⁰՝ հանգելով այն եզրակացության, որ այդ շրջաններն Աղվանքի մաս են կազմել մարզպանության ժամանակահատվածում¹¹:

Իր հեղինակած քարտեզում Բ. Հարությունյանը բուն Աղվանքը նկարագրելով «Աշխարհացոյց»-ի հաղորդումների հիման վրա, նունպես արևելյան շրջանները չի համարում բուն Աղվանքի մաս¹²: Սակայն իր վերջին աշխատանքներից մեկում, համադրելով անտիկ սկզբնաղբյուրները, և քննության ենթարկելով նախկին ուսումնասիրողների տեսակները, նա գալիս է այն եզրահանգման, որ բուն Աղվանքի արևելյան սահմանը հասել է Կասպից ծով¹³ և կատարելով գավառաբաժանում, ցույց է տալիս, որ թագավորական շրջանում այդ երկիրը վարչականորեն բաժանված է եղել 23 գավառների¹⁴:

Բ. Ուլուբաբյանը վերլուծելով օտար և հայ սկզբնաղբյուրների տեղեկություններն Աղվանքի արևելյան սահմանի հարցի մասին, գտնում է, որ այն հասել է Կասպից ծով¹⁵: Խնդրո հարցին անդրադարձած Ա. Հակոբյանն իր աշխատությունում Աղվանքին վերաբերող մի շարք այլ հարցերի թվում անդրադառնալով Աղվանքի

⁹ Հարությունյան Բ., Լփինքի տեղադրության հարցի շուրջը, Բանբեր Երևանի համալսարանի (այսուհետև՝ ԲԵՀ), 1981, N 1, էջ 115:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում, էջ 121:

¹² Հարությունյան Բ., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ, Երևան, 2001:

¹³ Տես՝ Հարությունյան Բ., Այսպես կոչված Աղվանքի սահմանների, տարածքի և գավառաբաժանման շուրջ, ՎԷՄ, 2012, թիվ 2, էջ 70:

¹⁴ Նույն տեղում, էջ 79:

¹⁵ Улубабян Б., О границах гревнето Албанка, ԲԵՀ, 1979, թիվ 1, էջ 114, 124:

սահմաններին, գտնում է, որ արևելյան սահմանը նույնպես հասել է Կասպից ծով¹⁶ :

Աղվանքի պատմության տարբեր հարցերի ուսումասիրությանը մշտապես զբաղված Հ. Սվազյանը նույնպես գտնում է, որ Աղվանքի արևելյան սահմանը հասել է Կասպից ծով, բայց վերապահումով, որ այն ձևավորվել է ավելի ուշ՝ Պոմպեոսի արշավանքից հետո, քանի որ արևելյան մարզերում բնակվում էին մի շարք ցեղեր՝ վերջիններիս հնագանդեցնելուց ու Պոմպեոսի հետ դաշինք կնքելուց հետո և նրանք ներառնվեցին Աղվանքի կազմում¹⁷:

Ռուս հեղինակներից արևելագետ Ա. Կրիմսկին նկարագրելով Աղվանքից երկիրը, նշում է. «Անդրկովկասյան այդ երկիրը, տարածված Վրաստանի և Կասպից ծովի միջև, ձախափնյա մասով՝ մինչև ծովային հզոր ալիքները...»¹⁸ : Իսկ Ս. Յուշկովը¹⁹, Կ. Տրևերը²⁰ Վ. Մինորսկին²¹ և Ա. Նովոսելցևը²² տարբեր առիթներով անդրադառնալով Աղվանքի սահմաններին, ներկայացնելով անտիկ հեղինակների հաղորդումներն այդ երկրի մասին, գտնում են, որ արևելյան սահմանը անցել է Կասպից ծովով:

Իսկ ինչ վերաբերում է ադրբեջանցի հեղինակների տեսակետներին, ապա նրանք բոլորն էլ քաղաքական նկատառումներից ելնելով փորձելով արհեստականորեն ուժացնել Աղվանքի սահ-

¹⁶ Акопян А., Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987, с. 36.

¹⁷ Սվազյան Հ., նշվ. աշխ., էջ 68:

¹⁸ Крымский Н., Страница из истории Северного или Кавказского Азербайджана /класической Албании., см. "Сборник статей посвященный С. Ф. Ольденбургу", Ленинград, 1934, с. 289.

¹⁹ Юшков С., К вопросу о границах древней Албании. Исторические записки, т. 1, АН СССР, Москва, 1937, с. 135.

²⁰ Тревер И., Очерки по истории и культуре Кавказской Албании IV в. до н. э. – VII в. н. э., 14, М.- Л., 1959, с. 58, 77, տե՛ս և քարտ 42.

²¹ Минорский В. История Ширваны и Дербенда, М. 1963, с. 27-28.

²² Новосельцев А., К вопросу о политической границе Армении и Кавказской Албании в античный период, Кавказ и Византия, вып. 1, Е., 1979, с. 15.

մանները տարբեր ժամանակահատվածներում, թե ի սկզբանե, ինչպես նաև այն ժամանակ, երբ Աղվանքը որպես պետական կազմավորում գոյություն չուներ, արևելյան սահման են ճանաչում Կասպից ծովը²³: Իսկ հակապատմական ուսունասիրություններով աչքի ընկնող Ֆ. Մամեդովան կեղծելով սկզբնաղբյուրների տեղեկությունները, աղբյուրներից միտումնավոր սխալ թարգմանություններ կատարելով, նշում է, որ մ. թ. ա. II դարում Աղվանքի արևելյան սահմանը հասել է Կասպից ծով²⁴, այնինչ մ. թ. ա. II դարում Աղվանքում պետական կազմավորում գոյություն չի ուեցել:

Այսպիսով՝ ելնելով վերը նշված սկզբնաղբյուրների տեղեկություններից, կարծում ենք, որ Աղվանքի արևելյան սահմանը ձևավորվել է երկու փուլով.

Առաջինն իր պետականության գոյության սկզբում՝ մ. թ. ա. I դ. 80-ական թվականներին արևելյան սահմանը տարածված է եղել մինչև Աղուան գետ և աղվանացիների առաջին թագավոր հիշատակված Օրոյսեսը չէր վերահսկում մինչև Կասպից ծով ընկած շրջանները, այլ նրա իշխանության սահմանը հասնում էր մինչև Աղուան գետը: Դա են վկայում Ստրաբոնի այն հաղորդումները, ըստ որոնց Աղվանքի տարածքում բնակվում էին 26 տարալեզու ցեղեր²⁵, որոնք վարում էին «կիկլոպյան կյանք»²⁶:

Երկրորդ փուլը սկսվում է մ. թ. ա. I դ. 60-ական թվականներին, երբ Հռոմեական Հանրապետությունը մեկը մյուսի հետևից «բարեկամ և դաշնակից» էր դարձնում տարածաշրջանի երկրներին: Դիոն Կասիոսը հաղորդում է. «Պոմպեոսը այս գործերը կատարելուց և ամբողջ երկիրը ասպատակելուց հետո ալբաններին խաղաղություն պարգևեց, ինչպես մի շարք այլ ցեղերի հետ, որոնք

²³ Ст'ю Алиев К., Кавказская Албания, Баку, 1974, с. 119.

²⁴ Мамедова Ф., Политическая история и историческая география Кавказской Албании, Баку, 1986, с. 145, карта 2.

²⁵ Страбон, XI, IV, 6.

²⁶ Նույն տեղում, XI, IV, 3.

բնակվում էին այն տարածքի վրա, որն ընկած էր Կովկասից մինչև Կասպից ծով, որսւեղ և վերջանում է Պոնտոսում սկիզբ առնող լեռը, դաշինք կնքեց, երբ սրանք իր մոտ այդ նպատակով դեսպաններ ուղղարկեցին»²⁷ : Պատմիչի այս հաղորդումից ելնելով՝ վստահորեն կարելի է պնդել, որ նշված ցեղերի մոտ պետականության անցման գործընթացը դեռ չէր ավարտվել, ուստի և Աղվանքի արևելյան սահմանը լիովին չէր ձևավորվել: Կարծում ենք, որ Աղվանքի արևելյան սահմանը, այն է՝ մինչև Կասպից ծով, վերջնականապես ձևավորվել է մ. թ. ա. 50-ական թվականներին, երբ տարածաշրջանում տիրեց խաղաղություն և պետականության կազմավորման գործընթացն արգանում է Կասպից ծովի շրջանում բնակվող ցեղերի մոտ, և նրանք միավորվում են Աղվանքի կազմում և վերջնականապես ձևավորվում է պետության սահմանը հասնելով Կասպից ծով և այդ սահմանն անփոփոխ է մնում, թե՛ թագավորության և թե՛ մարզպանության ժամանակներում:

ARGISHTI VARDANYAN

ON THE EASTERN BORDER OF PROPER AGHVANK

SUMMARY

As borders of proper Aghvank, as well the issue of its Eastern border has generated different opinions in the historiography. In my opinion, the process of its formation passed two stages: the first- from the 80-s BC I to the 50-s, when the Eastern border reached the Aghvan river. In the second stage the process of state formation intensified and the

²⁷ «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 9, «Հին հունական աղբյուրներ», Ա. Հովսեփյոս Փլավիոս, Դիոն Կասսիոս, թարգմանությունը բնագրից, ստաջաբան և ծանոթագրություններ Ա. Կրկյաշարյանի, Երևան, 1976, XXXVII, 5, 1:

tribes of the Caspian Sea region had been involved into the borders of Aghvank and the borders of the state reached the Caspian Sea.

АРГИШТИ ВАРДАНЯН

О ВОСТОЧНОЙ ГРАНИЦЕ СОБСТВЕННО АГВАНКА

РЕЗЮМЕ

Как границы собственно Агванка, так и вопрос о его восточной границе вызвал разные мнения в историографии. По нашему мнению, она была сформирована в двух стадиях: первая - с 80-х годов до н.э. до 50-х годов, когда восточная граница достигла реки Агван. На втором этапе процесс государственного формирования стал протекать быстрее и племена региона Каспийского моря были вовлечены в границы Агванка, граница государства достигла Каспийского моря.

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԾՆՆԴՅԱՆ

ՎԱՅՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Մովսես Խորենացու կենսագրության հետ կապված հարցերի լուսաբանումը կարևոր է հայ պատմագիտության համար հատկապես այն առումով, որ Պատմահոր կյանքն ու գործունեությունը ուղղակիորեն կապված են V դարի հայ իրականության հասարակական-քաղաքական և հոգևոր-մշակութային իրադարձությունների հետ: Այս տեսանկյունից անշրջանցելի են պատմիչի ծննդյան թվականի և ծննդավայրի ճշգրտման խնդիրները, որոնց լուծմանը ծառայող ավանդագրույցները ևս հուշում են այս հարցերի կարևորությունը: Խնդրո առարկայի ուսումնասիրության համար հիմք են ծառայել.

Ա. Պատմագրական տեղեկությունները

Բ. Ժողովրդական գրույցները և ավանդապատումները

Գ. Պատմագիտական ուսումնասիրությունները

Մովսես Խորենացու մասին սակավաթիվ կենսագրական տեղեկությունների հանդիպում ենք Պատմահոր և Ղազար Փարպեցու երկասիրություններում:

Հանրահայտ փաստ է, որ Մովսես Խորենացին ապրել է մինչև V դարի վերջերը: Մոտ 485 թ. Պատմահայրը դեռ ողջ էր՝ և իր երկի վերջնամասում՝ երրորդ գրքի 65-րդ գլխում, խոսում է իր

¹ Ենթադրելի է, որ Մովսես Խորենացին իր երկը այտոք է ավարտած լինի 482 թվականից առաջ, այսինքն՝ Լախրան երկի պատվիրատուի՝ Սահակ Բագրատունու մահը: Թովմա Արծրունին այս կապակցությամբ արտահայտել է հետևյալ միտքը. «Սահակս այս այն Սահակ է, որոյ հրամանաւ դրեաց վարդապետն Մովսէս տիեզերահռչակեալ քերթողն զգիրս Պատմութեան Հայոց Մեծաց հրաշագան յօրինուածով, սկսեալ յԱղամայ մինչն ի կայսեր Ջենոն...» (Թովմա Արծրունի և Անանուծ, Պատմութիւն Տանն Արծրունեաց, Երևան, 1955, էջ 122): Ջենոն կայսրը զահ է բարձրացել 474թ (Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Ժամանակագրական տախտակներ, Եր., 1961, էջ 403:)

ծեր լինելու մասին. «Ձի և ես այր եմ ծերացեալ եւ հիւանդոտ եւ անպարապ...»²: «Պատմութիւն սրբոց Հռիփսիմեանց»-ի նախաբանում նույնպէս Խորենացին գրում է. «Ձի եւ մահկանացու գոլով, ծեր և հիւանդոտ...»³:

Ականավոր հայագետ Մ. Աբեղյանը ենթադրում է, որ արտասահման ուսման գնալու ժամանակ Մովսէս Խորենացին պետք է լինէր առնվազն 20-25 տարեկան⁴, ուրեմն ծնված պետք է լինէր մոտավորապէս 410-415 թ.: Հրաչյա Աճառյանի կարծիքով՝ Խորենացին ծնվել է մոտ 425 թ.⁵:

Ֆրանսիացի հայագետներ Մարի-Ֆելիստե Բրոսեն (1808-1880) և Վիկտոր Լանգլուան (1829-1869) Մովսէս Խորենացուն համարել են V դարի պատմիչ⁶: Իսկ Ա. Կարրիերը կարծում է, որ Պատմահայրն ապրել և ստեղծագործել է ոչ թե V դարում, այլ ավելի ուշ⁷: Ֆ. Կոնիբերը (1857-1924) համարում է, որ Խորենացին

² Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1827, էջ 538: Վ. Պարսամյանը ենթադրում է, որ այս տողերը նա կարող էր գրել շուրջ 70 տարեկան հասակում՝ 480-485 թթ. «Հայոց պատմություն»-ն ավարտելու ժամանակ (Պարսամյան Վ. Ա., Մովսէս Խորենացին և հայ պատմագրության ծագումն ու զարգացումը, Երևան, 1983, էջ 3):

³ Սրբոյ Հօրն Մերոյ Մովսէսի Խորենացոյ Մատենագրութիւնը, Վենետիկ, 1843, էջ 297:

⁴ Աբեղյան Մ., Երկեր, հ. Գ, Երևան, 1968, էջ 277:

⁵ Աճառյան Հր., Հայկականը, հ. Գ, ՀՍՍՀ ԳԱԱ «Տեղեկագիր», 1945, № 3-4, էջ 49:

⁶ Մանրամասն տե՛ս Դումիլյան Ա., Հայոց հին և վաղմիջնադարյան պատմության հիմնահարցերը XIX դարի ֆրանսիական հայագիտության մեջ, Երևան, 2014, էջ 24-28:

⁷ Մանրամասն տե՛ս Carrière A., Nouvelles sources de Moïse de Khoren, Vienne, 1893; Supplément, Vienne, 1894: Հայերեն թարգմանությունը՝ Կարրիեր Ա., Լորագոյն աղբերք Մովսիսի Խորենացոյ եւ Յաւելուած, Վիեննա, 1893 եւ 1894: Հետաքրքրական է, որ եվրոպացի ուսումնասիրողները Մովսէս Խորենացուն ծանոթ էին դեռևս 18-րդ դարի 20-ական թվականներից: Այդ են վկայում Ղ. Ալիշանի հետևյալ տողերը. «... Գրեթէ երկու հարիւր տարիներէ առաջ գերմանացի գիտնականք սկսած են ծանօթանալ Խորենացոյ և ծանօթացրնել, նաև մասնական թարգմանութեամբք, ինչպէս ըրած է Պրեններ ուն Շուետացի ի Սթորիոլմ, յամի 1723» (Ալիշան Ղ., Հայրենապատում, Վենետիկ-Ի Վանս Ս. Ղազարու, ՌՅՄԱ-1901, էջ 56):

ծնվել է 370 թ., մահացել 490 թ., ստացվում է, որ ապրել է 120 տարի:

Ստ. Մալխասյանցը «Խորենացու առեղծվածի շուրջ» գրքում խորապես համոզված է, որ «Մովսես Խորենացին արդարև ապրել է 5-րդ դարում, եղել է ս. Սահակի և Մեսրոպի աշակերտը և գրել է Հայոց Պատմությունը 5-րդ դարի վերջին քառորդում»⁸: Ըստ Գր. Խալաթեանցի՝ «Խորենացին եւ կը շարունակի մնալ Ե-որդ դարում ապրող նոյն դարում գրող Սահակ եւ Մեսրոպ մեծ ուսուցիչների աշակերտը»⁹:

Ղազար Փարպեցին իր մեծարժեք «Թղթում», դիմելով Վահան Մամիկոնյանին, գրում է, որ իր մանկության մասին նախարարը շատ լավ գիտի, քանի որ միասին են ապրել, կրթվել և դաստիարակվել: Պատմիչը նշում է, որ մի քանի տարի «ի Հոռոմս» ապրելուց հետո հանգստանալու և աղոթելու նպատակով ինքը գնացել է Սյունիք, երկու տարի ապրել այնտեղ՝ հյուրընկալվելով գավառի ամբողջ բնակչության և բոլոր կրոնավորների կողմից հոշակված և հարգված մի մարդու մոտ, որի անունը Մովսես էր¹⁰: «Թղթի» վերջնամասում, խոսելով իր ժամանակաշրջանում հոգևոր և աշխարհիկ խավերի միջև տիրող լարվածության մասին, Փարպեցին կրկին անդրադառնում է վերոնշյալ Մովսեսին. «Երանելի փիլիսոփոսն Մովսեսը, որ արդարև մինչդեռ էր ի մարմնի՝ ցանկ երկնային զօրացն էր քաղաքակից. ո՞չ ապաքեն ի տեղուցէ ի տեղի աբեղեանդ Հայոց հալածական արարին: Ո՞չ զլուսաւորիչն և զտգիտահալած զգրեանն նորա՝ առ անգիտութեան փաթաղ-իկէս կոչէին. և այլ բազում ինչ իրօք թշնամանեալ՝ յետոյ ապա յաղագս այլոց ամօթոյ՝ զխաբէական գեպիսկոպոսու-

⁸ Մալխասյանց Ստ., Խորենացու առեղծվածի շուրջ, Երևան, 1940, էջ 113:

⁹ Խալաթեանց Գր., Մովսես Խորենացու Նորագոյն աղբիւնների մասին, Վիեննա, 1898, էջ 9:

¹⁰ Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց թուղթ առ Վահան Մամիկոնեան, Երևան, 1982, էջ 453:

թիւնս նման դեղոց մահու արբուցեալ սրբոյ՝ հեղձուցին: ...գտեառնէ, զնա կացոյց ի վերայ անչափ անհանգիստ աշխատութեանց և վաստակոյն՝ զցայգ և զցերեկ, ի լուսաւորութիւն աշխարհիս Հայոց: Զոսկերսն ի գերեզմանէն հանել տային և ի զեսարկանել»¹¹:

Պատմագիտության մեջ ընդունված է այն կարծիքը, որ Ղազար Փարպեցու հիշատակած Մովսեսը հենց Մովսես Խորենացին է¹²: Մատենագիրների ճնշող մեծամասնությունը Պատմահորը հիշատակում է «Մովսես փիլիսոփոս», անունով. սա տրամաբանական է, քանի որ «Խորենացի» մականունը՝ որպես ազգանուն, ավելի ուշ դարերի երևույթ է: Հր. Աճառյանը նշում է, որ հին ձեռագրերը գլխազրույց «Խորենացի» անունից գերծ են և «Մովսեսի Խորենացոյ» ձևով Խորենացուն հիշատակում է 1600-ով թվագրվող ձեռագրերից մեկը, որից հետո արդեն այս անունը նշվում է հետագայի ձեռագրերում¹³:

Մովսես Խորենացու ծննդավայրի վերաբերյալ պահպանված տեղեկությունները դեռևս շարունակում են վիճահարույց մնալ: Ավանդաբար ընդունված է ասել, որ պատմիչի ծննդավայրը Տուրուբերան աշխարհի Տարոն գավառն է: Այս գավառում եղել է Խորեան կամ Խորեն(ք) անվանումով ավան: Հովհան Մամիկոնյանի մոտ հանդիպում ենք Խորնի («Եւ Խորնի ունի ծուխս»), Խոր-

¹¹ Նույն տեղում, էջ 482: Տե՛ս նաև ծանոթ. 31, 32, 33:

¹² Նույն տեղում, ծան. 4, էջ 513: Այդ կապակցությամբ Հայր Ալիշանն արտահայտել է հետևյալ միտքը. «Եւ նախ թէ, նոյն մի անձն է Խորենացին Մովսես և այլեւայլ հեղինակաց կոչած Պատմագիրն, Եպիսոկոպոսն, Փիլիսոփոսն, Քերթողահայրն, Քաջ Քարտուղարն Ս. Սահակայ, Երանելին, Սրբազանն, այն Մեծն իմաստասիրաց և հոչակեալն ընդ տիեզերս...» (Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 52): Ըստ Մ. Աբեղյանի՝ «Ոչ մի հիմք չկա փիլիսոփոս Մովսեսին և Քերթողահայր Մովսես Խորենացուն, որ և պատմագիր է, նույն անձը չճանաչելու...» (Աբեղյան Մ., նշվ. աշխ., էջ 281):

¹³ Աճառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, հ. 2, Եր., 1946, էջ 426: Տե՛ս նաև Աբրահամյան Ա., Հայոց գիր և գրչություն, Երևան, 1973, էջ 299, 230:

հի, Խորեան, Խորտնի, Խորինի և այլ տարբերակներ¹⁴: «Խորոնք» ձևով Մովսես Խորենացու ծննդավայր հիշատակում է եվրոպացի ճանապարհորդ Ալպեր Տրվրլեր. «Չանլը դառնալու համար մանուածոյ շրջան մ'ըտինք դաշտին մեջ, որպեսզի Խորոնքն ալ տեսնինք, որ Մովսեսի Խորենացոյ ծննդավայրն է»¹⁵: Մինչդեռ Ստ. Մալխասյանցը կարծում է, որ «Խորոնք» անունից կարող էր առաջանալ Խորոնացի ձևը, և ոչ՝ Խորենացի¹⁶: Նա «Հայոց պատմության» առաջաբանում, այլ կարևոր հարցերի հետ մեկտեղ, անդրադառնում է նաև քննվող հարցերին՝ նշելով, որ «Խորենացի» մականունը կարող է առաջանալ ոչ թե *Խորնի* կամ *Խորոնք* բնակավայրի անվանումներից, ինչպես ավանդաբար ընդունված է կարծել, այլ Խորեն, Խորեն, Խորեան կամ Խորեայ ձևերից¹⁷: Այս մոտեցումն, անշուշտ, հիմնված է լեզվական օրինաչափությունների վրա: Ա. Սահակյանի կարծիքով էլ Մովսես Խորենացին Խոյարունացի է. Խոյարոնքը Տարոն գավառի Ցրոնքին հարևան ավան է, որը հետագայում դարձել է Խորոնք¹⁸:

Բոլորովին այլ տեսակետ է արտահայտում Մ. Ումառյանը. որպես Մովսես Խորենացու ծննդավայր՝ նա մատնացույց է անում Սյունիքի Հաբանդ գավառի Խորեայ անունով փոքրիկ գյուղը¹⁹: Ստեփանոս Օրբելյանն իր երկասիրության գլուխներից մե-

¹⁴ Պատմութիւն Տարօնոյ, գոր թարգմանեաց Զենոբ Ասորի, ի Վենետիկ, 1832, էջ 37: Տե՛ս նաև Մուշեղյան Ա., Մովսես Խորենացու դարը, Եր., 2007, էջ 30:

¹⁵ Ալպեր Տրվրլէ և Գ. Փիսոն, Ուղեւորութիւն ի Փոքր Ասիա, Վիեննա, 1892, էջ 62:

¹⁶ Մալխասյանց Ստ., նշվ. աշխ., էջ 144:

¹⁷ Նույն տեղում: Տե՛ս նաև Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988, էջ 795:

¹⁸ Սահակյան Ա., Նոր դիտարկումներ ի լրումն Մովսես Խորենացու կենսագրության (անունը, ծննդավայրը թարգմանչական գործը), ՀՀ ԳԱԱ Զեկույցներ, 2009, 109 (3), էջ 263:

¹⁹ Ումառյան Մ., Սյունիքը դիցարան, Երևան, 1981, էջ 105: Նշվում է, որ Հաբանդ գավառում Խորեայ անունով բնակավայրի տեղը ստույգ հայտնի չէ: Մ. Հասրաթյանն ասում է., որ Սյունիքում եղել է ուղղակի Խորեա-Խորեան գյուղ

կում հիշատակում է Հաբանդ գավառի Խորեա գյուղը²⁰: Ստ. Մալխասյանցը համոզված է, որ Օրբելյանի հիշած Խորեա ձևը V դարում հնչում էր ավելի լիակատար ձևով՝ Խորեան: Ըստ Լեոյի՝ Սյունյաց դպրոցը առաջ բերեց մի նշանավոր գրող, որ կոչվում է Մովսես Քերթոզ կամ նույնիսկ Քերթոզահայր²¹: Սրան համահունչ է Մ. Հասրաթյանի կարծիքը՝ «...քերթոզ տիտղոսն իսկ վկայում է նախ և առաջ Սյունյաց դպրոցին պատկանելը և երկրորդ՝ սյունեցիական ծագումը»²²:

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը զգուշորեն կասկածանք է հայտնում Խորենացու՝ Տարոնում ծնված լինելու տիրապետող կարծիքի վերաբերյալ: Խոսելով Ստ. Օրբելյանի գրքում հիշատակված Մովսես քերթոզահոր մասին՝ Օրմանյանը նրան նույնացնում է Խորենացու հետ, հակվում Պատմահոր սյունեցի լինելու մտքին՝ նկատի ունենալով, որ «... Քերթոզներ և քերթոզահայրեր Միւնեաց դպրոցէն միայն ելած են՝ եւ ոչ Տարոնէն, մենք կը կարծենք, թէ Խորենացիի շուրջը յուզուած խնդիրը դյուրին լուծում մը ստանայ, եթէ Մովսէս Խորենացիի պատմութեան հեղինակը միւնտյն անձի վերածուին եւ նոյնացուին է դարուն Միւնեաց դպրոցին քերթոզահայրն եղող՝ Մովսէս Միւնեցոյն հետ»²³:

Այս հեղինակի կողմից հայոց պատմական-մշակութային կյանքում երկու երկրամասերի՝ Տարոնի և Սյունիքի խաղացած դերերի մասին եզրահանգումները շարունակում է Ղ. Ալիշանի կողմից ավելի վաղ արտահայտած այն միտքը, թէ՛ «... զի թէպէտ և Տուրուբերան կենդրոնագոյն է քան զայլսն և հարուստ ազգային

(Հասրաթյան Մ., Պատմա-ինագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1985, էջ 50): Տե՛ս նաև Карагезян А. А., Сюник, Нахчаван и Гохчи, Ереван, 2002, с. 35-36.

²⁰ Մաեփաննոսի Միւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, 1861, էջ 375:

²¹ Լեո, Երկերի ժողովածու, հ. II, Երևան, 1967, էջ 346:

²² Հասրաթյան Մ., նշվ. աշխ., էջ 54:

²³ Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, էջ 506:

յիշատակօք, այլ Սյունիք յամառագոյն իմն թուին հանդիսացեալ ի պահուստ ազգային ոգոյ և աւանդից, յոլովագոյնս ունելով նշխարս և արձանս նախնեաց գրաւորս և անգիրս...»²⁴:

Ըստ Մ. Հասրաթյանի՝ թեև խ-ն չէր դառնա Կ. բայց անիմաստ Խորեան-Խորնձորը պետք է որ իմաստավորվեր և դառնար Կոռնձոր («կուռն, կողմ»)՝ Խոր ձորակի ճեղքի մեջ քարայրային հին Խորեան այժմ հնչում է *Կոռնիձոյր*։ Մեր կարծիքով՝ Խորեան ձոր անվանումից լեզվական առումով ավելի սահուն կատաջանար Խոր ձոր-Խորձորեսկ-Խնձոր-Խնձորեսկ տեղանունը։ Կոռնիձորն ունեցել է նախնական Գենիձոր, Գերինձոր, Գորունգուր, Կանաձոր, Կերենգուր, Կոռնիձոր (Կոռնիձօր) անվանումները²⁶:

Հիրավի, Պատմահայրն անթաքույց սեր ունի Սյունիքի և նրա իշխանների հանդեպ։ Ինչպես հայտնի է, մատենագիրները կապված են եղել որևէ նախարարական տան հետ և հանդես են եկել որոշակի տոհմասիրությամբ։ Այս առումով Մովսես Խորենացին մեծ համակրանք ունի Սյունիքի և Սյունյաց տոհմի նկատմամբ։ Նա Սյունյաց աշխարհի երկրպագուներից է և քաջատեղյակ է պատմական Սյունիքի ողջ տարածքին, մանավանդ՝ Երասխի (Արաքս) հովտին, որտեղով անցնում էր հարավից դեպի Արարատյան դաշտ եկող բանուկ ճանապարհը։ Մովսես Խորենացին քաջաձանոթ է Գողթն գավառին, որտեղ էլ լսել էր այն ժողովրդական երգերը, առասպելներն ու վիպասանությունները, որ մեջ է բերում «Հայոց պատմություն»-ում։

Խորենացու՝ կյանքի վերջին շրջանում Սյունիքում ապրած լինելու մասին է վկայում այն փաստը, որ նրան աշակերտել է Պետրոս Քերթոզ Սյունեցին՝ Սյունյաց հոգևոր թեմի նշանավոր

²⁴ Այիշան Ղ., Միսական, Վենետիկ, 1893, էջ 1:

²⁵ Հասրաթյան Մ., նշվ. աշխ., էջ 58:

²⁶ Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երևան, 1991, էջ 219:

առաջնորդը, որի մասին Ստ. Օրբեյանը գրել է. «Պետրոսը՝ քերթողահոր աշակերտը, հմուտ հոետորն ու անպարտելի փիլիսոփան...»²⁷: Ընդ որում, Օրբեյանը Պետրոսին հիշատակում է մի քանի անգամ. «Նաև Սյունյաց երանելի մետրոպոլիտ Պետրոսը՝ քերթողահայր Մովսեսի աշակերտը», կամ «Երանելի Պետրոսը՝ Սյունյաց եպիսկոպոսը՝ Մովսեսի աշակերտը»²⁸: Հիշատակված Պետրոսը ապրել է VI դարի սկզբում:

Մովսես Խորենացու ծննդավայրի մասին հայ ժողովրդական բանահյուսության մեջ ևս ուշադրության արժանի պատատիկներ կան: Դրանցից մեկի համաձայն՝ «Հայոց աշխարհի մի մթին անկյունում՝ մի իշխանի ջրադացում, ջրադացպանություն էր անում մի ծեր մարդ: Իշխանը հափշտակված էր մանավանդ նրա քաղցր ձայնով և հրաշալի երգերով: Մի անգամ Գյուտ կաթողիկոսը²⁹ հյուր է գալիս նույն իշխանի մոտ: Իշխանը, ցանկանալով ավելի պատված և մեծարած լինել կաթողիկոսին, հրամայում է ջրադացպանին, որ ի պատիվ Հայրապետի երգ երգի: Ծերունին չոքում է Գյուտի առջև և երգում մի հրաշալի մեղեդի: Գյուտ կաթողիկոսը իջնում է թախտից, գրկում ջրադացպանին և բացականչում. «Մովսես, Մովսես...», և արտասուքը խեղդում է նրան... Ասում են, թե այդ ջրադացպանը Մովսես Խորենացին է լինում»³⁰:

²⁷ Օրբեյան Ստ., Սյունիքի պատմություն, թարգմ., ներած. և ծանոթագր. Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 119:

²⁸ Նույն տեղում, էջ 87, 357:

²⁹ Գյուտ Ա. Արիեզացու կողմից Մովսես Խորենացին նշանակվել է Բագրևանդի թեմակալ առաջնորդ, զբաղվել մանկավարժությամբ, թարգմանչությամբ և մատենագիտությամբ (տե՛ս Հովհաննիսյան Պ., Մովսես Խորենացի. «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 762):

³⁰ Ղանալանյան Ա., Ավանդապատում, Երևան, 1969, էջ 301: Տե՛ս նաև Ալիշան Ղ., Երկեր, Եր., 1981, էջ 168-169: Հնուց պահպանված ավանդությունները պատմում են նաև, որ մոտ տասը տարի Խորենացին ապրել է հալածական վիճակում, թափառականի կյանքով՝ ծայրահեղ կարիքի ու զրկանքների մեջ, մինչև որ պատահաբար նրան հանդիպելով՝ Գյուտ կաթողիկոսը ճանաչում է իր հին

Իսկ մեկ այլ ավանդության մեջ նշվում է, որ իր կյանքի վերջին օրերին Պատմահայրն արտոբվել է ջրադաց ու մահացել այնտեղ: Ավանդագրույցը պատմում է, որ Մովսես Խորենացին Սոփեկեղեցում³¹ ունեցել է երկու աշակերտ, որոնցից մեկին ուղարկել է Արևմտյան Հայաստան, մյուսին՝ Արցախ՝ լուսավորության գործերով զբաղվելու: Շատ տարիներ հետո երկու ձիավոր են մոտենում ջրադացին, իջնում են ու ձնկի գալիս... ցավոք, ավանդագրույցն այստեղ ընդհատվում է:

Ամփոփելով վերը ասվածը՝ կարելի է ասել, որ Մովսես Խորենացու ծննդավայրի խնդիրը կենտրոնանում է մի կողմից Տարոնի և մյուս՝ Հաբանդ գավառի Խորեա գյուղի վրա: Անշուշտ, խնդրո առարկա թեման կարիք ունի հետազա քննության և առավել մանրակրկիտ հետազոտման:

ASTGHIK GHAZARYAN

ON THE ISSUE OF MOVSES KHORENATSI'S OF BIRTH PLACE

SUMMARY

Elucidation of the problems connected with Movses Khorenatsi's biography is important for historiography. One of them is the issue of the birth place of the Father of Armenian historiography.

Historical and folklor data enabled many researchers to consider the birthplace of Khorenatsi the village Khorea in Taron province,

դասընկերոջը ու նրան դուրս բերում այդ վիճակից (Մկրյան Մ., Մովսես Խորենացի, Երևան, 1970, էջ 15):

³¹ Եկեղեցին գտնվում է Տեղ գյուղից մոտ 3 կմ դեպի հարավ-արևելք: Տեղացիներն այն կոչում են Սոփեղի կամ Սոնեղի (եկեղեցի), Սեոին եկեղեցի (Հասրաթյան Մ. նշվ. աշխ., էջ 244): Ժողովրդական ավադությունը ասում է, որ եկեղեցին կառուցել է Մովսես Խորենացին՝ իբրև ճգնարան:

meanwhile, there is another view, according to which it is the village Khorea in Syunik.

The study of this issue leads us to the conclusion that the problem of Khorenatsi's birthplace is concentrated around two localities: the area of the village Khorea in Taron and the village with the same name in Haband district, but this thesis needs further clarification.

АСТХИК КАЗАРЯН

К ВОПРОСУ О МЕСТЕ РОЖДЕНИЯ МОВСЕСА ХОРЕНАЦИ

РЕЗЮМЕ

Освещение проблем, связанных с биографией Мовсеса Хоренаци (V в.), важно для историографии. Одним из них является вопрос о времени и месте рождения Отца армянской историографии.

Исторические и фольклорные данные позволили многим исследователям местом рождения Хоренаци считать селение Хореа области Тарон. Однако есть и другое мнение о месте рождения Хоренаци, согласно которому – это селение Хореа в Сюнике.

Проблема, несомненно, нуждается в дальнейшем уточнении.

ՍԱՍԱՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ
ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ,
ՎԻՐՔՈՒՄ ԵՎ ԲՈՒՆ ԱՂՎԱՆՔՈՒՄ (V Դ.)

Ինչպես հայտնի է, 387 թ.¹ Սասանյան Պարսկաստանն ու Հռոմեական կայսրությունը Հայաստանը բաժանեցին իրար միջև²: Այս իրադարձությունը շրջադարձային էր ոչ միայն Հայաստանի, այլև հարևան երկրների՝ Վիրքի ու Աղվանքի համար, որովհետև դրանով փոխվում էր Մեծ Հայքի, որպես պետության կարգավիճակը, ինչն էլ իր հերթին ազդեցություն էր ունենալու հարևան երկրների վրա³:

Սասանյանները նպատակ ունեին Այսրկովկասից ստեղծել մեկ միասնական վարչական միավոր⁴, ուստի այս բաժանումից հետո տեղի ունեցավ տարածքների վերաձևում. Մեծ Հայքի թագավորության ենթակայությունից հանվեցին բղեշխությունները⁵: Դա

¹ Ըստ Է. Դանիելյանի՝ 385 թ. (տե՛ս Դանիելյան Է., Հայաստանի բաժանման տարեթիվը 387 թե՛ 385, Պատմա-բանասիրական հանդես (այսուհետ՝ ՊԲՀ), Երևան, 1980, № 1, էջ 208):

² Հարկ է նշել, որ Վրաստանը նույնպես երկփեղկվեց. Վրաստանի արևմտյան մասը՝ Լազիկան, անցավ Հռոմին, իսկ արևելյանը՝ Քարթլին; Պարսկաստանին (տե՛ս Цоцелия М., Каталог Сасанидских монет Грузии, Тбилиси, 1981, էջ 9):

³ Геворгян Т., Формирование марзпанства Аран и включение в его состав Армянских областей Арцах и Утик, Историко-филологический журнал, 2012, № 2, էջ 210.

⁴ Այս քաղաքականության դրսևորումն էր VI դարի կեսերին Հայքի, Վիրքի, Աղվանքի, Բալասականի ու Ատրպատականի ամփոփումը Պարսկաստանի չորս քուստակներից մեկի՝ «Քուստակ-ի-Կասպոնի-ի» մեջ (տե՛ս Երեմյան Ա., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (Փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Երևան, 1963, էջ 115):

⁵ Акопян А., Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Е., 1987, էջ 110, Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի. մաս Ա (արևմտյան և հարավային աշխարհներ), Երևան, 2001, էջ 215, 351:

բացատրվում է բացառապես հետևյալով. բղեշխները, որոնք գրա-
դեցնում էին արքունական սեղանի չորս բարձրագույն գահերը⁶,
բաժանքից հետո, երբ հայոց արքան իրավական առումով դարձավ
պարսից արքայից արքայի ստորական՝ դուրս եկան հայոց թագա-
վորի տիրապետությունից, և ենթակա դարձան անմիջապես պար-
սից շահին⁷: Դա մասնավորապես երևում է մեզ հասած «Գահնամա-
կ»-ից, որտեղ բոլոր բղեշխությունները բացակայում են⁸:

Գուգարաց բղեշխությունը Մեծ Հայքի թագավորությունից
անջատելով, Պարսկաստանն այն սկզբնական շրջանում միաց-
րեց Վիրքի թագավորությանը (Քարթլի)՝ նրան տալով ինքնավար
կարգավիճակ⁹, որովհետև Գուգարաց բղեշխությունն այդպիսով

⁶ Ազաթանգեղոս, Պատմութիւն Հայոց (այսուհետ՝ Ազաթանգեղոս), «Մատենագիրք Հայոց», Բ. հատոր, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1723; Փալստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց (այսուհետ՝ Փալստոս Բուզանդ), «Մատենագիրք Հայոց», Ա հատոր, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 287:

⁷ Տե՛ս Հարությունյան Բ., Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչա-քաղաքական կացությունը 387-451 թվականներին, Բանբեր Երևանի համալսարանի (այսուհետ՝ ԲԵՀ), Երևան, 1976, № 2, էջ 87, նույնի՝ Մեծ Հայքի բղեշխութիւնների և բղեշխութեան հաստատութեան շուրջ, Հանդես ամսօրեայ, Վիեննա - Երևան, 2001, № 1-12, էջ 113-114:

⁸ Հարությունյան Բ., «Գահնամակի» թվագրման հարցի շուրջը, ՊԲՀ, 1976, № 2, էջ 66-67: Ըստ պատմաբանի՝ 388 թ. Խոսրով Դ-ը Սահակ կաթողիկոսի հետ վերահաստատեց «Գահնամակը», որն արտացոլելու էր Հայաստանի վերամիավորման հետևանքով առաջացած քաղաքական կացությունը (տե՛ս նույն տեղում, էջ 64): Իսկ նույն այդ «Գահնամակ»-ից պարզ երևում է, որ բաժանումից հետո վերամիավորված Հայաստանի սահմաններում չորս բղեշխությունները չեն հիշատակվում, ինչը հայոց արքայի՝ պարսից արքայի ստորական դառնալու հետևանք էր:

⁹ Դրա անուղղակի վկայությունն է թերևս Կորյունի հետևյալ հաղորդումը. «Իսկ նորա (Մեսրոպ Մաշտոցը-Հ. Խ.) անցեալ դիմեալ ի կողմանսն, առ որով ժամանակաւ Արժիւղ անուն թագատրեալ Վրաց, որոյ ստաւելապէս պայծառացուցեալ ծաղկեցուցանէր զվարդապետութիւնն և նորա շրջեալ գամենայն աշակերտաւրն, պատուիրեալ կալ ի ճշմարտութեանն: Յայնժամ իշխանին Տաշրացոց, առն պատուականի և աստուածասիրի, որ սնուանեալ կոչէր Աշուշայ, ի ձեռն տայր նմա զանձն ամենայն գաւառովն իւրով. և նորա ամենսփիտ վարդապետութիւնն, ոչինչ պակասութեամբ, քան զայլոցն գաւառաց անցուցեալ. և յանձն արարեալ զնոսա սրբոյ Լպիսկոպոսին Սամուէլի, այնմ՝

հակակշիռ ուժ էր դառնում ընդդեմ Վրաց թագավորության¹⁰: Այնուհետև՝ ամենայն հավանականությամբ արդեն 428 թ. հետո պարսից արքունիքը Գուգարքից և Վիրքից՝ որպես երկու իրավահավասար միավորների¹¹, ստեղծեց մարզպանություն (միջ. պրակ. Wirzān), որով տարածաշրջանում ավելի էին ամրապնդվում պարսից պետության դիրքերը¹²:

Առաջին հայացքից թվում է, թե Պարսկաստանը մարզպանություններ կազմակերպելիս պետք է նախապես վերացներ տվյալ երկրում կառավարող թագավորական հարստությունը, այ-

գոր ի վերոյ նշանակեցար, ինքն դառնայր ի կողմանս Հայոց Մեծաց (Կորիւն, Վարք Մեսրոպայ վարդապետի, «Մատենագիրք Հայոց», Ա հատոր, Ե դար, էջ 247); Պատմահայր Մովսես Խորենացին նույնպես այս կապակցությամբ հաղորդում է. «Հրաւիրի անտի ի բղէշխն Գուգարացոց Աշուշայէ՝ յաղագս նորին գործոյ զալ յիւր իշխանութիւնն ի զաւառն Տաշրաց. ուր երթեալ՝ լաւազոյնս վարդապետեաց եւ հաստատագոյնս քան զամենայն աշակերտեալսն. առ ոյտով ժամանակաւ Արձիլ ոմն էր կացեալ թագաւոր Վրաց» (Մովսես Խորենացի, Հայոց Պատմութիւն (այսուհետ՝ Մովսես Խորենացի), «Մատենագիրք Հայոց», Բ հատոր, Ե դար, էջ 2096):

¹⁰ Հարությունյան Բ., Մեծ Հայքի Գուգարք աշխարհի ըստ «Աշխարհացոյց»-ի, ԲԵՀ, 1977, № 2, էջ 185:

¹¹ Դա են վկայում Ղազար Փարպեցու այն տեղեկությունները, որոնց համաձայն Գուգարաց Աշուշա բղէշխը հանդես է գալիս արդեն «բղէշխն Վրաց», «իշխանն Վրաց» տիտղոսներով (Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց (այսուհետ՝ Ղազար Փարպեցի), «Մատենագիրք Հայոց», Բ հատոր, Ե դար, էջ 2245, 2249, 2252, 2256, 2303, 2306):

¹² Տե՛ս Հարությունյան Բ., Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչա-քաղաքական կացությունը 387-451 թթ., էջ 87-88, Арутюнян Б., Административное деление Закавказских владений Сасанидского Ирана согласно труду Елишэ, Кавказ и Византия, в. 1, Ереван, 1979, էջ 34-35, Акопян А., Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, էջ 116; Մելրոնյան Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Ե., 2003, էջ 42; Յակոբեան Ա., «Վաչագանի վեպ»-ը և Արշակունեաց թագաւորութեան խնդիրը Դ-Ջ դարերի Ադուսներում, Հանդես ամսօրեայ, Վիեննա-Երևան, 2003, № 1-12, էջ 122-123, Խորիկյան Հ., Հայկական մարզպանության հյուսիսային սահմանի շուրջ, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես Ա, Երևան, 2011, էջ 262:

նուհետև ստեղծեր մարգպանություն¹³: Այս տեսակետը հիմնվում է, ինչպես Մեծ Հայքի թագավորության անկման, այնպես էլ օտար պատմիչների հաղորդումների վրա:

Մասնավորապես, «Աղիաբենի եկեղեցու պատմության» հեղինակ Մշիխա Ջեխայի հաղորդմամբ. «*Երբ պարսիկները Արևելքի տեր դարձան, քրիստոնյաները մի քիչ վախեցան, որ իրենց, սուր դանակներով կմորթեն, որովհետև Արևելքի բոլոր թագավորներին հաղթելով, փոխարենը [պարսիկները] իրենց ենթակա կառավարիչներ ու մարգպաններ էին նշանակել*»¹⁴: VI դարի բյուզանդական պատմագիր Պրոկոպիոս Կեսարացին պարսից արքա Կավադ Ա-ի դեմ իբերների (վրացիների) ապստամբության կապակցությամբ հաղորդում է հետևյալը. «*Այն ժամանակից, երբ քարքարոսների (այսինքն՝ իբերների-Չ. Խ.) մեծամեծները թագավոր Գուրգենի հետ միասին որոշեցին ապստամբություն քարձրացնել, պարսիկները թույլ չէին տալիս, որ իրենց թագավոր կարգեն*»¹⁵, իսկ, մոտ 523 թ. ապստամբության ճնշումից հետո, երբ Գուրգեն թագավորն իր ընտանիքի և վրաց ազնվականների հետ փախավ Լազիկա¹⁶՝ Քարթլիում վերացվեց թագավորական իշ-

¹³ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 84; տե՛ս նաև՝ Хуршудян Э., Армения и сасанидский Иран (Историко-культурное исследование), Алматы 2003, էջ 193, Свазян Г., История страны Алуанк (с древнейших времен до VIII век), Ереван, 2009, էջ 225.

¹⁴ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 8, Ասորական աղբյուրներ Ա, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Շ. Գ. Մելքոնյանի, Երևան, 1976, «Աղիաբենի եկեղեցու պատմություն», էջ 84:

¹⁵ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 5, Բյուզանդական աղբյուրներ Ա, «Պրոկոպիոս Կեսարացի» (այսուհետ՝ Պրոկոպիոս Կեսարացի), թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1967, «Պարսկական պատերազմների մասին» գիրք երկրորդ, գլ. 28, էջ 154:

¹⁶ Պրոկոպիոս Կեսարացի, Պարսկական պատերազմների մասին, գիրք առաջին, գլ. 12, էջ 29:

խանութունը¹⁷, որից հետո շուրջ մեկ դար երկիրը կառավարվում էր մարզպանների կողմից¹⁸:

Այդուհանդերձ, մեր պատմիչները՝ Ղազար Փարպեցին և Եղիշեն, 450-451 թթ. անցքերը շարադրելիս հայտնում են, որ հայոց մարզպան Վասակ Սյունին, ավելի վաղ գրադեցրել է Վրաց մարզպանի պաշտոնը: Ղազար Փարպեցին գրում է. «Ապա թե կայսր այլազգագոյնս ինչ խորհի եւ չճանաչէ զիր աւգուտսն՝ եւ եւ մինչ Վրաց մարզպանն էի (Վասակ Սյունին-Չ. Խ.) եւ դուռն Աղուանից յիմում ձեռին էր՝ բազում զաւրազլուխք Հոնաց ընդ իս բարեկամացան ուխտիս եւ երդմամբ, եւ այսաւր նովին երդմամբ երթեւեկեն առ իս»¹⁹, իսկ Եղիշեի մոտ Վասակի վրաց մարզպան եղած լինելու մասին հիշատակությունը կապված է Տիգրանի դատավարության հետ. «Հաւատացէք դմա (Վասակ Սյունուն-Չ. Խ.) զաշխարհն Վրաց. հարցէք ցաշխարհն, եթէ գո՞հ իցեն զդմանէ: Ետուք դմա զտէրութիւնն Սիւնեաց. լուարու՞ք յազգականաց այտի դորա, զի՞նչ պատմեն զդմանէ: Արարէք զդա մարզպան Հայոց. զոր նախնեացն ձերոց մեծաւ աշխատութեամբ զտեալ էր, դա ի միում ամի կորոյս զերկիրն ամենայն»²⁰: Մասնագիտական գրականության մեջ Վասակի հայոց մարզպան դառնալը թվագրվում է 441-443-ով²¹, ինչը նշանակում է, որ առնվազն 437/439-441/443 թթ. Վասակը պետք է լիներ Վրաց մարզպան²²:

¹⁷ Ст и Очерки истории Грузии, т. II, Грузия в IV-X веках, Тбилиси, 1988, էջ 94, 141-142.

¹⁸ Цочелия М., նշվ. աշխ., էջ 12.

¹⁹ Ղազար Փարպեցի, էջ 2279:

²⁰ Եղիշե, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին (այսուհետ՝ Եղիշե), «Մասենագիրք Հայոց», Ա հատոր, Ե դար, էջ 679:

²¹ 441 թ.՝ Сукиасян А., Общественно-политический строй и право Армении в эпоху раннего феодализма (III-IX вв.), Ереван, 1963, էջ 261, Օրմանեան Մ., Ազգապատում (Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկզբէն մինչեւ մեր օրերը ազգային պարագաներով պատմուած), Ա հատոր, Ս. Էջմիածին, 2001, էջ 375, 442 թ.՝ Լեռ, Երկերի ժողովածու 10 հատորով, Հայոց պատմություն, հ. 2, Միջին

Ղազար Փարպեցու «*եւ դուռն Աղուանից յիմում ձեռին էր*» հաղորդումից կարելի է կարծել, որ Վասակը եղել է նաև Աղվանից մարզպան²³, սակայն ըստ ամենայնի դա պետք է պայմանավորել այն հանգամանքով, որ պարսիկները սյունեցիներին էին հանձնարարել ճորա Պահակի պաշտպանությունը²⁴: V դարի պատմիչներն ինչ խոսք, լավ գիտեին, որ ի տարբերություն Կասպից լեռնանցքի, Ալանաց լեռնանցքը (Ղար-ի-Ալան) արդեն ամրացված և փակված էր բնության կողմից²⁵, այդ իսկ պատճառով Վասակը, դառնալով Վրաց մարզպան, ստանձնել է նաև Աղվանից դռան՝ ճորա Պահակի պաշտպանությունը, որը 421-422 թթ. պարսկաբյուզանդական պատերազմից հետո գրավում էր պարսիկների ուշադրությունը:

Փաստորեն, վերոնշյալից հետևում է, որ Վրաց թագավորության անկումից՝ 523 թ., դեռ առաջ էլ Վիրքը մարզպանություն էր, ինչը մտածել է տալիս, որ Սասանյանների համար թագավորական իշխանության պահպանումը միշտ չէ որ արգելք էր մարզ-

դարեր, Ե., 1967, էջ 37, Хуршудян Э., նշվ. աշխ., էջ 107, 443 թ.՝ Еремян С., Марзпанская Армения. Восстания 450-451 и 483-484 гг. (Очерки истории СССР, Кризис рабовладельческой системы и зарождение феодализма на территории СССР III-IX вв., Москва, 1958), էջ 196.

²² Տե՛ս Еремян С., Сюния и оборона сасанидами кавказских проходов, «Известия» АрмФилиал, Ереван, 1941, № 7 (12), էջ 38, Еремян С., Марзпанская Армения. Восстания 450-451 и 483-484 гг., էջ 196.

²³ Խորիկյան Հ., Աղվանից մարզպանության վարչական բաժանումներն ըստ «Աշխարհացոյց»-ի, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, № XXVIII, Երևան, 2011, էջ 82:

²⁴ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 16, Արաբական աղբյուրներ Գ, արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր, ներածությունը և բնագրից թարգմանությունները՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005, էջ 266, Еремян С., Сюния и оборона сасанидами кавказских проходов, էջ 37-38.

²⁵ Տե՛ս Еремян С., նշվ. աշխ., էջ 37.

պանությունների ստեղծման համար: Դրա լավագույն օրինակը Վասակի՝ Վիրքի (Վարջան) մարզպան լինելն է²⁶:

Այսպիսով՝ Սասանյանները Վիրքում թագավորական իշխանությունը պահպանելով հանդերձ, երկրում հաստատեցին մարզպանական համակարգ, որով այն հակակշռված էր մարզպանի իշխանությամբ:

Սասանյանների այս քաղաքականությունից անմասն չմնաց նաև Աղվանքը: Պարսկաստանը հյուսիսից պաշտպանելու տեսակետից կարևոր էր նաև Աղվանքի տարածքը, որովհետև նրանից հյուսիս-արևելք գտնվում էր կովկասյան լեռնանցքով տարբեր ցեղերի արշավանքներից Չողա կամ Ճորա մայրաքաղաքը պաշտպանող պարիսպը՝ Ճորա Պահակը (Չողա, Չորա Պահակ, Դարբանդ)²⁷: Սակայն այստեղ հետաքրքիրն այն է, որ Ճորա Պահակն Աղվանից թագավորության անմիջական մաս չէր կազմում²⁸: Այն, ինչպես վկայված է «Աշխարհացոյց»-ում, իրանալեզու

²⁶ Եթե, ինչպես նշեցինք վերևում՝ Վասակ Սյունու, որպես Վրաց մարզպանի կառավարման թվերը տատանվում են 437/439 թթ. միջակայքում, ապա՝ անհավանական չէ կարծել, որ մարզպանությունը պետք է կազմավորված լիներ ավելի վաղ՝ այն է 428 թ., թերևս Հայկական մարզպանության կազմավորումից հետո: Պարսից արքունիքը կամենալով Վիրքում ամրապնդել իր գերիշխանությունը, մարզպանի պաշտոնը հանձնել է իր վստահելի մարդկանց՝ նախ Վասակ Սյունուն (437/439-441/443), ապա Գուգարաց բղեշխ Աշուշային: Աշուշայի՝ Վրաց մարզպան լինելու հանգամանքը, երևում է հենց Ղազար Փարպեցու հաղորդումներից: Հազկերտ Բ արքայի հրամանով Տիգրան ներկայացած տասը հայ նախարարներին թվարկելուց հետո պատմիչը Վրաց աշխարհից նշում է միայն Աշուշա բղեշխին. «*Եւ յաշխարհէն Վրաց՝ բղեշխն Աշուշայ եւ այլ տանուտեարք աշխարհիւ»* (Ղազար Փարպեցի, էջ 2245): Այնուհետև կեղծ ուրացությունից հետո, ինչպես տեսնում ենք Հազկերտ Բ արքան «Վրաց Աշուշա բղեշխին» պատանդ է պահում, որով էլ Վիրքը դուրս է մնում հետագա ապստամբական շարժումից (Ղազար Փարպեցի, էջ 2252): Ահա, այս հանգամանքը, ինչպես նաև Աշուշայի «Վրաց բղեշխ» տիտղոսը փաստում են Աշուշայի՝ Վրաց մարզպան լինելը:

²⁷ Տե՛ս Երեմյան Ա., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 76:

²⁸ Ա. Տեր-Ղևոնդյանը Սալման իբն Ռաբիա ալ-Բահիլի նվաճումների հետ կապված ծանոթագրությունում նշում է, որ «*Հաճախ կրկնվում է այն սխալ տեսակետը, թե իբր Ե-է դարերում, ինչպես նաև արաբական տիրապետության*

մասքութեան պետության կենտրոն հանդիսացող Չոդր պաշտպանող պարիսպ-ամրությունների համալիր էր (Ճորա Պահակ էր կոչվում ոչ միայն Դարբանդի անցքի շուրջ կառուցված պարիսպ-ամրությունների համալիրը, այլև դրանց ներսում գտնվող բերդաքաղաքը)²⁹:

Բնական է, որ Սասանյաններն առաջին իսկ հնարավորության դեպքում պետք է իրենց ազդեցության տակ վերցնեին Չոդրի երկիրը, որը հնարավոր էր միայն հայ Արշակունիների թագավորության վերացումից հետո: Արշակունյաց արքայատոհմի անկումից հետո (428թ.) Սասանյանները Հայաստանից անջատեցին ռազմաստրատեգիական նշանակություն ունեցող Փայտակարան նահանգը՝ այն միացնելով Ատրպատականին³⁰: Տրամաբանական է համարել, որ պարսիկների հաջորդ քայլը պետք է ուղղված լիներ Փայտակարանից հյուսիս գտնվող պարթև Արշակունիների մյուս ճյուղի՝ մասքթաց Արշակունիների թագավորության նվաճմանը³¹:

տակ մերձկասսյան շրջանները, ինչպես նաև այժմյան Դադստանը մտել են Աղվանքի կազմում: Իրականում իրանալեզու բնակչություն ունեցող մերձկասսյան շրջաններում մասքթաց Արշակունիների թագավորության անկումից հետո, առանձին իշխանություններ են եղել, որոնք այս կամ այն չափով ենթակա են եղել Չոդա մարզպանին: Արաբական տիրապետության շրջանում Աղվանքը, մերձկասսյան շրջանները և Դերբենդը (Դադստան) փարչականորեն և ըստ էության, իրարից բոլորովին տարբեր միավորներ են եղել» (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին հ. 11, Արաբական աղբյուրներ Բ, Իբն ալ-Ասիր, թարգմ. բնագրից, առաջ. և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981, ծան. 49, էջ 369):

²⁹ Տե՛ս Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 76, 103: Տե՛ս նաև Հայկական սովետական հանրագիտարան (այսուհետ՝ ՀՍՀ), հ. 1, Երևան, 1974, «Աղվանքը 387-706 թթ.» բարտեգ, էջ 264, ՀՍՀ, հ. 7, Երևան, 1981, էջ 104; հմմտ. Кудрявцев А., Древний Дербент, Москва, 1982, էջ 80, 82:

³⁰ Հարությունյան Բ., Փայտակարան քաղաքը և նրա տեղադրությունը, «Արաբեր հասարակական գիտությունների» (այսուհետ՝ ԱԳ), Երևան, 1981, № 12, էջ 68: Տե՛ս նաև Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 110:

³¹ Փավստոս Բուզանդի հաղորդումներից պարզ երևում է, որ Արշակունի տոհմին են պատկանում իրանախոս մասքութները, այլ ոչ թե աղվանները. «Ե. իբրև

Առանձին պատմաբաններ գտնում են, որ արդեն 387 թ. բաժանումից հետո, Այսրկովկասի այն հատվածում, որն անցել էր Պարսկաստանին, նշանակվեցին մարզպաններ, այսինքն՝ Հայքում, Վիրքում, Աղվանքում և Չոդում հաստատվում է մարզպանություն³²: Սակայն նշենք, որ Հռոմն ու Պարսկաստանը սուկ իրավականորեն որոշեցին իրենց ազդեցությունների ոլորտը Հայաստանում և Վրաստանում, բայց դա չի նշանակում, թե Պարսկաստանը դրանով Այսրկովկասը նվաճեց և ձեռնամուխ եղավ մարզպանությունների ստեղծմանը: Ճիշտ է, մարզպանություն-

ուղղեաց նորոգեաց զամենայն եկեղեցիս կողմանցն այնոցիկ, էհաս նա (Գրիգորիսը-2. Խ.) միևչե ի ճամբար բանակին Արշակունսոյ արքային Մազքթաց, որոյ անուն իւր Սանէսան կոչէր, քանզի եւ նոցա եւ Հայոց թագաւորացն մի ազգաւորութիւն էր տոհմին բնութեան» (Փավստոս Բուզանդ, էջ 283), «... եւ զզուխն Սանէսանայ մեծի թագաւորին եկին բերին առաջի արքային Հայոց, սակայն իբրեւ էտես, յայ սկսաւ. ասէ. եղբայր իմ էր ազգաւ Արշակունի» (Նույն տեղում, էջ 285): Մասքութների արքայական հարստության Արշակունի լինելու օգտին է խոսում նաև Կոռնելիոս Տակիտոսի հաղորդումը. «Նույն ժամանակ Վոնոնը, որը, ինչպես հիշատակել էի հեռացվել էր Կիլիկիա, կաշառելով սլահապաններին, փորձեց փախչել Հայաստան, այնտեղից Աղվանք (Ալբանիա) և Հենիոքների (մոտ), և ապա իրեն արյունակից (այսինքն՝ Արշակունի-2. Խ.) սկյութական թագավորի մոտ» (Օտար աղբյուրները հայերի մասին, № 3, Լատինական աղբյուրներ, Կ. Տակիտոս, բաղեց լատիներենից, թարգմանեց Պ. Սոտնիկյանը, Երևան, 1941, էջ 19): Մանրամասն տե՛ս Եремян С., Страна «Махелония» надписи Кааба-и-Зардушт, Вестник древней истории, М., 1967, № 4, էջ 55-57.

³² Геворгян Т., Формирование марзпанства Аран и включение в его состав Армянских областей Арцах и Утик, էջ 213, 224-225; տե՛ս Եремян С., Политическая история Албании III-VII вв., (Очерки истории СССР), էջ 312, 314; Երևմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 14, 34; Հարությունյան Բ., Մեծ Հայքի Գուգարք աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 185-186; Յարութիւնեան Բ., Մեծ Հայքի բղէշխութիւնների եւ բղէշխութեան հաստատութեան շուրջ, էջ 121-122; Հարությունյան Բ., Այսպես կոչված Աղվանքի էթնիկ և քաղաքական պատմության մի քանի հարցեր, «Վեմ», Երևան, 2011, թիվ 3 (35), էջ 65; Հարությունյան Բ., Այսպես կոչված Աղվանքի սահմանների, տարածքի և զավառաբաժանման շուրջ, «Վեմ», Ե., 2012, թիվ 2 (38), էջ 77-78 (հարկ ենք համարում սակայն նշել, որ Բ. Հարությունյանն իր «Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչա-քաղաքական կազմությունը 387-451թթ.» հոդվածում, նշում է, որ մարզայանությունը Վիրքում հանդես եկավ հայկական մարզայանության ստեղծման հետ մեկտեղ, էջ 87):

ների կազմավորումը ոչ միշտ էր կապվում թագավորական իշխանության վերացման հետ: Սակայն այդ դեպքում հարց է ծագում, ինչու՞ Այսրկովկասը նվաճած և մարզպանություն հաստատած Պարսկաստանը պետք է Խոսրով Դ-ին և Վոամշապուհին թույլ տար դառնալու վերամիավորված Հայաստանի թագավոր, Մեսրոպ Մաշտոցին ստեղծելու հայոց, վրաց և գարգարաց գրերը, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ սեփական գրի առկայությունն ավելի շուտ ձգտում էր առաջացնելու վերականգնելու պետության, եթե ոչ անկախ, ապա գոնե կիսանկախ դրությունը: Եվ դա ամենևին էլ չի խոսում մարզպանության առկայության մասին: Մեր կարծիքով, եթե IV դ. պարսիկները հաստատեին մարզպանություն, ապա, ընդհակառակը նախարարները կձգտեին պահպանել թագավորությունը: Նկատենք, որ «մարզպանի» ինստիտուտը (թարգմ. «սահմանապահ») իր նշանակությամբ ռազմական բնույթի էր³³: Դա է վկայում նաև Սեբեոսի՝ պարսիկ մարզպանների ցանկը. «*ապա էկին սահմանակայք պարսիկք մինչեւ ցապառումն խաղաղութեանն*»³⁴: Այսինքն մարզպանն առաջնահերթ հսկողության տակ պետք է պահեր հայերի ռազմական ուժը՝ երկրի սահմանները պաշտպանելու համար, ինչը բացակայում է: Իսկ ինչ վերաբերվում է Պատմահոր այն հաղորդմանը, թե Արտաշեսը թագավոր կարգվեց «*առանց պարսիկ վերակացուի*»³⁵, ապա նախ և առաջ պետք է հաշվի առնել, որ Խոսրով Դ-ի մահից հետո Հազկերտ Ա շահը հայոց գահին է նստեցնում իր որդուն՝ Շապուհին (415-419), որն ըստ Պատմահոր. «*Ջքառեամ անարգաբար թագաւորեալ Հայոց*»³⁶: Այնուհետև 419-421 թթ. ծա-

³³ Տե՛ս Хуршудян Э., Армения и сасанидский Иран, էջ 78-98.

³⁴ Պատմութիւն Սեբեոսի (այսուհետ՝ Սեբեոս), աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 71:

³⁵ Մովսես Խորենացի, էջ 2093:

³⁶ Նույն տեղում, էջ 2087:

վալվեց ապստամբական շարժում՝ Ներսես Ճիճրակացու գլխավորությամբ. «զգաւրագլուխ եղելոյ ժողովեալ նախարարացն Հայոց հանդերձ զաւրաւք իւրեանց՝ տան ընդ գնդին Պարսից պատերազմ. հարկանեն զգաւրսն, եւ սպանանէ Ասրուամ Սպանդունի զգաւրագլուխն. եւ ինքեանք ցրուեսոյք: Ուստի աղմկաւ եւ բազում խռովութեամբ մնացեալ աշխարհս մեր յանհիշխանութեան ամս երիս»³⁷: Որից հետո, արդեն 422 թ. Վոամ Ե Գոռը հայոց թագավոր է ճանաչում Արտաշես-Արտաշրին: Այստեղից դժվար չէ հետևություն անել, որ պարսից թագաժառանգ Շապուհը՝ քառամյա կառավարման ընթացքում իր ենթակայության տակ ուներ հավատարիմ *պարսիկ վերակացու և զորագունդ*, որի դեմ էլ հենց պատերազմում էին հայերը, իսկ հայոց թագավորի առկայության պայմաններում տրամաբանական է, որ վերակացուի կարիքը չէր զգացվելու, ինչը և արտացոլված է Պատմահոր մոտ:

Ընդգծենք նաև, որ վերակացուն կամ զորապետը չի նույնանում մարզպանի հետ³⁸: Վերակացու կարող էր լինել ցանկացած պաշտոնյա, օրինակ՝ Եղիշեի հիշատակած պարսից արքունիքի ներկայացուցիչ Դենշապուհը, որը Հայաստանում անցկացրեց աշխարհագիր և գործակալությունները հայերից վերցնելով (բացառությամբ սպարապետության)՝ հանձնեց պարսիկներին: Այդ մոտեցմամբ կստացվի, որ Դենշապուհը Հազկերտ Բ-ի կողմից նշանակված մարզպան էր, որը գործում էր արդեն հայոց մարզպան Վասակ Սյունու հետ համատեղ: Այսպիսով, Հայաստանը փաստացի դեռևս թագավորություն էր, իսկ «Գահնամակ»-ից մեզ հայտնի է, որ 387 թ. բաժանքից հետո էլ Կասպք-Փայտակարանը շարունակում էր գտնվել Մեծ Հայքի Արշակունյաց թա-

³⁷ Մովսես Խորենացի, էջ 2087:

³⁸ Геворгян Т., նշվ. աշխ., էջ 211-212.

գավորության կազմում³⁹, որն էլ անհնար էր դարձնում Այսրկովկասի նվաճումը (Աղվանքի կողմից) և մարգպանության հաստատումը մինչև 428 թ.⁴⁰: Դա կարող էր տեղի ունենալ լոկ 428 թ. հետո, երբ Փայտակարանն անջատվեց Հայքից և կցվեց Ատրպատականին, որով Պարսկաստանը սահմանակից էր դառնում Աղվանքին՝ դրանով իսկ փորձ կատարելով ապահովել իր ներկայությունը Ճորա Պահակում:

Բուզանդը հաղորդում է, որ «Ոչ ամուսնացաւ նա (Վրթիանեսի որդին՝ Գրիգորիսը-Չ. Խ.), այլ ի հնգետասանամենից էհաս յաստիճան եպիսկոպոսութեան աշխարհին Վրաց եւ Աղուանից, այլ ինքն սահմանացն Մազքթաց»⁴¹, «Յայնմ ժամանակի թագաւորն Մազքթաց Սանեսան անհնարին նիւթեաց գորտմտութիւն ոխութեան ընդ իւրում ազգակցին Խոսրովու արքային Հայոց, եւ գումարեաց ժողովեաց զամենայն զաւրս... Էկն անց ըստ իւր սահմանն ընդ գետն մեծ ընդ Կուր, եւ Էկն տարածեցաւ էլից զերկիրն Հայոց աշխարհին»⁴²: Եթե այս հաղորդումներին էլ ավելացնենք Ազաթանգեղոսինը, որ չորրորդ բղեշխը սահմանակալ էր Մասրութների կողմից⁴³, ապա ստացվում է, որ համաձայն պատմիչների, Կուր գետը Մեծ Հայքի և մասքթաց Արշակունիների պետության միջև սահման էր, որից էլ հետևում է, որ Ճորա Պահակից մինչև Կուր գետ լնկած տարածքը մասքթաց թագավորության տիրույթն էր⁴⁴:

³⁹ Հարությունյան Բ., Փայտակարան քաղաքը և նրա տեղադրությունը, էջ 67, նույնի՝ «Գահնամակի» թվագրման հարցի շուրջը, էջ 69:

⁴⁰ Նախշ-ի Ռուստամի «Каабе Зороастра» արձանագրության մեջ Շապուհ Ա-ն Այսրկովկասը հիշատակում է նվաճված և Երսնշահի մաս (տե՛ս Хурбур/дьян Э., Армения и сасанидский Иран, էջ 235): Ինչպես հայտնի է, այդ փաստով տարածաշրջանում մարգպաններ չնշանակվեցին:

⁴¹ Փավստոս Բուզանդ, էջ 281:

⁴² Նույն տեղում, էջ 284:

⁴³ Ազաթանգեղոս, էջ 1723:

⁴⁴ Տե՛ս Հայաստանի ազգային ատլաս, հ. Բ, Երևան, 2008, էջ 29, 32: Սանեսան-Սանատրուկը մասքթաց Արշակունի էր («հանդերձ Սանատրկաւ ոմամի: յիւրմէ

Սանեսանի մահվանից հետո, ամենայն հավանականությամբ մասքթաց Արշակունիների պետությունը թուլացել է և քայքայվել, իսկ մասքութների տիրապետությունից դուրս էր եկել Արևելյան Այսրկովկասի արևմտյան մասը՝ «Աշխարհացոյց»-ի բուն Աղվանքը⁴⁵, որից հետո մասքութների իշխանությունը տարածվել է Ճորու Պահակից մինչև Կուր գետ՝ արդեն սահմանակ-

ազգէն Արշակունեաց» Մովսէս Խորենացի, էջ 2010; «*Եհաս նա (Գրիգորիսը-Հ. Խ.) մինչեւ ի ճամբար բանակին Արշակունուոյ արքային Մազքթաց, որոյ անուն իւր Սանեսան կոչէր. քանզի եւ՝ նոցա եւ Հայոց թագաւորացն մի ազգաւորութիւն էր տոհմին բնութեան»* Փափստոս Բուզանդ, էջ 283), որին Տրդատ Գ-ն ուզում էր «օգտագործել» (նրա ազգակից Արշակունի լինելը), որպէսզի Փայտակարանում և Մասքթաց կողմերում (այդ շրջանում Աղվանքը ներառող, քանզի համաձայն Պատմահոր. «*Իսկ նորա (Սանատրկայ- Հ. Խ.) պարսկական գաւրաւք լցեալ զքաղաքն Փայտակարան՝ ինքն առ սրբայն Շապուհ փութացեալ անկանի, հանդերձ Աղուանից նախարարաւք»* (Մովսէս Խորենացի, էջ 2014) տարածվէր քրիստոնէությունը: Այսինքն, Մասքութքն ու Աղվանքն ի սկզբանէ Սանեսան-Սանատրուկի իշխանության տակ էին: Այնուհետև, տեղեկանալով Տրդատ Գ-ի մահվան մասին՝ 330 թ., Սանեսան-Սանատրուկն ինքնաթագադրվելով Փայտակարանը վերցրեց իր հսկողության տակ (Մովսէս Խորենացի, էջ 2011):

⁴⁵ Մեզ այդպես է մտածել տալիս Մովսէս Կաղանկատվացու՝ Աղվանից թագավորացանկը: Պատմիչը Վաչագան Բաջով կարծես սկիզբ է դնում աղվանից Արշակունիների թագավորությանը. «*Եւ թիւ անուանցն յԱռանայ մինչեւ զքաջն Վաչագան, որ էր ի մեծ ազգէն Արշակունեաց, չէ յայտ. եւ զսոցայն ստոյգն, թէ յորմէ տեհմէ՝ են, չունիմ ասել: Եւ որք ըստ կարգի կացին թագաւորք Աղուանից տասն. անուանք են այսորիկ. «Վաչագան քաջ,.....»* (տե՛ս Մովսէս Կաղանկատուացի. Պատմութիւն Աղուանից աշխարհի (այսուհետ՝ Մովսէս Կաղանկատվացի), «Մատենագիրք Հայոց», ԺԵ. հատոր, Ժ. դար, Երևան, 2011, էջ 76), մի հանգամանք, որը թերևս կապված էր արդեն թուլացած մասքութների հետ, և շատ հավանական է, որ դրանից օգտվելով էլ աղվանից արքաներն իրենց հոչակել են մասքթաց Արշակունիների ժառանգ՝ իրավահաջորդ (հմմտ. Еремян С., Политическая история Албании III-VII вв., էջ 310-311), դրանով իսկ ձգտելով տիրանալ հայ Արշակունիների տիրույթներին: Ասվածի լավագույն օրինակ կարելի է համարել այն, որ «*Առնէր պատերազմ (Մուշեղ սպարապետը-Հ. Խ.) ընդ երկիրն Աղուանից. հարկանէր զնոսա ի հատուածս անհնարինս: Եւ թափէր ի նոցանէ բազում զաւառս, զոր հատեալ էր նոցա ի նոցանէն. զՌուտի. զՇակաշէն եւ զձորն Գարդմանայ. զԿոդթ եւ այլ որ շուրջն էին զնովսս սահմանք զաւառք»* (Փափստոս Բուզանդ, էջ 390): Վերոնշյալից հետևում է, որ թագավորության կարգավիճակ ձեռք բերած պետությունը, այն էլ Արշակունյաց հազիվ թէ ենթակա լինէր մասքութներին:

ցելով Փայտակարանին⁴⁶: Հենց այս տարածքն էլ հավանաբար պարսիկները 428-450 թթ. միջակայքում վերածեցին մարզպանության, քանզի Եղիշեն 450 թ. դեպքերը նկարագրելիս, որպես ճորա (Չոդա) մարզպան է ճանաչում Սեբուխտին, որը եկել էր Աղվանից եկեղեցիներն ավերելու⁴⁷: Պատմիչը կարծես դրանով ցույց է տալիս, որ Չոդն ու Աղվանքը նույնը չեն, և որ Չոդը գրավվել էր ավելի վաղ: Դա երևում է Եղիշեի այլ հաղորդումներից, որոնց համաձայն. «*Եւ ահա յետ ատուրց բազմաց եկն էհաս հազարապետն Աղուանից սուրբ եպիսկոպոսաւ աշխարհին, մեծաւ տազնապաւ փութացուցանէր զգաւրսն ասելով. «Գունդն Պարսից, որ էր ի կողմանս աշխարհին Հոնաց (10 հազար, որը մշտապես զտնվում էր ճորա Պահակում), դարձաւ այսրէն, եկն ենուտ յաշխարհս մեր. եւ բազում եւս եւ այլ այրուծի որ ի դրանէ եկն»⁴⁸, որից հետո Աղվանքն ամբողջությամբ գրավվեց պարսիկների կողմից⁴⁹, «*Եւ բազումք ի նախարարացն Աղուանից եւ յամենայն շինակա-**

⁴⁶ Еремян С., Армения в I-IV вв., էջ 104, карта (Атлас Армянской ССР, Ереван-Москва, 1961), Երեմյան Ս., «Մեծ Հայքի թագավորությունը IV դ. (298-385 թթ.)», «Հայ ժողովրդի պայքարը օտար նվաճողների դեմ 385-536 թթ., Տանուտիրական Հայաստանը 450-509 թթ.», քարտեզները տե՛ս Հայ ժողովրդի պատմություն /ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտ/, հ. II, Հայաստանը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում, Ե., 1984, ներդիր, տե՛ս Հայաստանի հարակից երկրների պատմություն, չորս հատորով, հատոր 1, Հին շրջան, Երևան, 2013, «Վիրքն ու Աղուանքը Բ. ա. III դ. վերջից Բ. հ. III դ.» քարտեզը 294-295 էջերի մեջ ներդիրում:

⁴⁷ Եղիշե, էջ 605, տե՛ս Մովսէս Կաղանկատվացի, էջ 158:

⁴⁸ Եղիշե, էջ 601: Ինչպես երևում է պատմիչի հայտնած տեղեկությունից մինչև Աղվանքի նվաճումը Սեբուխտն արդեն ճորա մարզպան էր, մի հանգամանք, որը թերևս բացառում է վերջինիս Աղվանից մարզպան լինելը: Չոդի, որպես Աղվանքից առանձին միավորի օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ Չոդը ներառող Բաղասականը (Բաղասականի թագավորությունը տարածվում էր Կուր գետի ստորին հոսանքից մինչև Չոդ-Դերբենդի անցք՝ ներառելով Մասրութք երկրամասը (Յակոբեան Ա., «Վաչագանի վեպ»-ը..., էջ 99) Հյուսիսային քուստակում հանդես է գալիս, որպես առանձին միավոր՝ շահր (Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 115):

⁴⁹ Վարդանյան Ա., Աղվանքի պատմաաշխարհագրական քննություն, Երևան, 2013, էջ 66:

նացն, որք վասն անուանն Աստուծոյ ցրուեալ եւ վատնեալ էին յամուրս լերանց Կապկոհի, խաղային զնային այնուհետեւ ի վերայ Պահակին Հոնաց (Ճորա Պահակի-Չ. Խ.), զոր ունէին բոնութեամբ Պարսիկքն. առնուին քանդէին զՊահակն, եւ կոտորէին զգաւրսն, որ ի ներքս բնակեալ էին, եւ զդուռնն տային ի ձեռն Վահանայ, որ էր յազգէ թագաւորացն Աղուանից»⁵⁰:

Փաստորէն Չողի նվաճումով Սասանյանները սկիզբ դրեցին Արևելյան Այսրկովկասի նվաճմանը: Այնուհետև 461/462 թ., վերացնելով Աղվանքում թագավորական իշխանությունը, Պարսկաստանը բուն Աղվանքից, Չողից ու հայոց Ուտիք աշխարհի հյուսիս-արևելյան մասից կազմավորեց մարզպանություն (միջ. պրսկ. Arān)⁵¹: Իսկ Ուտիքի մնացած մասն Արցախի հետ Առանշահիկ տոհմի գլխավորությամբ ինքնիշխան էր⁵², որովհետև Աղվանք անվան տարածումը Կուրի աջափնյակի վրա ոչ թե վարչաքաղաքական, այլ՝ եկեղեցական-իրավական բնույթ էր կրում, այն էլ՝ ուշ ժամանակներում⁵³: Այսպիսով, Վիրքում մարզպանությունը կազմավորվեց ամենայն հավանականությամբ արդեն Հայկական մարզպանության կազմավորումից հետո՝ 428 թ., իսկ բուն Աղվանքում այդ գործընթացը տևական ժամանակ պահանջեց, որի հիմքերը դրվեցին մասքթաց Արշակունիների թագավորության նվաճմամբ:

⁵⁰ Եղիշե, էջ 610: Հավանական է կարծել, որ աղվանից թագավորական զարմ Վահանին Ճորա Պահակի հանձնումը պայմանավորել է, որպեսզի վերջինիս համարեն Աղվանքի մաս: Այս մոտեցման դեպքում հասկանալի է դառնում Եղիշեի հետևյալ հաղորդումը. «Աղէ դու անգամ մի հրովարտակ ի դուռն տուր վասն այրուձիոյն որ յԱղուանսն է տասն հազար, զի ի ձմերոց ի Հայս եկեսցեն» (Եղիշե, էջ 592):

⁵¹ Տե՛ս Դանիելեան Է., Գանձասարի պատմություն, Ե., 2005, էջ 55: Հմմտ. Связях Г., նշվ. աշխ., էջ 228-229, Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 148-149:

⁵² Դանիելեան Է., նշվ. աշխ., էջ 55:

⁵³ Նույն տեղում., էջ 32:

ESTABLISHMENT OF THE REGIME OF SASSANID PERSIA IN
THE EASTERN PART OF GREAT ARMENIA, KARTLI AND
PROPER ALBANIA (V C.)

SUMMARY

In 387 the Roman empire and Sassanid Persia divided Great Armenia among themselves. It is possible that after the fall of the Armenian Arshakuni kingdom (428), Sassanid Persia from a part of Gugark and Kartli (Virik) created the marzpanate of Kartli as of two equal units. In accord with armenian primary sources in 437/439 Armenian marzpan Vasak of Syuni is mentioned as a Kartlian marzpan.

At first glance it seems that Persia while creating marzpanats had to abolish the royal power as it happened for example in Armenia. But as is seen from armenian primary sources it was not unconditional as follows from the example of Kartli. In "Caucasian Albania" the royal power was kept and was abolished later. According to the armenian primary source "Armenian Geography", from Caspian gateway and Chora Pahak up to the Vardan field was a territory of massagetic Arshakids. The Armenian source of 5th c. telling about revolt of 450-451 noted about the marzpan of Chora, who came to destroy the churches of proper Albania.

We think, that after fall of the kingdom of the Armenian Arshakunis, Persians had to conquer the territory of massagetic Arshakids and then Albanian kingdom.

УТВЕРЖДЕНИЕ РЕЖИМА САСАНИДСКОЙ ПЕРСИИ В
ВОСТОЧНОЙ ЧАСТИ ВЕЛИКОЙ АРМЕНИИ, КАРТЛИИ И
СОБСТВЕННО АЛБАНИИ (V В.)

РЕЗЮМЕ

В 387 г. Рим и Персия разделили между собой Великую Армению. Возможно, что после 428 г. падением царства армянских Аршакидов, Персия из части Гугарка и Картли (Вирк), в качестве двух полноправных единиц создала марзпанство Варджан. Это предположение опирается на сообщениях армянских первоисточников, которые уже между 437/439 гг. армянского марзпана Васака Сюни упоминают как картлиского марзпана.

На первый взгляд кажется, что Персия создавая марзпанства должна была упразднить царскую власть по примеру Армении. Однако, как показывают армянские источники, это было не обязательно и это видно на примере Картли. Что касается собственно Албании (левобережье Куры), то там тоже царская власть сохранилась и была упразднена немного позднее. Есть ошибочное мнение, что западное побережье Каспийского моря и в пятом веке продолжала оставаться в составе Кавказской Албании. Но первоисточник "Армянская География" сообщает, что от Каспийских ворот и Чора Пахака до Варданского поля была территория массагетских Аршакидов. Армянские источники пятого века, сообщая о восстании 450-451 гг. упоминают о марзпане в Чоре, который приехал разрушать церкви собственно Албании. Предполагаем, что после падения армянских Аршакидов персы должны были завоевать территорию массагетских Аршакидов и уже потом собственно Албанию.

ՍՈՂՈՄՈՆ ՄԱՔԵՆԱՑՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ
(VIII ԴԱՐ)

Սյունյաց դպրոցը դարեր շարունակ եղել է Հայաստանի գիտակրթական և հոգևոր-մշակութային կենտրոններից մեկը: Վիթխարի է նրա դերը հայոց քաղաքական, կրոնական, մշակութային և կրթական կյանքի պատմության մեջ: Սյունյաց դպրոցը միջին դարերի գիտության այն հորդաբուխ աղբյուներից էր, որից հոգևոր սնունդ են ստացել միջնադարի շատ հայ մտավորականներ: Դպրոցի գիտական և կրթական գործունեության արդյունքը ոչ միայն գիտնական-վարդապետների պատկառելի համաստեղության ստեղծումն էր, այլև գիտական նոր ուղղությունների ձևավորումը, որոնք սնուցում էին Հայ եկեղեցու դավանաբանական համակարգը: VII-VIII դդ. Սյունյաց դպրոցը բարձր զարգացման էր հասել՝ դառնալով Հայաստանում ուսման կատարելագործման կենտրոններից մեկը: Նա էր ուսուցիչներ և վանականներ պատրաստում հայոց դպրոցների ու վանքերի համար: Վանական դպրոցների առավել ընդունակ և ուսումնատենչ շրջանավարտները դիմում էին դեպի Սյունյաց բարձր դպրոց-վարդապետարան, որովհետև այն «զլուխ էր ամենայն գիտնոց Հայոց, ի պայծառացեալ դպրոցքն որ ի նմա. քանզի որպէս Աթենացիքն ի մէջ Հոռոմոց և Յունաց ճոխացեալ էին և մայր իմաստից կոչեցեալ յիսպանիացոց աշխարհին լատին և հելլէն դպրութեամբ, այսպէս և սոքա ի տանս Թորգոմայ յաշխարհիս Հայոց»¹: VII դարից Սյունյաց դպրոցը Հայաստանում դառնում է հունաբան ուղղության կենտրոնը: Հունաբանության սկզբնավորումը և զարգացումը ժամանակի հրամայականն էր: Հայ և հույն եկեղեցիների միջև բոր-

¹ Ստեփաննոսի Միսեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Միսական, Ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 97:

բորված վեճերը և բյուզանդական եկեղեցու անթաքույց նկրտումները հայ վարդապետներին ստիպում էին պաշտպանելու սեփական եկեղեցու ինքնուրույնությունը: Եկեղեցու հայրերը հույն եկեղեցու հավակնությունների դեմ կարող էին պայքարել միայն հունական դպրությանը և գիտությանը լիարժեք տիրապետելու դեպքում: «Այս տեսակետով,-արձանագրում է Արշակ Ալպոյաճյանը,-Բյուզանդիոնի մեջ ծնունդ առած քաղկեդոնական միտումներուն դեմ Հայաստանի հողին վրա յունական զենքերով գինուած մաքառելու ամենէն յաջող փորձը կընէր Սիւնեաց դպրոցը»²: Սրանով Սյունյաց դպրոցը վերածվում էր դավանաբանական պայքարի ազդեցիկ կենտրոնի, որի վարդապետներին «ի վաղնջուց հետե հրամայեալ զթարգմանութիւնն և զմեկնութիւնն նոցա ունել ի սրբոյն Սահակայ և ի Մեսրոպայ, զլուխ կալ և հրամանատար ամենայն վարդապետաց հայոց»³: Սյունիքի բազմաթիվ դպրոցների գլխավորն ու ղեկավարը Մայր վարդապետարանն էր, որը գործում էր Շաղատում⁴ եպիսկոպոսական նստավայրին կից: Նահանգի հոգևոր և աշխարհիկ իշխանությունները բարձր են գնահատել վարդապետարանի դերը հայ ժողովրդի հոգևոր և ազգային ինքնության պահպանման գործում, ուստի այն եղել է նրանց մշտական հոգածության ներքո:

Սյունյաց Մայր վարդապետարանի հովանավորությամբ և աջակցությամբ Սյունիքի զանազան բնակավայրերում բազմաթիվ

² Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ դպրոցի, Կ. Ա, Գահիրէ, 1946, էջ 148-149:

³ Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական, էջ 82:

⁴ Շաղատը գյուղ է ՀՀ Սյունիքի մարզում՝ Միսիան քաղաքից 12 կմ հյուսիս-արևմուտք: Սա սկզբնաղբյուրներում հիշատակված պատմական Շաղատ գյուղաքաղաքն է, որը գտնվում էր Սյունիք նահանգի Ծղուկ գավառում (տե՛ս Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Կ. Դ, Երևան, 1998, էջ 6): Մինչև IX դ. սկիզբ Շաղատը եղել է Սյունյաց գահերեց իշխանների և հոգևոր իշխանության կենտրոնը: Շաղատի եկեղեցին համարվել է «զմայր եկեղեցեաց ամենայն աշխարհին Սիւնեաց»: Անրևդունելի է Ալիշանի այն կարծիքը, թե Շաղատի վանքը նույն Սյունի վանքն է (տե՛ս Ալիշան Ղ., Միսական, 1893, էջ 212):

դպրոցներ են բացվում: Գիտությունը, կրթությունը, թարգմանական արվեստը զարգացման բարձր աստիճանի են հասնում նաև Մայր վարդապետարանից ծնունդ առած դպրոցներում⁵:

VIII դ. Սյունյաց վարդապետարանից ճյուղավորված դպրոցներից լայն ճանաչում է ձեռք բերում Մաքենոցաց վանքի դպրոցը: Այն՝ որպես ուսումնագիտական և կրոնամշակութային կենտրոն, այնպիսի մեծ հռչակ էր վայելում, որ համանուն բնակավայրը պատմիչն անվանում է «զմեծ մայրաքաղաքն Մաքենացոց»⁶: Մաքենիսը⁷ սկզբնապես հիշատակվել է Գեղարքունիքի կազմում, իսկ X դ. հիշատակվում է Սոթք գավառի հարկատու գյուղերի ցանկում⁸: Այն հայտնի էր իր «հռչակավոր, համբավատենչ և մեծասքանչ» վանքով: Գրականության մեջ անվանվել է

⁵ Կրթական և ուսումնական գործը Հայաստանում VIII-IX դդ. Զարգանում էր համընդհանուր մշակութային վերելքի պայմաններում: Մեզ է հասել այդ մասին վկայող ուշագրավ մի վավերագիր, որում Մաշտոց Եղիվարդեցի վանահայրը (ապագա կաթողիկոսը 897-898թթ.) Գևորգ Բ Գառնեցուն (877-897թթ.) գրում է. «Քանզի նորոգէր Հայաստան եկեղեցիքս ըստ բազմամարդ շինութեան նախանձեալ և պէսպէս ուսմանց առատութիւնք և արուեստատիրք և դպրոցք կանգուն էին յաշխարհիս և յոյն բարբառոյն տեղեկագոյն և գուգաշուրթն նոցին թարգմանք յոլով կային»: (Թուխտ երանելոյն Մաշտոցի, նախքան զկաթողիկոսութիւն, առ Տէր Գեորգ Հայոց կաթողիկոս վասն Սիւնեաց խաչին, թէ էր աղագաւ տուաւ, Յաւելուած «Արարատի» 1902թ. Յուլիս-օգոստոս, էջ 749: Հմմտ. Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի, Երևան, 1983, էջ 272): Մաշտոց Եղիվարդեցի կամ Սևանցի կաթողիկոսը եղել է Սյունյաց դպրոցի սան, ուսանել է Մաքենյաց դպրոցում (տե՛ս Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, Էջմիածին, 2001, § 677, 696):

⁶ Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 327: Մաքենիսի ուխտը հիշատակվում է նաև Վարդան Արևելցու աշխատությունում (տե՛ս Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի, քննական հրատ. Ն. Պերպերեանի, Փարիզ, 1960, էջ 12):

⁷ Մաքենիսը (նախկին անվանումները՝ Ղզլվանք, Զիչակլու) ներկայում գյուղ է ՀՀ Գեղարքունիքի մարզում: Գտնվում է Սևանա լճի հարավային մասում (տե՛ս www.gegharkunik.mtaes.am, հմմտ. Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Ն., նշվ. աշխ., հ. Գ, Երևան, 1991, էջ 747):

⁸ Տե՛ս Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական, էջ 374:

Մաքենոց, Մաքենյաց, Մաքենոցաց և Մաքեստենից վանք⁹: Նրա մասին մատենագրական տեղեկությունները թվագրվում են VII դարից: Մաքենոցաց վանքի միաբանությունը հասակակից է Հայաստանում գործած հնագույն միաբանություններին և իր կարևորությամբ չի զիջել Ակոռիի միաբանությանը¹⁰: Ուսումնասիրողների կարծիքով՝ Մաքենիս անունը ծագել է մաքի՝ ոչխար, բառից, որովհետև տեղի միաբանները կրել են ոչխարի մորթուց պատրաստված զգեստ¹¹: Մաքենոցաց վանքի դպրոցի կրթամշակութային վերելքը կապվում է «գիռչակելի այրն Սողոմոն»-ի՝ «Հարանց հոր» սնվան հետ: Մովսես Կաղանկատվացու վկայությամբ նա «ժամանակին Հայաստանեայցն էր պարծանք»¹²: Սողոմոնի ծննդյան թվի և վայրի մասին տեղեկությունները գրեթե բացակայում են: Սակայն դատելով նրա գործունեության ժամանակաշրջանից և մի քանի հայտնի դրվագներից՝ ենթադրելի է, որ ծնվել է VII դ. վերջին քառորդին: Ծննդավայրը հայտնի չէ: Սակայն հավանական է, որ նա Սյունիքում չի ծնվել, այլ այդտեղ է տեղափոխվել Հայաստանի այլ բնակավայրից: Այս տեսակետի համար հիմք են 1200-1202թթ. Մշո Առաքելոց վանքում կազմված Տոնական-ճառընտիրի հիշատակարանի հեղինակ Ներսեսի հետևյալ

⁹ Վանքը առ այսօր կանգուն է, գտնվում է Մաքենիս գյուղի մոտ (տե՛ս Պողոսյան Ն., Մաքենյաց վանքը ըստ Ղ. Ալիշանի, Էջմիածին, Գ, 2012, էջ 102): Մաքենյաց վանքի մասին տես նաև Բարխուդարյան Ս., Դիվանի հայ վիմագրության, պրակ IV, Երևան, 1973, էջ 289: Տե՛ս նաև Մնացականյան Ստ., Հայ ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1960, էջ 60:

¹⁰ Տե՛ս Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 66:

¹¹ Տե՛ս նույն տեղում: Տե՛ս Ալիշան Ղ., Հայապատում, մասն Ա, Վենետիկ, 1901, էջ 75: Հմմտ. Չամչեանց Մ., Հայոց պատմություն, Խ. Բ, Երևան, 1984, էջ 425: Հմմտ. Մուրատեան Մ., Պատմութիւն Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ, Երուսաղեմ, 1872, էջ 317-318, ծանոթ. 1: Ե. Լալայանը գտնում է, որ անվան համար հիմք է հանդիսացել այդ տարածքում մեծ քանակությամբ մաքի պահելը և խաշնարածությամբ զբաղվելը (տե՛ս Լալայան Ե., Ազգագրական հանդես, Ջանգեզուր, Միսիան, Վայոց ձոր, Գեղարքունիք, էջ 74):

¹² Մովսես Կաղանկատուացի, էջ 314:

տողերը. «Այր ոմն իմաստուն, որոյ անուն Սողոմոնն, ոչինչ հարուստ ամառք նախագոյն եղեալ՝ աշխարհէ Արեւելից՝ դաշնաւոր անուանեալ ծովուն Գեղագունաց վանաց վանական Մաքենտե-նից ուխտական, սրբագարդից արանց առաջնորդի»¹³: Այիշանի կարծիքով՝ Սողոմոնը Մասիսի փեշերին գտնվող Ակոռիի վանական միաբաններից էր, և այստեղից «երթալ բնակել ոչ յանապատս, այլ ի վանս միաբանից, յԵրաշխաւորսն կամ ի Մաքենոց»¹⁴: Կարելի է ենթադրել, որ մինչ Սյունիք ժամանելը նա ուսանել է Ակոռիի վանական դպրոցում կամ Այրարատի դպրոցներից մեկում: Նրա հմուտ աստվածաբան և հունարենի գիտակ լինելը հուշում է, որ ուսումը շարունակել է նաև Հայաստանից դուրս՝ ժամանակի հայտնի գիտական կենտրոններից որևէ մեկում: Երիտասարդ տարիքում մտնելով Մաքենոցաց վանք՝ Սողոմոնը հիմնադրում է դպրոց, որով սկզբնավորում է Սյունյաց հոշակավոր դպրոցի զարգացման նոր փուլի սկիզբ: Մաքենոցաց դպրոցը գործում էր Սյունյաց Մայր վարդապետարանի հովանավորությամբ: Իր առաջնորդության շրջանում Սողոմոնը վանքերի բարենորոգչության, իմաստնության և սրբակրոն վարքի շնորհիվ, ինչպես նաև մյուսներից առանձնանալու համար ստացել է Հարանց հայր պատվանունը¹⁵: Մաքենոցաց վանքի հեղինակությունն ու վարկը

¹³ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի, Երևան, 1984, էջ 43:

¹⁴ Տե՛ս Այիշան Ղ., Սիսական, էջ 66:

¹⁵ Տե՛ս նույն տեղում: Հիրավի VIII-IX դդ. ապրած, ժամանակագրական առումով իրարից ոչ հեռու մի շարք նշանավոր հոգևոր գործիչներ, ովքեր առնչվել են Սյունյաց եպիսկոպոսությանը և վարդապետարանին, կրել են Սողոմոն անունը (Սողոմոն՝ եպիսկոպոս Մարդաղոյ, մասնակից 726թ. Մանազկերտի ժողովին, Սողոմոն՝ Հարանց հայր (VIII դարի առաջին կես), Սողոմոն Ա՝ Աղվանից կաթողիկոս (781թ.), Սողոմոն Գառնեցի՝ Հայոց կաթողիկոս (791-792թթ.), Սողոմոն վանահայր Մաքենոցաց (IX դարի սկիզբ), Սողոմոն Բ՝ Աղվանից կաթողիկոս (785-796թթ.), Սողոմոն Ա՝ եպիսկոպոս Սյունյաց (803-808թթ.), Սողոմոն Բ՝ եպիսկոպոս Սյունյաց (866-882թթ.): Նույնանուն գործիչների բազմաթիվ լինելը հաճախ շփոթության առիթ է տվել: Երբեմն մեկի կատարած

այնքան բարձր էին, որ Սյունյաց պատմիչն այն բնութագրում է իբրև «համբաւատենչ և մեծասքանչ հանդիսարանն, ի հրեշտակերամ կրոնաւտանն սուրբ և յաստուածաբնակ առաքինարանն Մաքենոցաց»¹⁶: Կրթօջախի արդյունավետ գործունեությունը որոշակի ընդհասումներով շարունակվել է մի քանի դար:

Սողոմոն Հարանց իոր և Մաքենոցաց դպրոցի համբավն այդ շրջանում լայնորեն տարածված էր և՛ Հայաստանում, և՛ նրա սահմաններից դուրս: Ուստի պատահական չէր, որ VIII դ. նշանավոր մատենագիր, Դվինի կաթողիկոսարանի հայտնի դպրոցում կրթություն ստացած, «Սին երկնի, խարխիս հաւատոյ» խոսքերով մեծարված փիլիսոփա Ստեփանոս Սյունեցին ուսման մեջ կատարելագործվելու նպատակով ուղևորվում է «սուրբ և յաստուածաբնակ առաքինարանն Մաքենոցաց, առ աստուածագգեաց և սերովբէաստիպ» Հարանց հայր Սողոմոն Մաքենացու մոտ, ով այդ մեծ ուխտի կառավարիչն էր¹⁷: Այնտեղ Ստեփանոս Սյունեցին խստակրոն և ճգնավորական կյանք էր վարում¹⁸: Ուսանելու հետ մեկտեղ ուսուցչից նրան են փոխանցվում սրբերի վկայաբանությունները¹⁹: Դժվար է ստույգ որոշել, թե որքան ժամանակ է նա անցկացրել Մաքենոցաց ուխտում, սակայն դատելով կատարած գործերից՝ ենթադրելի է, որ այն կարճատև չի եղել: Տեսական գիտելիքները հարստացնելու և միաժամանակ գործնական հմտություններ ձեռք բերելու նպատակով Ստեփանոսը տեղա-

գործերը վերագրվել են մյուսին: Մատենագիրների անհատակ ձևակերպումները, ստույգ տեղեկությունների պակասը հաճախ ավելի են խճողել իրավիճակը և դժվարացրել միանշանակ եզրակացություններ կատարելը:

¹⁶ Ստեփաննոսի Սինեաց եպիսկոպոսի, Պատմութիւն Տանն Միսական, էջ 96:

¹⁷ Բնագրում պատմիչը գործածում է Էզոնոմոս տերմինը, որը հունարեն է և նշանակում է տնտեսություն վարող, կառավարիչ (տե՛ս Օրբելյան Ստ., Սյունիքի պատմություն, թարգմ., ներած. և ծանոթ. Ա. Աբրահամյանի, էջ 431, ծանոթ. 201):

¹⁸ Տե՛ս Ստեփաննոսի Սինեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Միսական, էջ 96:

¹⁹ Տե՛ս Ղազարոսյան Ա., Մաքենոցաց ուխտը և Սողոմոն Մաքենացին, էջմիածին, Դ, 2002, էջ 37:

փոխվում է Սյունյաց եպիսկոպոս Մովսեսի²⁰ (մոտ 700-707) մոտ և նրան աշակերտում եպիսկոպոսարանի վարդապետարանում: Հմտանալով աստվածաբանության մեջ՝ Ստեփանոսը ղեկավարում է «յամբիոնն րաբունական» և վարդապետարանի աշակերտներին ուսուցանում Աստվածաշնչի մեկնությունը²¹:

Մովսես եպիսկոպոսի վախճանվելուց հետո Սյունեցին տեղափոխվում է Դվին և իր ուսումնակից ընկերոջ՝ քահանայ Գրիգոր Այրիվանեցու (կոչված Գոգիկ)²² հետ մոտ 710 թ. մեկնում Աթենք: Այնուհետև, ժամանելով Կ. Պոլիս, Դավիթ անունով հայագրի մի իշխանի գործակցությամբ 712-715 թթ. հունարենից հայերեն է թարգմանում հույն մի շարք նշանավոր հեղինակների երկեր²³: Հայաստան վերադառնալով՝ դասավանդում է Դվինի վարդապետարանում, իսկ 735 թ. ձեռնադրվում Սյունյաց եպիսկոպոս:

Սողոմոն Մաքենացու նշանավոր աշակերտներից էր հայոց ապագա կաթողիկոս Սողոմոն Գառնեցին (791-792), ով «էր ի քաղաքագիտէն Գառնոյ, և ի մանկութենէ առեալ էր զլուծ կրօնատրութեան կարգի և բազում առաքինաջան երկոց գանձն տուեալ ի մեծ ուխտին Մաքենոցաց»²⁴: Հովհաննես Դրասխանակերտցին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում այդ ժամանակ Մաքենոցաց դպրոցում ուսուցանվող գիտությունների մասին: Ըստ

²⁰ Մովսես Քերթոզ Սյունեցին ապրել է VII դ. երկրորդ կեսին և VIII դ. Սկզբներին: Նա քերական էր աստվածաբան, թարգմանիչ, ծիսագետ և երաժիշտ-տեսաբան: Հայ հին մատենագրության մեջ երբեմն սխալմամբ նույնացվել է Մովսես Խորենացու հետ (տե՛ս Չամչեանց Մ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 367: Տե՛ս Քրիստոնյա Հայաստան, հանրագիտարան, Երևան, 2002, էջ 766):

²¹ Տե՛ս Ստեփաննոսի Սինեաց եպիսկոպոսի, Պատմութիւն Տանն Սիսական, էջ 97:

²² Տե՛ս Յովսեփեան Գ., Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մեջ, մասն երկրորդ. Հոգետր կեղրոններ եւ Գլաձորի բարձր դպրոցը Պոռշեանց իշխանութեան մեջ, Երուսաղէմ, 1942, էջ 49-50:

²³ Տե՛ս Զամինեան Ա., Հայ գրականութեան պատմութիւն, Ա մաս, Նոր-Նախիջևան, 1914, էջ 132:

²⁴ Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Գ. Թոսունյանի, Երևան, 1996, էջ 112-113:

նրա՝ դասավանդվել են փիլիսոփայություն, աստվածաբանություն և երաժշտություն՝ սաղմոսերգություն²⁵: Այստեղ Սողոմոն Գառնեցին ստանում է վարդապետական աստիճան և դասավանդում նույն դպրոցում: Հարանց հոր մահից հետո (VIII դ. երկրորդ կես) Սողոմոն Գառնեցին ստանձնում է Մաքենոցաց ուխտի և դպրոցի առաջնորդությունը: Որոշ ժամանակ անց՝ Սողոմոն Գառնեցու օրոք, վանականները ստիպված են լինում հեռանալ իրենց մենաստանից: Երբեմնի ձույլ միաբանությունը երկփեղկվում է: Նրանց մի մասը «գնացին ընդ հորն Սաղոմոնի, ոչ առաջնոյն որ Հարանց հայր կոչեցաւ, այլ ընդ նորին աշակերտին, ի գաւառն Շիրակայ, ի սուրբ ուխտն Զրեակ²⁶, յորում պայծառանայր սոյն այս Սաղոմոնն ճգնութեամբ սինամուտ լեալ»²⁷: Միաբանների մյուս խումբը հոգևոր հայրերից մեկի առաջնորդությամբ տեղափոխվեց Արցախ և հաստատվեց Զրաբերդ գավառի Զրվշտիկ եղիշե առաքյալի վանքում: VIII դ. 70-ական թվականներից Մաքենոցաց ուխտը ժամանակավորապես դադարում է գործելուց և

²⁵ Տե՛ս նույն տեղում: Հարկ է նկատել, որ երաժշտությունը Սյունյաց դպրոցի զլխավոր առարկաներից մեկն է եղել: VIII դ. սկզբներին այդ արվեստը առավել չափով ծաղկեց և շարունակեց մնալ Սյունյաց դպրոցում, որպես հնամյա և «մեծարված առարկա», որի ուսուցիչը Ստեփանոս Սյունեցին էր: Հետագայում երաժշտությունը դասավանդվել է ոչ միայն որպես առարկա, այլև եղել է Տաթևի համալսարանի մասնագիտական բաժիններից մեկը (տե՛ս Մովսիսյան Ա., Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության (X-XV դարեր), Երևան, 1958, էջ 91):

²⁶ Զրեակի վանքը գտնվում է Մեծ Հայքի Գուգարք նահանգի, Զավախք գավառում, Ախալքալաք քաղաքի մոտ, VII-VIII դդ. եղել է հոգևոր կենտրոն (տե՛ս Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., նշվ. աշխ., հ. Բ, Երևան, 1988, էջ 322): Հովհաննես Դրասխանակերտցին սխալմամբ Զրեակը տեղադրել է Շիրակ գավառում, նույն վրիպակը կրկնել է նաև Օրբելյանը: Ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանի կարծիքով՝ առնվազն IX դ. առաջ Զրեակը եղել է Հայ Առաքելական եկեղեցու հոգևոր կենտրոն (տե՛ս Մելքոնյան Ա., Զավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, 2003, էջ 45-46):

²⁷ Ստեփաննոսի Սինեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական, էջ 116:

«տեղին անբնակ մնայր»²⁸: Այս ամենը տեղի է ունենում կարճ ժամանակահատվածում: Այդ ժամանակ Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ հոգևորականների արագորեն տարագրվելու և երբեմնի ծաղկուն կենտրոնի ամայանալու զլխավոր պատճառը քաղաքական աննպաստ հանգամանքներն էին և արաբական հրոսակախմբերի ասպատակությունները²⁹:

Սողոմոն Մաքենացու աստվածաբանական և դավանաբանական գործունեության ուշագրավ դրվագներից է նրա մասնակցությունը 726 թ. Հովհան Օձնեցու նախաձեռնած Մանազկերտի եկեղեցական ժողովին, որը մեծ նշանակություն ունեցավ Հայ եկեղեցու հետագա զարգացման համար³⁰: Այն բեկումնային կետ էր

²⁸ Ուսումնասիրողներից ոմանց կարծիքով Մաքենացաց վանքի միաբանությունը երկու մասի է բաժանվել դեռևս Սողոմոն Հարանց հոր օրոք, և վերջինս է միաբանների մի մասին առաջնորդել դեպի Ջրեսկ: Մ. Օրմանյանը նույնիսկ նշում է միաբանության տրոհման պատճառը. «կրոնաւորական խստութեանց աստիճանին վրայ տարբեր տեսութիւններ ունենալուն» (տե՛ս Օրմանյան Ա., Ազգապատում, հ. Ա, Էջմիածին, 2001, § 626): Այնինչ Օրբեյանը գրում է, որ դա եղել է նրա նույնանուն աշակերտը՝ Սողոմոն Գառնեցին: Ջրեսկում ճգնելուց հետո նա 791 թ. ընտրվեց կաթողիկոս և աթուռակալեց ընդամենը մեկ տարի: Հ. Աճառյանը կարծում է, որ այս տեղափոխությունը չի կարելի կապել Բաբելի արշավանքի հետ, որը տեղի է ունեցել 839 թ. (տե՛ս Աճառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Երևան, 1948, էջ 568-569):

²⁹ Ըստ Մխիթար Այրիվանեցու 719 թ. «Բաբան զՄաքենացոյ սուրբ ուխտն այրեաց» (տե՛ս Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն հայոց, ի յոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860, էջ 51): Բաբելի արշավանքի տարեթվի հարցում նկատելի է ժամանակագրական անճշտություն: Բաբելի ասպատակությունները Սյունիքում և Մաքենյաց վանքի ավերումը տեղի է ունեցել մեկ դար հետո՝ 827 թ. (տե՛ս Ադոնց Ն., Քննություն Մովսես Կաղանկատվացու, Երկեր, հ. Բ, Երևան, 2006, էջ 471, հմմտ. Մելքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 46): IX դ. արաբագիր հեղինակ Աբու Հանիֆա Ալ-Դինավարիի հաղորդած ստույգ տեղեկություններից սլարգ է դառնում, որ Բաբելի հրոսակախմբերի ասպատակությունները տեղի են ունեցել IX դ. սկզբներին (տե՛ս Արաբական աղբյուրներ, Գ, Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, ներած., բնագր. թարգմ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005, էջ 215):

³⁰ Տե՛ս Ժամանակագրութիւն տեսոն Միխայելի Ասորսոց սլատրիարքի, Յերուսաղէմ, 1871, էջ 339-340: Տե՛ս Տեր-Մինասեանց Ե., Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորսոց եկեղեցիների հետ, Ս. Էջմիածին, 1908, էջ 194:

Հայ եկեղեցու պատմության մեջ, քանի որ վերստին հաստատվեց նրա հակաքաղկեդոնական դիրքորոշումը³¹: Ժողովի նպատակը հայ և ասորական եկեղեցիների միջև գոյություն ունեցող դավանաբանական տարաձայնությունների ու վեճերի վերացումն էր: Ժողովի գումարման արժեքով հայ մատենագիրների ձևակերպումները հստակ են. «Վասն քաղկեդոնի աղանդոյն», «սրբեաց զհաւատս ի մարդադաւան աղանդոյն», «ի բաց ընկեցեալ զդաւանութիւնն Քաղկեդոնի»³²: Մ. Օրմանյանն այսպես է ձևակերպում ժողովի գլխավոր նպատակը. «ապականութեան խնդիրին ծայրայեղութիւնները, աստուածաչարչութիւնն ու երեսութականութիւնը հերքել, եւ ուղիղ դաւանութեան կետը որոշելն էր»³³: Ժողովականների համաձայնությամբ ընդունվեցին 10 նգովքները, որոնք խարսխված էին միաբնակ հակաքաղկեդոնական վարդապետության հիմքի վրա: Հայ և ասորի եկեղեցիների միջև կային ծիսակատարությունների որոշակի տարբերություններ, սակայն այդ հարցում Հայ եկեղեցին հավատարիմ մնաց իր հնավանդ ծեսերին: Պատասխանելով իր աշակերտի՝ Սողոմոն Գառնեցու նամակին՝ Սողոմոն Հարանց հայրը Մանագկերտի ժողովի արդյունքները այսպես է ամփոփում. «ոչ պարտեցան Հայք ի հաւատոյ...»³⁴:

Հարանց հայրը մասնակցել է նաև 740 թ. Աղվանից Միքայել կաթողիկոսի (707-744) Շամբորում գումարած ժողովին. «Յայնժամ հայրապետն Աղուանից Միքայել արար ժողով ուխտի եկե-

³¹ Տե՛ս Ադոնց Ն., Երկեր, 2, Երևան, 2012, էջ 343:

³² Սամուէլի քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 287-288: Հաւարումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսարանեալ, Վենետիկ, 1862, էջ 73: Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատ. Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 69: Ասողիկի հավատմամբ ժողովը Հայոց աշխարհից վերացրեց «քաղկեդոնականացն երկաբնակ խոստովանութիւն» (տե՛ս Ստեփաննոս Տարօնեցի, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 103):

³³ Օրմանեան Մ., նշվ. աշխ., հ. Ա, § 574:

³⁴ Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 272:

դեցոյ իւրոյ. և կոչէ առ ինքն գիոչակելի այրն՝ զՍողոմոն, որ Մաքենացոցն սուրբ ուխտին էր առաջնորդ»³⁵: Ժողովի հրավիրման առիթը արյունակիցների միջև տեղի ունեցող ամուսնություններն էին, որը հակառակ էր Հայ եկեղեցու կանոններին: Ժողովականները նախ նգովում են եկեղեցու սահմանած կարգը ոտնահարած իշխան Վարագոյին և կշտամբում նրան իր հովանավորության տակ առած վրաց կաթողիկոս Թալիլէին³⁶: Գիտնական վարդապետ Սողոմոն Մաքենացին այս ժողովում մասնակցում է վրաց կաթողիկոսին ուղղված հանդիմանական նամակի շարադրմանը:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում Հայոց եկեղեցին միաժամանակ ենթարկվում էր և՛ մահմեդական արաբների կրոնական հալածանքներին, և՛ հույների դավանաբանական ճնշումներին: Վերջիններս ջանում էին Հայոց եկեղեցուն պարտադրել ընդունելու Քաղկեդոնի եկեղեցական ժողովի որոշումները և իրենց եկեղեցական կարգերը՝ մատնանշելով Հայոց եկեղեցուն ավիրապետության անկատարությունը: Հարցն այն աստիճան էր բորբոքվել, որ հույները Հայ եկեղեցու նվիրապետական կառույցը համարում էին ոչ լիարժեք՝ եկեղեցու ինը դասերը չունենալու պատճառով: Այս խնդրի կարգավորման գործում ևս կարևոր դերակատարություն է ունեցել Սողոմոն Մաքենացին: Նրա աշակերտ, հետագայում Հայոց կաթողիկոս Սողոմոն Գառնեցին (791-792) նամակով դիմում է իր ուսուցչին՝ խնդրանքով պարզաբանում տալ հայերի պարտության պատճառների շուրջ. «Այլ Հայք համբաւէին զՅոհաննու Մայրագումեցոյ, եթէ ի Յունաց կողմն էլեալ հակառակ բերէր. գորոյ գրպարտութեանն պատճառ Սողոմոն ուն միանձնեայ, որ և յետոյ Հայոց եղև կաթողիկոս: Նորա

³⁵ Նույն տեղում, էջ 313-314, 344-345: Հմմտ.՝ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, էջ 197: Հր. Աճառյանը գտնում է, որ Շամբորի ժողովին մասնակցել է ոչ թե Հարանց հայր Սողոմոնը, այլ Սողոմոն Գառնեցին (տե՛ս Աճառյան Հր., նշվ. աշխ., հտ. Դ, էջ 567):

³⁶ Տե՛ս նույն տեղում:

հարցեալ գվարդապետն իւր Սողոմոն, որ Մաքենացոցն էր հայր»: Հերբելով հույների մեղադրանքները՝ Հարանց հայրը. «գրով ուսույց գայս, եթէ ոչ պարտեցան Հայք ի հաւատոյ մասին»³⁷: Նա հաստատում է հայերի՝ ճշմարիտ դավանանքին՝ հակաքաղկեդոնական քրիստոսաբանությանը, հավատարիմ լինելը³⁸: Ցույց է տալիս, որ հույների՝ նվիրապետական ինը դասերի վերաբերյալ հրահրած վեճը կամայական է³⁹:

Եթէ մինչև VII դ. վերջերը հայոց օրացույցին վերաբերող տեղեկությունները եղել են ցարուցրիվ, ապա VIII դ. երևան են գալիս եկեղեցական ծիսակատարություններին և դրանց մեկնությանը նվիրված բազմաթիվ աշխատություններ: Հայկական ծիսական տարվա ձևավորման և զարգացման ասպարեզում VII-VIII դարերը կարևոր ժամանակաշրջաններ են երբ եկեղեցու հայրերը և մեկնիչները մտահոգվում են այդ մասին իրենց հավատացյալներին և ընթերցողներին գիտելիքներ հաղորդելու հար-

³⁷ Նույն տեղում, էջ 272: Հմմտ. Ստեփաննոսի Միւնեաց Եպիսկոպոսի, Պատմութիւն Տանն Սիսական, էջ 73: Հմմտ. Թուխտ երանելոյն Մաշտոցի, նախքան գկաթողիկոսութիւն, առ Տէր Գեորգ Հայոց կաթողիկոս վասն Միւնեաց խաչին, թէ էր աղագաւ տուաւ, Յաւելուած «Արարատի», 1902, Յուլիս-օգոստոս, էջ 748-750:

³⁸ Ուսումնասիրողներից ոմանք կարծում են, թէ պատասխան թղթի հեղինակը Սողոմոն Գառնեցին է: Ն. Ակիւնյանի կարծիքով Սողոմոն Գառնեցուն վերագրվող պատասխան թղթի հեղինակն իրականում Հարանց հայր Սողոմոնն է (տե՛ս Ակիւնեան Ն., Կիրիոն կաթողիկոս վրաց, Վիեննա, 1910, էջ 249, ծանոթ. 3): Նման կարծիք է հայտնում նաև Բ. Սարգիսյանը (տե՛ս Սարգիսեան Բ., Անանիա թարգմանիչն էւ իւր գրական գործոց նմոյշները, Վենետիկ, 1899, էջ ԺԲ, ծանոթ. 2): Այիշանը գտնում է, որ նվիրապետական կառուցվածքի հարցով Սողոմոն Գառնեցին է դիմել Սողոմոն Հարանց հորը և ոչ հակառակը: Վերջինս գրով մեկնաբանում է հայ և բյուզանդական եկեղեցիների հակառակության պատճառը (տե՛ս Այիշան Ղ., Սիսական, էջ 67):

³⁹ Անդրադառնալով ինը դասի խնդրին՝ Մ. Օրմանյանը միանագամայն իրավացիորեն նկատում է. «Ինն կարգաց դրութիւնը յոյներուն կողմէ յուզուած խնդիր մն էր, Հայոց հայրապետական արտօին պատիւը եւ նշանակութիւնը նսեմացնելու համար: Յունաց առարկութիւնը պարզապէս իմաստակութիւն էր, որովհետև դասակարգութեան ինը թիւը կամայական էր» (տե՛ս Օրմանյան Մ., նշվ. աշխ., հ. Ա, § 430):

ցով⁴⁰: Հենց այս մտահոգությամբ Սողոմոն Մաքենացին կազմել է տերունական տոների լուսաբանմանը և նահատակների հիշատակին նվիրված «Տոնական» ժողովածուն՝ ավանդելով անգնահայտելի արժեք ունեցող գրավոր ժառանգություն: Տոնականը զանազան բնագրերի բանաբաղություն է, որը նպաստակ էր հետապնդում գիշերային ժամի համար ի մի բերել հայրաբանական և այլ ընթերցումները, ինչն արդեն գոյություն ուներ այլ արարողություններում⁴¹: «Հայր Սողոմոն արար զտոնականն՝ ի Մաքենիս»-գրում է Մխիթար Այրիվանեցին⁴²: Նոր Հայկազյան բառարանի հեղինակների օգտագործած մի «Ոսկեփորիկ»-ի վկայությամբ՝ «Սողոմոն Մաքենոցի հայրն արար զՏոնականն»⁴³: Մեզ հասած «Գրոց ցանկերում» ես պահպանված է այս վկայությունը⁴⁴:

«Տոնականի» բնագիրը չի պահպանվել, սակայն նրա մասին ամենահին տեղեկությունը պահպանվել է 1200-1202 թթ. Դարանադյաց գավառի Սեպուհ լեռան վրա գտնվող Ավագ վանք մենաստանում՝ Վարդան Կարնեցու ընդօրինակած Տոնականում⁴⁵: Այն հայտնի է «Մշո Տաւնական-Ճառընտիր» անունով⁴⁶: «Մշո Տաւ-

⁴⁰ Տե՛ս Շաղ Ռենու, Հայոց ծիսական տարվա զարգացումը VIII-XII դարերում ծիսական մեկնությունների և գրքերի հենքի վրա, «Պատմաբանասիրական հանդես», 2008, N-3, էջ 80:

⁴¹ Տե՛ս նույն տեղում:

⁴² Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն Հայոց, էջ 51:

⁴³ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Բ, Երևան, 1981, էջ 901:

⁴⁴ Տե՛ս Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, Ա, Երևան, 1959, էջ IX:

⁴⁵ Տե՛ս Մաթևոսյան Ա, Ե՞րբ և ո՞րտեղ է գրվել Մշո Տոնական-ճառընտիրը, Բանբեր Մատենադարանի, 1969, էջ 150:

⁴⁶ Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 31: «Տոնականը» ժողովածու է, որում ըստ տարեկան տոների, զետեղված են հայ և համարրիստոնեական հայրերի վարքերն ու վկայաբանությունները, ինչպես նաև ներբողներ և ճառեր: Այդ պատճառով այն երբեմն կոչվել է «Տոնացոյց» կամ «Ճառական մատեան յաղագս տօնից» կամ «Ճառընտիր (տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Բ, էջ 901): Հայերի մոտ Յայսմավուրքի գոյությունից առաջ, նրա պակասը, սկսած 747 թ., լրացրել է Տոնականը: Տոնականներում տոները նշանակված են տարվա օրերի կարգով և բերված են դրանց համապատասխան

նական»-ի հիշատակարանը վկայում է որ աստուածարեալ պատմությունները՝ ճառերը, «ի կանոն կարգադրութիւն» հավաքել և ամբողջացրել է Սողոմոն Մաքենացին 747թ. Գեղարքունյաց գավառում, Մաքենյաց վանքում⁴⁷: Սողոմոն Մաքենացին «Տոնականի» կազմումը նախաձեռնել է այն ժամանակ, երբ Մաքենյաց վանքում ուսանում և ճգնում էր Ստեփանոս Սյունեցին: Հետևաբար ենթադրելի է, որ «Տոնականի» ստեղծմանը մասնակից է եղել նաև Ստեփանոս Սյունեցին:

Մաքենացու «Տոնականի» հիման վրա հետագայում կազմվել են բազմաթիվ ժողովածուներ, որոնք լրացվել են նոր վարքերով, վկայաբանություններով և ճառերով: Այդպիսի օրինակներից է Առաքելոց վանքում կազմված Տոնականը: Ըստ դրա հիշատակարանի հեղինակի՝ Մաքենացին քննությամբ և բազում ջանքերի շնորհիվ է այն ստեղծել. «գայսպիսի շինուած աստուածեղէն զհաստատեալ կանոն տանից ժողովոց եւ զվսեմական արտադրութիւնս հոգեպատումն ճառից պատմութեանց»⁴⁸:

«Զուտ բովանդակությամբ թեև այն հայոց պատմությունն չէ, այլ ընդամենը պարունակում է նաև հայ սրբերի պատմությունն-

վկայաբանություններ, վարքեր, պատմություններ և ճառեր (տե՛ս Մաթևոսյան Ա., նշվ. աշխ., Բանբեր Մատենադարանի, 1969, էջ 142):

⁴⁷ Տե՛ս նույն տեղում: Ալիշանի կարծիքով Տոնականի կազմման սկիզբը 701-710 թթ., իսկ ավարտին է հասցվել 747 կամ 750 թ. (տե՛ս Ալիշան Ղ., Հայապատում, մաս Ա, էջ 75): Մխիթար Այրիվանեցին Տոնականի կազմման տարի է նշում 696 թ. (տե՛ս Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն Հայոց, էջ 51):

⁴⁸ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, Կազմեց Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 43: Հմմտ. Յովսեփեան Գ., Յիշատակարանք ձեռագրաց (Ե դարից մինչև 1250թ.), հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 709: Բ. Սարգսյանը, ուսումնասիրելով Տոնականները և հենվելով դրանց սկիզբը կազմող Մաքենացու հիշատակարանի վրա, գրում է. «Թուի թե երկրորդ օրինակ իցէ կամ անընդմիջապես գաղափարեալ յառաջնոյ անտի, զոր հաւաքեալ կարգադրեաց Սողոմոն Մաքենոցաց ուխտին ստաջնորդ» (Սարգիսեան Բ., Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեան ի Վենետիկ, հ. Բ, Վենետիկ, 1924, էջ 469):

ներ,-գրում է Ղ. Ալիշանը,-սակայն նրա հեղինակը ավելի արժանի է պատմիչ կոչվելու քան շատերը»⁴⁹:

Մեծ է Սողոմոն Մաքենացու «Տոնականի» դերը հայ ազգային և կրոնական ինքնության ամրապնդման և զարգացման հարցում: VIII դ. սկզբին, պայքարելով մահմեդականների և իր ծիսակարգերը պարտադրող հույն եկեղեցու դեմ, Հայ եկեղեցու հայրերը, որոնց թվում էր նաև Սողոմոն Մաքենացին, «հայացնում» են մեր եկեղեցու ծիսական օրացույցը: Դրանում նրանք զետեղում են հայոց պատմության նշանավոր անձանց նվիրված տոների կատարումը, որով հայկական օրացույցը միանգամայն նոր տեսք է ընդունում⁵⁰:

Մեսրոպ Մաշտոցի մասին ամենահավաստի սկզբնաղբյուրները Կորյունի «Վարք Մաշտոցի», Մովսես Խորենացու և Ղազար փարպեցու երկասիրություններն են: Մաքենացու կազմած «Տոնականում» կա Մաշտոցի վարքին նվիրված մեկ այլ տարբերակ, որը հայտնի է «Փոքր Կորյուն», «Սուտ Կորյուն» անուններով: Ենթադրվում է, որ «Փոքր Կորյունը» խմբագրել է Սողոմոն Մաքենացին և մուծել «Տոնականի» մեջ⁵¹: «Փոքր Կորյուն»-ը Կորյունի երկի համառոտ խմբագրումն է, որը կազմվեց Մաշտոցի տոներ նշելու օրը եկեղեցիներում կարդալու համար, քանի որ ընդարձակը մատչելի չէր, բարդ էր:

Սողոմոն Մաքենացին խմբագրել է նաև Վահան Գողթնեցու վկայաբանությունը: Վահան Գողթնեցին դարձի է եկել և հանուն հավատքի նահատակվել: Որպես քրիստոնյա նահատակ՝ նա արժանացել է մեծ առաքինությամբ և սրբակրոն բարքով օժտված Հարանց հոր ուշադրությանը: Վահան Գողթնեցին որդին էր Գողթն գավառի իշխան Խոսրով Գողթնեցու, որին արաբները, ի

⁴⁹ Տե՛ս Ալիշան Ղ., Հայապատում, մաս Ա, էջ 75:

⁵⁰ Տե՛ս Շառլ Ռենու, նշվ. աշխ., ՊԲՀ, 2008, N-3, էջ 88:

⁵¹ Տե՛ս Քրիստոնյա Հայաստան, հանրագիտարան, էջ 916:

թիվս բազում այլ իշխանների, 705 թ. հրկիզել էին: Նախարարական այլ ընտանիքների հետ արաբները գերել և Դամասկոս էին ուղարկել նաև մանուկ Վահան Գողթնեցուն, որին այնտեղ վերանվանել էին Վահաբ: Արումելիք էմիրի արքունիքում նա ստանում է փայլուն կրթություն և «խմաստնանայր ուսմամբ և ճարտարութեամբ»: Բոլորովին իսլամացած և արաբացած Վահանը տեղյակ էր իր՝ քրիստոնյա և հայ իշխանական տոհմից սերած լինելու մասին: 719 թ. երբ Հայոց կաթողիկոս Հովհան Օձնեցու միջնորդությամբ ընդհանուր ներում և վերադարձի իրավունք է շնորհվել գերյալ քրիստոնյաներին, Վահան Գողթնեցին ևս, պատճառաբանելով, որ ցանկանում է վերականգնել իր իշխանական իրավունքները Գողթն գավառում, Օմար II խալիֆից (717-720) թույլտվություն է ստանում և վերադառնում Հայաստան: Նա գալիս է Գողթն իր հայրենի տիրույթներ, և «յայտնապես խոստովան լինել զքրիստոնեությունն, և զիւր անգիտութեան մեղսն»:

Հայաստանում նաւ ամուսնանում է Սյունյաց Բաբկեն իշխանի դստեր հետ, այնուհետև թափառական կյանք վարում (732-737): Շրջում է վանքից վանք, ճգնում Շիրակ, Նիգ, Արագածոտն գավառներում: Լսելով Հարանց հայր Սողոմոն Մաքենացու մասին, ով արդեն քաջատեղյակ էր իր կյանքի բոլոր դրվագներին, նա որոշում է խոստովանել իր կյանքի մանրամասները և «հասեալ ի վանսն Մաքենոցաց, ծանուցանէ զամենայն հօրն ստուգութեամբ, և վասն ճանապարհին՝ և ցանկութեանն»⁵²: Մեկ տարի (736-737) նա ճգնում է Մաքենյաց վանքում⁵³ և Սողոմոն Մաքենացուց ստանում է «յորդորական խրատս՝ և քաջալերութիւնս»: Դրանից հետո Հարանց հայրը վանքի միաբանների հետ միասին «մեծաւ սիրով և արտասուտք» ճանապարհում է նրան⁵⁴: Քրիստո-

⁵² Սուփերք հայկականք, ԺԳ, Վեներիկ, 1854, էջ 75-76:

⁵³ Տե՛ս Չամչեանց Ս., նշվ. աշխ., հ. Բ, էջ 384-385:

⁵⁴ Տե՛ս Սուփերք հայկականք, ԺԳ, էջ 76:

նեություն ընդունելուց հետո Վահան Գողթնեցին Օմարի պահանջով վերադառնում է արքունիք՝ Դամասկոս, ուր և շատ չանցած՝ (737 թ.)⁵⁵ նահատակվում հանուն հավատի:

Վկայաբանության սկզբնական տարբերակը չի բավարարել Սողոմոն Մաքենացուն, ուստի նա դիմել է Արտավազդ Աբրահամին կազմելու նորը: Վահան Գողթնեցու վկայաբանությունը մեզ է հասել երկու խմբագրությամբ, առաջինը գրվել է Վահանի նահատակությունից հետո, նրա ուղեկիցների պատմածների հիման վրա, Արծկեի Երաշխավոր վանքի վանահայր Արտավազդ Աբրահամի կողմից (737 թ.): Երկրորդ խմբագրությունը յոթ տարի անց ևս Արտավազդ Աբրահամի ձեռքով է գրվել. «Իսկ ետ է (7) ամի հայր վանացն Երաշխավորի, որոյ անուն Աբրահամ կոչի... իջեալ յԱսորեստան, և գնացեալ հասեալ ի քաղաքն Ռուծափ...»: Աբրահամը Ռուծափ է գնում Գողթնեցուն նվիրված պատմության հունարեն օրինակը բերելու: Վերադարձին Ուտհայում թարգմանել է տալիս այն և վերադառնում Երաշխավորի վանք, որտեղ 744 թ. ավարտում Վահան Գողթնեցու նահատակությանը նվիրված պատմության նոր խմբագրությունը⁵⁶:

Մաքենացու կազմած «Տոնականի» օրինակի մեջ բացի Գողթնեցու վկայաբանությունից մտել են Եղիշեի խրատները, Շուշանիկի վկայաբանությունը, Ներսես Ա կաթողիկոսի պատմությունը, Սահակ Բագրատունու «Թուղթը», Աբգար թագավորի «Թուղթը», Փոքր Կորյունը և այլ գործեր, որոնք գրվել են մինչև Մաքենացին⁵⁷: «Տոնականը» մեծ գործածություն է ունեցել Հայոց եկեղեցում և ժամանակի ընթացքում լրացվել նոր նյութերով:

«Տոնականի» ուսումնասիրությամբ զբաղվել է նաև բելգիացի հայագետ Միշել վան Էսբրուկը: Բազմաթիվ ճառընտիրների

⁵⁵ Տե՛ս Թովմայի վարդապետի Արծրունայ Պատմության տասն Արծրունեաց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 252:

⁵⁶ Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ՃԲ դդ., էջ 29-30, ծանոթ. 2:

⁵⁷ Տե՛ս Ղազարոսյան Ա., նշվ. աշխ., Էջմիածին, Դ, էջ 41:

համեմատությունից հետո նա եզրակացրել է, որ դրանք բոլորն էլ սերում են Սողոմոն Մաքենացու օրինակից, սակայն ամենահարազատը Երևանի թիվ 993-ն է⁵⁸:

Փարիզի Ազգային գրադարանում է պահվում թիվ 178 «Տոնականը», որն ընդօրինակված է XII դ.: Բացի քրիստոնեական գաղափարախոսության նշանավոր այրերի գործերից, այստեղ կան նաև Հայ եկեղեցու հայրերի երկու տասնյակից ավելի վկայաբանություններ ու պատմական գործեր: Սողոմոն Մաքենացու երկասիրած այլ աշխատություններ մեզ չեն հասել:

Հարանց հայրը վախճանվել է VIII դ. 60-70-ական թվականներին առաջացած տարիքում և թաղված է իր հարազատ Մաքենյաց վանքում:

Մաքենացու թողած գրական-հոգևոր ժառանգությունը վկայում է, որ VIII դ. Հայ եկեղեցին դավանաբանական շարունակական վեճերի, իսլամի կողմից տեղի ունեցող գրոհների պայմաններում ամրապնդում էր իր տեսական հիմքերը, շարունակում էր կոփել Հայոց եկեղեցու ինքնուրույն օրենսդրությունը: Եկեղեցական տոների ժողովածուի կազմումով, բնագրերի մեկնություններով գիտնական-վարդապետը «ազգային օրացույցը զարդարում է սրբերով և անձանցով, որոնք պաշտպանության և դրվատանքի անհրաժեշտությունն ունեցող ազգային ժառանգության փառքն էին»⁵⁹:

Սյունյաց դպրոցը ներկայացնող Սողոմոն Մաքենացին Հայ եկեղեցու այն կարևոր սյուներից է, որի գործունեությունը համեմատելի է Հովհան Օձնեցու (717-728), Արշարունյաց եպիսկոպոս Գրիգորիսի (650-730), Խոսրովիկի (VIII դ. առաջին կես) գործունեության հետ: Հայ եկեղեցական ողջ կարգը, որը պահպանվել է ցայսօր, գերազանցապես սահմանել են նրանք: Այդ անհատների

⁵⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 42:

⁵⁹ Շառլ Ռենու, ևշվ. աշխ., ՊԲՀ, 2008, N-3, էջ 91:

աստվածաբանական գործերը հետագա դարերի դավանաբանական վեճերում դավանական շեղումների և այլադավանության դեմ պայքարի ուղեցույց էին ծառայում: Մաքենացին և Հայ եկեղեցու մյուս հայրերը մշակեցին մեր եկեղեցու բարենորոգման կանոնները, նրա ծիսադավանական և աստվածաբանական սկզբունքները՝ նպաստելով սեփական ազգային և կրոնական ինքնության գիտակցման ամրապնդմանն ու զարգացմանը:

VARDAN ALEKSANYAN

ON SOLOMON MAKENATSY'S ACTIVITIES (8th CENTURY)

SUMMARY

Makenotsats monastery school was one of Armenia's famous scientific-educational and religious-cultural centres in the 8th century. It was branched from the Sunik Principal Archimandry. The educational and cultural development of Makenotsats monastery school was undertaken by its founder Solomon Makenatsy, the famous scientist-teacher, chronicler and theologian of the 8th century. He got Harants hayr "The Fathers' Father" honorary name due to his wisdom and religiously holy conduct as well as to the reorganization of monasteries during his activity. Solomon Makenatsy had an efficient religious activity. He actively participated in the important church councils of his time and struggled for the religious identity of the Armenian theology. Solomon Makenatsy left inestimable written inheritance: he initiated and compiled the "Tonakan" (collection of ecclesiastical holidays) in 747, which was devoted to the illustration of religious holidays and martyrs' memory. He wrote the martyrology of Vahan Goghtnetsy.

Solomon Makenatsy was one of the pillars of the Armenian Apostolic church who developed and improved the canons of the

Armenian church together with other church fathers – Hovhan Odznetsy, Grigoris Arsharuny and Khosrovik, contributing to the development of the consciousness of national and religious identity.

ВАРДАН АЛЕКСАНИЯН

О ДЕЯТЕЛЬНОСТИ СОЛОМОНА МАКЕНАЦИ (VIII ВЕК)

РЕЗЮМЕ

Школа монастыря Макеноцац в VIII веке была одним из широко известных научно-учебных и религиозно-культурных центров Армении. Она была ответвлена от Сюникской главной церковной школы. Учебно-культурный подъем школы Макеноцац связан с именем ее основателя Соломона Макенаци, знаменитого армянского ученого, летописца, богослова VIII века. Годы его предводительства ознаменовались благоустройством и регламентированием монастырского быта. Соломон Макенаци занимался активной религиозно-церковной деятельностью. Участвовал во многих церковных собраниях, где боролся за принципы армянского самобытного богословия. Соломон Макенаци оставил неоценимое письменное наследие: составив Праздничный Господня Тонакан (свод церковных праздников), посвященный памяти церковных мучеников (747 г.). За мудрое и святое житие, а также за составление Тонакана он получил титул Аранц-айр (Отец-отчий). Его перу принадлежит мартирология святого Ваана Гохтнеци. Соломон Макенаци благоустроил и разработал каноны Армянской Апостольской церкви, которые в последующих веках стали указателями в богословских спорах. Этим он способствовал развитию национальной и религиозной самостоятельности армян.

ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼԻՑ ԿՈՂՄԵՐԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ԱՂԲԵԶԱՆԱԿԱՆ
ՆԵՆԳԱՓՈԽՄԱՆ ՇՈՒՐՋ

Գիտությունը քաղաքական նկատառումներով կամայական հորինվածքի վերածած աղբբեջանագիտությունը սկզբնաղբյուրների կեղծմամբ, սխալ մեկնաբանմամբ կամ անտեսմամբ պատմական իրականությունը գլխիվայր շրջելով տասնամյակներ շարունակ համատորեն ճգնում է «ապացուցել», որ Հայոց Արևելից կողմերը՝ Մեծ Հայքի Ուտիք և Արցախ աշխարհները, ինչպես նաև Սյունիքն ու Փայտակարանը եղել են իրականում Կուրի ձախափնյակում ընկած բուն Աղվանքի կազմում: Այդ հակագիտական թեզը հիմք ընդունելով, ի բնե հայկական այդ տարածքներում ստեղծված նյութական ու հոգևոր մշակույթը հայտարարվում է, աղվանական, իսկ այն ստեղծողները՝ աղվաններ¹: Այսպիսով, Հայոց Արևելից

¹ Ямпольский З. И., К изучению летописи Кавказской Албании, "Известия" АН Азерб.ССР, 1957, № 9, Алиев К., О населении древней Албании, ДАН Азерб. ССР, 1959, № 2, Буниятов З. М., Азербайджан в VII-IX вв., Баку, 1965, Гукасян В., Удинские слова в "Истории албан", "Известия" АН Азерб. ССР, 1968, № 1, նույնի՝ О Некоторых вопросах истории албанской письменности и литературы, "Известия" АН Азерб.ССР, 1968, №, Геюшев Р., О конфессионально-этнической принадлежности Гандзасарского монастыря, "Материальная культура Азербайджана", VII, Баку, 1973, նույնի՝ Христианство в Кавказской Албании, Баку, 1984, Мамедова Ф., "История албан" Моисея Каланкатуйского как источник по общественному строю раннесредневековой Албании, Баку, 1977, նույնի՝ Политическая история и историческая география Кавказской Албании (III в. до н.э - VIII в. н.э.), Баку, 1986, նույնի՝ Кавказская Албания и албаны, Баку, 2005, Геюшев Р., Христианство в Кавказской Албании, Баку, 1984, Ахундов Д., Ахундов М., К вопросу о "спорных" моментах в истории и культуре Кавказской Албании, "Известия" АН Азерб. ССР, 1986, № 3, Алиев И., Карабах в древности, "Известия" АН Азерб. ССР, 1988, № 3, Мехтиев Рамиз, Горис 2010, Сезон театра и абсурда, <http://www.Trend.az> 29.10.2010 և ուրիշներ:

ստեղծված պատմամշակութային հարուստ ժառանգությունն ու այն ստեղծողները դուրս են մղվում Հայաստանից ու հայ իրականությունից և աղբբեջանականացվում, իսկ եկվոր թյուրք աղբբեջանցիները՝ տեղաբնիկացվում: Եվ քանզի աղբբեջանագիտությունը նույն «հաջողությամբ» պնդում է, որ աղբբեջանցիներն աղվանների օրինական ուղղակի հետնորդներն ու ժառանգորդներն են, ստացվում է, որ հայկական այդ տարածքներն աղբբեջանական են, իսկ դրանցում ստեղծված մշակույթն ու այն արարողները գտարյուն աղբբեջանցիներ: Ընդ որում, այս թեզը համառորեն զարգացնողները ոչ պատահաբար խուսափում են պատասխանել այն օրինաչափ, բայց իրենց համար խնդրահարույց հարցին, թե ինչու է ըստ իրենց աղվանական = աղբբեջանական մշակույթը ծաղկում ապրել միայն Կուրի աջափնյակում ընկած Ուտիքում, Արցախում ու Սյունիքում, բայց ոչ այդ գետի ձախափնյակում գտնվող բուն Աղվանքում: Քանի որ այդ նահանգները Մեծ Հայքի անբաժան մաս կազմելը, այսինքն ի բնե հայկական լինելը համաշխարհային հայագիտության կողմից ոչ միայն չի վիճարկվում, այլև արսիոմատիկ ճշմարտություն է համարվում, դրան կրկին անդրադառնալն ավելորդ համարելով դառնանք մեր բուն խնդրին:

Պնդել, որ աղբբեջանագիտության՝ հայոց գիտամշակութային հարուստ ժառանգության կողոպուտին միտված ոտնձգությունները հայագիտության համապատասխան արձագանքին չեն արժանացել, ճիշտ չի լինի: Դրանում իրենց ավանդն են ներդրել Մ. Աբեղյանը, Կ. Մելիք-Օհանջանյանը, Պ. Սևակը, Հ. Անասյանը, Գ. Սարդարյանը, Էմ. Պիվազյանը, Լ. Խաչիկյանը, Հ. Սիմոնյանը, Ա. Ղանալանյանը, Ա. Տեր-Ղևոնդյանը, Շ. Սմբատյանը, Պ. Մուրադյանը, Հ. Սվազյանը, Կ. Ղահրամանյանը, Ա. Հակոբյանը և, հատկապես, Բ. Ուլուբաբյանը, Աս. Մնացականյանն ու Բ. Հարությունյանը: Նրանց արժանին մատուցելով հանդերձ հարկ է նկատել, որ աղբբեջանական կողմի մշակութային կողոպուտին

հայագիտության հակազդեցությունը մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոններով պայմանավորված շարունակական ու հետևողական բնույթ չի կրել: Արդյունքում, եթե հաշվի չառնենք Աս. Մնացականյանի արժեքավոր մենագրությունը² մեզանում խնդրո առարկա հիմնահարցը համապարփակ քննող աշխատություն չկա: Մինչդեռ, աղբբեջանագիտությունը ջանասիրությամբ շարունակում է Հայոց Արևելից կողմերի գիտամշակութային ժառանգության ու այն ստեղծողների սեփականում-կողոպուտը:

Քանի որ գիտությանն առ այսօր երբևէ գոյություն չունեցած լինելու պատճառով աղվաններնով (գարգարեններով) գրված որևէ պատմագրական, գրական կամ այլ բնույթի մշակութային հուշարձան հայտնի չէ, աղբբեջանագիտությունը Հայոց Արևելից կողմերում ծնված ու արարած կամ այնտեղից սերված և այլուր գործած գիտամշակութային խոշոր գործիչներին կոչում է աղվան «հայալեզու հեղինակներ», որոնց գործերն իբրև թե հայ հոգևորականներն արաբական իշխանությունների միջոցով ոչնչացրել են դրանք նախօրոք թարգմանելով գրաբար³: Այս պնդումն այլ կերպ, քան սուտ, անհնար է որակել:

Պատմական իրականության ու գիտականության հետ անգամ հեռավոր աղերս չունեցող նման մտահայեցողական մոտեցմամբ առաջնորդվող պատմության աղբբեջանական կեղծարարների զոհ են դարձել Դավթակ Քերթոզը, Համամ Արևելցին (Բարեպաշտը), Մովսես Կաղանկատվացին (Դասխուրանցին), Հովհաննես Սարկավագը, Մխիթար Գոշը, Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արևելցին, Գրիգոր Ակներցին, Ստեփանոս Օրբելյանը և ուրիշներ: Բանը հասել է նրան, որ հիմք ընդունելով Սամվել Անե-

² Մնացականյան Ա. Շ., Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, 1966, (նույնը ռուսերեն, Երևան, 1969):

³ Տե՛ս, օրինակ, Буниятов З. М., նշվ. աշխ., էջ 97, Мамедова Фариды, Политическая история и историческая география Кавказской Албании (III в. до н. э. - VIII в. н. э.), էջ 38, 39, 245:

ցու այն հաղորդումը, ըստ որի Հեթումյան տոհմի նախնի Օշին իշխանը սելջուկյան ճնշման տակ 1073 թ. Կիլիկիա է տեղափոխվել «ի ժառանգութենէ իւրմէ՝ որ կոչի մայրեաց ջուրք հանդեպ Գանձակա»⁴, «ուշ աղվաններ» են հայտարարվել նրա հետնորդներ Ներսես Լամբրոնացին, Սմբատ Սպարապետը և Հեթում պատմիչը⁵: Դրան բնավ չի խանգարել այն հայտնի իրողությունը, որ Գանձակ քաղաքն իր շրջակայքով մտել է ոչ թե բուն Աղվանքի, այլ՝ Ուտիք նահանգի Շակաշեն⁶ գավառի մեջ:

Հայոց գիտամշակութային ժառանգության սեփականման գործում մեծ ավանդ ներդրած է, ի հաշիվ հայ ժողովրդի, իր խոսքերով ասած «աղբբեջանական ժողովրդի նախնիներից մեկը հանդիսացող» աղվանների աղքատիկ մշակույթն առատորեն հարստացրած երդվյալ հայատյաց ու արհեստավարժ պատմակեղծարար Ֆ. Մամեդովան ոչ ավել, ոչ պակաս պնդել է. «ամփոփելով աղվանական գրականության զարգացման (իմա՝ հայ գիտամշակութային ժառանգության կողոպուտի – Ա. Շ.) պատմությունը, հարկ է նշել, որ պատմական, պատմագրական ավանդույթների վերելքն ընկնում է նաև XII-XIII դդ. վրա: ... Դա մի ժամանակ էր, երբ հայկական գրականության մեջ որոշակի լճացում է նկատվում»⁷: Ֆ. Մամեդովայի մոզոնած այդ «լճացումն» իրողություն կլինեն, եթե աղբբեջանագիտության թեթև ձեռքով «աղ-

⁴ Սամվել Անեցի և շարունակողներ, Ժամանակագրություն, աշխատասիրությամբ Կ. Մաթևոսյանի, Երևան, 2010, էջ 195:

⁵ Мамедова Фарида, Кавказская Албания и албани (III в. до н. э. - VIII в. н.э.), էջ 7, 69:

⁶ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Երևան, 1963, էջ 109. Հարությունյան Բ., Հայոց Արևելից կողմերի վարչական բաժանումն ըստ «Աշխարհացոյցի», Շուշին հայոց քաղաքակրթության օրրան, Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նշված գիտաժողովի նյութեր, Երևան, 2007, էջ 32-33: Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի, Երևան, 1983, էջ 178-172:

⁷ Мамедова Фарида, Политическая история и историческая география Кавказской Албании (III в. до н.э - VIII в.н.э.), էջ 32:

վանացված» այդ և նախորդ դարերի հայ գործիչներն աղվան, իսկ նրանց թողած հարուստ ստեղծագործական ժառանգությանն աղվանական լինելը: Այժմ տեսնենք, թե որքանով են աղվան վերը հիշատակված գործիչները:

Հարևան ժողովրդի գիտամշակութային ժառանգության կորուստի միջոցով սեփականը ստեղծելու առաջին քայլերն ադրբեջանագիտությունը կատարեց հենց իր սկզբնավորման շրջանում: Գրականագետ Մ. Ռաֆիլին 1940 թ. «Литературный Азербайджан» ամսագրում լույս ընծայած «Ադրբեջանական գրականության ակնարկներ» հոդվածում կարծիք հայտնեց, որ VII դ. երկրորդ կեսի հայ մշակութային խոշոր գործիչ Դավթակ Քերթոզը, որը Ջիվանշիր իշխանի սպանության ժամանակ լինելով Պարտավում այդ իրադարձության ազդեցության տակ գրել է «Ողբք ի մահ Ջուանշիրի» մեծարժեք բանաստեղծությունը, եղել է աղվան, այսինքն ադրբեջանցի բանաստեղծ: Ի պատասխան Մ. Աբեդյանը, որն այդ գրական հուշարձանը համարել է մեզ հասած աշխարհիկ բովանդակությամբ հայկական «հնագույն չափածո բանաստեղծություն»⁸, նուրբ սարկազմով նկատել է. «Խեղճ Դավթակ, ինչի գնացիր Պարտավ քաղաքն ու այնտեղ մի ողբ գրեցիր, առանց մտածելու, թե այդ քաղաքի հետագա իշխողները քեզ իրենցը պիտի համարեն... մեր Մեսրոպ Մաշտոց վարդապետին էլ... այդ գրականագետը (Մ. Ռաֆիլին – Ա. Շ.), երևի մոռացմամբ կամ տգիտությամբ չի համարել ադրբեջանական հեղինակ, չէ որ Մաշտոցը գրել ու գործել է նույն Պարտավի կողմերում և ավելի շատ, քան Դավթակը: ... Դավթակ Քերթոզը ապրել է VII դարում, եղել է ծագումով հայ, ինչպես ցույց է տալիս նրա անունը՝ Դավթակ, գրել է հայերեն լեզվով և պատահաբար եղել է Աղվանից իշխանի (Ջիվանշիրի – Ա. Շ.) մայրաքաղաքում, և Դավթակը նրա

⁸ Աբեդյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին (սկզբից մինչև X դար), Երևան, 1944, էջ 370:

մահվան առթիվ մի դամբանական ողբ է գրել հայերեն լեզվով և ոտանավոր է գրել»⁹: Այն մեզ է հասել Մովսես Կաղանկատվացու (Դասխուրանցու) աշխատության միջոցով: Հետագայում ևս աղբրեջանագիտությունը շարունակեց Դավթակ Քերթողին աղվանացնելու, այսինքն՝ աղբրեջանականացնելու փորձերը, պնդելով, թե իբր նրա երկն աղվանական գրականության հուշարձան է և աղվաներենից է թարգմանվել գրաբար, իսկ բնագիրը ոչնչացվել: Սակայն բանն այն է, որ այդ երկը երեսունվեց տնից բաղկացած ակրոստիքոս է, ըստ մեսրոպյան այբուբենի տառերի դասավորության: Մինչդեռ, աղվանից այբուբենը բաղկացած է հիսուներկու տառերից և ունի այլ դասավորություն: Այս պարզ իրողությունն իսպառ բացառում է Դավթակ Քերթողի երկի, աղվաներենից թարգմանված լինելն ու նրա հեղինակի աղվան լինելը: Դավթակ Քերթողի անունն իսկ՝ Դավիթ, «-ակ» փոքրացուցիչ-փաղաքշական վերջածանցով, փաստում է նրա հայ լինելը:

Եվ, վերջապես, Դավթակ Քերթողի՝ իր ժողովրդի պատմության հերոսական էջերով հպարտացող մտավորական լինելու մասին է վկայում է Տիգրան Երվանդյանին նվիրված նրա տաղը, որից մի քանի տող մեզ է հասել Անանուն մեկնիչի միջոցով¹⁰: Հետագայում Զ. Բունիաթովը ևս, առանց որևէ փաստարկի, իր ավանդը ներդրեց Դավթակ Քերթողին սեփականելու գործում¹¹:

Հայոց Արևելից կողմերի ծնունդ գիտության և մշակույթի գիտամշակութային գործիչներին սեփականելու հաջորդ քայլն աղբրեջանագիտությունը կատարեց 1946 թ.¹², ինչին կանդրադառնանք ստորև:

⁹ Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Մանուկ Աբեղյանի ֆոնդ, գործ № 185:

¹⁰ Адонц Н., Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, էջ 129:

¹¹ Бунятов З. М., նշվ. աշխ., էջ 98:

¹² Киракос Гандзакецц, История, перевод с древнесармянского Т. Тер-Григоряна, Баку, 1946, առաջաբան, էջ 5-6:

Առանշահիկների հայ լինելու մասին Մովսես Կաղանկատվացու (Դասխուրանցու) հստակ վկայությունը՝ «զնախնական ազգն Հայկազնեանց՝ գեոանշահիկս»¹³, շրջանցելով, Ջ. Բունիաթովն աղվան, այսինքն ադրբեջանցի է համարել IX դ. պետական ու մշակութային խոշոր գործիչ, այդ տոհմին պատկանող Համամ Արևելցուն (Բարեպաշտին)¹⁴: Համամ Արևելցին ևս սիրել է ակրոստիքոսային եղանակը, «ուստի նրա մոտ էլ են առկա հայոց այբուբենով հյուսված ուշագրավ նմուշներ: Եվ եթե Դավթակ Քերթողի մոտ Ա-Ք-ի ձգտող շարքը լոկ ձևական է, ապա Համամ Արևելցու, մոտ տառերը բառային իմաստ ունեն և այդ պատճառով էլ, թե՛ ձևով և թե՛ բովանդակությամբ նրանք ձուլված են ընդհանուր խոսքին»¹⁵: Այդ հանգամանքը, ինչպես Դավթակ Քերթողի դեպքում էր, իսպառ բացառում է նրա մատենագրական ժառանգության նախապես աղվաններենով գրված լինելը և ապա թարգմանաբար հայերեն դարձնելը: Հետևաբար նա հայ էր, որի գրական ժառանգությունը, ինչպես նկատել է Աս. Մնացականյանը, «ըստ ամենայնի համահայկական բնույթ ունի»¹⁶: Ի դեպ, Բ. Ուլուբաբյանը հենվելով որոշակի կոմանների վրա, վիճարկել է Աղվանից իշխան Համամ Արևելցու (Բարեպաշտի) և Համամ Արևելցի մատենագրի նույն անձնավորությունը լինելու մասին հայագիտության մեջ շրջանառվող տեսակետը¹⁷ և պնդել, որ դրանք տարբեր մարդիկ են¹⁸: Սակայն տվյալ պարագայում կարևորը դա չէ, այլ այն,

¹³ Մովսես Կաղանկատվացի, էջ 172:

¹⁴ Бунятов З. М., նշվ. աշխ., էջ 189:

¹⁵ Մնացականյան Ա. Շ., նշվ. աշխ., էջ 195-196:

¹⁶ Նույն տեղում, էջ 204:

¹⁷ Կոստանեաց Կ., Համամ Արևելցի, Կաղարշապատ, 1896, Մնացականյան Ա. Շ., նշվ. աշխ., էջ 181-204:

¹⁸ Ուլուբաբյան Բ. Ա., Խաչենի իշխանությանը X-XVI դարերում, Երևան, 1975, էջ 77-81: Նույնի Արևելից կողմանց էկեղեցին և մշակույթը, Երևան, 1998, էջ 292:

որ երկու դեպքում էլ գործ ունենք ոչ թե աղվան = ադրբեջանցի, այլ հայ պատմական ակնավոր անձնավորությունների հետ:

Մովսես Կաղանկատվացուն (Ռասխուրանցուն) ազգությամբ աղվան և աղվաներենով (գարգարերենով) գրած հեղինակ առաջինը հայտարարեց Ջ. Յամպոլսկին՝ 1957 թ.: Ըստ նրա, այդ հայ պատմիչի «Աղվանից աշխարհի պատմությունը» աղվանական գրականության հուշարձան է, որը հետագայում գարգարերենից թարգմանվել է գրաբար, իսկ բնագիրը հայերի կողմից ոչնչացվել¹⁹: Թե՛ Ջ. Յամպոլսկուն, և թե՛ նրա այս հիմնագուրկ պնդումն իբրև արքիոմատիկ ճշմարտություն ներկայացնող հետևորդներին²⁰ բնավ չի մտահոգել այն իրողությանը, որ Մովսես Կաղանկատվացու (Ռասխուրանցու) երկի միջոցով մեզ հասած Ռավթակ Քերթոդի «Ողբը», ինչպես արդեն տեսանք, հայոց լեզվի այբուբենով ակրոստիքոս է, ինչը բացառում է «Աղվանից աշխարհի պատմության» ոչ միայն աղվաներենից (գարգարերենից), այլև որևէ այլ լեզվից թարգմանված լինելը: Բացի այդ, Մովսես Կաղանկատվացին (Ռասխուրանցին) օգտվել է գուտ հայկական աղբյուրներից²¹:

Հայ միջնադարյան գիտամշակութային ժառանգությանը փոքրիշատե ծանոթ ամեն ոք գիտի, որ այն ստեղծողներն ի մեծի մասի սովորության շունեին անդրադառնալ իրենց կենսագրության մանրամասներին կամ էլ ազգությունը մատնանշել: Ռա բացատրվում է մասնավորապես նրանով, որ ազգության միջնա-

¹⁹ Ямпольский З. М., նշվ. աշխ., էջ 154:

²⁰ Буниятов З. М., նշվ. աշխ., էջ 97, Мамедова Фарида, Политическая история и историческая география Кавказской Албании, (III в. до н.э - VIII в.н.э.), էջ 38-39, 74, Геюшев Р., Христианство в Кавказской Албании, էջ 168: Ֆ. Մամեդովան Մովսես Կաղանկատվացուն աղվան էր դարձրել դեռ 1977 թ. իր «История албан» Моисея Каланкатуйского как источник по общественному строю раннесредневековой Албании կեղծիրաշատ աշխատության մեջ:

²¹ Տե՛ս Սվազյան Հ. Ս., Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» աղբյուրները, «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 3, էջ 195-206:

դարյան ըմբռնման համաձայն դավանական պատկանելությունն ազգային պատկանելիության զգացմունքի նկատմամբ զերակալինելու հետևանքով վերջինիս մասին ուղղակի մատնանշումները հաճախադեպ չեն: Դրա վառ փաստումն է ազգության սահմանումը Գրիգոր Տաթևացու կողմից²²: Այս առումով Մովսես Կաղանկատվացին (Դասխուրանցին) բացառություն չէ, ուստի բավարարվել է սուկ իր ծննդավայրը նշելով «գեղջն մեծի կողմանն Կաղանկատուաց, որ է ի նմին յՈւտի գավառի, յորմէ և ես»²³: Պատմիչի հենց այս ցուցումն է պատմության աղբբեջանական կեղծարարների համար «հիմք» ծառայել նրան աղվան, այսինքն աղբբեջանցի հոչակելու համար: Սակայն, իրականում, Մովսես Կաղանկատվացին (Դասխուրանցին) հայ է ոչ միայն ազգությամբ, այլև մայր հայրենիքի ու ժողովրդի հանդեպ տաժաժ անհուն սիրով, ինչը կարմիր թելի նման անցնում է նրա աշխատության մեջ և մայրենի լեզվի ու պատմության խորագիտությամբ: Մովսեսին հայ գիտի նրան «Կաղանկատվացի» կոչած Կիրակոս Գանձակեցին, որի հայ մատենագրությանը քաջաձանոթությունը ոչ մի կասկած չի հարուցում: Թվարկելով իրեն նախորդած հայ պատմիչներին, նա վերջիններիս շարքում հիշատակում է նաև Մովսես Կաղանկատվացուն (Դասխուրանցուն): Նա պարզ ու հստակ գրում է «Իսկ հայոց ազգի պատմագիրք յոլովք ցուցին աշխատութիւն... Եւ Մովսես Կաղանկատվացի, պատմագիր Աղուանից»²⁴: Այս վկայությունից աներկբայելի հետևում է, որ Կիրակոս Գանձակեցին նրան գիտի իբրև հայ մատենագրության մեջ աշխարհագրորեն հայոց Աղվանք կոչված Հայոց Արևելից կողմերի պատմությունը շարահարած հայ պատմիչ: Իսկ որ հայոց պատ-

²² Տե՛ս Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1789, էջ 552:

²³ Մովսես Կաղանկատվացի, էջ 137:

²⁴ Կիրակոս Գանձակեցի. Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Ալեկք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 6-7:

մագրության մեջ եզակի չէ պատմիչի կողմից մայրենի երկրամասի պատմությունը գրել, փաստ է: Նախքան Մովսես Կաղանկատվացին (Ռասխուրանցին) իր ծննդավայր Տարոնի պատմությունը շարադրել էր Հովհան Մամիկոնյանը, այնպես որ հայ պատմագրության մեջ նախադեպը կար, իսկ հետագայում այդ ավանդույթը շարունակելով Թովմա Արծրունին գրեց Վասպուրականի, Ստեփանոս Օրբելյանը՝ Սյունիքի պատմությունը:

Հովհաննես Սարկավագին իր ազգությունից օտարելու և «սեփականելու» գործում ադրբեջանագիտության համար հիմք է ծառայել նրա ծննդավայրը «յաշխարհէն Գանձակա» լինելը²⁵: Այս վկայությունը հիմք ընդունելով, ադրբեջանական պատմակեղծարարության ոչ անհայտ ներկայացուցիչ Տ. Տեր-Գրիգորյանը նրան ոչ ավելի, ոչ պակաս դասել է, իր խոսքերով ասած «ադրբեջանական միջնադարյան մշակույթի փայլուն ծաղկման դարաշրջանի» պատմիչների ու մտածողների շարքը²⁶: Սակայն նրա հայ, իսկ նրա ստեղծած տոմարի հայկական լինելը պարզ ու հստակ մատնանշում է Կիրակոս Գանձակեցին: Անդրադառնալով այդ նշանավոր գործչի, որին նա բնութագրում է «մեծիմաստ վարդապետ», «մեծիմաստն զիտութեամբ քան զյուլվս և հանճարեղն յամենայն, մտահարուստն»²⁷ մակդիրներով, բեղուն գործունեությանը, նա նշում է. «Սա բազում ինչ աշխատասիրեաց ի գիրս՝ յիշատակ բարի թողեալ. սա զբազմաց փափագելին և ոչ ձեռնհաս, զհաստատ և զանշարժ տոմարն կարգեաց հայոց փոխանակ շարժականին և անհաստատնոյն. արար և միաբանութիւն ամենայն ազգաց տոմարի ընդ հայոց. վասն զի յոյժ իմաստուն էր այրն և աստուածային շնորհօք զարդարեալ, նորա բանքն ամենայն իմաստասիրա-

²⁵ Նույն տեղում, էջ 116:

²⁶ Киракос Гандзакци, անաղագրան, էջ 5-6: Հմմտ. Мамедова Ф., Политическая история и историческая география Кавказской Албании (III в. до н.э - VIII в.н.э.), էջ 32:

²⁷ Կիրակոս Գանձակեցի, էջ 84, 113:

կան ոճով, որպես գԳրիգորի Աստուածաբանին, և ոչ գեղջուկ: Սա գրեաց ճառս ներբողականս ի մեծագոր արքայն Հայոց Տրդատ, և ի սուրբ հայրապետն Ներսէս, և ի սքանչելին Սահակ ի Մեսրոպ. արար և շարական Ղևոնդանցն քաղցր եղանակաւ և յարմար բանիւ, որոյ սկիզբն է այս. «Պայծառացան այսօր սուրբ եկեղեցիք»: Գրեաց նոցուն և ճառս ներբողականս...»²⁸:

Այս տողերը կարդալուց հետո հարց է ծագում. եթէ Հովհաննէս Սարկավագն իրոք աղվան, այսինքն աղբբեջանցի էր, ապա ինչու հայերի ու ոչ թէ աղվանների համար էր անշարժ տոմար ստեղծում, ու հայոց մեծերի մասին ներբողական ճառեր գրում, իսկ Կիրակոս Գանձակեցին էլ իր ազգի հեղինակություններին թողած ուրիշինին է պաշտելու աստիճան գուրգուրում: Այդ հարցի պատասխանը տալիս է ինքը՝ Կիրակոս Գանձակեցին: Շարունակելով Հովհաննէս Սարկավագի մասին իր պատումը, նա հավելում է. «Եւ կարի յոյժ սիրէր զսա (Հովհաննէս Սարկավագին – Ա. Շ.) թագաւորն Վրաց Դաւիթ (Դավիթ IV Շինարար – Ա. Շ.), հայրն Դեմետրեայ, պապն Դաւթի և Գեորգեայ, այնքան, զի մինչ լսէր զգալուստ նորա, յոտն առնէր և ելանէր ընդ առաջ նորա, և խոնարհեցուցեալ զզլուխն՝ խնդրէր ի նմանէ օրհնութիւն...: Եւ ի պատճառս, սորա սիրէր թագաւորն զազգս Հայոց»²⁹: Ինչպէս տեսնում ենք, Կիրակոս Գանձակեցին աներկմիտ փաստում է Հովհաննէս Սարկավագի հայ լինելը, հընթացս «զազգս Հայոց» բառերով փաստելով նաև իր հայազգիտությունը, ինչին կանդրադառնանք քիչ անց:

Չ. Բունիաթովը, որն աղբբեջանական պատմաշինարարությունը հասցրեց որակական նոր աստիճանի, գրել է. «Մխիթար Գոշի Դատաստանագիրքը», Կիրակոս Գանձակեցու «Պատմությունը», ինչպէս և Առանի պատմության շատ այլ միջնադար-

²⁸ Նույն տեղում, էջ 113:

²⁹ Նույն տեղում, էջ 114:

յան սկզբնաղբյուրներ նշանակալիորեն հարկ է համարել աղվանական գրականության հուշարձաններ՝ գրված գրաբարով: Եվ միայն Աղբբեջանում Առանի (Աղվանքի) քրիստոնեական շրջանի պատմության հետազոտողների բացակայությունն է հնարավորություն տվել այդ գրականությանը համարելու հայկական, չնայած դրա համար լեզվից զատ այլ հիմքեր չկան»³⁰: Դժվար չէ հասկանալ, որ ի թիվս այլոց ասելով, նա ի նկատի ունի նաև Դավիթ Ալավիա որդուն և Գրիգոր Թորակերի որդուն, «հիմք» ունենալով համաձայն Կիրակոս Գանձակեցու Հովհաննես Սարկավագի նման նաև նրանց «յաշխարհէն Գանձակայ» լինելը³¹: Սակայն, ինչպես Հովհաննես Սարկավագի օրինակով արդեն տեսանք, միմյանց ժամանակակից գիտամշակութային այդ գործիչների «յաշխարհէն Գանձակայ» լինելը մատնանշում է նրանց ոչ թե աղվան (աղբբեջանցի), այլ՝ հայ լինելը:

Սկսած 1946 թ., երբ Տ. Տեր-Գրիգորյանը Մխիթար Գոշին աղբբեջանական միջնադարյան մշակույթի ներկայացուցիչ «դարձրեց»³², աղբբեջանագիտությունը Գանձակում ծնված Մխիթար Գոշին ու նրա դժվար գերագնահատելի ստեղծագործական ժառանգությունը իլելու համառ փորձերը շարունակում է: Ընդ որում, եթե Ջ. Բունիաթովն ի տարբերություն իր նախորդի այդ հարցում «նշանակալիորեն», բառով վերապահում է կատարել, ապա նրա հետևորդ Ֆ. Մամեդովան շատ կտրուկ է արտահայտվել: Նա Մխիթար Գոշին համարել է «աղվանական մշակույթի ականավոր գործիչ», որի աշխատությունները պատկանում են աղվանական տե-

³⁰ Буниятов З. М., նշվ. աշխ., էջ 99:

³¹ Կիրակոս Գանձակեցի, էջ 115-116:

³² Киракос Гандзакечи, առաջաբան, էջ 5-6:

ղական պատմագրության հուշարձանների թվին³³: Վերջերս էլ Մխիթար Գոշին աղվան հոչակեց Ռ. Մեհթիևը³⁴:

Ինչպես նշված, այնպես էլ Մխիթար Գոշին «սեփականած» այլ աղբբեջանագետների, բնավ չի մտահոգել, որ նա ասես կանխազգալով իր ազգային պատկանելիության շուրջ դարեր անց կատարվելիք աճպարարությունները, իր աշխատություններում տարբեր առիթներով քանիցս շեշտել է, որ հայ է: Այսպես, օրինակ, դիմելով ընթերցողին, նա իր «Դատաստանագրքում» գրել է. «Ապա եթե ընտանի ազգիս բարոյիւք սխալանցն լինիք պարսաւիչ եւ ոչ ուղղիչ, գիտելով գործ Հայկազնեայցս զայդոսիկ, միանգամայն զչափ անձին, անմեղադիր ձեզ յայդոսիք լինիմք»³⁵: Դրանով մեծ մտածողն ու հայասեր մտավորականը ոչ միայն շեշտել է իր հայ լինելը, այլև ի ցույց դրել մայր ժողովրդի բժախնդիր բնավորությանը քաջատեղյակությունը: Նույն այդ «Դատաստանագրքի» աշխարհիկ կանոնների առաջին հոդվածում նա Հիսուս Քրիստոսի հետ նամակագրական կապ ունեցած հայոց լեզենդար թագավոր Աբգարին հիշատակելիս գրում է. «Զի այդպէս մերն արքայ Աբգարիոս կարգեաց զտունն թագաւորութեան Պարսից»³⁶: Որ «մեր արքայ Աբգարիոս»-ը հայոց թագավոր էր, Մխիթար Գոշն իր այլ գործերում ևս երկիցս փաստում է³⁷: Իր հայ լինելը հայրենասեր մտավորականը քանիցս շեշտում է նաև վրացիներին ուղղված հայտնի նամակում՝ «Թուղթ առ վրացիսն՝ յաղագս ուղղափառութեան Հաւատոյ», որը մայր ժողովրդի ազգային շահերի ու դավանանքի պաշտպանության վառ օրինակ է: Այս նամակում դիմելով վրաց կաթողիկոսին, նա գրում է. «Իսկ ամբաստանելն,

³³ Мамедова Фарида, Политическая история и историческая география Кавказской Албании (III в. до н.э - VIII в.н.э.), էջ 21:

³⁴ Мехтиев Рамиз, Горис 2010, Сезон театра и абсурда, <http://www.Trend.az>.29.10, 2010.

³⁵ Մատենագիրք Հայոց., հ. ԺԹ., Երևան, 2014, էջ 133:

³⁶ Նույն տեղում, էջ 141, 537:

³⁷ Նույն տեղում, հ. Ի., Երևան, 2014, էջ 493, 662:

թե զպատկերս սրբոյն ոչ ընդունին Հայք, եւ կարի առաւել ընդունինք, զի առաջին պարգեւ ի Քրիստոսէ իւրն տուաւ պատկեր Հայոց թագաւորի Աբգարու»³⁸: Մխիթար Գոշի ազգային պատկանելիության վկայություններից է նաև նույն նամակում Գրիգոր Լուսավորչին «Մեր Լուսավորիչն Գրիգորիոս»³⁹ անվանելը: Մխիթար Գոշի հայությունը փաստում են նրա նաև հետևյալ խոսքերը. «Չայտոսիկ լուեալ մերն Իսահակ հայրապետ այնպէս հաստատեաց ասել խաչեցար, թէպէտ ի Լուսաւորչէն կարգեալ էր: Եւ յետոյ հարքն մեր վասն Նեստորի ադանդին ժողովեալ ի Դուին եւ ի Մանագկերտ եւ եղին սահման»⁴⁰: Իր հայ լինելը Մխիթար Գոշն աներկմիտ փաստել է նաև հայոց եկեղեցու արարողակարգում փոփոխություններ կատարելու նպատակով Չաքարե ամիրսպասալարի կողմից Անիում հրավիրված ժողովի մասնակիցներին դիմելիս. «Դուք հոգայք վասն ազգիս, զի մի այդպիսի սովորութեամբ խառնիսցեն ընդ վիրս, և ես հոգամ վասն զօրավարիս (Չաքարե ամիրսպասալարի – Ա. Շ.), զի մի լիցի սա վրացի, իբրև զեղբայր իւր (նկատի ունի Իվանե աթաբեկին – Ա. Շ.), որում սպասեն վիրք»⁴¹: Նման օրինակները շարունակելի են, սակայն դա կլինի ավելորդ, քանի որ բերվածներն իսկ առավել քան համոզիչ փաստում են Մխիթար Գոշի հայազգիությունն ու նրա թողած ժառանգության հայկական մշակույթի անկապտելի մաս կազմելը:

Տ. Տեր-Գրիգորյանն առաջինն էր, որ Կիրակոս Գանձակեցուն ադրբեջանական պատմիչ հայտարարեց, գրելով հետևյալը. «Կիրակոս Գանձակեցու «Պատմությունն» էլ ավելի մեծ արժեք է ձեռք բերում և այն պատճառով, որ այդ դարաշրջանի ադրբեջանական մյուս տարեգիրների ու պատմիչների ստեղծագործութ-

³⁸ Նույն տեղում, էջ 493:

³⁹ Նույն տեղում, էջ 483:

⁴⁰ Նույն տեղում, էջ 497:

⁴¹ Կիրակոս Գանձակեցի, էջ 177:

յունները մեզ չեն հասել և այդ իսկ պատճառով Կիրակոսի ստեղծագործությունն այդ տեսակետից եզակի է: Պատմիչ Կիրակոսը հանդիսանում է ադրբեջանական նշանավոր Գյանջա (Գանձակ – Ա. Շ.) քաղաքի ծնունդ...: Կիրակոս Գանձակեցին իր հարազատ քաղաքի մեծ նվիրյալն էր»⁴²: Եթե այս խոսքերը պատկանեին Կիրակոս Գանձակեցու աշխատությանն անձանոթ որևէ մեկի, ապա նրա ազգային պատկանելիության և Գանձակ քաղաքի ծնունդ լինելու մասին վերոբերյալ մտքերը կարելի կլիներ տգիտության արգասիք համարել: Սակայն, երբ դրանք պատկանում են Կիրակոս Գանձակեցու Հայոց պատմության ոուսերեն թարգմանություններից մեկի հեղինակին, ապա, հակառակ է, որ տվյալ պարագայում գործ ունենք տարրական կեղծարարության հետ: Ջ. Բունիաթովը որը, ինչպես արդեն տեսանք, Կիրակոս Գանձակեցու երկը «նշանակալից չափով... աղվանական գրականության հուշարձան» է համարել, պնդել է, թե իբր նա ոչ ավել, ոչ պակաս ապրել է Գանձակում⁴³: Ֆ. Մամեդովան Կիրակոս Գանձակեցուն առանց որևէ վերապահման է ներկայացրել իբրև «աղվանական գրականության ներկայացուցիչ և Մխիթար Գոշի նման Գանձակի ծնունդ»⁴⁴: Վերջերս էլ Կիրակոս Գանձակեցուն աղվանական պատմիչ հայտարարեց Ռ. Մեհթիևը⁴⁵:

Սակայն բանն այն է, որ Կիրակոս Գանձակեցին Մխիթար Գոշի նման բազմիցս արձանագրել է, որ հայ է: Եվ դա այն դեպքում, երբ դրա կարիքը բնավ չի զգացվել, քանզի նրա անցած ուղին ու ստեղծագործական հարուստ ժառանգությունը ներձձված են իրեն ծնած ժողովրդի, մայր հայրենիքի ու դավա-

⁴² Киракос Гандзакеци, աղաջարան, էջ 5-6, էջ 120:

⁴³ Буниятов З. М., նշվ. աշխ., էջ 94, 100:

⁴⁴ Мамедова Фарида, Политическая история и историческая география Кавказской Албании (III в. до н.э - VIII в.н.э.), էջ 31, 245:

⁴⁵ Мехтиев Рамиз, Горис 2010, Сезон театра и абсурда, [http:// www. Trend.az](http://www.Trend.az).29.10, 2010:

նանքի նկատմամբ մեծ սիրով: Կիրակոս Գանձակեցու ազգային պատկանելիության հարցում ադրբեջանագիտության կեղծարարությունները ջրի երես հանելու համար բավական է վկայակոչել նրա թեկուզ զլխավոր աշխատության՝ «Հայոց պատմության» առաջաբանը: Դրանում Կիրակոս Գանձակեցին շարունակ օգտագործում է «Հայոց աշխարհիս», «աշխարհիս Հայոց», «հայոց ազգիս», «ազգիս Հայոց» արտահայտությունները⁴⁶: Պատմիչն այդ արտահայտություններն օգտագործում է մինչև վերջ և անգամ իր զլուխգործոցի մի զլուխը վերնագրել է. «Վասն աւերածոյ աշխարհիս Հայոց և վրաց ի նոյն (մոնղոլական – Ա. Շ.) գորաց»⁴⁷:

Նկարագրելով իր «Հայոց պատմությունը» սկսելու ժամանակ՝ 1247 թ., Հայաստանին ու հայ ժողովրդին մոնղոլական նվաճման ու դաժան տիրապետության հետևանքով բաժին հասած արհավիրքներն ու դժնդակ կացությանը, Կիրակոս Գանձակեցին նախ նկատել է «զի՛ գոր գուշակեաց այրն աստուծոյ սուրբն Ներսէս վասն ազգին նետողաց և աւերման աշխարհիս Հայոց, յայժմ կատարեցաւ յազգէ, որ թաթարն կոչի»⁴⁸: Ապա հայրենասեր պատմիչը խոր մորմոքով նշել է. «Բայց իւրաքանչիւր ոք յառաջինն աշխատասիրացն եզիտ տեղի ինչ բուռն հարկանելոյ, կամ թագաւոր երևելի և կամ նահապետութիւնք ազգաց յայտնի: Իսկ մեր յայսմ յամենայնէ թափուր եղեալ. զի թագաւորութիւնն վաղ ուրեմն բարձեալ՝ Արշակունին և Բագրատունին, և իշխանք ոչ ուրեք երևեալ Հայկազնի, բայց թէ ուրեք ուրեք դօղեայք և թաքուցեայք յօտար աշխարհի»⁴⁹: Միթե աղվան հեղինակն իրեն հայ կհամարեր, իսկ Հայոց աշխարհն իր հայրենիքը, ցավ հայտնելով հայ Արշակունյաց ու Բագրատունյաց թագավորությունների անկ-

⁴⁶ Կիրակոս Գանձակեց, էջ 6, 7, 9:

⁴⁷ Նույն տեղում, էջ 237:

⁴⁸ Նույն տեղում, էջ 9:

⁴⁹ Նույն տեղում:

ման, հայ ժողովրդի ողբալի վիճակի և հայկազուն իշխանների օտար աշխարհում թաքնվելու համար: Բնավ պատահական չէ, որ Կիրակոս Գանձակեցուց առաջ նույն կերպ սելջուկյան տիրապետության շրջանում Հայաստանում տիրող ծանր իրավիճակը պատկերել է Մխիթար Գոշը: Նա գրել է. «Ի ժամանակս բռնակալութեան Ղեմացուց (թուրք-սելջուկների – Ա. Շ.), յորում վաղ ուրեմն բարձեալ էր թագաւորութիւնն Հայոց ի սպարսպուո, և անտերունջք շրջէին մնացորդք իշխանաց»⁵⁰:

Ինչպես տեսանք, աղբբեջանագիտությունը պնդում է, որ Կիրակոս Գանձակեցին ծնվել ու ապրել է Գանձակում և եղել նրա մեծ նվիրյալը: Այս դեպքում ևս գործ ունենք պարզունակ կեղծարարության հետ, ինչն ապացուցվում է պատմիչի իսկ հաղորդումներով: Նախ, նա իրեն երբեք Գանձակեցի չի կոչել, այլ հիշատակել է միայն անունը՝ Կիրակոս, առանց Գանձակեցի մականվան: Այդ մականունը Կիրակոս Գանձակեցուն տվել է նրա զլխավոր երկասիրության առաջին հրատարակիչ Ռսկան Տեր Գեորգյան-Հովհաննիսյանը⁵¹, որից հետո այն քաղաքացիություն է ստացել: Նա գրում է, որ ինքը ոչ թե Գանձակակ քաղաքից է, այլ Հովհաննես Սարկավազի, Դավիթ Ալավկա որդու և Գրիգոր Թորակերի որդու նման «յաշխարհէն Գանձակայ»⁵²: Նա ոչ միայն Գանձակում չի ապրել, այլև իր «Հայոց պատմության» մեջ որևէ ստեղ չի հիշատակել, որ երբևէ գոնե մեկ անգամ եղել է այդ քաղաքում: Ավելին, նա ոչ միայն Գանձակի նվիրյալը չի եղել, այլև իր երկում և ոչ մի քաղաքի ու նրա բնակիչների մասին այնպիսի արգահատանքով չի խոսում, ինչպես Գանձակի ու նրա քաղաքացիների: Ահա թե ինչ է գրում նա. «սպարսիկք ունէին զքաղաքն (Գանձակ –

⁵⁰ Հայոց նոր վկաները (115-1843), աշխատասիրութեամբ Հ. Մանանդյանի և Հ. Աճառեանի, Վաղարշապատ, 1903, էջ 23:

⁵¹ Պատմութիւն Հայոց սրարեալ Կիրակոս վարդապետի Գանձակեցոյ ի լոյս ընծայեաց Ռսկան Տեր Գեորգեան Յովհաննիսեանց Երևանեցի, Մոսկուա, 1858:

⁵² Կիրակոս Գանձակեցի, էջ 116:

Ա. Շ.) այր ծարաւիք արեան քրիստոնէից... և վասն այսր պատճառի թշնամի էին ամենայն քրիստոնէից»⁵³: Գանձակի մասին մի այլ տեղ նա գրում է. «Այս քաղաքս բազմամբոյս լցեալ պարսկօք, այլ սակաւ և քրիստոնէիք. յոյժ թշնամի էր սա Քրիստոսի և երկրպագուաց նորա, անարգիչ և հայիոյիչ խաչի և եկեղեցւոյ, այպանիչ և նախատիչ քահանայից և պաշտօնէից: Վասն որոյ իբրև լցաւ չափ մեղաց նոցա, էլ աղաղակ չարութեան նոցա առ տէր. երևեցան յառաջագոյն նշանէ աւերման նորա, որպէս ի վերայ երուսաղէմը յառաջ քան զաւէր նորա»⁵⁴:

Աղբբեջանագիտութիւնն ի դեմս Տ. Տեր-Գրիգորյանի ու Ֆ. Մամեդովայի աղվան է «դարձրել» նաև Հայոց Արևելից կողմերի մէկ այլ նշանավոր գործչի՝ Վարդան Արևելցուն⁵⁵: Ընդ որում, Ֆ. Մամեդովան իր կողոպուտն արդարացնելու համար նրան տվել է Աղվանցի մականունը, որով նա երբեք չի կոչվել: Չնայած, ի տարբերություն իր մտերիմ ընկեր Կիրակոս Գանձակեցու Վարդան Արևելցու գրավոր խոսքին բնորոշ է կարճատեսությունն ու ավելորդաբանությունից խուսափելը, նա ևս չի վարանել՝ մատնանշելու իր ազգությունը: Մասնավորապէս, անդրադառնալով Բյուզանդիայի կողմից Անիի Բագրատունյաց թագավորության վերացման հետ կապված անցքերին, նա նշում է, որ «Վասն որոյ անյոյս եղեալ Գագկայ (Գագիկ II–Ա. Շ.) առնու փոխան զԿալօնպաղատն և զՊիգու» և նկատի ունենալով բյուզանդացիներին, շարունակում, որ Գագիկ II-ը «կայր պանդխտութեամբ ի մէջ ասեցողացն ազգիս»⁵⁶: Անդրադառնալով 1266 թ. Եգիպտոսի մամլուքյան սուլթան Ռուբան աղ Դին Բեյբարս I-ի կողմից Կիլիկիա կատարած ավերիչ ար-

⁵³ Նույն տեղում, էջ 179:

⁵⁴ Նույն տեղում, էջ 235:

⁵⁵ Киракос Гандзакци, անաչարան, էջ 6, Мамедова Ф., Кавказская Албания и албаны, էջ 7:

⁵⁶ Հաւարումն Պատմութեան Վարդանաց վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ, 1862, էջ 99:

շավանքին, նա կսկիծով գրում է. «բացաւ մեզ աման դառն բացախուն, և մրուր բարկութեանն Աստուծոյ հայկազարմ ազգիս»⁵⁷: Պատմելով վրաց Դավիթ IV Շինարարի մասին, Վարդան Արևելցին, նշում է, որ նա «բազում անգամ դնէր զգլուխ իւր ի ներքոյ ձեռաց մերոցն՝ խնդրելով օրհնութիւն»⁵⁸: Ղ. Ալիշանը նկատել է որ նա ակնարկել է Հովհաննէս Սարկավազի ձեռքին վրաց թագավորի խոնարհվելը⁵⁹: Սակայն «մերոց» բառը թույլ է տալիս պնդելու, որ Վարդան Արևելցին նկատի է ունեցել նաև այլոց: Այսպիսով, պատմիչը փաստել է ոչ միայն իր, այլև Հովհաննէս Սարկավազի հայ լինելը: Վարդան Արևելցու գլխավոր աշխատությունում նրա հայությունը փաստող մի քանի այլ վկայություններ ևս կան, սակայն բերվածներն էլ առավել քան բավարար են Ֆ. Մամեդովայի նաև այս մշակութային կողոպուտը հերքելու համար:

Վանական վարդապետի աշակերտներ Կիրակոս Գանձակեցուն ու Վարդան Արևելցուն աղվանացնելով չբավարարվելով, Ֆ. Մամեդովան նույն կերպ է վարվել նաև նրանց սննդակից Գրիգոր Ակներցու հետ⁶⁰: Բանն այն է, որ վերջինիս մասին կենսագրական տվյալները խիստ սուղ են և անգամ հայտնի չէ, թե նա որտեղ է ծնվել՝ Արցախում, թե Կիլիկիայում: Դրանով պայմանավորված Գրիգոր Ակներցու ծննդավայրի հարցը հայագիտության մեջ առկախ է մնացել, ինչը Ֆ. Մամեդովային բնավ չի խանգարել նրան Արցախում ծնված համարելով անվարան աղվան հայտարարել:

Չնայած Գրիգոր Ակներցին ևս իր կենսագրականին խիստ սակավ է անդրադարձել, խոր ցավով է գրել Կիլիկիայի հայկական թագավորությանն ու Հայաստանին համապատասխանաբար Եզիպտոսի մամլության սուլթանության և մոնղոլների պատ-

⁵⁷ Նույն տեղում, էջ 162:

⁵⁸ Նույն տեղում, էջ 120:

⁵⁹ Նույն տեղում, էջ 120, ծան. 1:

⁶⁰ Мамедова Ф., Кавказская Албания и албаны, էջ 7:

ճառած արհավիրքների մասին, հրնթացս քանիցս ուղղակի կամ անուղղակի ակնարկելով իր հայությունը և Հայաստանն իր հայրենիքը լինելը: Նա այդպես է վարվել ոչ միայն իր հիմնական «Պատմութիւն թաթարաց» («Վասն ազգին նետողաց») երկում, այլև Միքայել Ասորու հայերեն թարգմանության իր ընդօրինակության վերջում թողած հիշատակարանում: Այսպես, անդրադառնալով հայոց կաթողիկոս Կոստանդին Ա Բարձրաբերդցու մահվան և նրա հաջորդ Հակոբ Ա Կլայեցու աթոռակալելու հետ կապված անցքերին, նա գրել է. «Իսկ ի պակասելն մահուամբ մեծ հայրապետին Հայոց, զմի ամ առանց հայրապետի եկեաց աշխարհս Հայոց...: Եւ ապա հարկեալ թագաւորն (Հեթում Ա-ն-Ա. Շ.) յիշխանացն եւ ի վարդապետացն եւ յեպիսկոպոսացն, ասացին անպատեհ լինել զերկիրս Հայոց առանց հաւտապետի եւ կաթողիկոսի»⁶¹: Պատմելով Լևոն Բ-ի թագադրման մասին Գրիգոր Ակներցին նշել է. «Եւ եղեւ ցնծութիւն եւ ուրախութիւն մեծ ամենայն աշխարհիս Հայոց»⁶²: Հեթում Ա-ի որդիներ Լևոնին ու Թորոսին հիշատակելիս մաղթում է, որ նրանց «հովանի լիցի ամենակալ բազուկն հայրենի, ածելով ի զսի հայրենի արքայութեանն եզերութ շայաստանեայցս»⁶³: Խոր մորմոքով նկարագրելով մոնղոլների կողմից հայ ժողովրդին պատճառված պատուհասները, նա հույս է հայտնել, որ Հիսուս Քրիստոսը հաստատուն կպահի «զաթոռքս հայրապետական եւ արքունական հայադաւան ազգիս ուղղափառութեան»⁶⁴: Ի դեպ, նա փաստել է նաև Վարդան Արևելցու ու Կիրակոս Գանձակեցու հայազգիությունը, գրելով հետևյալ-

⁶¹ Գրիգոր վրդ. Ակներցի, Պատմութիւն թաթարաց, Երուսաղէմ, 1974, էջ 61:

⁶² Նույն տեղում, էջ 65:

⁶³ Գրիգոր Ակներցի, Պատմութիւն վասն ազգին նետողաց, Երևան, 2011, էջ 120:

⁶⁴ Նույն տեղում, էջ 134:

լը. «Ի թուականին Հայոց Չ և Ի փոխեցան ի Քրիստոս փառատը վարդապետքն Հայոց Վարդան և Կիրակոս»⁶⁵:

Ֆ. Մամեդովայի կողմից «աղվանացված» Ստեփանոս Օրբեյանն ի տարբերություն նրա հրաշալի գիտեր, թե ինքն ինչ ազգության է պատկանում: Նա փաստել է, որ «ի մօրէ ծնեայ Սիսական և ի հօրէ՝ Օրբէլեան, որ Տարսայիճ կոչի»⁶⁶: Նախքան այդ անդրադառնալով հոր գործունեությանը հետևյալն է գրել. «ունէր Տարսայիճն գաթաբեկութիւն աշխարհիս Հայոց և բազում դիւրութիւն և ողորմութիւն առնէր նեղեալ ազգիս Հայոց»⁶⁷: Պատմիչը չի զլացել հայտնել նաև անգավակ լինելու պատճառով իրեն որդեգրած հորեղբոր՝ Սմբատի, ազգությունն ու հավատը: Ըստ Ստեփանոս Օրբեյանի, ի պատասխան մեծ իսան Մանգուի «Էթե զինչ ազգես» հարցի, նա ասել է. «հաւատով քրիստոնէայ եմ և ազգաւ հայ»⁶⁸: Ստեփանոս Օրբեյանի երկում նրա ազգությունը ցուցող օրինակները միայն սրանով չեն սահմանափակվում, սակայն բերվածներն էլ բավական են բացահայտելու Ֆ. Մամեդովայի հերթական կեղծիրը: Ինչ վերաբերվում է Ներսես Լամբրոնացու, Սմբատ Սպարապետի և Հեթում պատմիչի աղվան լինելու մասին Ֆ. Մամեդովայի բարբաջանքին, ապա նրանց հարցում ևս պատկերը նույնն է:

Այսպիսով, աղբբեջանագիտության կողմից երկար տասնամյակներ ի վեր իբրև աղվան, այսինքն աղբբեջանցի ներկայացվող վերը նշված բոլոր գործիչներն էլ հայ են, իսկ նրանց թողած ստեղծագործական ժառանգությունը հայոց բազմադարյան հարուստ ու բարձրարվեստ մշակույթի անկապտելի մասն է: Եթե պետպատվերով գործող աղբբեջանագետներին թվում է, թե հար-

⁶⁵ Գրիգոր Ակնեբցի, էջ 65:

⁶⁶ Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան այրեւսիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 477-478:

⁶⁷ Նույն տեղում, էջ 426:

⁶⁸ Նույն տեղում, էջ 408:

նան ժողովրդի մշակույթը յուրացնելով ադրբեջանականը հարստանալու է՝ նպաստելով նորաթուխ ադրբեջանական ազգի ինքնահաստատմանը, ապա նրանք խորապես սխալվում են:

ARTASHES SHAHNAZARYAN

ABOUT PERVERSIONS OF NATIONAL BELONGING OF
SCIENTIFIC-CULTURAL FIGURES OF EASTERN REGIONS OF
ARMENIA

SUMMARY

During decades because of political considerations Azerbaijani falsifiers continue to pervert the historical reality of dozens of years by faking, wrongly interpreting or ignoring the primary sources. Great Armenia's provinces - Utik, Artsakh, as well as Syunik and Paytakaran which lie on the right bank of the river Kura, are declared as «Azerbaijani» territories by them. Then following this antiscientific concept, scientific-cultural figures who lived and worked there, are declared ostensibly as «Aluanian - Azeries». The same approach is shown towards the Armenian scientific-cultural figures who came from Eastern regions of Armenia but lived in other parts of Armenia and Cilicia.

As a result several generations of Azerbaijani falsifiers announced Armenian scientific – cultural figures Davtak Kertogh, Hamam Areveltsi, Movses Kaghankatavtsi, Hovhannes Sarkavag, Mkhitar Gosh, Kirakos Gandzaketsi, Vardan Areveltsi, Grigor Aknetsi, Stepanos Orbelyan and many others to be Azeries. But, historical primary sources, i.e. evidences of the above mentioned scientific – cultural figures and those authors who knew them, show that they are all Armenians and their rich and valuable creative heritage is Armenian too.

ОБ АЗЕРБАЙДЖАНСКОЙ ФАЛЬСИФИКАЦИИ
НАЦИОНАЛЬНОЙ ПРИНАДЛЕЖНОСТИ НАУЧНО-
КУЛЬТУРНЫХ ДЕЯТЕЛЕЙ ВОСТОЧНЫХ КРАЕВ АРМЕНИИ

РЕЗЮМЕ

На протяжении десятилетий азербайджанские фальсификаторы, исходя из политических соображений, продолжают, посредством искажения материалов первоисточников, их неверно интерпретировать, игнорировать и фальсифицировать историческую действительность. Области Утик и Арцах, расположенные на правом берегу Куры, равно как и Сюник и Пайтакаран, а именно - Восточные края Армении объявляются якобы, «алуанкскими», то есть «азербайджанскими» территориями. Исходя из данной антинаучной концепции, армянские научно-культурные деятели, жившие на этих территориях, также объявляются якобы «алуанками-азербайджанцами». Такой же позиции они придерживаются в отношении армянских научно-культурных деятелей, которые были родом из Восточных краев Армении, но жили в иных областях Армении и в Киликии.

В результате несколькими поколениями азербайджанских фальсификаторов «алуанками-азербайджанцами» были объявлены армянские научно-культурные деятели Давтак Кертох (Давтак-поэт), Амам Аревелци, Мовсес Каланкатуаци, Ованнес Саркаваг, Мхитар Гош, Киракос Гандзакеци, Вардан Аревелци, Григор Акнерци, Степанос Орбелян и другие. Однако, как показывают данные исторических первоисточников, то есть как свидетельства выше-названных деятелей, так и знавших их авторов, все они являются армянами, а их богатое и ценное наследие – армянским.

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ
 ՀՆՉԱԿՅԱՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄ
 (XIX Դ. ՎԵՐՁ – XX Դ. ՄԿԻԶԲ)

XIX դարի վերջին և XX դարի սկզբին հայության հասարակական-քաղաքական կյանքի առանցքային խնդիրներից մեկը հոգևորի արժևորումն էր, որի վերաբերյալ քննարկումները կարևոր խթան էին ազգային ինքնագիտակցության զարգացման համար: Ազգի հիմնախնդրի լուծման գործում հայ մտածողների կողմից մեծապես կարևորվում էին հատկապես կրոնի, գիտության, կրթության և դաստիարակության հիմնահարցերը: Այդ հիմնահարցերի քննարկումներն ու արժևորումն ունեին իրենց խորքային պատճառները, որոնք պայմանավորված էին խնդրո առարկա ժամանակաշրջանում հայ հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող լրջագույն փոփոխություններով: Բանն այն է, որ այդ ժամանակ մեծ թափ են ստանում ազգային-ազատագրական շարժումները: Դրանց ընթացքում հայ հասարակական-քաղաքական շրջանակներում ակտիվանում են ազատագրական պայքարում Հայ Առաքելական Եկեղեցու տեղի և դերի մասին քննարկումները: Մյուս կողմից՝ արևմտահայության շրջանում կրոնափոխության ահազնացող վտանգը կյանքի է կոչում հայ հոգևորականության գործունեության նորովի իմաստավորման անհրաժեշտությունը: Շատ դեպքերում Հայ Եկեղեցուց ակնկալվում էր հստակ քաղաքական դիրքորոշում և ավելի ակտիվ մասնակցություն ազգային գործերում: Դա պատահական չէր, քանզի դարեր շարունակ Հայ Եկեղեցին կարևոր դեր էր խաղացել ազգապահպանման գործում և հանդիսանում էր ազգային ամենակազմակերպված և կուռ կառույցը:

Հոգևոր ոլորտի մյուս կարևոր բաղադրիչներն առնչվում էին գիտության, կրթության ու դաստիարակության հիմնահարցերին: Քննվող ժամանակաշրջանում Հայաստանում նկատելի զարգացում է ապրում կրթական գործը՝ մասնավորապես դպրոցաշինությունը: Ազգային կրթությունը, դաստիարակությունը և մշակույթը համարվում են այն կարևոր միջոցները, որոնք հնարավորություն են տալիս պահպանելու ազգի պատմական հիշողությունը, ազգային ոգով դաստիարակելու նոր սերունդ, որն ավելի ակտիվ և արդյունավետ կպայքարի ազգային հիմնահարցերի լուծման համար: Վերոգրյալի ազդեցությամբ էր, որ հոգևոր ոլորտի հիմնահարցերն առանցքային տեղ են զբաղեցնում ժամանակի հասարակական-քաղաքական շրջանակներում:

Այս առումով բացառություն չէին հնչակյանները, որոնք հստակ գիտակցում էին ազգի հիմնախնդրի լուծման գործում կրոնի, գիտության, կրթության ու հայեցի դաստիարակության կարևորությունը: Այսպես՝ ըստ հնչակյան գործիչ Արփիար Արփիարյանի. «Քաղաքական անկախությունը կորսնցուցած ազգի մը պահպանման սատարող երկու ուժեր են՝ Մատենագրութիւն եւ Եկեղեցի»¹:

Ազգի հիմնախնդրում հոգևոր-եկեղեցական ոլորտի հիմնահարցերի արժևորումն առկա է ոչ միայն հնչակյան գործիչների գաղափարական ժառանգության մեջ, այլև կուսակցության ծրագրում: Այսպես՝ հնչակյան ծրագրով նախատեսվում էր խղճի ազատություն, եկեղեցու բաժանում պետությունից, ընդհանուր աշխարհիկ և պարտադիր կրթության համակարգի ստեղծում, կառավարության օժանդակություն չքավորներին²: Իսկ 1910 թ. վերահրատարակված հնչակյան ծրագրով առաջարկվում էր Օսմանյան կայսրությունում ապրող ազգերին վերապահել մայրենի

¹ Արփիարյան Ա., Կովկասի հայոց հիւժումը, «Նոր կեանք», 1900, N 20, էջ 308:

² Տե՛ս Ծրագիր Հնչակեան Կուսակցութեան, Լոնդոն, էջ 6-7:

լեզվով տարբեր տիպի դպրոցներ հիմնելու իրավունք, որոնց պետք է օժանդակեր պետությունը: Պետական լեզվի դասավանդումը համարվում էր պարտադիր: Դրա հետ մեկտեղ օսմանահպատակ բոլոր ժողովուրդների լեզուները հավասար իրավունքով պիտի ճանաչվեին թե՛ պետական, թե՛ հասարակական հաստատություններում, իսկ յուրաքանչյուր քաղաքացի կարող էր գրավոր և բանավոր կերպով ազատորեն արտահայտվել ամենուրեք³: Փաստենք, որ հնչակյան ծրագիրը պարունակում էր դրույթներ, որոնք հատուկ են սահմանադրական իրավանորմերին. օրինակ՝ եկեղեցին պետությունից առանձնացնելու, պարտադիր կրթության և նմանատիպ այլ դրույթներ, որոնք այսօր էլ բազմաթիվ պետությունների սահմանադրությունների բաղկացուցիչ մաս են:

Պատմական հանգամանքների բերումով՝ Հայ եկեղեցին, ինչպես արդեն նշել ենք, առանցքային դեր է խաղացել հայ ազգի ճակատագրում: Անկախության և պետականության կորստի հետևանքով Հայ եկեղեցին էր այն միակ կազմակերպված կառույցը, որն իր շուրջն էր համախմբել հայությանը թե՛ Հայաստանում և թե՛ հայկական գաղթօջախներում: Այդ պայմաններում եկեղեցին իրագործում էր ոչ միայն կրոնական, այլև պետական որոշակի գործառույթներ: Բացի այդ՝ եկեղեցին էր կարգավորում ծննդի, կնունքի, պսակադրության, ամուսնալուծության և թաղման հետ կապված հարցերը: Իսկ ազգապահպանման, կրթության և ազգային մշակույթի զարգացման գործում եկեղեցու կատարած դերն անկարելի է թերագնահատել, քանի որ եկեղեցիներին ու վանքերին կյոց դպրոցներում էին հայ երեխաները սովորում գրել-կարդալ և յուրացնում ազգային մշակույթի հարուստ ժառանգությունը: Հաշվի առնելով հայ ժողովրդի վրա եկեղեցու ծանրակշիռ ազ-

³ Տե՛ս Ծրագիր սօսիալ դեմօքրատ շնչակեան կուսակցութեան (Տաճկաստանի համար), Կ. Պոլիս, 1910, էջ 9:

դեցությունը՝ Էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսների և Կ.Պոլսի պատրիարքի ընտրություններն առանձնակի կարևորվում էին ռուսական ու օսմանյան իշխանությունների կողմից: Վերջիններս ձգտում էին այդ պաշտոններում տեսնել այնպիսի հոգևոր առաջնորդների, որոնք հնարավորության դեպքում կնպաստեին հայության շրջանում թե՛ օսմանյան և թե՛ ցարական իշխանությունների քաղաքականությանը:

Այդ ամենի հետևանքով ժամանակի հայ մտավորականության շրջանում լայն տարածում էր գտել այն տեսակետը, ըստ որի՝ հայ ազգի հիմնական հատկանիշը նրա դավանած կրոնն է: Այսպես՝ ըստ պահպանողական հոսանքի մի շարք ներկայացուցիչների՝ խնդրո առարկա ժամանակաշրջանում աշխարհասփյուռ հայերի համար ազգային միակ հաստատությունը Հայ Եկեղեցին էր, որն ազգի տարբեր հատվածներին միավորող միակ բարոյական կապն էր: Այդ տեսակետին հակառակ՝ ինչպես քննվող, այնպես էլ նախորդ ժամանակաշրջանի ազատամտական թևի մի շարք ներկայացուցիչներ՝ Ա. Հայկունին, Ստ. Ռսկանը, Հ. Սվաճյանը, Մ. Մամուրյանը, արևելահայ հասարակական մտքի ներկայացուցիչներ Ստ. Նազարյանցը, Մ. Նալբանդյանը, Բաֆֆին ու Գր. Արծրունին մերժում էին կրոնի՝ ազգությունը բնորոշող հատկանիշը: Ըստ նրանց՝ կրոնը համոզմունքի հարց է, ինչը փոխելով՝ ազգությունը չի փոխվում⁴:

Դարաշրջանի մտայնությանը համապատասխան՝ հնչակյանները բնութագրում են ազգությունը (նրանց տերմինաբանությամբ՝ «ազգայնությունը») որպես մի առանձնահատկություն, որով մի ազգ տարբերվում է մյուս ազգից, և այս տեսանկյունից մեկնաբանում իրենց ժամանակի համար արդիական ու բազմաթիվ փիճաբանություններ առաջադրած ազգության և պատմամշակու-

⁴ Տե՛ս Սարգսյան Ա, Ժամանակակից Հայ Եկեղեցին (կրոնագիտական-ազգագիտական վերլուծություն), Երևան, 1999, էջ 104–105:

թային մի շարք երևույթների փոխհարաբերության հիմնահարցը: Այսպես՝ ըստ հնչակյան նշանավոր գաղափարախոս Ա. Նազարբեկյանի՝ կա ազգի գոյությունը պահպանելու երկու պայման. առաջինը համակեցությունն է աշխարհագրական որոշակի տարածքում, երկրորդը՝ ընդհանուր լեզուն: Քննադատելով եկեղեցին որպես ազգի գոյապահպանման հիմնաքար համարելը՝ Նազարբեկյանը գրում է. «Հայերս, ընդհակառակը, մեր ազգային գոյութեան խարիսխն ու հիմնաքարը դարձրել ենք միշտ եկեղեցին, մեր լեզուն թողել ենք եկեղեցու իրաւասութեան տակ, մեր ազգային գործերի ու հարստութիւնների կառավարումը, տիրութիւնն ու վայելումը յանձնել ենք դարձեալ եկեղեցուն, տիրապետող պետութիւնների դիմաց մեր կրօնական ու աշխարհիկ ներկայացուցիչը ճանաչել ենք եկեղեցին, և մեր հասարակութիւնն ամեն կերպ ինքն իրան դրել է հոգևորականութեան խնամակալութեան ներքոյ»⁵: Նազարբեկյանի համոզմամբ՝ եկեղեցին ու հավատը չէ, որ ազգ են կազմում, ուստի չեն կարող նրա գոյության պայման համարվել, քանզի երբեմն նույն ազգի մեջ կան տարբեր հավատի ներկայացուցիչներ: Այդ իսկ պատճառով ազգության և կրոնի նույնականացման պայմաններում կրոնափոխությունը հայոց մեջ դիտվում էր ազգադավությանը հավասարագոր: Կարծում ենք, որ շատ հաճախ կրոնի և ազգության նույնականացումը մեզանում կատարել է ազգապահպանման դեր, այն իմաստով, որ հայ ժողովրդի որոշակի հատված կրոնափոխության հետևանքով աստիճանաբար հեռացել է հայրենի արմատներից՝ կանգնելով ձուլման վտանգի առաջ: Այդ առումով առավել խոսուն են համշենահայերի և լեհահայերի օրինակները:

Ի տարբերություն Նազարբեկյանի՝ հնչակյան մեկ այլ գաղափարախոս Սապահ-Գյուլյանը կրոնափոխությունը դիտում էր

⁵ Նազարբեկյան Ա., Կովկասում, «Վերածնություն», 1903, N 15:

որպես հայկական հեղափոխության ուժերը ջլատող գործոն: Նա մասնավորապես մեղադրում էր եվրոպական կրոնակրթական հաստատություններին, որոնք, ըստ նրա, եղել են կրոնափոխության գաղափարի քարոզիչները, Հայաստանում ստեղծել են տարբեր կրոնական համայնքներ, որոնք հակադրվել են միմյանց և բոլորը միասին՝ հայկական հեղափոխությանը⁶: Վերոհիշյալ քննարկումների վերաբերյալ իր դիրքորոշումն արտահայտելով՝ Արփիարյանը գտնում էր, որ. «Ցեղը և ազգայնությունը իրարու հետ երբ շփոթենք, կը սխալինք: Իսլամ եւ օրթոտոքս Հայերը ցեղով այնքան հայ են որքան լուսաւորչական կամ կաթոլիկ Հայր. բայց ազգայնութեամբ Հայ չեն»⁷: Այս ամենից կարելի է եզրակացնել, որ նա առանձնացնում էր «ցեղ» և «ազգայնություն» հասկացությունները: «Ցեղ» հասկացության դեպքում նա թերևս նկատի է ունեցել հայի էթնիկ պատկանելությունը, իսկ «ազգայնության» դեպքում՝ ազգային մտածելակերպը, բարբերն ու ավանդույթները, որոնք հիմք են հանդիսանում ազգային պատկանելության գիտակցման համար: Ընդամին, ազգային պատկանելության զգացումը մեզանում նաև կրոնով էր պայմանավորված:

Կրոնի գործոնը թեև կարևոր, սակայն վճռորոշ նշանակություն չի ունեցել Ա. Արփիարյանի համար. «Ու երբ լուսաւորչական, կաթոլիկ, աւետարանական Հայեր ազգային յառաջադիմութեան եւ զարգացման գանազան գործերու մէջ միասին կ'աշխատին, գործնականապէս կը հաստատեն եւ կ'ամրապնդեն խղճի ազատութեան եւ արենակցական ազգայնութեան սկզբունքը», - գրում էր նա⁸: Վերոգրյալից հետևում է, որ Արփիարյանի համար կարևորն ազգային ընդհանուր գործին օգտակար լինելն է՝ անկախ հավատից:

⁶ Տե՛ս Սապահ-Գիւլեան Ա., Պատասխանատուները, Փրավիտենս, 1916, էջ 40:

⁷ Արփիարյան Ա., Երկու երեւոյթները, «Նոր կեանք», 1899, N 20, էջ 307:

⁸ Նույն տեղում, էջ 308:

Կարծում ենք, սակայն, որ շատ հաճախ կրոնափոխությունը, նշված բացասական հետևանքներով հանդերձ, լուծել է մի շատ կարևոր խնդիր, այն է՝ փրկել է շատ հայերի ֆիզիկական բնաջնջումից, իսկ փրկվելուց հետո միշտ էլ հնարավոր է վերադառնալ ազգային կրոնին: Գաղտնիք չէ, որ Օսմանյան կայսրությունում քրիստոնյաների ջարդերը եղել են պետականորեն գործադրված, մինչդեռ Արևելյան Հայաստանում ցարական իշխանությունների կրոնական հալածանքները դրսևորվել են հայության շրջանում ուղղափառության տարածման խրախուսմամբ: Արդեն XX դարի սկզբին միայն էջմիածնի շրջանում կար 70 հայ ուղղափառ ընտանիք, ինչպես նաև նախատեսվում էր Հայոց Մայր Տաճարից ավելի մեծ ուղղափառ եկեղեցի կառուցել⁹:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում հայ հասարակական-քաղաքական կյանքի առանցքային հարցերից էին ազգային կյանքում Հայ եկեղեցու կատարած դերի վերաբերյալ քննարկումները: Եկեղեցու դերը գերազնահատողները կարծում էին, որ հայերն իրենց գոյությունը պահպանել են հենց քրիստոնեության շնորհիվ: Այսպես՝ Մ. Օրմանյանի համոզմամբ հայությանը շաղկապող և ազգային դիմագիծը պահպանող միակ կառույցը եղել է Հայ եկեղեցին¹⁰: Բացի դրանից՝ եկեղեցին է դարձր շարունակ հայության մեջ գրագիտություն և լուսավորություն տարածել:

Եկեղեցու կատարած դերի վերաբերյալ քննարկումներին ի պատասխան՝ Սապահ-Գյուլյանը գրում է. «Կրօնական հաստատութիւնները ինչ կարգի էլ որ լինեն, ժողովուրդ փրկելու, նրա տնտեսա-քաղաքական պահանջներին որևէ չափով զոհուցում

⁹ Տե՛ս Հովհաննիսյան Զ., Հայ Առաքելական եկեղեցու բարենորոգության հիմնա-
նարցը 1901–1906 թթ. (կրոնագիտական վերլուծություն), Երևան, 2008, էջ 21:

¹⁰ Տե՛ս Օրմանեան Մ., Հայոց եկեղեցին և իր պատմութիւնը, վարդապետութիւ-
նը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, այաբողոքութիւնը, գրականութիւնը, ու ներ-
կայ կացութիւնը, Կոստանդնուսյոյիս, 1911, էջ 245:

տալու բնոյթը և միտումը չունին, մանավանդ մեր օրերում»¹¹: Նա այդ վիճաբանությունները համարում է դատարկ խոսակցություններ՝ ցույց տալով, որ միայն Հայաստանում չէ, որ եկեղեցին բացասական դեր է կատարում. «Եւ ցաւալի է, որ մեր մէջ դեռ չհասկացան թէ ժամը, եկեղեցին ազգեր, ժողովրդներ չի փրկում, աղօթքը դատ չի լուծում: Փորձեն պահպանողականները, ինչքան որ կուզեն, բայց ճշմարտութիւնը ճշմարտութիւն է – մեր օրերում եկեղեցին ամէն տեղ եւ ամէն ազգի մէջ կաշկանդումի, ստրկացումի, համակերպութեան մի վառարան է»¹²: Դա է պատճառը, որ նա կոչ է անում հայ ժողովրդի քաղաքական դաստիարակության գործում սպասելիք չունենալ եկեղեցուց, քանի որ սեփական ապահովության համար եկեղեցին նույն իրավունքով ու սկզբունքներով օրհնում է «թէ բռնաւորի սուրը և թէ ժողովրդական գաւազանը»¹³:

Ճիշտ է, պետականության բացակայության պայմաններում եկեղեցին իր վրա էր վերցրել ազգային-քաղաքական որոշակի գործառույթներ, սակայն եկեղեցուց ազգային հարցերում հստակ քաղաքական դիրքորոշում կամ հեղափոխությանն ակնհայտ օժանդակություն պահանջելն իրատեսական չէր, քանզի այն հոգևոր ինստիտուտ էր, որը նկատելի չափով գտնվում էր օսմանյան և ցարական իշխանությունների վերահսկողության ներքո:

Անդրադառնալով եկեղեցու խաղացած դերի վերաբերյալ Ա. Արփիարյանի արտահայտած տեսակետին՝ պետք է փաստել, որ այն ավելի ընդունելի է. «Հայոց եկեղեցին Հայ ազգը չէ պահպանած, այլ հայ ազգութենէն մաս մը փրկելու սատարած է հզօրա-

¹¹ Սապահ-Գյուլյան Ա., Կարմիր տողեր, «Ննչակ», 1906, N 5, էջ 41:

¹² Սապահ-Գյուլյան Ա., Տխուր կէտեր, «Երիտասարդ Հայաստան», 1905, N 52:

¹³ Տե՛ս Սապահ-Գյուլյան Ա., Ոչ – օրինական մամուլը, «Երիտասարդ Հայաստան», 1903, N 26:

այն, աջակցութեամբ բարոյական ուրիշ ուժերու, - գրում էր Արփիարյանը»¹⁴:

Հնչակյանները անդրադարձել են նաև հայ հոգևորականության բննադատությանը: Այսպես՝ ըստ Նազարբեկյանի. «Ամենքին յայտնի է, որ մենք արդէն սկզբունքով ոչ մի գուրգուրանք չունենք հոգևորական դասի համար, ևս առաւել, երբ այդ սկզբունքի ճշմարտութիւնն ապացուցվում է հոգևորականութեան ընթացքով, որպէս և այն բարձրաստիճան հոգևորականների գործերով, որոնք վերջին տասը տարւայ միջոցին իրանց դժոխային հոգիով միայն դժոխային դաւեր էին լարում ընդդէմ հայ ժողովրդի և մասնաւորապէս հայ յեղափոխականներիս»¹⁵: Ավելին՝ Սապահ-Գյուլյանը հոգևորականությանը դիտում էր որպէս առանձին «կղերական դասակարգ»¹⁶: Նա գտնում էր, որ ամեն տեղ և ամեն ժամանակ հոգևորականությունը տիրապետողի ձեռքին գործիք է եղել ընդդէմ հասարակ ժողովրդի. «Երբ կայ մի դասակարգ, որ իր կազմած, յղացած, իր ծրագրած ասացուածներին տալիս է յաւիտենական ճշմարտութեան քողը. երբ մի դասակարգ խօսում է յանուն «յայտնութեան». երբ մի դասակարգ իր ասածները վեր է դնում մարդկային բանականութիւնից և քաղաքակրթութեան տուած արդիւնքներից. երբ մի դասակարգ «հրաշքներ» ի գաղափարով է ապրում եւ միշտ ունի երկու բերան, որ կողմը որ ուզի, այն կողմը կղարձնի եւ միշտ նրան կարող է տալ սրբութեան ձեւ, այդպիսի դասակարգը ամենաւտանգաւորն է»¹⁷: Նա հայ հոգևորականությանը հակադրելով հույն, բուլղար և սերբ հոգևորականներին՝ նրանց մեղադրում էր հեղափոխությանը չսատա-

¹⁴ Արփիարյան Ա., Երկու քաղաքակրթութիւնները, «Նոր կեանք», 1900, N 8, էջ 115:

¹⁵ Նազարբեկյան Ա., Նորընտիր պատրիարքը, «Հնչակ», 1895, N 2, էջ 11:

¹⁶ Տե՛ս Սապահ-Գյուլյան Ս., Պրօլետարեան շարժումները Ռուսաստանում, «Երիտասարդ Հայաստան», 1905, N 42:

¹⁷ Սապահ-Գյուլյան Ս., Օրինական կեանքից, «Երիտասարդ Հայաստան», 1904, N 27:

րելու մեջ: Ավելին՝ Սապահ-Գյուլյանը հայ հոգևորականությանը մեղադրում էր նաև հարկ եղած ժամանակ օտար տիրապետողներին սատարելու և սեփական ժողովրդի շահերն անտեսելու մեջ. «Մեր մեջ հոգևորականութիւնը խօսել է միայն այն ժամանակ, երբ օտարը իր դասակարգային շահին է մատ խառնել, այլապէս՝ նա յաճախ օտարի կողմն է բռնել ընդդէմ ժողովրդի», - գրում էր Սապահ-Գյուլյանը¹⁸: Հարկ է փաստել, որ Սապահ-Գյուլյանի այս կարծիքը հասցեագրված չէր բոլոր հայ հոգևորականներին: Նա դրվատում էր Կ. Պոլսի հայոց պատրիարքներ Մկրտիչ Խրիմյանին, Ներսես Վարժապետյանին և Մաթևոս Իզմիրյանին, որոնք օրինականության սահմաններում պայքարում էին սուլթանական ռեժիմի դեմ¹⁹:

Հնչակյան մեկ այլ գործիչ Ռ. Խան-Ազատը Մկրտիչ Խրիմյանին չի ներկայացնում որպես ակտիվ հեղափոխական, քանզի վերջինս վախենում էր գոհերից. «Ես արդէն ըմբռնել էի Խրիմեանի հոգեբանութենը ու նրա «յեղափոխականութիւնը». նա յեղափոխականութիւնը սիրում էր գրքերի ու քարոզների մեջ. իսկ իրական ու կեանքի մեջ կատարված յեղափոխութիւնը, մանաւանդ երբ դա հայերին էր վերաբերում, նրան ուղղակի սոսկում էր պատճառում»²⁰:

Արփիարյանը ևս հոգևորականների առջև խիստ պահանջներ էր դնում. «Քահանան է որ իր հօտին բարոյական ուժը վեր պիտի բռնէ, քահանան է որ հօտին միտքը պիտի զարգացնէ իր ամենօրեայ խօսակցութիւններով, տեսակցութիւններով», - գրում էր նա²¹: Ըստ նրա՝ հայ եկեղեցականը պետք է իր սրտից ջնջի շահամոլությունն ու փառամոլությունը՝ հավատարիմ մնալով եկե-

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Տե՛ս Սապահ-Գյուլյան Ա., Օրինականութիւն եւ յեղափոխութիւն, «Երիտասարդ Հայաստան», 1905, N 24:

²⁰ Խան-Ազատ Ռ., Յիշողութիւններ Խրիմեանի մասին, Թիֆլիս, 1908, էջ 21:

²¹ Արփիարյան Ա., Հոգևոր իշխանութիւնը կրնայ ընել, «Հայրենիք», 1894, N 804:

դեցականի իր ուխտին, սրտանց սիրի աղքատին ու խեղճին, խտրություն չդնի ունևորի և չունևորի միջև, մարտնչի իր հոտի մոլությունների դեմ, որի դեպքում կլինի իր հոտի պաշտելին²²: Հոգևորականության նկատմամբ ձևավորված բացասական վերաբերմունքի համար Արփիարյանը մեղադրում է հենց հոգևորականներին՝ կոչ անելով օրինակ վերցնել օտարազգի կրոնավորներից: Նա հատկապես կարևորում էր վերջիններիս՝ աշխարհիկ բնույթի սարքեր մասնագիտություններին ու հմտություններին (բժշկություն, արհեստագործություն) տիրապետելու կարողությունը: Ըստ Արփիարյանի՝ օտարազգի հոգևորականները, ժողովրդին զանազան ծառայություններ մատուցելով, վստահություն ու սեր են ներշնչում և տարածում իրենց վարդապետությունը²³: Այդ իսկ պատճառով նա կոչ էր անում թշնամանալու փոխարեն մրցել օտար կրոնավորների հետ գիտության և առաքինության ասպարեզներում: Արփիարյանի համոզմամբ միայն այդ դեպքում հնարավոր կլինի փոխել ժողովրդի կյանքը²⁴:

Հնչակյանների նման բացասական վերաբերմունքը կրոնավորների նկատմամբ պատճառաբանված է: Նրանց քննադատած երևույթները՝ շահամոլությունը, տգիտությունը և այլ արատներ, բավականին տարածված էին տվյալ ժամանակի հայ հոգևորականության շրջանում: Բացի դրանից՝ հնչակյանները՝ որպես հեղափոխականներ, հաճախ բացասական վերաբերմունքի էին արժանանում պահպանողական շրջանակների կողմից: Սակայն նշված արատները վերագրել բոլոր հայ հոգևորականներին արդարացված չէ, քանզի ծանր պահերին ամենից շատ հենց նրանք էին սատար կանգնում հայ ժողովրդին: Այդ հարցի առավել իրագործելի լուծումն առաջարկում էին պահպանողականները՝ նշե-

²² Տե՛ս Արփիարյան Ա., Սիրուիլ, «Հայրենիք», 1894, N 895:

²³ Տե՛ս Արփիարյան Ա., Բաղդատություն մը, «Հայրենիք», 1894, N 839:

²⁴ Արփիարյան Ա., Ազգային տեսություն, «Մասիս», 1889, N 3926:

լով, որ կրթված պետք է լինի ոչ միայն հոգևորականը: Վերջիններիս համոզմամբ համերաշխ և արդյունավետ գործելու համար անհրաժեշտ էր ազգի երկու դասակարգերի՝ հոգևորականների ու աշխարհականների գուգակշիռ զարգացումը²⁵:

Վերոշարադրյալից հնարավոր է եզրակացնել, որ Հայ եկեղեցու և կրոնի վերաբերյալ իրենց դատողություններում հնչակյանները, ըստ էության, ազգային կեցության նոր սլայմաններում շարունակում են XIX դ. կեսերից հայ ազատամտականների հայացքներում ձևավորված միտումը: Հայ իրականության մեջ XIX դ. ընթացքում խղճի ազատության հիմնախնդիրն ուներ տեսական և գործնական մեծ նշանակություն: Հայ ազատամտականների համոզմամբ՝ խղճի ազատությունը մարդու նվիրական իրավունքն է, ինչից բխում է, որ ազգի ինքնությունը կրոնական պատկանելությամբ չի որոշվում. ազգը և կրոնը տարբեր իրողություններ են, քանզի «այլ է ազգայնութեան հանդեսը և այլ է կրօնի հանդեսը»: Ազատամտականները, արժևորելով քրիստոնեության և Հայ եկեղեցու դերը, միաժամանակ չէին ընդունում կրոնի և եկեղեցու հնարավորությունների անսահմանությունն ազգի գոյության և առաջադիմության հարցում: Նրանք կարևորում էին աշխարհիկ կառավարության առկայությունը, աշխարհիկ մշակույթի և լուսավորության զարգացումը՝ միաժամանակ եկեղեցուն հատկացնելով ազգի հոգեբարոյական դաստիարակչի դերը: Դրա հետ մեկտեղ ազատամտականները գտնում էին, որ ազգային միասնություն կարող է ձեռք բերվել միայն քաղաքական կառույցների միջոցով²⁶:

Արժևորելով հանդերձ Հայ եկեղեցու դերը՝ հնչակյանները դեմ էին հայ ժողովրդի կյանքում եկեղեցու ազդեցության գերազնահատմանը: Պետք է փաստել, որ հայ հոգևորականության

²⁵ Տե՛ս Միրումյան Ռ., Պատմափիլիսոփայական հայեցակարգերը XIX դարի հայ փիլիսոփայության մեջ (մեթոդաբանական վերլուծություն), Երևան, 2003, էջ 255-256:

²⁶ Տե՛ս Միրումյան Ռ., Ստեփանոս Պալասական, Երևան, 2009, էջ 118-122:

վերաբերյալ հնչակյան գաղափարախոսների գնահատականները հիմնականում բացասական են: Նրանք քննադատում էին հայ հոգևորականների արատները՝ կոչ անելով նրանց ակտիվորեն ներգրավվել ազգային, կրթական և այլ խնդիրների լուծման գործում: Չհամաձայնելով այս ծայրահեղական գնահատականների հետ՝ գտնում ենք, որ պետք չէ բոլոր հոգևորականներին վերագրել նրանցից ոմանց թերությունները: Հարկ է նշել, որ եկեղեցին ու հոգևորականները ևս ենթարկվում էին տարաբնույթ հալածանքների և գործում էին իրենց ուժերի ներածին չափով:

ARAMAZD MKRTCHYAN

**THE ROLE OF THE ARMENIAN CHURCH IN THE
FRAMEWORK OF A POLITICAL CONCEPT OF
HNCHAKYAN IN THE END OF THE XIX CENTURY –
BEGINNING OF THE XX CENTURY**

SUMMARY

In this article, based on a variety of sources and research, an attempt was made to introduce the idea of Hnchakyan, party relating to the Armenian Church and the assessment of the role of the Armenian clergy, and availability to their proposed solutions. It should be mentioned, that the issue of resolving the problem of people (Armenian liberation of from the foreign yoke, and the creation of the nation-state) proposed by Hnchakyan, but for issues of spiritual assessment, their views were in accordance with the development of the spirit of the time as well as the ideas of liberal thinkers. The Hnchakyan were against the reappraisal of the role of the Armenian Church in the life of the Armenian people, rejecting the point of view that the Church for centuries ensured the preservation of the nation.

Appreciating the role of the church, they call the church to be engaged more actively in addressing national issues. The most negative

attitude Hnchakyan have towards the Armenian clergy. They called on the clergy to be closer to the people and with their behavior to be an example for ordinary people. Hnchakyan especially emphasized the role of the Church in education, encouraging the clergy to give the younger generation education due to time and life. However, note that Hnchakyan, giving an assessment to the Armenian church and clergy are falling into extremes. Over the centuries the church was the only all-Armenian structure, uniting Armenians and protect their interests.

ԱՐԱՄԱՅԸ ՄԿՐՏՇՅԱՆ

**РОЛЬ АРМЯНСКОЙ ЦЕРКВИ В РАМКАХ
ПОЛИТИЧЕСКОЙ КОНЦЕПЦИИ ГНЧАКЯНОВ
(КОНЕЦ XIX ВЕКА – НАЧАЛО XX ВЕКА)**

РЕЗЮМЕ

В данной статье, на основе различных источников и научных исследований, сделана попытка представить идеи Гнчакянов, которые связаны с армянской церковью и оценкой роли армянского духовенства.

Гнчакяны были против переоценки роли армянской церкви в жизни армянского народа, отвергая мнение, что церковь на протяжении веков обеспечивала сохранение народа. Высоко оценивая роль церкви, они призывали церковь более активно участвовать в решении национальных вопросов. Наиболее негативное отношение Гнчакяны имели к духовенству. Они призывали священнослужителей быть рядом с народом и стать примером для обычных людей. Гнчакяны особенно подчеркивали роль церкви в области образования, призывая духовенство дать молодому поколению образование.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՇԱՐՈՒՆՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԻ
ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 1912 Թ.
ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՀԱՄԱՐ

1912-1914 թթ. հայկական բարենորոգումների մասին աղբյուրները բազմազան են իրենց տեսակով (մամուլ, արխիվային վավերագրեր, պաշտոնական փաստաթղթեր, օրենսդրական նախագծեր) և պահվում են Հայաստանի և աշխարհի տարբեր գրադարաններում և արխիվային ֆոնդերում: Հայկական բարենորոգումների մասին արժեքավոր արխիվային միավորներ կան Երևանի Գրականության և արվեստի թանգարանի Թորոս Ազատյանի ֆոնդում: Այստեղ են հավաքված Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի 1870-1915 թթ. արձանագրությունները, տեղեկագրերը, օսմանյան կառավարությանը ներկայացված թագիրները (բողոքագրերը), կաթողիկոսական կոնդակներն և վիճակագրական կարևոր տեղեկություններ հայկական մարզերի բնակչության և ունեցվածքի մասին¹: Կարևոր և բացառիկ աղբյուրագիտական նշանակություն ունի նաև Հայաստանի ազգային արխիվի № 450 ֆոնդը, որտեղ հավաքված են բացառապես Հայկական հարցի մասին վավերագրեր: Փաստաթղթերը հիմնականում իտալերեն, ֆրանսերեն գրառություն են Կ. Պոլսի հայ կաթոլիկ պատրիարքարանի, Էրզրումի, Մարաշի և այլ վայրերի կաթոլիկ եպիսկոպոսարանների առաքելական պատվիրակների միջև նրանց գործունեության մասին:

Հայկական բարենորոգումների խնդիրը լայնորեն լուսաբանվում էր ժամանակի մամուլում ուստի մամուլը նույնպես կարելի է

¹ Տե՛ս Մաղոյան Գ., Թորոս Ազատյանի հավաքածուն, ՊԲՀ, 1975, № 4, էջ 226:

ներառել սկզբնաղբյուրների թվում: Հովհաննես Արշարունին նամակներից մեկում (պատրիարքի նամակների ավելի մանրակրկիտ կանդրադատնանք ստորև) խստորեն քննադատության է ենթարկում ժամանակի մամուլը: Նամակը² գրված է 1913 թ. մայիսի 6-ին՝ մի ժամնակահատված, երբ ահազնանում էին հայկական կոտորածները, Հայկական բարենորոգումներում տիրում էր նույն անորոշ վիճակը: Նամակում, անդրադառնալով մամուլի գործունեությանը, Արշարունին մասնավորապես գրում է, որ լրագրողները «անգիտակից իրենց կոչման կեղծաւորաբար կենթարկուին աշխարհիկ անձանց քմայքին», որպեսզի հողվածները լինեն ավելի սուր և «վարկանիշային», ինչը կապահովոր թերթի վաճառքը և լրագրողի օրապահիկը³: Այս խոսքերը բավականին լուրջ հիմք են ստեղծում, որպեսի հիմնախնդրի ուսումնասիրության համար առաջնային տեղում լինեն նախ անմիջական գործիչների՝ Գևորգ 5-րդ կաթողիկոսի, Կ. Պոլսի պատրիարքների և Պողոս Նուբար փաշայի նամակները, իսկ մամուլը ենթարկվի բավականին լուրջ քննության:

Հայկական բարենորոգումների մասին աղբյուրների շարքում իր ուրույն կարևորությունն ունի Կաթողիկոսական դիվանի արխիվային հավաքածուն: Այստեղ հավաքված են բոլոր կարևորագույն փաստաթղթերը, որոնք հիմք են հանդիսանում հիմնախնդրի ուսումնասիրության համար և արտացոլում են Հայկական բարենորոգումների գործընթացի առաջնային և երկրորդական շերտերը:

Կաթողիկոսական դիվանի կարևոր և ուշադրության արժանի վավերագրերի թվում են Կ. Պոլսի պատրիարք Հովհաննես Ար-

² Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ. 109:

³ Նույն տեղում, էջ 5:

շարունու նամակները ուղղված Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդ կաթողիկոսին:

Արշարունու նամակների աղբյուրագիտական ուսումնասիրության հրատապության պատճառ է հանդիսացել այն հանգամանքը, որ վերջինիս գործունեության վերաբերյալ չունենք առանձին աշխատություն և, մեր կարծիքով, նա այն գործիչների թվում է, ովքեր բացառիկ դեր են ունեցել ընթացող քաղաքական գործընթացներում:

Գևորգ 5-րդը, Կ. Պոլսից ստանալով օրեցօր ահազնացող լուրեր, իր ամբողջ ուշադրությունը բևեռում է Արևմտյան Հայաստանում ընթացող իրադարձություններին: Ստանձնելով Հայկական հարցի վերաբացման պատասխանատվությունը, կաթողիկոսը հրահանգում է Կ. Պոլսի պատրիարք Հովհաննես Արշարունուն ամենայն մանրամասնությամբ տեղյակ պահել Արևմտյան Հայաստանում և Կ. Պոլսում հայության դրության և քաղաքական վիճակի փոփոխությունների մասին: Կ. Պոլսի պատրիարքարանին ենթակա թեմերից և համայնքներից, պատրիարքարան էին ուղղվում նամակներ ժողովրդի սոցիալ-տնտեսական և հոգեբանական վիճակի, ինչպես նաև կոտորածների մասին: Նամակները կոնկրետ վիճակագրական տեղեկություններ չեն պարունակում կոտորածների, ունեզրկման մասին, սակայն Արշարունու վերլուծությունները փաստական արժեքավոր նյութ է տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ, որոնք նամակները դարձնում են կարևոր աղբյուր բարենորոգումների ուսումնասիրության համար:

Նկարագրելով հայաբնակ նահագների ներքին դրությունը՝ պատրիարքը խուսափում է զգացմունքային նկարագրություններից: Նամակներից երևում է որ Հովհաննես Արշարունին քաջատեղյակ էր Վանում, Աղթամարում, Մուշում, Բաղեշում և այլ վայ-

բերում կատարվող իրադարձություններին հենց անմիջական ականատեսներից:

Սեպտեմբերի 16-ին կաթողիկոսին ուղղած նամակում նկարագրելով է բոլոր այն դեպքերը, որոնք արդեն նորություն չէին սպանություններ, ավարառություններ, առևանգումներ, անչափահասների բռնի իսլամացում և այլն, Արշարունին վերլուծելով իրեն հասած նյութը, գալիս է այն եզրակացության, որ «ժողովուրդը մատնուած է նույնիսկ ընդհանուր կոտորածի վտանգին»⁴: Այնուհետև Վեհափառին խնդրում է որոշակի քայլեր ձեռնարկել իրավիճակի փրկության համար: Առաջին հերթին անհրաժեշտ էր օտար տերությունների ուշադրությունը հրավիրել Արևմտյան Հայաստանում կատարվող դեպքերի վրա:

1912 թ. սեպտեմբերի 29-ի նամակում Արշարունին Գևորգ 5-րդին հաղորդում է փաստական կարևոր մի տեղեկություն ևս՝ «քաղուած մասնակի տեղեկութեանց համաձայն». քրդերը մտադիր էին բնաջնջել հայերին պատերազմի սկսվելուն պես⁵: Որտեղի՞ց էր հասել այդ տեղեկությունը, նամակում չի նշվում, սակայն ակնհայտ է մի բան, որ թուրքական կառավարությունը իր ցեղասպան ելույթները համապատասխան մտադիր էր ավարտին հասցնել արևմտահայության բնաջնջումը:

Նամակի վերջում պատրիարքը գրում է, որ «սույն պարագաները գիտենալով» (նկատի ունի քրդերի կողմից պատերազմը սկսելուն պես կոտորածների կազմակերպումը), Ազգային ժողովի կողմից կազմված Հարստահարության խորհրդարանական հանձնաժողովը որդեգրել է օտարակրոն և իշխանական մարմինների ներկայացուցիչների հանդեպ «ծայր հաշտ և խոհեմ» վերաբեր-

⁴ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 15, թ. 32:

⁵ Նույն տեղում, թ. 36:

մունք ցույց տալը «չվտանգելու համար արդեն իսկ մեր ծանր կացութիւնն»⁶:

Այս մասին հիշատակում է Կ. Պոլսի ուսական դեսպան Գիրսը Արտաքին գործերի նախարար Սազունովին ուղղված նամակում: Մասնավորապես խոսելով հայկական ջարդերի մասին, Գիրսը գրում է. «հողերի մեծամասնութիւնը յափշտակուած է և յափշտակում է քրդերի ձեռքով և իշխանութիւնները ոչ միայն չեն արգելում այդ, այլ նոյնիսկ հովանաւորում են և աջակցում են այդ յափշտակումներին»⁷:

Մատենադարանի Կաթողիկոսական դիվան ֆոնդում պահվում է Հովհաննէս Արշարունու ևս մէկ նամակ ուղղված Գևորգ 5-րդին, որը թվագրված է սեպտեմբերի 17-ով: Արշարունին կրկին ահազանգում է արևմտահայության ծայրահեղ ծանր վիճակի մասին: Նամակի բովանդակային առանձնահատկութիւնը և կարևորութիւնը կայանում է նրանում, որ մինչև Բալկանյան ճգնաժամը պատրիարքը կաթողիկոսին կոչ էր անում դիմել ուսաց կառավարությանը: Այնուհետև, ուղենշելով Հայ առաքելական եկեղեցու ապագա քայլերը, առաջարկում է ստեղծել պաշտոնական մարմին⁸: Սա վկայում է այն մասին, որ հայկական կողմը նախապես մինչև Բալկանյան ճգնաժամը, պատրաստվում էր Հայկական հարցի վերաբացմանը:

Ինչպէս հայտնի է, 1912 թ. սեպտեմբերի 25-ին (հոկտեմբերի 8-ին) Փոքր Զեռնոգորիան պատերազմ հայտարարեց Օսմանյան Կայսրությանը, որին միացան Սերբիան, Բուլղարիան և Հունաստանը: Օսմանական բանակը կրում էր ջախջախիչ պարտութիւններ՝ դաշնակիցները մոտեցել էին կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլսին: 1912 թ. նոյեմբերի 20-ին պատերազմող կող-

⁶ Նոյն տեղում, թ. 37:

⁷ Տե՛ս Լեո, Հայոց հարցի վաւերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 303:

⁸ Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ. 110, թ. 2:

մերի միջև կնքվում է տասնօրյա զինադադար և պայմանավորվածություն է ձեռք բերվում դեկտեմբերի 14-ին Լոնդոնում սկսել հաշտության բանակցություններ⁹:

Պատմաբան Հրաչիկ Միմոնյանը Հայկական հարցի վերաբացման գլխավոր դրդապատճառ է համարում Վանի շրջակայքում շարունակվող սպանությունների ու ուժգնացող խժոժությունների մասին Կ. Պոլիս հասնող լուրերը¹⁰: Հիմնականում համաձայնելով պատմաբանի տեսակետի հետ, կարծում ենք, որ այն ունի որոշակի ճշգրտման և աղբյուրագիտական հարստացման կարիք:

Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդը հետևում էր միջազգային գործընթացներին և անհապաղ քայլեր է ձեռնարկում Լոնդոնի միջազգային կոնֆերանսում Հայկական հարցը վերաբացելու համար: Կաթողիկոսը կարևորում էր Կ. Պոլսից եկած նամակները, քանի որ այնտեղ էին գտնվում եվրոպական այն պետությունների դեսպանատները, որոնք դերակատարություն էին ստանձնել հայկական բարենորոգումների գործում: Պետք է նշել, որ կաթողիկոսը վստահում և բականին մեծ տեղ էր տալիս Հովհաննես Արշարունու կարծիքին և գաղափարներին: Կաթողիկոսական դիվանում պահպանվել է Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին ուղարկված Գևորգ 5-րդի նամակի սևագիրը, որտեղ վերջինս չի թաքցնում, որ Կ. Պոլսի պատրիարք Հովհաննես Արշարունու հաշվետվության հիման վրա նա կրկին վերաբացում է Արևմտյան Հայաստանում (նամակում կաթողիկոսը գրում է Թուրքիա) հայերի ճակատագրի հարցը¹¹:

Հայկական հարցի վերաբացման շրջանում Գևորգ 5-րդի համար կարևորվում է երկու խնդրի՝ միավորել հայկական գաղութների ներուժը և կողմնորոշվել արտաքին քաղաքական բավականին բարդ իրավիճակում: Արտաքին քաղաքական իրավիճակը փոփոխվում և օրեցօր ավելի լարված էր դառնում: Կաթողիկոսա-

⁹ Միմոնյան Զ., Ազատագրական պայքարի ուղիներում, հ. 5, Երևան, 2013, էջ 4:

¹⁰ Լույն տեղում, էջ 4:

¹¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 26, թ. 1:

կան դիվանում կարևոր փաստաթղթեր են առկա Լոնդոնի խաղաղության կոնֆերանսին ներկայանալու նախապատրաստական աշխատանքների մասին:

Այս ժամանակաշրջանում դիվանագիտական կողմնորոշման հարցը լրջագույնս հետաքրքրում էր հայության բոլոր շերտերին: Աշխարհի գրեթե բոլոր հայաշատ վայրերից կաթողիկոսարան էին ուղղվում անհատական և հավաքական խնդրագրեր, որոնցով Ամենայն հայոց կաթողիկոսին խնդրում էին դիմել Ռուսաց Նիկոլայ Երկրորդ կայսրին՝ Արևմտահայաստանի դատին պաշտպան լինելու համար:

1912 թ. սեպտեմբերի 25-ին Երևանի ազգային, բարեգործական-կրթական հաստատությունների ներկայացուցիչները նամակ են ուղղում Գևորգ 5-րդ կաթողիկոսին, որտեղ առաջարկվում է դիմել Ռուսաց կայսրին, որպեսզի նա կարողանա պաշտպանել Արևմտյան Հայաստանի ժողովրդին կոտորածներից. «Ժողովը հույս ունի, որ թագաւոր կայսրը, որպէս արևելքի քրիստոնէայ ժողովրդի պաշտպան և հովանավորող, անուշադիր չի թողնիլ Ձերդ Վեհափառության խնդիրը»¹²:

Նմանատիպ մի ժողով էլ տեղի է ունենում Թիֆլիսում, որի մասնակիցները «թախանձագին և ամենախոնարհ խնդրով դիմում են Ձերդ վեհափառութեանը որպէս Ռուսաստանի, Թուրքիայի ու համայն հայութեան հոգևոր պետի, միջնորդել թագաւոր կայսեր առաջ թուրքահայերին պաշտպանելու յետագայ տանջանքներից և անիրաւութիւններից»¹³: 1912 թ. նոյեմբերին հայ մտավորականության ներկայացուցիչներ Հովհաննես Թումանյանի, Ալեքսանդր Խատիսյանի, Նիկոլ Աղբալյան և այլոց մասնակցությամբ Թիֆլիսում հրավիրվում է ժողով, որի մասնակիցները որոշում են «պաշտոն տալով նրանց, հրաւիրել մի համագումար՝ ազգային ժողով»:

¹² Նույն տեղում, գ. 25, թ. 1:

¹³ Նույն տեղում, գ. 28, թ. 3:

որը կրնորի մի գործադիր մարմին՝ Հայոց հարցն առաջ տանելու համար¹⁴:

Այսպիսի վավերագրերը բազմաթիվ են Կաթողիկոսական դիվանում և գրեթե միաբովանդակ: Ռուսական կողմնորոշման հիմնական կոմանն այն էր, որ մտավորականությունը հույս ուներ Ռուսաստանից ստանալ այնպիսի օգնություն ինչպիսին ստացան բալկանյան ազգերը:

Այսպիսով, Վեհափառի առջև ծառայել էր արտաքին քաղաքականության մեջ կողմնորոշման խնդիր: 1912 թ. նոյեմբերին, երբ Հայկական հարցը կրկին վերաբացման շեմին էր, Կ. Պոլսում և Թիֆլիսում սկսվում է տեսակցությունների մեկամյա շարք ուս և եվրոպական երկրների դիվանագիտական ծառայությունների պատասխանատուների միջև: Հովհաննես Արշարունու նամակներում առավելապես, արտահայտված են դիվանագիտական գործընթացների բոլոր կարևորագույն շերտերը: Վավերագրերում բոլոր հանդիպումները նկարագրված են ամենայն մանրամասնությամբ՝ հարց ու պատասխանի, սղագրությունների ձևով:

Նամակների մի մասը պահվում է Հայաստանի ազգային արխիվում, իսկ մյուս մասը հրատարակվել է «Էջմիածին» ամսագրի համարներում¹⁵: Նամակներում անդրադարձ էր կատարվում ռուսական դիվանագիտության մոտեցումներին հայկական բարենորոգումներին, նաև դաշնակցությանը գործունեությանը:

Դեկտեմբերի 29-ին ռուսական դեսպանատան թարգման Անդրեյ Մանդելշտամի հետ ունեցած հանդիպումից հետո Հ. Արշարունին կաթողիկոսին հեռագրում է, թե Ա. Մանդելշտամի տե-

¹⁴ Նույն տեղում, էջ 12:

¹⁵ Տե՛ս «Էջմիածին», 1965, փետրվար-ապրիլ:

սակետը Հայ դատին աննպաստ է, նա դեմ է Լոնդոնի դեսպանախորհրդին հայ ներկայացուցչի մասնակցությանը¹⁶:

Նախ պետք է նշել, որ այլ աղբյուրների համադրությունը նույնպես ցույց է տալիս, որ ռուսական կառավարությունը տարբեր պաշտոնյաների մակարդակով դեմ է արտահայտվել, որպեսզի Լոնդոնի խաղաղության կոնֆերանսին մասնակցի նաև հայ ներկայացուցիչ: Պետք է նշել, որ ինչպես Էրևաց վերևում, Մ. Գիրսը լիովին տիրապետում էր ինչպես արտաքին քաղաքական իրադարձությունների ընթացքին այնպես էլ հայկական շրջանակներում տեղի ունեցող իրադարձություններին: Մ. Սազոնովին ուղղած նույն նամակում նա գրում է, որ հայկական շրջանակներում արդեն պատրաստվում է մի ուղերձ, որը պետք է ներկայացվի մեծ պետություններին առաջիկա հաշտության կոնֆերանսի ժամանակ: Այնուհետև դեսպանը մտավախություն է հայտնում, որ «նախաձեռնությունը դուրս կգա մեր ձեռքից»¹⁷:

Հ. Արշարունուց երեք օր առաջ՝ դեկտեմբերի 26-ին, Թիֆլիսում տեղի է ունենում հանդիպում Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի հետ՝ մասնակցությամբ Մեսրոպ Եպիսկոպոսի, Բագրատ վարդապետի, Ալեքսանդր Խատիսյանի և Սամսոն Հարությունյանի: Այստեղ Վորոնցով-Դաշկովը նույնպես հորդորում էր առայժմ չդիմել եվրոպական այլ երկրների միջամտությանը¹⁸:

Վերոնշյալ նամակում Հ. Արշարունին կաթողիկոսի ուշադրությունն էր հրավիրում այն հանգամանքի վրա, որ Պողոս Նուբար փառան, առանց կաթողիկոսի պաշտոնական հրահանգը ստանալու, սկսել է մասնավոր դիմումներով հանդես գալ և հանդիպումներ ունենալ եվրոպական երկրների պաշտոնյաների

¹⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 28, թ. 144:

¹⁷ Տե՛ս Լեո, նշվ. աշխ., էջ 305:

¹⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 28, թ. 39:

հետ¹⁹: Հովհաննես Արշարունին առաջարկում էր հանդես գալ հայեցակարգային մեկ մոտեցմամբ և կատարվող քայլերի մասին (լինի կաթողիկոսը, Պողոս Նուբար փաշան, թե հենց պատրիարքարանը) նախօրոք տեղյակ պահվի մյուս կողմերին, որպեսզի գործողությունները լինեն համակարգված և ավելի նպատակային:

Ռուսական կողմում, բացի այս մտավախությունից, գոյություն ուներ այլ մտավախություն ևս՝ դա Հայ հեղափոխական դաշնակցության գործունեությունն էր:

ՀՅ Դաշնակցության քննական պատմության հեղինակ Գ. Խուդինյանը նշում է ՀՅԴ գաղափարախոսության ձևավորման երկու հանգրվան, որոնցից երկրորդը 1905-1907 թթ. ռուսական առաջին հեղափոխությունն էր, որով ՀՅԴ գաղափարախոսությունը ձեռք բերեց ամբողջական և ավարտուն տեսք²⁰: Այս ամենը լավ էին հասկանում նաև ժամանակի քաղաքական գործիչները և այս էր պատճառը, որ Գիրսի հետ Պատրիարքարանի ներկայացուցիչների հանդիպման ժամանակ, երբ հայկական կողմը հարց է բարձրացնում ռուսական կառավարության ստանձնելիք դերի մասին, դեսպանը հարցնում է, թե արդյոք այս դիմումն ամբողջ ազգի համար է՝ նկատի ունենալով դաշնակցական կուսակցության «սեպարատիստական» գործողությունները²¹: Չհորանալով Դաշնակցության և ինքնակալության ինքնության արմատական տարբերությունների մեջ՝ կարծում ենք արխիվային վավերագրերով միայն հնարավոր է բացատրել և հասկանալ կողմերից յուրաքանչյուրի գործելաոճը:

¹⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 28, թ. 144:

²⁰ Տե՛ս Խուդինյան Գ., ՀՅ Դաշնակցության քննական պատմություն, Երևան, 2006, էջ 352:

²¹ Տե՛ս Дякин В. С., Национальный вопрос во внутренней политике Царизма, СПб, 1903, с. 693:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը, գալիս ենք այն եզրակացությանը, որ Կաթողիկոսական դիվանի արխիվային հավաքածուն կարևորագույն սկզբնաղբյուր է Հայկական բարենորոգումների հիմնախնդրի ուսումնասիրության համար: Առանձնակի ուշադրության են արժանի Հովհաննես Արշարունու նամակները Գևորգ 5-րդ կաթողիկոսին, որտեղ պետք է որոնել ոչ միայն Հայկական հարցի մասին հիշատակություններ, այլև հենց Հ. Արշարունու գործունեությանն առնչվող հարցերի լուսաբանումները: Հ. Արշարունու նամակները կաթողիկոսարան դադար չեն առել մինչև նրա պատրիարքության վերջը: Նամակները պարունակում են չափազանց հետաքրքիր փաստեր Օսմանյան կայսրության քաղաքականության, որուս դիվանագետների հետ հանդիպումների, Ապահովության հանձնաժողովի մասին: Նամակները հնարավորություն են տալիս լրացնելու Հայկական բարենորոգումների ընթացքի ժամանակագրությունը, խորանալ մանրամասն ընթացքի մեջ: Պետք է նշել, որ իրատեսական շնչով գրված: Նամակները հիմնականում քաղաքական բնույթի են, արձանագրում են առօրեական խնդիրները և մտահոգությունները, ինչպես նաև դեպքերի մանրամասն ընթացքը, որոնց անմիջական մասնակիցն էր պատրիարքը և այդ պատճառով էլ նամակներում առկա են նրա անհատական գնահատումները և վերլուծությունները: Նամակներում Հ. Արշարունին համարձակ էր, անաչառ, չէր վախենում բացահայտ քննադատությունից, և այս նամակների վերլուծությունը լիովին թույլ է տալիս պատկերացում կազմել ոչ միայն հայկական բարենորոգումների ընթացքի մանրամասների, այլև հասարակական տրամադրությունների, Հայոց ազգային ժողովում սիրող մթնոլորտի մասին: Հասկանալի է, որ Հովհաննես Արշարունու հայտնած կարծիքները, ընթացող գործընթացներին, երևույթներին ու մտավորական գործիչներին տրված գնահատականները

միանշանակ չեն: Հայտնի է, որ նա այդքան էլ համակրանք չի ունեցել կուսակցությունների և հատկապես Դաշնակցության հանդեպ մեղադրելով վերջիններիս Իթթիհատի հետ համագործակցության մեջ: Որոշ դեպքերում Հ. Աշարունու որակումները բավականին ծայրահեղական բնույթ ունեին: Անկախ դրանից՝ աներկբա է, որ Հ. Արշարունու նամակներն արժեքավոր վավերագրեր են, քանի որ Հայկական բարենորոգումների տարեգրությունը հարստացնում են շահեկան տեղեկություններով և լուսաբանում են մի շարք կնճռոտ խնդիրներ:

NAREK HAKOBYAN

THE IMPORTANCE OF HOVHANNES ARSHARUNI'S
LETTRES AS SOURCES FOR STUDYING THE PROBLEM OF
REFORMS IN 1912

SUMMARY

The Armenian patriarch of Constantinople Hovhannes Arsharuni was the pioneer and the immediate participant in the reopening of the Armenian Question. During his patriarchy he wrote letters to the Catholicos of All Armenians Gevorg V and gave him detailed information about the events happening in Constantinople and Western Armenia. In his letters Arsharuni was unbiased and did not fear obvious criticism. The analysis of these letters allows us to imagine not only the details of the process of Armenian reforms but also helps us to understand public moods, patriarchy-party relationships as well as the atmosphere dominating in the Armenian Parliament. The value of Arsharuni's letters' is undeniable because they enrich Armenian Reforms Chronicles with beneficial information and illustrate series of vague problems.

ИСТОЧНИКОВЕДЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ ПИСЕМ ОВАНЕСА
АРШАРУНИ ДЛЯ ИЗУЧЕНИЯ ВОПРОСА
РЕФОРМ 1912 ГОДА

РЕЗЮМЕ

Патриарх Константинопольский Ованес Аршаруни стоял у истоков процесса возобновления Армянского вопроса. В годы своего патриаршества он вел переписку с Католикосом Всех Армян Геворгом V и сообщал ему о событиях, происходящих в Константинополе и Западной Армении. В своих письмах Аршаруни был смел, справедлив, не боялся откровенной критики. Анализ этих писем позволяет нам составить детальное представление не только о ходе армянских реформ, но и об общественных настроениях, отношениях патриаршества и партии, а также об атмосфере, царящей в Армянском национальном совете. Письма Аршаруни являются ценными документальными свидетельствами, так как обогащают хронологию армянских реформ выгодной информацией и проливают свет на ряд неоднозначных вопросов.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ
ԱՐԾԱՐԾՈՒՄԸ ԿԱԶԻՐԵԻ «ԱՐԵՎ» ԹԵՐԹԻ
ԱՐԱԲԵՐԵՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ ԷԶԵՐՈՒՄ

Հայերը մեծ դեր են խաղացել արաբական (այդ թվում՝ եգիպտական) մամուլի զարգացման գործում: Եգիպտական մամուլի շարքում կարևոր տեղ է զբաղեցնում հայկական «Արև» օրաթերթի արաբերեն հավելվածը, որը ամսագրի տեսքով լույս է տեսել 1997 թ. մինչև 2009 թ. կեսերը: Ամսագիրն ակներև ճանաչողական բնույթ ունի Եգիպտոսի պատմության մեջ երկրի պետական կառավարման տարբեր ոլորտներում խոսուն դերակատարում ունեցած հայ գործիչների դերն արժևորելու տեսանկյունից: Ինչպես նաև արաբ հասարակության կողմից հայերին ճանաչելու նպատակ է հետապնդում: Ամսագրի էջերում մեծ տեղ են գրավում հայ գրականության, մշակույթի, թատրոնի, կինոյի, արվեստի, Հայաստանի պատմության մասին հրապարակումները: Բացի այդ՝ ամսագիրն արաբախոս ընթերցողին ներկայացնում է Հայոց ցեղասպանության հիմնահարցը, նրա միջազգային ճանաչման ուղղությամբ տարվող աշխատանքները, մերկացնում Թուրքիայի Ժխտողական քաղաքականությունը:

«Արև»-ի արաբերեն հավելվածը մեծ տեղ է հատկացրել Հայոց ցեղասպանության տարբեր փուլերի լուսաբանմանը: «Հայերն ու քրդերը» հոդվածում ամսագիրը ներկայացնում է արտասահմանյան մի ճանապարհորդի ուղեգրությունը, ով 1890 թ. Ուրմիայից ճանապարհորդել է դեպի Վան: Ճանապարհորդության ընթացքում վերջինս ականատես է եղել բազմաթիվ դեպքերի, երբ քրդերը զինված խմբերով հարձակվել և կողուպտել ու թալանել են բազմաթիվ հայկական գյուղեր, իսկ թուրք ոստիկանները ոչինչ

չեն ձեռնարկել: Մասնավորապես, 1890 թ. հուլիսի 17-ին ականատես է եղել մի դեպքի, երբ Մշո դաշտի գյուղերից մեկում մի խումբ բուրդ ելուզակներ փորձել են հայ աղջկա փախցնել, տեղի է ունեցել ծեծկոտուք հայերի ու քրդերի միջև, որի արդյունքում երկու կողմից էլ զոհեր են լինում: Այդ դեպքից հետո տեղի ունեցած դատավարությունում մեղավոր է ճանաչվում հայ հարսնացուի բարեկամներից մեկը, ով դատապարտվում է 15 տարվա ազատազրկման: Ճանապարհորդը նշում է, որ ուղևորության ընթացքում իր համար պարզ դարձավ, որ ամենուրեք անպատժելիության մթնոլորտ էր սիրում, ու թուրքերն օգտագործում էին քրդերին հայկական գյուղերն ավերելու ու թալանելու գործում¹:

«Իսլամը և հայերը» խորագրով հոդվածում Կիլիկիայի 1909 թ. հայկական կոտորածների պատճառները լուսաբանելիս Մուհամմադ Ռիֆաթ ալ Իմամը նշում է, որ երիտթուրքերի իշխանության գալուց հետո որոշ ժամանակ անց Կիլիկիայում ապրող մուսուլմանների շրջանում լուրեր տարածվեցին, թե իբր հայերը պասուրաստվում են հեղաշրջում կատարել: Դրանից անմիջապես հետո սկսվեց հայերի նկատմամբ բռնությունների ու կոտորածների շղթան: Հոդվածագիրը նշում է, որ որոշ մարդիկ պնդում էին, որ Կիլիկիայի 1909 թ. կոտորածների հետևում կանգնած էին երիտթուրքերը, ոմանք էլ, թե նախորդ վարչակարգի կողմնակիցներն են աղետը սանձազերծել, իսկ մյուսները, թե կոտորածների պատճառը կրոնական գործոնն էր՝ մուսուլմանների ու քրիստոնյաների միջև եղած թշնամությունը²: Այս առնչությամբ նշենք, որ դեռևս 1909 թ. մայիսին Ալ Ազհարի շերիֆը հրապարակեց ֆեթվա (ուղերձ), ուր նշում էր, որ իսլամն անմեղ է քրիստոնյաների արյունահեղության մեջ³: Կիլիկիայի հայերի կոտորածն իր հիմքում

¹ «Արև», Կահիրե, 2007, № 112, էջ 15:

² «Արև», 2006, № 100, էջ 13:

³ «Ալ Աֆրար», Կահիրե, 1909, № 460:

ուներ քաղաքական պատճառ՝ հայերին բնաջնջելը, իսկ կոտորածների սանձազերծման հետևում կանգնած էին և՛ գործող, և՛ նախորդ վարչակարգի ներկայացուցիչները: 1909 թ. Կիլիկիայի հայկական կոտորածի վերաբերյալ մեկ այլ հոդվածի հավելվածը որոշ տեղեկություններ է հաղորդում հայերի կրած նյութական կորուստների մասին: Հոդվածագիրն արաբախոս ընթերցողին մանրամասն ներկայացնում է հայկական կոտորածների տնտեսական, քաղաքական պատճառները, հայերի կրած նյութական կորուստները՝ 32 եկեղեցի, 19 դպրոց, 2923 տուն, 18 հյուրանոց⁴: Մարդկային կորուստների մասին խոսելիս հոդվածագիրը հաղորդում է, որ կոտորածի արդյունքում 30000 հայ զոհվեց, 7883 երեխա դարձավ որբ, 4073 կին՝ այրի, 30000-ից ավելի մարդ էլ դարձավ անօթևան⁵:

«Արև»-ի արաբերեն հավելվածը 1915 թ. Հայոց Եղեռնի մասին խոսելիս արաբախոս ընթերցողին տեղեկացնում է, որ թուրքական իշխանությունների կողմից նախօրոք կազմված ծրագրով 1915-1923 թթ. սպանվեց 1,5 միլիոն հայ, որից հետո արդեն 1916 թ. Արևմտյան Հայաստանը լիովին հայաթափվեց, տասնյակ հազարավոր հայեր զաղթեցին տարբեր երկրներ՝ այդ թվում արաբական երկրներ⁶: Հայոց Եղեռնի պատճառներին անդրադառնալիս եզիպտահայ մտավորական, ազգային-հասարակական գործիչ և հայ մամուլի երախտավոր Պերճ Թերզյանը, հակադարձելով հոդվածագիր Աբդ ալ Ռեհաբ Բաքիրի այն դրույթին, թե 1915 թ. հայերի զանգվածային կոտորածն ու բռնագաղթը սկսվել է այն բանից հետո, երբ Վանի նահանգում հայերն իբր կոտորել են մեծ թվով թուրքերի ու քրդերի⁷, իրավացիորեն նշում է, որ հայկական

⁴ «Արև», 2009, № 136, էջ 3:

⁵ Նույն տեղում, էջ 3:

⁶ «Արև», 2001, № 40, էջ 3-5:

⁷ «Արև», 1999, № 16, էջ 2-3:

զանգվածային կոտորածները տեղի էին ունենում 1915 թ. հունվարից, իսկ փետրվարից սկսվեց օսմանյան բանակում ծառայող հայ զինվորների զինաթափումն ու սպանողը⁸: 1915 թ. գարնանը Վանում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ մեկ ուրիշ հոդվածում «Արև»-ի արաբերեն հավելվածը մի քանի դիտարկումներ է անում «Եգիպտոսն այսօր» թերթի 2006 թ. ապրիլի 20-ին համարում տեղ գտած հետևյալ մտքի առնչությամբ. «1915 թ. հայերի զինված ավազակախմբերն Արևելյան Անատոլիայի Վան քաղաքում դաժանորեն կոտորեցին մեծ թվով մուսուլմանների»⁹: Հոդվածագիրն արաբախոս ընթերցողին տեղեկացնում է, որ երբ Վանի Ջնադ փաշան հրամայեց զինակոչել 3000 հայերի օսմանյան բանակ, հայերը հրաժարվեցին հրամանը կատարել: Դրանից հետո թուրքերը կոտորեցին ու թալանեցին 80 հայկական գյուղեր, որից հետո հայերը դիմեցին ինքնապաշտպանության¹⁰: Հեղինակը նշում է, որ «հայերի զինված ավազակախմբերը» չեն կոտորել մուսուլմաններին, այլ ընդհակառակը՝ հայերը ստիպված դիմել են ինքնապաշտպանության՝ իրենց տները, ընտանիքներին թուրք հրոսակներից պաշտպանելու համար¹¹:

«Հայերը, Արևմուտքն ու իսլամը» հոդվածում ամսագրի գլխավոր խմբագիր Մուհամմադ Ռիֆաթ ալ Իմամը հաղորդում է, որ Հայկական հարցը, հայկական կոտորածներն Արևմուտքի և օսմանյան իշխանությունների կողմից հիմնականում ներկայացվել են որպես կրոնական՝ մուսուլման-քրիստոնյա բնույթի հիմնախնդիր: Օսմանյան կայսրությունը կրոնական բնույթ տալով Հայկական հարցին՝ լուծում էր իր առջև դրված Օսմանյան

⁸ Նույն տեղում, էջ 2-4:

⁹ «Եգիպտոսն այսօր», Կահիրե, 20 ապրիլի, 2006 թ.:

¹⁰ «Արև», 2006, № 101, էջ 16:

¹¹ Նույն տեղում:

կայսրությունը հայկական տարրից ազատելու քաղաքական խնդիրը¹²:

1915 թ. Հայոց Եղեռնից հետո հազարավոր հայեր սուլտանական գտան արաբական տարբեր երկրներում՝ մասնավորապես Սիրիայում ու Լիբանանում: Հայոց ցեղասպանության ու դրա հետևանքով արաբական երկրներում հաստատված հայ գաղթականների դրության թեման ևս արտացոլվել է արաբ հեղինակների աշխատանքներում: Մասնավորապես, 61-րդ համարում ամսագիրը ներկայացնում է արաբ նշանավոր գրողներ Իբրահիմ Խալիզի և Ռաշիդ Իսլասի պատմվածքները, որոնց գլխավոր հերոսները Սիրիայի տարբեր քաղաքներում հաստատված հայ գաղթականներն են: Նշված հեղինակներն իրենց պատմվածքներում լուսաբանում են Սիրիայում հաստատված հայ գաղթականների դրությունը, նրանց հարմարվելը երկրի բարբերին, արաբների հայանպաստ դիրքորոշումը, եղբայրական վերաբերմունքը հայերի նկատմամբ¹³: Բացի այդ՝ ամսագիրն արաբախոս ընթերցողին հաղորդում է, որ երբ 1865 թ. սկսվեց Բեռլին-Բաղդադ երկաթգծի շինարարությունը, սուլթանը երկաթգծի Օսմանյան կայսրության հատվածում ակտիվորեն ներգրավեց հայերին՝ վերջիններիս աշխատեցնելով վտանգավոր վայրերում, որի ընթացքում զոհվեցին հազարավոր հայեր¹⁴: Հոդվածագիրն ավելացնում է, որ երկաթգծի կառուցման գործում հայերը մեծ ներդրում ունեցան, քանի որ նրանք տիրապետում էին թուրքերենին ու ֆրանսերենին և ազատորեն հաղորդակցվում էին երկաթգծի շինարարությունն իրականացնող ընկերությունների ներկայացուցիչների հետ: Հոդվածագիրը նշում է, որ Հայոց ցեղասպանության տարիներին երկաթգծի վրա աշխատող հայերն իրենց ընտանիք-

¹² «Արև», 2009, № 136, էջ 30:

¹³ «Արև», 2003, № 61, էջ 2-8:

¹⁴ Նույն տեղում, № 63, էջ 11-12:

ներով հանդերձ գերծ մնացին կոտորածներից, ու նրանց մի մասը շինարարության ընթացքում, մի մասն էլ երկաթգծի շինարարության ավարտից հետո այլևս չվերադարձան հայրենիք ու ապաստանեցին Սիրիայի ու Իրաքի տարածքում¹⁵:

Հայ գաղթականների վերաբերյալ մեկ այլ հոդվածում ամսագիրը ներկայացնում է 1918-1921 թթ. Սիրիայի թագավորության պաշտոնաթերթ «Ասիմա» («մայրաքաղաք») թերթի հայերին վերաբերող հոդվածները, որոնցում թերթը տեղեկացնում էր Սիրիայում հաստատված հայ տարագիրների մեծ մասին կացարան հատկացնելու մասին, ինչպես նաև անդրադառնում Սիրիայի թագավոր Ֆեյսալի՝ եղբորը՝ Ջեյդ էմիրին հղած նամակին, որում կոչ էր անում շուտափույթ հարթել Հալեպում տեղի ունեցած միջադեպը, որի ընթացքում տեղի ունեցած բախումների հետևանքով սպանվել էր 20 հայ և 1 մուսուլման¹⁶: «Հայ փախստականների ճամբարը Պորտ Սայիդում» հոդվածում էլ, անդրադառնալով բրիտանական ու ֆրանսիական իշխանությունների կողմից Սուետիայի հայ տարագիրներին ցուցաբերված օգնությանը՝ հոդվածագիրը նշում է, որ դա արվում էր առաջին հերթին քաղաքական նպատակներով, բանի որ թուրքերը հայերի թշնամիներն էին, ուստի Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան ցանկանում էին հայերին օգտագործել Օսմանյան կայսրության դեմ¹⁷: Հայ տարագիրների մասին մեկ ուրիշ հոդվածում էլ ամսագիրն արաբախոս ընթերցողին տեղեկություններ է հաղորդում Դեր Ջոր քաղաքի մասին՝ ընդգծելով, որ ցանկացած հայ Դեր Ջոր քաղաքն ընդունում է որպես հարազատ քաղաք, որի

¹⁵ Նույն տեղում, էջ 13:

¹⁶ Այդ բախումները սկսվեցին այն բանից հետո, երբ Հալեպում մի հայ գողացավ մուսուլմանի անասունը, ինչն առաջացրեց մուսուլման ծայրահեղականների զայրույթը: Իր նամակում Ֆեյսալ թագավորը նշում էր, որ հավանաբար այդ միջադեպի հետևում կանգնած էին Սիրիայի անկախության դեմ հանդես եկող ուժերը («Արև», 2003, № 64), էջ 1-4:

¹⁷ «Արև», 2008, № 124, էջ 4:

բնակչությունը 1915-1916 թթ. օգնության ձեռք մեկնեց փախստական հայերին ու ապաստան տվեց¹⁸:

«Արև»-ի արաբերեն հավելվածն իր էջերում մերկացնում է Հայոց ցեղասպանության ճանաչման գործում Թուրքիայի ժխտողական քաղաքականությունը, որը փորձում է կեղծել իրական փաստերը և վերաշարադրել 20-րդ դարի սկզբի Թուրքիայի պատմությունը: Թուրքիայի ժխտողական քաղաքականության մերկացմանն է ուղղված Թուրքիայի Մարդին նահանգում 2006 թ. հոկտեմբերի 17-ին տեղի ունեցած մի դեպքի լուսաբանումը: Հենվելով քրդական թուրքալեզու «Ալքուրդ աուզգուր ջունդում» թերթի հաղորդած տվյալների վրա՝ հողվախագիրը նշում է, որ Ջբի-րաբի Բաբա գյուղի բնակիչները գերեզմանափոս փորելիս հանդիպել են եղբայրական գերեզմանի: Գյուղացիները համոզված են եղել, որ դա 1915 թ. սպանված հայ գյուղացիների եղբայրական գերեզման է: Այդ դեպքից անմիջապես հետո վերոնշյալ գյուղ են ժամանել թուրքական անվտանգության ուժերն ու արգելել գյուղացիներին այդ դեպքի մասին խոսել¹⁹: «Չախտղված փորձ» հողվածում էլ, խոսելով հայ թուրքական հարաբերությունների մասին, հողվածագիրը ներկայացնում է 2005 թ. ապրիլի 10-ին Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի, 2007 թ. մարտի 28-ին Թուրքիայի արտգործնախարար Աբդուլա Գյուլի՝ հայկական իշխանություններին ուղղած հայտարարությունները, որոնցում հայկական կողմին կոչ էին անում համատեղ պատմաբանների հանձնաժողով ստեղծել 1915 թ. Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած իրադարձություններն ուսումնասիրելու համար: Հողվածագիրն իրավացիորեն նշում է, թե այս քայլով կարձես Թուրքիայի՝ Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ վարած քաղաքականության մեջ առերևույթ փոփոխություն է նկատվում, սա-

¹⁸ «Արև», 2000, № 28, էջ 2-3:

¹⁹ «Արև», 2006, № 108, էջ 15:

կայն իրականում դա ժխտողական քաղաքականության մի նոր ձև է²⁰:

1990-ականներին հայկական սփյուռքի ակտիվ ջանքերով Հայոց ցեղասպանության ճանաչման հարցն մտցվեց եվրոպական մի շարք երկրների ու ԱՄՆ-ի քաղաքական օրակարգի մեջ, ինչը հանգեցրեց Թուրքիայի, նշված երկրների միջև հարաբերությունների վատթարացմանը: Վերոնշյալ երկրները սկսեցին Հայոց ցեղասպանության ճանաչման հարցն օգտագործել որպես լծակ Թուրքիայի վրա ճնշում գործադրելու ու քաղաքական ու տնտեսական զիջումներ կորզելու համար: «Արև»-ի հավելվածը հանգամանորեն անդրադառնում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին: Պարբերականի խմբագիրը նշում է, որ տրամաբանորեն Իսրայելը պետք է ճանաչեր Հայոց ցեղասպանությունը, սակայն Թուրքիայի հետ սերտ հարաբերություններ ունենալու պատճառով մինչ օրս չի ճանաչել: Եվ դա այն դեպքում, երբ տարբեր սոցիալաբանների համաձայն, իսրայելցիների 70-75 %-ը Հայոց ցեղասպանության ճանաչման օգտին է հանդես գալիս²¹: «Ավելին, Իսրայելը զենք է վաճառում Ադրբեջանին, և եթե վերսկսվի հայ-ադրբեջանական պատերազմը, փաստորեն Իսրայելում արտադրված զենքի օգնությամբ հայեր են գոհվելու»²², նշում է հոդվածագիրը: ԱՄՆ-ի հետ կապված հոդվածագիրը նշում է, որ երբ 2000 թ. Բիլ Քլինթոնը Կոնգրեսին առաջարկեց քննարկել Հայոց ցեղասպանության խնդիրը, դրան անմիջապես հետևեց հարաբերությունների վատթարացումը Թուրքիայի հետ²³, որից հետո 2000 թ. հոկտեմբերին ԱՄՆ կոնգրեսին ներկայացված Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձևի նա-

²⁰ «Արև», 2007, № 113, էջ 2:

²¹ «Արև», 2008, № 126, էջ 22:

²² «Արև», 2006, № 106, էջ 14:

²³ «Արև», 2001, № 38, էջ 8-9:

խազժի քվեարկությունը թուրքական իշխանությունների ճնշմամբ ու Միացյալ Նահանգների հրեական լոբիի գործադրած ջանքերի սլատճառով տապալվեց²⁴: Մեկ այլ համարում, անդրադառնալով 1998 թ. մայիսի 29-ին Ֆրանսիայի խորհրդարանի կողմից ընդունած բանաձևի կետերին²⁵ հողվածագիրն ընթերցողին տեղեկացնում է, որ բանաձևի ընդունումից հետո Ֆրանսիայի ու Թուրքիայի միջև հարաբերությունները ևս վատթարացան, որից հետո 1999 թ. մարտին ու 2000 թ. փետրվարին գումարած երկու նիստերում Ֆրանսիայի սենատը չհաստատեց այն՝ նշելով, որ այդ խոչընդոտ կհանդիսանա Անդրկովկասի երկրների հակամարտությունների լուծման համար: «Արև»-ի արաբերեն հավելվածը նշում է, որ Ֆրանսիայի սենատի այս որոշումը թուրքական իշխանությունների ձեռնարկած ճնշումների արդյունք է²⁶:

Ամսագիրը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար կարևորում է ցեղասպանության վերաբերյալ կրթական ծրագրերի իրականացումը տարբեր երկրներում՝ օրինակ բերելով Հոլոքոստի վերաբերյալ Իսրայելի իրականացրած կրթական ու բազմաթիվ այլ ծրագրերն աշխարհի մի շարք երկրներում: Հողվածագիրը նշում է, որ մասնավորապես ԱՄՆ-ի դպրոցական ծրագրերում գրեթե չի խոսվում Հայոց ցեղասպանության վերաբերյալ, մինչդեռ Հոլոքոստի մասին նյութերը մեծ տեղ են զբաղում²⁷:

«Արև»-ի արաբերեն հավելվածն անդրադարձել է նաև 1915-1916 թթ. Հայոց ցեղասպանության վերաբերյալ գերմանական որոշ փաստաթղթերի լուսաբանմանը: Մասնավորապես, 131-րդ համարում ներկայացնում է էրզրումում գտնվող մի գերմանացու

²⁴ «Արև», 2000, № 36, էջ 1-2:

²⁵ 1998 թ. մայիսի 29-ին Ֆրանսիայի խորհրդարանն ընդունեց բանաձև, որով ճանաչում ու դատապարտում էր Հայոց ցեղասպանությունը:

²⁶ «Արև», 2000, № 29, էջ 2:

²⁷ «Արև», 2006, № 100, էջ 11:

հուշեր՝ հայերի տեղահանության ու սպանդի վերաբերյալ²⁸: Գերմանացին նշում է այն վայրագությունները, որոնք թուրքական ոչ կառավարական ուժերը ոստիկանական ուժերի թույլտվությամբ իրականացնում էին հայ կանանց ու երեխաների նկատմամբ: Սույն հոդվածում ներկայացվում է նաև Հալեպում գերմանական կայսրության հյուպատոսի 1916 թ. ապրիլի 27-ի հաղորդագրությունը, որտեղ խոսելով հայերի տեղահանության մասին՝ հաղորդվում է, որ փետրվարի կեսերին Քիլիսայից դեպի Բաբի շրջան տեղահանվել են մեծ թվով հայ երեխաներ ու կանայք, իսկ ապրիլի 16-ին Սիրիայի հյուսիսում գտնվող տեղահանված հայերին տեղափոխել են Դեր Ջոր²⁹: Բացի այդ՝ հյուպատոսը տեղեկացնում է, որ ապրիլի 25-ին 120 հայ տեղահանված ընտանիք Այնթապ է հասել, որտեղից պետք է տեղափոխվեն Դեր Ջոր: Իսկ վերջում հյուպատոսը նշում, որ ապրիլի 6-ին կոտորած է տեղի ունեցել Ռաս էլ Այն քաղաքում, որի ընթացքում սպանվել է 13000 հայ, մեկ ամիս շարունակ քաղաքում գտնվող ճամբարից օրական 300-500 հոգու տեղափախում էին քաղաքից 10 կմ հեռավորության վրա ու սպանում: «Հայոց ցեղասպանությունը գերմանական աղբյուրներում. էրզրումցի ականատեսի վկայությունը» հոդվածում հեղինակը ներկայացնում է էրզրումի մի բնակչի վկայություն, որտեղ վերջինս հաղորդում է, որ երբ էրզրումի շրջակա գյուղերից հայ կանայք, երեխաները, ծերունիները 1915 թ. հուլիսի 28-ին ժամանեցին էրզրում, տեղի վային թույլատրեց վերջիններիս մնալ էրզրումում, սակայն թուրքական 3-րդ բանակի հրամանատար Մահմուդ Քյամիլ փաշան հրամայեց բոլորին արագորեն տեղահանել դեպի Միջագետք: Հոդվածագիրը իր հերթին նշում է, որ

²⁸ «Արև», 2008, № 131, էջ 20:

²⁹ Նույն տեղում, էջ 21:

հայերի բռնի տեղահանությունների իրական նպատակը վերջինների զանգվածային կոտորած կազմակերպելն էր³⁰:

Ամսագիրն անդրադառնում է նաև հայկական կոտորածների վերաբերյալ արաբ տարբեր հեղինակների աշխատությունների, հոդվածների, զեկուցումների լուսաբանմանը՝ ցուցաբերելով քննադատական մոտեցում³¹: Մասնավորապես ի հակադրումն արաբ հեղինակ Անսար Ջունդիի՝ «Սուլթան Աբդուլ Համիդը ու իսլամական խալիֆայությունը» գրքի որոշ դրույթների, որտեղ հեղինակը խոսելով 1894-1896 թթ. հայկական կոտորածների մասին, արդարացնում էր Աբդուլ Համիդին ու մեղավոր ճանաչում հայերին ու վերջիններիս հովանավորող Ռուսաստանին ու Անգլիային, որոնք տեղորի էին ենթարկում Օսմանյան կայսրությունը (մասնավորապես հեղինակն անդրադառնում է հայերի կողմից Կ. Պոլսի Օսմանյան բանկի գրավմանը), Մուհամմադ Ռիֆաթ ալ Իմամը նշում է, որ հայերն Օսմանյան կայսրության գործունյա ազգերից էին ու իրավունք ունեին բարեկեցիկ կյանքով ապրելու: «Ուստի հայերը ստիպված էին դիմել զինված պայքարի տարբեր ձևերի, ու Օսմանյան բանկի գրավումը այդ ձևերից մեկն էր»³², ընդգծում է հոդվածագիրը: Արդարացի համարելով հայերի պահանջը՝ Մուհամմադ Ռիֆաթ ալ Իմամն անդրադառնում է այս դեպքերի նկարագրմանն ու 1895-1896 թթ. հայկական կոտորածներին՝ դրանցում գլխավոր-մեղավոր ճանաչելով Աբդուլ Համիդի բռնատիրական վարչակարգը³³:

Ամսագիրն իր էջերում լուսաբանել է նաև ցեղասպանության ՄԱԿ-ի ընդունած կոնվենցիան, միջազգային իրավունքի տարբեր դրույթները համառոտ ներկայացնել 20-րդ դարում տեղի

³⁰ «Արև», 2007, № 115, էջ 9:

³¹ «Արև», 2001, № 37, էջ 8:

³² Նույն տեղում, էջ 6:

³³ Նույն տեղում, էջ 7:

ունեցած ցեղասպանությունները, ինչպես նաև մերկացրել մեծ տերությունների երկդիմի քաղաքականությունը ցեղասպանության կանխարգելման գործում: Մասնավորապես, 99-րդ համարում ամսագիրը ընթերցողին տեղեկություններ է հաղորդում մարդկության դեմ իրականացված կոտորածների ու դրանց հետագա կանխարգելման մասին: Սկզբում հեղինակը խոսում է 17-19-րդ դարերում եվրոպական երկրների կողմից Լատինական և Հյուսիսային Ամերիկայում, Ավստրալիայում, Ինդոնեզիայում իրականացված կոտորածների մասին: Այնուհետև ցավով ու փստսանքով նշում է, որ կոտորածների քաղաքականությունը շարունակվեց 20-րդ դարում՝ առաջինն ընդգծելով Հայոց ցեղասպանությունը, որի ընթացքում զոհվեց 1,5 միլիոն հայ³⁴: Հողվածի վերջում խոսվում է Հոլոքոստի ու Հայոց ցեղասպանության համեմատության մասին՝ նշելով, որ Գերմանիան առայսօր նյութական փոխհատուցում է տրամադրում հրեաներին, մինչդեռ Թուրքիան շարունակում է մնալ անպատիժ ու վայելում է ցեղասպանության «բարիքները»: Վերջում հողվածագիրը մարդկային նոր կոտորածներից խուսափելու համար կոչ է անում փոփոխություններ անել միջազգային իրավունքում ու վերափոխել մարդու իրավունքների ինստիտուտը³⁵:

1948 թ. ՄԱԿ-ի ցեղասպանության վերաբերյալ կոնվենցիայի մասին խոսելիս Մուհամմադ Ռիֆաթը նախ հիշատակում է 20-րդ դարում տեղի ունեցած ցեղասպանությունները՝ հայերի 1894-1923 թթ. ցեղասպանությունը, 1933-1945 թթ. Հոլոքոստը, 1975-1979 թթ. Կամբոջայի ցեղասպանությունը, 1994 թ. Ռուանդայի ցեղասպանությունը, ապա նշում, որ միջազգային հասարակությունն առայսօր դասեր չի քաղել դրանցից, և միջազգային անպատժելիության պայմաններում ցեղասպանությունն տեղի է ունենում

³⁴ «Արև», 2006, № 99, էջ 2:

³⁵ Նույն տեղում, էջ 2-5:

նան 21-րդ դարում՝ նկատի ունենալով Իսրայելի՝ պաղեստինցիների նկատմամբ վարած քաղաքականությունը³⁶:

Այսպիսով, «Արև»-ի արաբերեն հավելվածն արաբախոս ընթերցողին ներկայացնում է Հայոց ցեղասպանության հիմնահարցը, վերջինիս միջազգային ճանաչման գործընթացը, ինչպես նաև դատապարտում է Թուրքիայի ժխտողական քաղաքականությունը Հայոց ցեղասպանության ճանաչման գործում: Բացի այդ՝ արաբերեն հավելվածը մերկայացնում է մեծ տերությունների երկդիմի քաղաքականությունը ցեղասպանությունների կանխարգելման գործում:

MYASNIK ESOYAN

THE COVERAGE OF THE ISSUE OF THE ARMENIAN GENOCIDE IN THE ARABIC MONTHLY «AREV»

SUMMARY

The Arabic version of the monthly «Arev» presents to its readers the issue of the Armenian Genocide in the Ottoman Empire, the problem of the international recognition of the indisputable fact of the Genocide, as well as the official Ankaras policy of denial of the given crime. Besides, The monthly dwells upon the topic of the existence of double-standard policy in the process of both the international recognition of the gravest crime of XX century, and the measures aimed at preventing similar crimes in the future.

³⁶ «Արև», 2003, № 62, էջ 2-5:

**ОСВЕЩЕНИЕ ВОПРОСА ГЕНОЦИДА АРМЯН НА
СТРАНИЦАХ АРАБСКОГО ИЗДАНИЯ
ЕЖЕМЕСЯЧНИКА «АРЕВ»**

РЕЗЮМЕ

Арабоязычная версия ежемесячника «АРЕВ» представляет вниманию арабоязычных читателей журнала вопрос Геноцида армян в Османской империи, проблематику международного признания неоспоримого факта геноцида, а также освещается политика отрицания данного преступления со стороны официальной Анкары.

Помимо всего прочего, в ежемесячнике разъясняется тема наличия политики двойных стандартов в процессе, как международного признания страшного преступления XX века, так и круг задач направленных на предотвращение подобных преступлений в будущем.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹՈՒՐՔ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ (1918-1920 ԹԹ.)

1917 թ. Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխական իրադարձությունները և 1918 թ. սկզբին թուրքական զորքերի ձեռնարկած արշավանքը դեպի Արևելյան Հայաստան ու Բաքու շրջադարձային նշանակություն ունեցան համաթրքության ու համիսլամության քարոզչության ծավալման և Հայոց ցեղասպանության քաղաքականությունը շարունակելու գործում. դրան միացավ նաև «Մուսավաթ» կուսակցությունը, որը իշխող պետական կուսակցություն էր նախ Անդրկովկասյան կոմիսարիատում ու Սեյմում (1917 թ. նոյեմբեր – 1918 թ. մայիս, վրաց մենշևիկների ու հայ դաշնակցականների հետ միասին), այնուհետև՝ անկախ Այրբեջանի Հանրապետությունում (1918 թ. մայիս – 1920 թ. ապրիլ):

Համաթրքության ու համիսլամության գաղափարախոսության հիմքում ընկած է լայնածավալ թուրքական պետության ստեղծումը, որի ճանապարհին, սակայն, Հայաստանը դարձել էր պատնեշ, այստեղից էլ թուրք-թաթարական հակահայկական պայքարի սաստկացումը: Այդ կապակցությամբ հետաքրքիր տվյալներ են հայտնում հայկական գինվորական հետախուզության փաստաթղթերը: Որպես օրինակ կարելի է բերել «Ученик» («Աշակերտ») ծածկանունով հետախույզի 1918 թ. մարտի 14-ի գեկույցը: Թուրք-թաթարական այս նոր շարժումը, կարողում ենք գեկույցում, դեկավարում էր «Մուսավաթ» կուսակցությունը, սկզբում գաղտնի, իսկ «այսօր ոչ ոքի համար այլևս թաքուն չէր»: Շուտով շարժման մեջ ներգրավվեցին նաև կալվածատեր-բեգերը, ովքեր վերադառնում էին մոտիկ անցյալում հողային պայքարի ժամանակ կատարած փախուստից: Մյուս կողմից, շարժմանը հարում էին տաճիկ ու գերմանական զործակալները և սկսում

գործել «ձեռք-ձեռքի տված»: Գանձակի շրջանում բացահայտ կերպով գործը ղեկավարում էին հայտնի դեմքեր Խան - Խոյսկին ու Խասմամեդովը՝ հրահանգներ ստանալով Բաքվի կենտրոնից:

Քարոզչությանը համընթաց ստեղծվում էին զինված խմբեր, որոնք զենքը ձեռք էին բերում մասնավորապես Կովկասյան ճակատը լքող ռուսական զորքի (գնացքի շարժակազմերի) ջարդով ու թալանով: Մարտական գործողությունների կենտրոնում կանգնած էր «վայրենի դիվիզիան», որի շտաբը գտնվում էր Թիֆլիսի «Լոնդոն» հյուրանոցում:

Ծավալվում էր մուսուլմանական բնակչության ուղեղների մշակումը, թե ինչու և ինչպես պետք է «ոչնչացնել բոլոր քրիստոնյաներին» և միավորվել բոլոր իսլամ դավանողների հետ:

Անհրաժեշտ ծախսերի համար, ինչպես փողով զենք գնելը, Բաքվում ստեղծվել էր կենտրոնական մուսուլմանական ֆոնդ, որին մասնավորապես գոհ գնացին, ըստ հայ հետախույզի տվյալների. Ավետիսյանների, Արզումանյանի ու Եղիազարյանի բամբակի գործարանները Գանձակում¹:

Կովկասի մուսուլմանների համախմբմանը նպաստում էր թուրքական զորքերի առաջխաղացումը: Այսպես, Ստամբուլի թերթերից մեկը զորքերի հարձակումից մի քանի օր անց՝ 1918 թ. մարտի 6-ին զրել է, թե իրենց միակ ձգտումը եղբայրակից կովկասյան թուրքերի հետ միավորվելն է²: Իսկ թուրքական հրամանատարությունը, քողարկելու համար իր հարձակման բուն նպատակը, նշում էր, թե, իբր, իրենց ձգտումը «հայկական բռնություններից» մուսուլմանական բնակչությանը պաշտպանելն է³: Թուրք

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24 (մաս 2), թ. 265-276:

² Տե՛ս Սարգսյան Ե., Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, Երևան, 1964, էջ 430:

³ Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тбилиси, 1919, док. 32 (թուրքական զորքերի հրամանատար Վեհիբ փաշայի 1918 թ. փետրվարի 9-ի հեռագիրը կովկասյան զորքերի հրամանատար Օղիշելիձեին):

հրամանատարի կեղծարարությունը ժխտվում էր հենց իրենց՝ թուրք այլ հրամանատարների կողմից: Նրանցից մեկը՝ գնդապետ Բերբուրը, գրել է, որ իրենց արշավանքի նպատակն է գրավել Կովկասը, Իրանը և Միջին Ասիան⁴:

Ադրբեջանի անկախությունից հետո՝ 1918 թ. հուլիսին, Ռասուլ-զադեի ղեկավարությամբ պատվիրակություն մեկնեց Ստամբուլ, որը սուլթանին խնդրում էր իր «բարձր հովանավորության» տակ վերցնել Ադրբեջանը և մյուս բոլոր մուսուլմանական ժողովուրդներին, ստեղծել հզոր մահմեդական պետություն՝ մահմեդական աշխարհի կենտրոն թուրքիայի գլխավորությամբ⁵:

Համիսլամական շարժման առաջին հարվածներն իջան Անդրկովկասյան հանրապետության նահանգների, այնուհետև Ադրբեջանի Հանրապետության տարածքների հայ բնակչության վրա՝ նրան պատճառելով վիթխարի մարդկային ու նյութական կորուստներ: Այդ հարցին են նվիրված Հայաստանի ազգային արխիվի հրատարակած փաստաթղթերի երկու ծավալուն ժողովածուները⁶:

Ելիզավետպոլի և Բաքվի նահանգներում հայ բնակչության նկատմամբ «մուսուլմանական շարժման» բռնությունները սկսվել էին դեռևս 1917 թ. աշնանը: 1918 թ. գարնանն այն ընդունել էր ահարկու բնույթ, թալանով, բռնություններով ու սպանություններով հանդերձ, ինչպես նաև կրոնափոխության պահանջով: Միայն Նուխիի ու Արեշի գավառների 52 հայկական գյուղերի մեծ մասում 12 տարեկանից բարձր տղամարդիկ լրիվ կոտորվեցին, հազարավոր մարդիկ դուրս շարտվեցին իրենց բնակավայրերից, որոնց մի մասը գաղթեց դեպի Վրաստան (Ցարսկիյե Կոլոդջի),

⁴ Տե՛ս Սարգսյան Ե., նշվ. աշխ., էջ 343:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 430:

⁶ Տե՛ս Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., Երևան, 2003, 526 էջ, գիրք II, Երևան, 2012, 590 էջ:

մյուսները թափառում էին անտառներում: Նույն գավառի 25 գյուղերում թուրք-թաթարական ջարդերից հատուկենտ ընտանիքներ էին փրկվել⁷:

Ժողովածուի այլ փաստաթղթերի տվյալներով նույն գավառներում փախստական էր դարձել 7105 մարդ, որբացել էր 1150 երեխա, թաթարների կողմից գերվել էր 4790 մարդ⁸ (ովքեր, որպես ձրի աշխատուժ, օգտագործվում էին տնտեսություններում): Կորուստները խիստ մեծ էին Բայբու քաղաքում, երբ 1918 թ. սեպտեմբերի 15-ին այնտեղ ներխուժեցին թուրքական զորքերը, որոնք թաթար բանդաների հետ միասին օրեր շարունակ սպանում ու թալանում էին քաղաքի հատկապես հայ բնակչությանը: Ընդ որում, Բաքվի հայության կոտորածը նախապես ծրագրված էր: Այսպես, թուրքական զորքերի շտաբի սլետ գերմանացի փոխգնդապետ Պարակենը, հենվելով թուրք հրամանատարներից Մյուրսել փաշայի վրա, նշել է, թե դեռևս օգոստոսի 23-ին վերջինս իրեն հայտնել է թաթարների մոտ շրջող լուրերի մասին, որ իրենք կոտորելու են հայերին՝ հենց որ թուրքերը գրավեն Բաքուն⁹:

Մուսավաթական քարոզչությունը Բաքվի 1918 թ. սեպտեմբերյան ջարդերը ներկայացրել է որպես վրիժառություն նույն տարվա մարտյան դեպքերի, երբ Մուսուլմանական ազգային խորհուրդը, մուսավաթական կուսակցության առաջնորդությամբ, քաղաքացիական կռիվ բորբոքեց Բաքվի խորհրդային իշխանության դեմ՝ իշխանությունը գրավելու համար, սակայն պարտվեց, եղան, իհարկե, նաև գոհեր երկու կողմից էլ: Հայոց ազգային խորհրդի տվյալներով խորհրդային կողմը կրել է 300 գոհ (ոռաներ և հայեր), իսկ մուսուլմանական կողմը (ընդ որում, այս

⁷ Տե՛ս նշվ. ժող., գիրք II, էջ 7-8 և 426:

⁸ Տե՛ս նշվ. ժող., գիրք I, էջ 431-432:

⁹ Տե՛ս Խաչատրյան Ա., Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Երևան, 2010, էջ 122:

կողմում կոիվներին մասնակցել են նաև ուսական ուղմական ճամբարներից փախած որոշ թվով թուրք ուղմաղերիներ)՝ 700: Այլ տվյալներով գոհերի թիվը համապատասխանաբար եղել է 1200 և 2000:

Իրականությունն այն է, որ խորհրդային ուժերը ոչ միայն մուսուլմանական խաղաղ բնակչությանը չեն կոտորել, այլ, հակառակը, կաղմակերպել են նրա պաշտպանությունը, որն իրականացրել է կոիվների ժամանակ չեղոք դիրք գրաված Բաքվի Հայոց աղղային խորհուրդը: Հայ բնակչության նախաձեռնությամբ քաղաքի հայաբնակ թաղամասում թաքնվել և պատսպարվել էին 20 հաղար, տարբեր հասարակական շենքերում՝ 12 հաղար և մասնավոր տներում՝ 7000 մուսուլման բնակիչներ:

Երկօրյա քաղաքացիական կոիվներից հետո, երբ կատարյալ հանգստություն էր հաստատվել, այդ բնակիչները հանձնվեցին պարսկական հյուպատոսին, ով «հրապարակորեն և պաշտոնապես հայերին շնորհակալություն հայտնեց մուսուլմաններին փրկելու համար»: Իսկ տեղացի մեծահարուստ Հաջի Ջեյնալ Աբդին Թաղինը, ում դարձյալ փրկել էին հայերը, «շրջաբերական հեռաղրով հրապարակորեն Անդրկովկասի մուսուլմաններին տեղեկացրեց, որ մարտյան դեպքերը հայ-թուրքական ընդհարման աղղային բնույթ չեն կրում»: Քաղաքացիական կովին հայ բնակիչներ չէին մասնակցել: Մասնակցել էին միայն հայ սպաներ ու զինվորներ, ովքեր կուտակվել էին Բաքվում, քանի որ մուսավաթականները գիտակցաբար փակել էին նրանց տուն կամ Կովկասյան ճակատ մեկնելու երկաթուղային ճանապարհը: Բաքվի Հայոց աղղային խորհուրդը Մուսուլմանական աղղային խորհրդին բաղմիցս նախաղղուշացրել էր, որ «այդ զինվորների քաղցած, չարացած զանղվածը մեծ վտանղ է ներկայացնում քաղաքի համար և, հակառակ Հայոց աղղային խորհրդի ցանկության, կարող է առաջացնել անցանկալի էքսցեսներ»: Եվ եթե, շարունակում է վաս-

տաթուղթը, որից օգտվում ենք, Մուսուլմանական ազգային խորհուրդը ժամանակին միջոցներ չձեռնարկեց ճանապարհը բացելու և հայ գինվորներին մեկնելու հնարավորություն տալու համար, ապա դրա համար պատասխանատու և մեղավոր են ոչ հայերը:

Բերված տվյալները քաղված են այն փաստաթղթից, որ Բաքվի Հայոց ազգային խորհուրդը ներկայացրել է Բաքվում ամերիկյան դիվանագիտական առաքելությանը¹⁰ նպատակ ունենալով ժխտել ադրբեջանական կեղծարարությունը: Այն միաժամանակ ցույց է տալիս, թե ինչպիսի գործուն դեր է խաղացել Մուսավաթ կուսակցությունը թիկունքում՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով Թուրքիայի ներխուժման համար:

Ըստ Բաքվի բռնություններն ուսումնասիրած հանձնաժողովի տվյալների, որոնք բերված են Բ. Իշխանյանի «Բաքվի մեծ սարսափները. անկետային ուսումնասիրություն սեպտեմբերյան անցքերի 1918 թ.» գրքում, քաղաքում սպանված ու մահացած հայերի թիվը 28.884 մարդ է կամ Բաքվի հայ բնակչության 1/3-ը, փախստական էր դարձել ավելի քան 31 հազարը, անհայտ կորել էր մոտ 3600-ը, գերվել 3400 և բանտարկվել 253 մարդ¹¹:

Վիթխարի էին պատերազմի հետևանքով Անդրկովկասում հայ բնակչությանը պատճառված նյութական կորուստների չափերը: Դրանք պարզելու ուղղությամբ որոշ աշխատանք է կատարել այն հանձնաժողովը, որը գործել է Թիֆլիսում 1919 թ., բանաստեղծ Հովհաննես Թումանյանի նախագահությամբ: Հանձնաժողովը հատկապես աշխատել է տվյալներ հավաքելու գծով:

«Մենք խորապես համոզված ենք,- հույս է հայտնել Հ. Թումանյանը իր նամակներից մեկում (4 փետրվարի 1920 թ.), որ հայ ժողովրդի կրած վնասները կհատուցվեն այնպես, ինչպես ֆրան-

¹⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 278, թ. 34-36:

¹¹ Տե՛ս փաստ. նշվ. ժող., գիրք I, էջ 431-432:

սիացիների և ուրիշ տուժած ժողովուրդների վնասները»¹²:
Դժբախտաբար այդ հույսերը չարդարացան:

Այդ կորուստները պարզելու գծով հետազոտական աշխատանք է կատարել տնտեսագետ Ք. Վերմիշեր, ով պարզել է հետևյալ իրողությունը: Երևանի, Բաքվի, Ելիզավետպոլի, մասամբ Թիֆլիսի նահանգներում և Կարսի ու Բաթումի մարզերում ավերվել էին այն բոլոր հայկական գյուղերը և գյուղատնտեսական ու առևտրա-արդյունաբերական ձեռնարկությունները, որոնք գտնվել էին թշնամու արշավանքի ճանապարհին կամ թաթարական բնակչության ոտնձգությունների սահմաններում: Ավերվել էր 393 գյուղ և 55.076 տնտեսություն (մեծ մոտավորությամբ): Տուժած մասնավոր (ոչ գյուղատնտեսական) տնտեսությունների թիվը 40 հազար էր: Առաջին աշխարհամարտում հայ ժողովրդի կրած կորուստները Ք. Վերմիշեր հաշվարկել է 8 միլիարդ ռուբլու սահմաններում՝ 1919 թ. գներով¹³: Սա կորուստների ամբողջը չէ, որովհետև դրա մեջ հաշվարկված չեն քեմալական Թուրքիայի կողմից հայ ժողովրդին պատճառած կորուստների 1920-1921 թթ. արդյունքները:

Պատերազմում հայ ժողովրդի նյութական կորուստները պարզելու մի փորձ էլ կատարվել է 1924 թ. Խորհրդային Հայաստանի Ժողկոմխորհի հանձնաժողովի կողմից՝ ԽՍՀՄ կառավարության պահանջով: Հանձնաժողովը հանգել է հետևյալ արդյունքներին:

Պատերազմների հետևանքով (ներառյալ 1920-1921 թթ.) ավերվել էր 389 գյուղ, 62.697 տնտեսություններով: Բոլոր 65.996 ջախջախված գյուղացիական տնտեսությունների նյութական կորուստը հաշվարկվել է մոտ 175 միլիոն ռուբլի, 1914 թ. գներով: Քաղաքային բնակավայրերում նյութական կորուստ էր կրել 40

¹² Տե՛ս փաստ. նշվ. ժող., գիրք I, էջ 437-438:

¹³ Տե՛ս փաստ. նշվ. ժող., գիրք I, էջ 425-429:

հազար տնտեսություն, որով բոլոր տնտեսությունների թիվն անցնում էր 100 հազարից, իսկ 1914-1920 թթ. նրանց կրած նյութական վնասը հանձնաժողովն ընդունել է 175 միլիոն ռուբլու չափով՝ 1914 թ. գներով: Հանձնաժողովը 1920-1921 թթ. նյութական կորուստներ կրած տնտեսությունների թիվը որոշել է 30 հազար, իսկ նյութական կորուստները՝ 60 միլիոն ռուբլի ոսկով, իսկ մարդկային զոհերը՝ 11.836: Քաղաքային բնակչության զոհերի թիվը 30 հազար (միայն Ալեքսանդրապոլում՝ 19.785), անհայտ կորել էր 4565 մարդ, իսկ նյութական վնասը կազմում էր 50 միլիոն ռուբլի: 1920-1921 թթ. Ալեքսանդրապոլի գավառի թուրքական ռազմակալումը հայ ժողովրդին պատճառել էր 110 միլիոն ռուբլու (ոսկով) վնաս:

1924 թ. հանձնաժողովը, նկատի ունենալով նաև մի շարք այլ հանգամանքներ ևս (տվյալների պակասը, Հայաստանում պատսպարված գաղթական բնակչության սուր կարիքները, տուժած տնտեսությունների վերականգնման անհրաժեշտությունը և այլն), Թուրքիայի կողմից 1914-1923 թթ. Հայաստանին և հայ ժողովրդին պատճառած վնասը գնահատել է ավելի քան 548 միլիոն ռուբլի՝ 1914 թ. գներով¹⁴:

Ընդ որում, երկու ուսումնասիրությունների (Ք. Վերմիշևի և ՀՍԽՀ Ժողկոմխորհի հանձնաժողովի) արդյունքների համեմատությունը ցույց է տալիս, որ դրանք կատարվել են միևնույն մեթոդոլոգիական սկզբունքների (տնտեսությունների բյուջետային տվյալների) հիման վրա:

Առաջին աշխարհամարտն ավարտվեց Թուրքիայի ու Գերմանիայի և նրանց դաշնակիցների պարտությամբ: Հոկտեմբերի

¹⁴ Տե՛ս Казакевич В., О материальном ущербе, нанесенном армянскому народу в Закавказье и в Карсской области турецкими интервентами, «Вестник общественных наук», 1987, № 2, с. 81-88.

30-ին կնքված Մուդրոսի զինադադարով Օսմանյան Թուրքիայի զորքերը հեռանալու էին Կովկասի սահմաններից և տեղի էր ունենալու նրանց զորացրում: Թվում էր, թե դա կթուլացնի թուրք-թաթարական համաստեղ բռնությունները հայ ժողովրդի նկատմամբ: Սակայն այդպես տեղի չունեցավ: Նոյեմբերին համաձայնություն ստորագրվեց Ադրբեջանի զինվորական հրամանատարության և Կովկասում Իսլամական բանակի գլխավոր հրամանատար, Թուրքիայի ռազմական մինիստր Էնվեր փաշայի եղբայր Նուրի փաշայի միջև, որի համաձայն օսմանյան բանակի սպաներն ու զինվորները իրավունք ունեին կամավոր կերպով ծառայության մտնել ադրբեջանական բանակում: Դրա հետևանքով, ինչպես նշել է սփյուռքահայ հայտնի պատմաբան, Ռիչարդ Հովհաննիսյանը, հարյուրավոր թուրք սպաներ ու զինվորներ հնարավորություն ստացան մնալ Կովկասում և գործուն դեր ստանձնել «Հայաստանի և Ադրբեջանի միջև տեղի ունեցող սահմանային կոիվներում և Երևանի նահանգում բարձրացված մահմեդական ապստամբությունների մեջ»¹⁵: Իր աշխատության մեկ այլ էջում Ռ. Հովհաննիսյանը գրել է այն մասին, որ ադրբեջանական բանակը միացել էր Նուրի փաշայի Իսլամական բանակին¹⁶: Որ այնուհետև Նուրի փաշան զտնվում էր Ադրբեջանում և ղեկավարում էր ռազմական ուժեր, հաստատվում է նաև այն պայմանագրով, որի մասին նշվել է սույն հոդվածի սկզբում:

Հարց է ծագում. եթե Թուրքիան պետք է շարունակեր Հայոց ցեղասպանությունը, ապա այդ դեպքում ինչու՞ նա 1918 թ. հաշտություն կնքեց Հայաստանի Հանրապետության հետ: Օսմանյան Թուրքիան 1918 թ. հաշտվեց հայկական պետության ստեղծման հետ և հունիսի 4-ին Բաթումում նրա հետ կնքեց հաշտություն՝ միայն ու միայն ելնելով իր շահերից: Կռահելով պատերազմում

¹⁵ Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն, հ. 1, Երևան, 2005, էջ 62:

¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 90:

իր անխուսափելի պարտությունը, Թուրքիան մտահոգ էր ապագա խաղաղության համաժողովում հաղթանակած Անտանտի երկրների կողմից Հայոց ցեղասպանության պատասխանատվության հնարավոր հեռանկարով: Ուստի աշխարհին ցույց էր տալիս, որ ինքը, ի դեմս Հայաստանի Հանրապետության, տեսնում է Հայկական հարցը լուծված: Մյուս կողմից, Թուրքիայի համար սկզբունքային նշանակություն ուներ այն փաստը, որ հայկական պետությունը գտնվում էր Արևմտյան Հայաստանի սահմաններից դուրս՝ Արևելյան Հայաստանում և որ նրա հետ հաշիվ կտեսնի հետագայում և այլն¹⁷:

Ժամանակին միանգամայն ճիշտ խոստովանություն է արել թուրքական «Վաքըթ» թերթը՝ 1918 թ. սեպտեմբերի 3-ի համարում տպագրելով հրապարակախոս Ահմեդ էմինի «Մեր քաղաքակսանությունը Կովկասում և հայերը» հոդվածը: «Եթե կուզենք պաշտպանել հայերը, - կարդում ենք հոդվածում, - բնավ անոր համար չէ, որ կսիրենք հայերը»: Ներկայումս դրությունը փոխվել է և խոսքը վերաբերում է Ռուսահայաստանի սահմաններում «անկախ Հայաստանի» գաղափարին, բացատրում է հոդվածի հեղինակը¹⁸: Ցեղասպանության միջոցով հայերից մաքրելով Արևմտյան Հայաստանը, և նրանց հայրենազրկելով, Թուրքիան իր համար ապահովել էր «դրությունը փոխվեցավ» վիճակը, երբ «անկախ Հայաստանի» գաղափարն այլևս իրեն չէր կարող անհանգստացնել: Մեկ հարվածով, այնուհետև նշում է հոդվածի հեղինակը, «հաջող կերպով կլուծենք մեծ խնդիր մը, որ երկար ատեն է ի վեր անլույծ կմնար»¹⁹:

¹⁷ Տե՛ս Խաչատրյան Ա., Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Երևան, 2010, գրքի մեր առաջաբանում բերված եզրակացությունները, էջ 32-36:

¹⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 126-128:

¹⁹ Նույն տեղը, էջ 127:

Թուրք-թաթարական համատեղ հակահայ գործունեությունը Հայաստանի Հանրապետության սահմաններում իր համար նպաստավոր հող ուներ ի դեմս թաթար բնակչության, որը ենթարկվում էր համաթրքության ու համփալամության ուժեղ քարոզչությանը:

Այդ ազգաբնակչության տեղաբաշխման գոյություն ունեցող վիճակը, ինչպես եզրակացրել է Ռուբեն Տեր-Մինասյանը, «պատճառ պիտի դառնար Հայաստանի գանազան անկիւններում ապստամբութիւնների ծագելուն եւ անջատողական կամ ինքնիշխանական տենչերի զարգանալուն. այդպիսի պարարտ հողի մէջ, բնականօրէն, թէ՛ թաթար Ադրբեջանը եւ թէ՛ Տաճկաստանը պիտի կարողանային դիրութեամբ իրենց ծրագիրները ամրացնել եւ պատուաստել»²⁰: Նույն հեղինակը Հայաստանում ցույց է տվել 21 թուրք-թաթարական ապստամբական օջախ (Հայաստանի մարմնի վրա գոյացած պալար), որը լուրջ վտանգ էր ներկայացնում նորաստեղծ հայկական անկախ պետության համար:

Այդպիսի վտանգավոր հակապետական օջախներից էին Չանգիբասարը, Բեյուք-Վեդին, Սուրմալուն, Բասարգեչարը, Ճղնի-Հերիերը (Ռարալագյազ), Ղարախաչ-Ջղինը, Միլլի-Ռարասին, Աղբաբան, Չարիշատը: Ադրբեջանը նրանց մատակարարում էր փող, իսկ Թուրքիան՝ զենք եւ մասնագետ սպաներ ու զինվորներ: Երևանում Ադրբեջանի լիազոր-ներկայացուցչության միջոցով նշված օջախների գործողությունները համաձայնեցվում էին Ադրբեջանի և Թուրքիայի ռազմական ծրագրերի հետ: Բաքվի և նրա լիազոր-ներկայացուցչության միջև հաստատվել էր գաղտնի հեռագրական կապ, որը գործեց մեկ տարի շարունակ (1919 թ. մարտ-1920 թ. մարտ) և որին գաղտնի հետևում էին Հայաստանի իշխանությունները: Բռնված հեռագրերը հայկական կողմը 1920

²⁰ Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, Թեհրան, 1982, էջ 191:

թ. գաղտնագերծեց, տպագրեց և իր դիվանագիտական կորպուսի միջոցով տարածեց արտասահմանում:

Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչության աշխատակիցների նկատմամբ տեղի ունեցավ նաև դատական գործ²¹:

Ադրբեջանը, Երևանի իր ներկայացուցչության միջոցով, փորձել էր մեծ գումար հասցնել Ջանգիբասարի (Մասիսի) շրջանի ապստամբ թաթարների ղեկավարությանը: Փորձը, սակայն, կանխվեց հայկական միլիցիայի կողմից և ներկայացուցչության 3 պահնորդները կանգնեցին դատի առաջ: 1920 թ. հունիսի 3-ին դատարանը նրանց դատապարտեց. մեկին՝ 15 տարվա տաժանակրության, մյուս երկուսին՝ 10-ական տարվա ազատազրկման:

Պատկերացնելու համար մուսուլմանական շրջանների հակապետական գործունեության վտանգի աստիճանը՝ բերենք դրանցից մեկի՝ Շարուրի կենտրոն Բեյուք-Վեդիի օրինակը: Շրջանն ուներ 700 զինված անձնակազմ, տեղաբաշխված պահակության կետերում, յուրաքանչյուրում 50-70 մարդ: Ունեին 2 լեռնային հրանոթ և 9 գնդացի, 40 գնդացրորդով, որոնցից 20-ը թուրքեր էին: Ջինված խմբերը կենտրոնացած էին շրջանի Շիրազլու, Թայթան (այժմ՝ Վանաշեն), Ռեհանլու (Այգավան), Խալխաս և Գորովան գյուղերում: Ջինյալների կես մասը հեծյալ էր, 6 սպաներով, այդ թվում 4-ը թուրք²²:

Ըստ Հայաստանի կառավարության ստացած տեղեկությունների՝ Ջանգիբասարի ու Վեդիբասարի շրջաններում 1919 թ. վերջին ամիսներին կենտրոնանում էին թուրք սպաների ու ասկյարների մեծ խմբեր, իսկ թուրք-ադրբեջանական գործակալներն ուժեղացնում էին իրենց գործունեությունը, նախապատրաստվե-

²¹ Տե՛ս Ղազախեցյան Վ., Ադրբեջանի քայքայիչ գործունեությունը Հայաստանում 1920 թ. «Վեմ», 2013, N 3, էջ 225-238:

²² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 33, թ. 43:

լով զինված ապստամբության: Նախիջևանի թուրք-թաթարները այդ ապստամբությունը դիտում էին որպես իրենց դրության ապահովության միջոց, հակառակ դեպքում (եթե այդ շրջանները հանձնվեին), ապա իրենք կսուժեին «քաղաքականապես, բարոյապես ու նյութապես»: Եթե Ադրբեջանի կառավարության համար թանկ է Շարուր-Նախիջևանի երկրամասը պահելը, հեռագրել է Երևանի լիազոր-ներկայացուցչությունը, ապա թող անմիջապես նա ուղարկի փող և մարդիկ²³:

Ավելի ուշ Բաքուն, Երևանի ներկայացուցչության միջոցով, Նախիջևանից պահանջում էր զարգացնել իր գործողությունները, քանի որ նախապատրաստվում էր հարձակվել Ղարաբաղի վրա²⁴:

Բաքուն գրավելուց հետո (1918 թ. սեպտեմբեր) Նուրի փաշայի թուրքական զորքերն ուղղվեցին դեպի Ղարաբաղ, որն այդ ժամանակ իրեն հայտարարել էր անկախ և կառավարվում էր հայկական իշխանության կողմից: Ասկերանի մոտ հայկական ուժերը ուժեղ դիմադրություն ցույց տվեցին թուրքերին, որոնց հետ միացել էին շատ տեղացի թուրքեր: Ադղամից Նուրի փաշան պահանջեց, որ հայերը չդիմադրեն և թույլ տան իրենց մտնելու Շուշի, որը և տեղի ունեցավ հոկտեմբերի 8-ին: Թուրքերի հրամանատարն էր Ջեմալ Ջևաթ-բեյը²⁵: Սակայն շուտով վրա հասավ պատերազմի ավարտը՝ և թուրքական զորքերը հեռանալու էին Կովկասից: Ըստ «Կովկասկոյե սլովո» թերթի նոյեմբերի 13-ի հաղորդագրության՝ թուրքական կովկասյան 1-ին դիվիզիայի հրամանատար Ջեմալ Ջևաթ-բեյը հանդես էր գալիս որպես ադրբեջանական 1-ին դիվիզիայի հրամանատար²⁶: Դժվար չէ հասկանալ,

²³ Տե՛ս նույն տեղում, գ. 427 (մաս 1), թ. 161-163:

²⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 174-179:

²⁵ Տե՛ս *Нагорный Карабах в 1918-1923 гг.*, Сб. док. и мат., Ереван, 1992, էջ 38 և 49-50:

²⁶ Տես նույն տեղում, էջ 50:

թե դա ինչ էր նշանակում: Թուրքական դիվիզիայի վերանվանումը ադրբեջանականի ցույց էր տալիս, որ թուրքական դիվիզիա այլևս գոյություն չուներ՝ գորացրվել էր, ինչպես այդ պահանջում էր Անտանտի երկրների հետ հոկտեմբերի 30-ին ստորագրած գինադադարը: Մյուս կողմից, թուրք-թաթարական արդեն միացյալ ուժերը փաստորեն կարող էին շարունակել իրենց հակահայ գործունեությունը:

Ղարաբաղի հայ ժողովուրդը բազմաթիվ համագումարներում արտահայտել է իր վճռական կամքը Հայաստանի իշխանությունն ընդունելու մասին: Իսկ Ադրբեջանը, Թուրքիայի օգնությամբ, չէր դադարեցնում պայքարը իր իշխանությունը հաստատելու ինչպես Ղարաբաղում, այնպես էլ Ջանգեզուրում, դրա համար դիմելով ամեն միջոցի, ընդհուպ մինչև վերջնագրեր ներկայացնելը և գենքի ուժին դիմելը:

Դաշնակից երկրների ներկայացուցիչներին ուղղված գրությամբ Հայաստանի Հանրապետության վարչապետ և արտգործնախարար Ալ. Խատիսյանը հայտնում էր, որ Հայաստանի բուն տարածքներ Ղարաբաղը և Ջանգեզուրը զավթելու համար, Թուրքիայի հետ համագործակցաբար, Ադրբեջանը գործում է հայկական պետության ստեղծման պահից²⁷:

Ադրբեջանի հակահայ քաղաքականության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը 1920 թ. մարտի 30-ին խիստ բողոք հայտնեց դաշնակից երկրների ներկայացուցիչներին Անդրկովկասում: Ադրբեջանի կառավարությունը, ասված է բողոքում, իրականացնում է իր մտադրությունը, որը թելադրել են թուրքերը, այն է՝ ոչնչացնել Ղարաբաղի և Ջանգեզուրի 300 հազարանոց հայ բնակչությանը և Նախիջևանի վրայով միանալ Թուրքիային, այդպիսով շրջապատել Հայաստանը թուրք-թա-

²⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 391-392:

թարական թշնամական օղակով: Հայ բնակչության կոտորածի վտանգը սպառնում էր ոչ միայն Ղարաբաղում ու Ջանգեզուրում, այլ նաև մյուս վայրերում, ինչպես նաև Բաքվում ու ամբողջ Ադրբեջանում:

Հայաստանի կառավարությունը դաշնակից երկրների ներկայացուցիչներին խնդրում էր հանուն արդարության ու խաղաղության համաժողովի հոչակած սկզբունքների՝ եռանդուն միջոցներ ձեռնարկել Ադրբեջանի քայլերի դեմ, որը ցանկանում է Ղարաբաղի ու մյուս հարցերը լուծել զենքի միջոցով²⁸:

Խնդրին անդրադարձավ նաև հանրապետության խորհրդարանը, որի 1920 թ. ապրիլի 3-ի նիստում զեկուցումով հանդես եկավ նախարարապետ Ալ. Խատիսյանը: Նա նշեց, որ Ադրբեջանը կոպիտ կերպով խախտել է Ղարաբաղի 7-րդ համագումարի հետ կնքած իր ժամանակավոր համաձայնագիրը և դիմել ռազմական գործողությունների, որ Ղարաբաղի ժողովուրդը բոլոր համագումարներում իր վճռական կամքն է արտահայտել հոգուտ Հայաստանի Հանրապետության հետ միավորման: Ադրբեջանի գլխավոր նպատակը, ըստ զեկուցողի, հաշտության խորհրդածողովը կատարված փաստի առաջ կանգնեցնելն է, այն է՝ Հայաստանի վրայով միանալ զինակից Տաճկաստանին, որի համար նրանք պահը գտել էին հարմար: Ադրբեջանի ձգտումը միայն Ղարաբաղը չէր: Նրա վարիչները, շարունակում է Ալ. Խատիսյանը, աշխատում են ապստամբության հանել Հայաստանի տարածքի մահմեդականությանը, որ այդ գործում Ադրբեջանն ու Տաճկաստանը միասնական են²⁹:

²⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 475, թ. 204: Տե՛ս նաև՝ *Нагорный Карабах в 1918-1923 гг.*, Сб. док. и мат., էջ 393-394:

²⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ. 1918-1920 թթ., Երևան, 2010, էջ 479-481:

Ջեկուցման մեկ այլ տարբերակում տեղ են գտել հետևյալ տողերը. «Աղբբեջանը և Թուրքիան մեր երկրի ներսում ստեղծում են բազմաթիվ ճակատներ. Բեյուք-Վեդի, Նախիջևան, Աղբաբա, Ջարուշատ, Չըլդըր, Վեդիբասար, Ջանգիբասար՝ այդ ամենը նրանց ձեռքի գործն է, միևնույն շղթայի օղակները, որով Հայաստանի Հանրապետության թշնամիները ցանկանում են շղթայել երկիրը, շղթայել ու խեղդել: Մշտական վտանգ են ստեղծում ոչ միայն հանրապետության ներսում, այլև նրա սահմաններում»³⁰:

Թշնամու շարքերում կային, սակայն, ուժեր, որոնք գոհ չէին իրենց կառավարության գործողություններից և պահանջում էին ավելի վճռականորեն գործել և մեկընդմիջտ հաշիվ տեսնել հայերի հետ: Որպես օրինակ կարելի է հիշատակել աղբբեջանական «Իթթիհաթ» կուսակցության 1920 թ. հունվարի կեսերին տեղի ունեցած կոնֆերանսը, որի աշխատանքներին գործուն կերպով մասնակցել են Հալիլ և Նուրի թուրք փաշաները: Վերջիններս հորդորում էին իրականացնել հայերի դեմ քարոզչության որոշակի ծրագիր: Իսկ կուսակցության նախագահ Կարա-բեյ Կարաբեկովը առաջարկում էր կառավարությանը ներկայացնել կտրուկ պահանջ, որ նա անմիջապես երկրի մեծահարուստներին հարկադրի մեկ միլիարդ ուրբլով, այն տրամադրելով Նուրի և Հալիլ փաշաներին՝ 200 հազարանոց ուժեղ բանակ ստեղծելու նպատակով: Թուրք փաշաներն իրենց հերթին հասան որոշման՝ որ Մուսթաֆա Քեմալ փաշան, որպես թուրքական ազգային շարժման հերոս, հրավիրվի Բաբու և նրան ներկայացվի սպայական կադրերի և «լավ համիպամականների» մատակարարման առաջարկ, որպեսզի ի վերջո վերջ տրվի «բազմաչարչար հավատակիցների» տանջանքներին, որ նրանց պատճառում էին հայերը ոչ միայն Հայաստանի տարածքում, այլ նաև իրենց «հարազատ

³⁰ Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 412.

Ջանգեգուրում»: Ոստի հարկավոր է դիմել գենքի «անհավատ հայերի» դեմ:

«Իթթիհաթի» կոնֆերանսի վերաբերյալ սույն զաղտնի տվյալները քաղել ենք հայկական գորքի զլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի պետ կապիտան Դևոյանի 1920 թ. ապրիլի 20-ի № 284 զեկույցից³¹:

Հայ ժողովրդի կրած հերթական փորձություններից էին 1920 թ. մարտի իրադարձությունները, երբ Շուշիի հայկական թաղամասը լրիվ հրդեհվեց և հազարավոր բնակիչներ կոտորվեցին: Հայկական գորքերի հրամանատարության շտաբի վկայությամբ Ադրբեջանը, ձգտելով վերջնականապես իրեն ենթարկել Ղարաբաղը, հայերից պահանջել է զինաթափվել, իսկ հայերը, չվստահելով ադրբեջանցիներին, մարտի 22-ին ապստամբել են և պաշարել հակառակորդի կայազորները Շուշիում և Խանքենդիում³²:

Ընդ որում, հետաքրքիր է, որ Ադրբեջանի կառավարության ղեկավար Ուսուբբեկովը, ապրիլի 17-ին Հայաստանի լիազորներկայացուցչի հետ զրույցի ժամանակ ընդունել է, որ Ղարաբաղի, Գանձակի, Նուխիի և Գեոքչայի շրջաններում իսկապես կատարվել են բարբարոսություններ, սակայն դա, նշել է նա, տեղի է ունեցել «թուրքերի ձեռքով», և թե իբր այդ պատճառով Ադրբեջանի կառավարության ու մյուս ղեկավար շրջանների տրամադրությունը «շատ ընկճված է », քանի որ այդ ամենը «անուղղելի հարված է հասցրել Ադրբեջանի պետական վարկին»³³:

Հայաստանի այդ նույն լիազոր-ներկայացուցիչը այլ մանրամասնություններ է հայտնել Շուշիի ողբերգության մասին:

Թաթար ասկյարը ապրիլի 8-ին մորը հասցեագրած նամակում գրել է. «Աղղամից դուրս եկանք և մինչև Շուշիղալան գրավե-

³¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427 (մաս 2), թ. 240-242:

³² Տե՛ս նույն տեղում, գ. 563, թ. 175-176:

³³ Տե՛ս նույն տեղում, թ. 159-160:

ցինք, ինչքան հայի գյուղեր կային, այրեցինք և իրանց էլ կոտորեցինք: Մի հայի ականջ էի ուզում ուղարկել, բայց ծրարը փոքր եղավ: Շուշիդալայում ինչքան հայեր կային կոտորեցինք, կանանց բանսուարկեցինք, որոնց շատ նեղություններ ենք տալիս»:

Մեկ այլ նամակում հայրը որդուն գրել է, թե «տեսածդ էրմենիստանը (Շուշի – Վ. Ղ.) այրված է, 5 կամ 10 տուն պահեցին՝ ասկյարների բնակվելու համար, հազարից ավելի հայեր գերի բռնվեցին, տղամարդկանց բոլորին կոտորեցին, բոլոր մեծամեծ, նշանավոր հայերին սպանելուց հետո զուխները կտրած բազարներում պտտացնել էին տալիս», «այս կողմերում այլևս ոչ մի հայի չեք գտնի և ոչ էլ այնպիսի թուրքի, որը հարյուր հազարից պակաս թալան բերած լինի»: Այժմ, շարունակում է նամակագիրը, գորքը, թնդանոթները, գնդացիները, խալիլը, բոլորն այստեղ են, մտադիր են Գորիսի կողմը գնալ, տեսնենք այնտեղ ինչպես է լինում³⁴: Տվյալ գեկուցագրի հետ միասին Հայաստանի դիվանագիտական ներայացուցիչն ուղարկել է նաև նշված և այլ արաբատառ նամակների պատճեններ:

Ղարաբաղի դեպքերից տպավորված Բաքվի Հայաստանի ներկայացուցիչը Վրաստանի հայկական գործընկերոջը մարտի 29-ին գրել է. «Հայ ժողովուրդը կոտորածի մղձավանջի տակ է ապրում»³⁵:

Շուշիի դեպքերի պատճառների շուրջ արտահայտվել է նաև ուրույն տեսակետ, որի հեղինակը Բաքվում Հայաստանի ներկայացուցիչ Մարտիրոս Հարությունյանն է: Նա մարտի 29-ին Վրաստանի արտգործմինիստր Գեգեչկորու հետ զրույցի ժամանակ նշել է, թե Ադրբեջանը Շուշիի ընդհարումը ստեղծել է, որպեսզի օրինական պատճառաբանություն ունենա արդարացնելու համար իր գորքերը դեպի Ղարաբաղ ուղղելը և իր հրաժարվելը

³⁴ Տե՛ս նույն տեղը, ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 163-164:

³⁵ Նշված փաստ. ժող., գիրք 1, էջ 450:

Վրաստանի հետ միասին պաշտպանելու հարավային Կովկասը մեծամասնականներից³⁶:

• • •

1919 թ. սկզբին Ադրբեջանը, անգլիական զինվորական իշխանությունների հովանավորությամբ, ստեղծել էր գեներալ-նահանգապետություն՝ ձգտելով տիրել հայկական տարածքներ Ղարաբաղին ու Ջանգեզուրին, որոնք կառավարվում էին տեղական հայկական ազգային խորհուրդների միջոցով: Միաժամանակ Ադրբեջանը ռազմական պատրաստություններ էր տեսնում բռնությամբ հնազանդեցնելու տարածաշրջանի հայությանը: Հայկական հետախուզության 1919 թ. փետրվարի 23-ի տվյալներով³⁷ այդ պահին Շուշիում էին գտնվում թուրք գեներալ Նուրի փաշան և գեներալ Նովրուզովը, բազմաթիվ թուրք սպաներով, ովքեր ղեկավարում էին արշավանքի համար կենտրոնացված բազմամարդ զորքը: Արշավանքը, որը կատարվելու էր 3 հիմնական ուղղություններով, նպատակ ուներ վերջնականապես գրավել Ղարաբաղն ու Ջանգեզուրը, ապա Նախիջևանով միանալ Թուրքիային:

Չնայած ռազմական ձախողումներին, որ հայ ժողովրդի համառ դիմադրության և քաջարի պայքարի ու ինքնապաշտպանության արդյունքն էր, թշնամին չէր դադարեցնում հարձակման փորձերը:

Այդ փորձերից էր Խունիսի 28-29-ին տեղի ունեցած կռիվը, որին հակառակորդի կողմից մասնակցում էին Շուշիում ու Խանքենդիում տեղակայված կայազորները, Կարյազինոյի զինված ուժերը, աշխարհագորայիններ, ինչպես նաև թուրք սպաներ, որ ժամանել էին Սվազից, Էրզրումից, Երզնկայից և այլ քաղաքներից:

³⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 448:

³⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 441, թ. 72 և գ. 427 (մաս 1), թ. 91-94:

Աղբբեջանական այդ միացյալ ուժերի հրամանատարն էր թուրք Քյազիմ փաշան³⁸:

1919 թ. հուլիսի 17-ին Աղբբեջանում Հայաստանի լիազոր-ներկայացուցիչ Տ. Բեկզադյանը հետևյալ տեղեկություններն է հաղորդել թշնամու նորանոր պատրաստությունների մասին, որոնց թվում կարևոր նշանակություն էր տրվում նաև հակահայ քարոզչությանը և, ընդհանրապես, համաթրքության գաղափարախոսության արմատավորմանը թուրք-թաթար բնակչության շրջանում³⁹: Աղբբեջանի կողմից հայ ժողովրդի դեմ ուղղված քարոզչությունը ուժեղ կերպով մղվում է, հայտնում է Տ. Բեկզադյանը, բոլոր գավառներում և Բաքվի մուսուլման բանվորների միջավայրում, սպառնալով վերածվել հայերի ջարդի: Մուսուլմանական մամուլը իրադարձությունները ներկայացնում է այնպիսի խտացված գույներով, որ թշնամանք է առաջ բերում թաթար մութ գանգվածների մեջ և մղում նրանց անցանկալի գործողությունների և հուլիսի 18-ի համար նախատեսված ցույցի:

Քարոզչությունն ամեն կերպ արդարացնում է ռազմական պատրաստությունները հայ ժողովրդի դեմ: Վերջերս, կարդում ենք նույն փաստաթղթում, Աղբբեջանը Պարսկաստանի վրայով Նախիջևան է ուղարկել 200 հազար փամփուշտ, իսկ նահանգապետ Խոսրով բեկ Սուլթանովը նույն Նախիջևան է հասցրել 3 միլիոն ուրբի-նիկոլասյան փողերով:

Ուժեղ քարոզչություն էր ծավալվում Սև ծովի ափերով մեկ թուրքական գորքերի շրջանում՝ նրանց աղբբեջանական բանակի մեջ ներգրավելու համար: Օրերս թուրք 15 սպաներ են ժամանել Բաքու: Աղդամում կենտրոնացել է թուրք հեծյալների 600 մարդուց բաղկացած զորախումբ, որը կառավարությունը մտադիր է նետել Չանգեզուրի ուղղությամբ:

³⁸ Տե՛ս նույն տեղում, ֆ. 252, ց. 2, գ. 1, թ. 57-59, ֆ. 275, ց. 5, գ. 42, թ. 218-219:

³⁹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 5, գ. 133, թ. 178-179:

Աղրբեջանում, շարունակում է Հայաստանի լիազոր-ներկայացուցիչը, կազմավորվում է կամավորների գորախումբ, որը հասցվելու է մինչև կորպուսի: Նրա հրամանատարական կազմում հատկապես հավաքագրվում են փորձված թուրք սպաները: Ջորախումբը կրելու է հատուկ համազգեստ՝ մյուսներից տարբերվելու համար:

Տ. Բեկզադյանը հիշատակել է ոմն թուրք գրական գործիչ Օմար Ֆայիկ էֆենդու անունը, ով Աղրբեջանում աչքի էր ընկնում իր համիսլամական քարոզչությամբ: Ընդ որում, Աղրբեջանն այլևս չէր ժխտում թուրք զինվորականների առկայությունը իր զինված ուժերում, նշելով, որ նրանք այսուհետ կապ չունեն թուրքական կառավարության հետ և, «իբրև զինվորականներ, մտել են աղրբեջանական ծառայության մեջ»⁴⁰: Իրականում շուտով կտեսնենք այդ կապի խիստ արտահայտությունը ինչպես օսմանյան, այնպես էլ քեմալական կառավարությունների հետ:

Անդրկովկասից անգլիական զորքերի հեռանալուց (1919 թ. սեպտեմբեր) հետո Հայաստանի դեմ թուրք-թաթարական գործողությունները դարձան ավելի ազատ ու անկաշկանդ:

Սկսվեցին տենդագին պատրաստություններ ընդդեմ Ղարաբաղի, Ջանգեզուրի և հայկական այլ շրջանների: Ավելի մեծ թվով թուրք սպաներ էին ժամանում Բաքու, նշված է հայկական հետախուզության փաստաթղթերից մեկում: Սեպտեմբերի կեսերին հարձակում էր սպասվում Ջանգեզուրի վրա, որն իրականացնելու էր գեներալ Շիխլինսկու դիվիզիան: Պարենի մատակարարումը դրված էր նահանգապետ Սուլթանովի վրա: Վերջինիս հանձնարարված էր հաշվի վերցնել գենք կրելու ընդունակ թրդերին ևս, ովքեր կայազորային ծառայություն էին կատարելու նաև Ջանգեզուրում:

⁴⁰ Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 475, թ. 110 և հալ.:

Հայկական ուժերին հաջողվել էր հաղթական մարտեր մղել թշնամու դեմ Խոզնավար, Բայանդուր, Տեղ և Ջաբուղ գյուղերի շրջանում և հետ մղել թուրք-թաթար զինյալներին:

Ավելի մեծ ուժերով թշնամու հարձակումները շարունակվեցին նաև հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին: Այս փորձերը ևս մատնվեցին անհաջողության, որից հետո Ադրբեջանի արտգործմինիստրի տեղակալ Խան Թեքինսկին հրահանգ է պատրաստում գաղտնի կերպով Ջանգեզուր նետելու թուրք սպաների խումբ, որը գավառի թաթար բնակչությանը պատրաստելու էր Հայաստանի իշխանության դեմ ապստամբելու և թիկունքում 5-րդ շարասյան դեր խաղալու համար:

Այս ամենը, սակայն, թշնամու պլանների միայն մի մասն էր: Նա նպատակ էր դրել հայերից մաքրել Ելիզավետպոլի նահանգի ամբողջ լեռնային տարածքը, ամրացնել իր դիրքերը Ղարաբաղում, զինաթափել նրան, ապա զբաղվել Ջանգեզուրով, վերջին հաշվով հասնել հիմնական նպատակին՝ Թուրքիայի հետ միավորմանը⁴¹:

•••

1919 թ. վերջերից Ադրբեջանի և Թուրքիայի հակահայ գործունեությունը վերաճում է պայմանագրային ձևի, միջպետական ընդհանուր քաղաքականության, ընդհուպ մինչև ցեղասպանության կենսագործման պարտավորությունը:

Այդպիսի մի պայմանագիր, Ադրբեջանի հանրապետության և Օսմանյան Թուրքիայի միջև կնքվել է 1919 թ. հոկտեմբերի 29-ին, ստորագրությամբ առաջինի լիազոր ներկայացուցիչ Մ. Քարիմովի և երկրորդի լիազոր ներկայացուցիչ ու Գերագույն շտաբի զլխավոր պետ Ջեմալի:

⁴¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 427 (մաս 2), թ. 240-242:

Պայմանագիրը կոչվում է «Պաշտպանողական-հարձակողական ռազմական դաշինք», որը և բնութագրում է նրա հիմնական ուղղվածությունը:

1-ին հոդվածով կողմերն ընդունում էին, որ իրենց տարածքային ամբողջականության նկատմամբ որևէ արտաքին ուժի ոտնձգության դեպքում պարտավորվում էին օգնել միմյանց՝ համաձայն համապատասխան ծանոթագրության (Ա): Ծանոթագրությունը բացատրում էր ոտնձգության հետևյալ հնարավոր դեպքերը. կողմերից որևէ մեկի հարձակման ենթարկվելը կամ սպառնալից դրության մեջ հայտնվելը, երբ միմյանց օգնության էին հասնելու զինված ուժի միջոցով:

Ըստ 3-րդ հոդվածի՝ ռազմական հարցերի վերաբերյալ իսլամական երկու դաշնակից պետությունների միջև տարածայնություններից խուսափելու համար ռազմական օգնության խնդրի շուրջ սահմանվում էին հետևյալ պայմանները (հավելված Բ, որը ներառնում է 12 կետ և ընդգրկում է մնացած ամբողջ պայմանագիրը): Երբ արտաքին (դրացի) որևէ պետություն կսպառնա պայմանագրվող կողմերից որևէ մեկին; երբ որևէ երկիր կձգտի միջամտել դաշնակից երկրի քաղաքացիական, վարչական ու ֆինանսական գործերին; երբ կվտանգվի կողմերի ամբողջականությունն ու անկախությունը:

Օսմանյան կայսրությունը ստանձնում էր Ադրբեջանի հանրապետության բանակի կազմակերպումը, նրա համար պատրաստում է կադրեր՝ հրահանգիչներ, սպաներ ու զինվորներ: Օսմանյան կառավարությունը իր բանակում ընդունում էր Ադրբեջանի սպաներին՝ նրանց կատարելագործելու համար: Նա ադրբեջանական բանակին մատակարարելու էր հրացաններ, գնդացիներ և այլ զինատեսակներ:

Աղբբեջանը պարտավորվում էր որևէ երկրի հետ համաձայնագիր չստորագրել առանց օսմանյան կառավարության գիտության ու համաձայնության և այլն⁴²:

Հոկտեմբերի 29-ի թուրք-աղբբեջանական պայմանագիրը քացահայտվել և տպագրվել է Երևանի «Յառաջ» թերթում, 1920 թ. ապրիլի 3-ին: Թերթը միաժամանակ տվել է նաև պայմանագրի իր մեկնաբանությունը:

Սույն պայմանագիրը, գրել է թերթը, ցույց է տալիս, որ հոկտեմբերից սկսած Պոլիսն ու Բաքուն միմյանց հետ կապված են ոչ միայն «կրոնական ու ցեղային զգացումներով», ինչպես մինչև այդ պնդում էին, այլև ռազմական դաշինքով: Թերթն ընդգծել է պայմանագրի հակահայ-հակավրացական ուղղվածությունը: Այսպես, եթե թուրքերը Բրեստ-Լիտովսկի կամ Բաթումի պայմանագրերի համաձայն կամենան տիրել Բաթումին ու Կարսին, իսկ հայերն ու վրացիները փորձեն հակառակվել, ապա Աղբբեջանը թիկունքից խփելու է Վրաստանին կամ Հայաստանին:

Կամ, եթե աղբբեջանական խաները ցանկանան Հայաստանից խլել Ղարաբաղն ու Ջանգեզուրը կամ Նախիջևանն ու Շարուրը, և հայերն ընդդիմանան, ապա թուրքերն օգնության են շտապելու Աղբբեջանին, ինչպես և դա տեղի էր ունենում: Երբ աղբբեջանական զորքերը հարձակումներ էին գործում Ղարաբաղի ու Ջանգեզուրի վրա, ապա թուրք սպաներն ու ասկյարները, թաթար խուժանի հետ միասին, թիկունքից հայկական ուժերին հարվածներ էին հասցնում Օրդուբադի, Դարալագյազի, Բոյուք-Վեդիի ու Ջարուշասի շրջաններում: Կիլիկիայում ու Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձությունները, շարունակում է «Յառաջը», այդ դաշնագրի արդյունքն են:

⁴² Տե՛ս փաստ. նշված ժողովածուն, [գիրք 1-ին], էջ 418-419:

Տաճկա-ադրբեջանական դաշնագիրն ուղղված էր ոչ միայն հայերի ու վրացիների, այլև դաշնակից երկրների դեմ⁴³:

Նույն ոգով արտահայտվել է նաև անգլիական «Թայմզ» թերթը: «Թաթար հանրապետությունը,- գրել է նա,- հենց սկզբից հովանավորվում էր երիտասարդ թուրքերի կողմից, որոնք այդ հանրապետությունը նկատում էին իբրև միջոց Թուրքեստանի հետ հաղորդակցության մեջ մտնելու և Կասպից ծովի վրա հենարան ունենալու համար: Բարձրի նավթի հարուստ հանքերի կարևորությունը հավելվածական մի պատճառ էր, որ նրանք իրենց ձեռքի մեջ ունենան այդ պետության քաղաքական վերահսկողությունը»⁴⁴:

Պայմանագիրն իր սուր ծայրով ուղղված էր Հայաստանի և հայ ժողովրդի դեմ, առանց, իհարկե, հիշատակելու այդ մասին: Ստորագրելով նման գաղտնի պայմանագիր, Ադրբեջանը գրեթե միաժամանակ, ընդամենը 3 շաբաթ անց, Հայաստանի հետ նոյեմբերի 23-ին կնքեց պայմանագիր⁴⁵, որով միմյանց միջև գոյություն ունեցող վիճելի, այդ թվում սահմանային խնդիրները, պարտավորվում էին լուծել խաղաղ համաձայնությունների միջոցով, որով ասես քողարկում էին իրենց ագրեսիվ ձգտումները հարևան երկրի նկատմամբ:

Այն ինչը քողարկում էր հոկտեմբերի 29-ի պայմանագիրը՝ դարձավ բացահայտ, շնայած դարձյալ գաղտնի, հաջորդ պայմանագրում և որի մասին նշվեց սույն հոդվածի սկզբում:

Այդ պայմանագիրը կնքվել է 1920 թ. ապրիլի 15-ին նույն մուսավաթական Ադրբեջանի և արդեն պատմական ասպարեզ իջած ազգայնական (քեմալական) Թուրքիայի միջև: Նշանակում է՝ Ադրբեջանի հանրապետությունը Հայաստանի և հայ ժողովրդի դեմ պայքարում միաժամանակ համագործակցում և դաշնային

⁴³ Տե՛ս «Յառաջ» (Երևան), 3 ապրիլի 1920 թ., № 70:

⁴⁴ «Յառաջ», 22 ապրիլի 1920 թ., № 81:

⁴⁵ Տե՛ս «Յառաջ», 29 նոյեմբերի 1919 թ.:

կապերի մեջ էր գտնվում և՛ օսմանյան, և՛ ազգայնական (քեմալական) թուրքական պետականությունների հետ:

Պայմանագիրը ձեռք էր բերվել հայկական բանակի հետախուզության կողմից և տպագրվել «Զորքերի հրամանատարության շտաբի հետախուզական բաժանմունքի 1920 թվականի հուլիսի 6-ի № 20 Ամփոփագրում» («Сводка Разведывательного отд. Штаба Командующего войсками № 20 к 6 июля 1920 года. Карта 5 верст в дюйме»). Նախապես նշենք, որ տպագրվել է պայմանագրի ոչ ամբողջական շարադրանքը, այլ միայն մասամբ, պետք է ենթադրել ամենաեական հատվածը, որը և ստորև բերվում է ամբողջությամբ, էլնելով կարևորությունից:

«Սույն թվականի ապրիլի 15-ին Թուրքիայի և Ադրբեջանի միջև ստորագրվել է նոր գաղտնի կոնվենցիա՝ ի վստիստումն անցյալ տարվա նոյեմբերին ստորագրված պայմանագրի: Այդ կոնվենցիայի ամենահետաքրքիր կետերից են.

«Հոդ. 5. Հանրապետական (Ադրբեջանի – Վ. Ղ.) կառավարությունը խոստանում է շարունակել օգնությունը հասնելու համար ռազմական մերձեցմանը՝ խորհրդային կառավարության (Ռուսաստանի – Վ. Ղ.) և «Անատոլիայի ու Ռումելիայի իրավունքների պաշտպանության կոմիտեի» (ազգայնական՝ քեմալական Թուրքիա – Վ. Ղ.) միջև: Անհրաժեշտության դեպքում նա ինքը (Ադրբեջանը – Վ. Ղ.) կմանի այդ մերձեցման (Միության) մեջ:

Հոդ. 6. «Անատոլիայի և Ռումելիայի իրավունքների պաշտպանության կոմիտեն» մեկ ներկայացուցիչ կունենա Ադրբեջանի Հանրապետության կառավարությանը կից: Այդ ներկայացուցիչը օժտված կլինի բոլոր յիագորություններով՝ գործերը վարելու և լուծելու համար պայմանավորվող կողմերի միջև գոյություն ունեցող բոլոր ռազմական, ֆինանսական ու այլ բնույթի հարցերը:

Հոդ. 7. «Անատոլիայի ու Ռումելիայի իրավունքների պաշտպանության կոմիտեի» ներկայացուցչությունը կտրակամապես

խոստանում է, որ Ադրբեջանի վրա Հայաստանի հարձակման դեպքում, և Ադրբեջանը կտրականապես խոստանում է, որ արևելյան մարզերը Հայաստանին տրվելու ու միացվելու դեպքում երկու պայմանագրվող կողմերը կօգնեն միմյանց որպես մեկ միացյալ բանակ:

Հոդ. 16. Խաղաղության խորհրդածողովի կողմից Թուրքիայի արևելյան մարզերը Հայաստանին զիջելու դեպքում գործի կդրվեն այն որոշումները, որպիսիք հավանության կարժանանան պատվիրակների կողմից և կվերաբերվեն ներկայացուցչության ընդունած միջոցառումներին:

ա) Ադրբեջանի տարածքում ապրող քրդական ցեղերի միջոցով և այդ ցեղերի հետ կնքած պայմանագրի համաձայն հասնել Ադրբեջանի մաքրագործման ավարտի շուրջ կատարյալ համաձայնության:

Հանրապետական կառավարությունը համաձայնվում է թույլատրել հանգրվաններ կազմակերպել Ադրբեջանի տարածքում՝ դյուրացնելու մաքրագործման նպատակով Նուրի փաշայի ուժերի ազատ գործողությունները և համագործակցությունը: Նրանց մասնակցությունը մաքրագործմանը (ջարդերին) որոշված է (Զինվորական մինիստրության հրամանի կետ «16-ը պարզաբանել սպաներին ու զինվորներին»)»⁴⁶:

1. Այսպիսով, առաջին եզրակցությունը, որին կարելի է հանգել շարադրվածից, հետևյալն է. հայոց ցեղասպանության քաղաքականությունը, որ ծրագրվել էր Օսմանյան Թուրքիայում և կենսագործվել արևմտահայության նկատմամբ, յուրացվել էր նորաստեղծ մեկ այլ թուրքական պետության՝ մուսավաթական Ադրբեջանի կողմից և գործի դրվել արևելահայ բնակչության նկատմամբ:

⁴⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 33, թ. 40-43:

2. Իր հայաջինջ քաղաքականության կենսագործման մեջ Ադրբեջանը միայնակ չմնաց. նրա հետ գործակցում էր Օսմանյան Թուրքիան, Ադրբեջան արշաված իր զորքի միջոցով: Այդ համատեղ գործունեությունը իր ձևակերպումը գտավ նաև Ադրբեջան-Օսմանյան Թուրքիա պայմանագրում:

3. Մուսավաթական Ադրբեջանի հայաջինջ քաղաքականությունը իրականացվում էր նաև քեմալական Թուրքիայի պետության հետ համատեղ՝ հենց որ վերջինս իջավ պատմության ասպարեզ: Այդ համագործակցությունը իր արտահայտությունը գտավ երկու անգամ ստորագրված պայմանագրերում՝ 1919 թ. նոյեմբերին և 1920 թ. ապրիլի 15-ին: Վերջին տարբերակում տեղ են գտել 1915 թ. գործադրված ցեղասպանության այնպիսի տարրեր, ինչպիսիք են տեղահանությունը, որը հասկացվում էր նաև որպես «ջարդեր», հանգրվանների կազմակերպումը, քրդերին օգտագործելը և այլն:

4. Խոստովանվում է այն փաստը, որ Ադրբեջանը հայերից մաքրագործելը սկսվել էր, և որ այսուհետ այն շարունակվելու էր՝ քրդական ցեղերի մասնակցությամբ, որի համար գոյություն ուներ նրանց հետ կնքած պայմանագիր:

5. Ապրիլի 15-ի պայմանագիրը ինքնըստինքյան մերժում է ժամանակակից պայմաններում Թուրքիայի ղեկավարների կողմից հայոց ցեղասպանությունը ժխտելու փորձերը: 1920 թ. ապրիլի 15-ը 1915 թ. ապրիլի 24-ի ծնունդն էր: Չլիներ 1915-ը՝ բնականաբար չէր լինի նաև նրա շարունակությունը:

**TURKISH-AZERBAIJANI POLITICS OF THE GENOCIDE
OF ARMENIANS (1918-1920)**

SUMMARY

At the beginning of 1918 the Young Turks used the invasion of the Turkish armies into the Transcaucasia for continuation of the genocide committed against Western Armenians.

It is shown in the article that the Turko-Azerbaijani policy had consecutive anti-Armenian character against the First Republic of Armenia. A proof of it serves the Turko-Azerbaijani secret treaty signed between them in April, 1920.

ВЛАДИМИР КАЗАХЕЦЯН

**ТУРЕЦКО-АЗЕРБАЙДЖАНСКАЯ ПОЛИТИКА
ГЕНОЦИДА АРМЯН (1918-1920 ГГ.)**

РЕЗЮМЕ

Нашествие турецких армий в Закавказье в начале 1918 г. младотурки использовали для продолжения политики геноцида, осуществленного против западных армян.

В статье показывается, что проводимая против Первой Республики Армения турецко-азербайджано политика имела последовательный антиармянский характер. Свидетельством этого является подписанный в апреле 1920 г. турецко-азербайджанский секретный договор.

1920 Թ. ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆ ԱՇՈՏ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

1920 թ. մայիսյան ապստամբությունը Հայոց պատմության նորագույն շրջանի կարևորագույն դրվագներից է, որի մասին ստեղծվել է հարուստ գրականություն: Խորհրդային պատմագրության մեջ «դաշնակցական տիրապետության» դեմ բուլշևիկների զլխավորած քաղաքական և սոցիալ-դասակարգային պայքարի ընդհանուր համալիրում առանձնակի ուշադրության է արժանացել 1920 թ. մայիսյան շարժումների կամ ինչպես ժամանակին է նշվել՝ մայիսյան «հերոսական» ապստամբության (հեղափոխության)՝ իբրև Հայաստանի խորհրդայնացման առաջին փորձի, համակողմանի ուսումնասիրությունը:

Այդ հիմնախնդրով խորհրդահայ կուսակցական և պետական գործիչներն ու պատմաբաններն սկսել են զբաղվել արդեն իսկ 1920-ական թվականներից: Հարկ է նշել, որ այդ շրջանի հրատարակությունները գերազանցապես ունեին քաղաքական ու քարոզչական բնույթ և հատուկ պատմագիտական ուսումնասիրության նպատակ չէին հետապնդում: Բայց և միաժամանակ, սկսեցին հրատարկվել փաստաթղթերի ժողովածուներ, ապստամբության մասնակիցների հուշեր, մենագրական ուսումնասիրություններ¹:

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմողներ՝ Վ. Ղազախեցյան, Ա. Վիրաբյան և ուրիշներ, Երևան, 2000, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, Երևան, 1960, Հեղափոխական կոմիտեները Հայաստանում, կազմող՝ Ս. Սահրադյան, Երևան, 1974, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում (1920-1930), հիշողությունների և դոկումենտների ժողովածու, Երևան, 1930, Ռևոլյուցիոն կոչեր և թոուցիկներ 1902-1921, կազմող և խմբագիր Խ. Բարսեղյան, Երևան, 1960, Ղարիբջանյան Բ., Սովետական իշխանության համար մղված պայքարում

Դրանց շարքում առանձնանում է կուսակցական և պետական գործիչ, պատմաբան Աշոտ Հովհաննիսյանի² գրքույկը, որում նա ապստամբության թարմ հետքերի տպավորության տակ արտահայտում է իր տեսակետը և գնահատականը մայիսյան իրադարձություններին՝ Ռուսաստանի դեպքերի նմանությամբ՝ իբրև Հայաստանի հեղափոխության «հուլիս»³:

Աշոտ Հովհաննիսյանի՝ «Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը» աշխատությունը բազմիցս քննադատության է ենթարկվել ժամանակի հեղինակների և պատմաբանների կողմից:

1926 թ. լույս տեսած Շ. Ամիրխանյանի՝ «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում (1920թ.)» վերնագրով աշխատության մեջ հեղինակը քննադատել է Աշոտ Հովհաննիսյանի հողվածում տեղ գտած մի քանի ձևակերպումներ:

(հողվածներ, ելույթներ և նյութեր 1917-1920 թթ.), Երևան, 1966, Արշ. Հակոբյան, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռեյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, Երևան, 1960, Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, Երևան, 1967, Մելքոնյան Ա. Հ., Մայիսյան ապստամբության պատմության հարցի շուրջը, Երևան, 1965, Բարսեղյան Խ. Հ., Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք 2-րդ, Երևան, 1975, նույնի՝ Հայաստանի կոմունիստական կուսակցության ձևավորումը, Երևան, 1980, Գալոյան Գ. Ա., Հերոսական մայիսից-հաղթական նոյեմբեր, Երևան, 1980, Ալիխանյան Ս., Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917-1921թթ.), Երևան, 1966, Հարությունյան Շ., Պատմագիտության զարգացումը Խորհրդային Հայաստանում (1920-1963), Երևան, 1967, Սահրադյան Ս., Ռեզոլուցիոն կոմիտեները Հայաստանում (1917-1922թթ.), Երևան, 1961, Հարությունյան Շ., Հայ ժողովրդի պատմություն (1917-1968), Երևան, 1970, Գալոյան Գ. Ա., Պատմության քառուղիներում, Երևան, 1982, Հին բուլղարիկների հիշողությունները, գիրք 1-ին, Երևան, 1960, Գարագաշ Մ., 1920 թ. Մայիսյան ապստամբության և դաշնակցության սոցիալական էության գնահատման մի փորձ (Գ. Վանանդեցու հողվածի առթիվ), «Կոմունիստ», Երևան, 1928, թիվ 1 (23) հունվար:

² Ա. Հովհաննիսյանի և նրա գիտական ժառանգության մասին մանրամասն տե՛ս Սարուխանյան Ն. Բ., Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի պատմագիտական ժառանգությունը, Երևան, 2015:

³ Հովհաննիսյան Ա., Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը, Երևան, 1923, տե՛ս նույնը՝ «Նորք», գիրք 2, Երևան, 1923:

1. Ըստ հեղինակի՝ Ա. Հովհաննիսյանն անհիմն համեմատություն է անցկացնում Պետրոգրադի 1917 թ. հուլիսյան օրերի և Հայաստանի մայիսյան դեպքերի հետ՝ փորձելով դրանք դնել նույն նժարի վրա, ինչը խոսում է այն մասին, որ հողվածի վերնագիրը չի համապատասխանում բովանդակությանը⁴:

Ճիշտ է թե՛ Հայաստանում և թե՛ Ռուսաստանում տեղի ունեցան ընդվզումներ իշխանությունը գրավելու համար, սակայն Ռուսաստանում ՌԿ(բ)Կ-ն գիտակցաբար միջամտեց շարժանը, որպեսզի այն ստանար կազմակերպված բնույթ և չկազմալուծեր պրոլետարիատին ու պահպաներ կուսակցությունը քայքայումից, ինչը չի կարելի ասել մայիսյան դեպքերի մասին, որը ոչ միայն անկազմակերպ, տարերային բնույթ կրող մասսայական շարժում էր, այլև կուսակցության քայքայման պատճառ դարձավ:

Շ. Ամիրխանյանի քննադատության առաջին կետի հարցում պաշտպանելով Ա. Հովհաննիսյանի անցկացրած պատմական գուգահեռը «հուլիսի» և «մայիսի» վերաբերյալ՝ նշենք, որ դրանց միջև որոշակի ընդհանրություն կար, սակայն հիմնական տարբերությունն այն էր (որի մասին Շ. Ամիրխանյանը չի նշում), որ ռուսական «հուլիսյան» դեպքերը հենվում էին ներքին ուժերի վրա, մինչդեռ հայկական «մայիսը» հույսը դրել էր արտաքին՝ ռուսական 11-րդ բանակի օգնության վրա: Ինչ վերաբերում է Հայկոմկուսի քայքայման մեղադրանքին, ապա պետք է ասել, որ Հայկոմկուսը այդ ժամանակ դեռ չէր էլ ձևավորվել: Հայտնի է, որ այն պաշտոնապես ձևավորվել է 1920 թ. հունիսի 30-ին Բաքվում: Ի դեպ, Շ. Ամիրխանյանի քննադատական դիտողությունը Ա. Հովհաննիսյանի աշխատության վերնագրի վերաբերյալ կրկնել է պատմաբան Շ. Հարութ-

⁴ Ամիրխանյան Շ., Մայիսյան ապստամբությունը Հայաստանում (1920 թ.), Մոսկվա, 1927, էջ 157:

յունյանը՝ հայ պատմագիտությանը նվիրված իր մենագրությունում⁵:

2. Ա. Հովհաննիսյանի «Նորք»-ում տպագրած հոդվածից մի քանի մեջբերումներ կատարելով Շ. Ամիրխանյանը արտահայտել է որոշ անհամաձայնություններ և սխալներ: Մասնավորապես՝

ա. «Համաշխարհային պատերազմի ավերիչ ընթացքն ու ազգային քաղրենիության կորստաբեր քաղաքականությունն է, հեղափոխության գիրկը նետել Հայաստանի աշխատավոր բազմությանը՝ հանձնելով սրա ղեկավարությունը փոքրաքանակ բանվորությանը և իր կուսակցության՝ Հայաստանի կոմունիստական կազմակերպության, ձեռքը»⁶:

բ. «Բանվորական շարժումը Հայաստանում սոցիալական խոշոր երևույթ չէր ինքնին: Դրան համապատասխան սահմանափակ պետք է լիներ նաև այդ շարժումը ղեկավարող կուսակցական կազմակերպության մարտական գործությունը»⁷:

գ. «Հայաստանի երկաթուղու բանվորությունը կազմում էր հեղափոխական գործի ողնաշարը»⁸:

Արդյունքում ստացվում է որ, չնայած իր փոքրաթվությանն ու թուլությանը, համաշխարհային պատերազմի և «ազգային քաղրենիության կորստաբեր քաղաքականության» շնորհիվ, բանվոր դասակարգն օբյեկտիվորեն հանդիսանում էր հեղափոխական շարժման ղեկավարող շարժիչ ուժը՝ առաջապահը և ողնաշարը: Եվ այստեղ հարց է առաջանում, եթե բանվորական շարժումը Հայաստանում խոշոր երևույթ չէր, արդյո՞ք արկածախնդրություն չէր

⁵ Հարությունյան Շ., Պատմագրության զարգացումը Սովետական Հայաստանում (1920-1963), Երևան, 1967, էջ 366:

⁶ Հովհաննիսյան Ա., Հայաստանի հեղափոխության հույիսն ու հոկտեմբերը, Մայիսյան ասպետամբությունը, «Նորք», գիրք երկրորդ, Երևան, 1923, էջ 5:

⁷ Նույն տեղում, էջ 9:

⁸ Նույն տեղում, էջ 10:

Մայիսյան ապստամբությունը: Եվ ինչպե՞ս էր հնարավոր այդ գյուղացիական հետամնաց երկրում, որտեղ չկար բանվոր դասակարգ, երկաթուղային պրոլետարիատն իր վրա վերցնել հեղափոխական շարժման դեկավարի դերը⁹: Այս հարցում մենք համաձայն ենք Շ. Ամիրխանյանի դիտողություններին:

Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 1919-1920 թթ. Հայաստանի Հանրապետությունում բոլշևիկների թիվը չէր անցնում հազարը¹⁰, հետևաբար չի կարելի ասել, որ Մայիսյան ապստամբությունը բանվորական շարժում էր, քանի որ նրանում մեծամասնություն էին կազմում նաև գյուղացիական տարերը:

3. Հեղինակն Աշոտ Հովհաննիսյանի ցանկությունը գունավորել երկաթուղային պրոլետարիատի դերը Մայիսյան ապստամբության մեջ, բացատրում է միայն մի բանով, որ նրա սխալը գլխավորապես ծագում է նրանից, որ նա բավականաչափ պարզ և օբյեկտիվորեն չի դնում Մայիսյան ապստամբության գնահատության հարցը, որը հետևանք է կոմունիստական կուսակցության մարտական քաղաքականության և մասնավորապես ապստամբությունն արդարացնելու անհաջող փորձի՝ Հայաստանի նման մի երկրում, որտեղ չկար շատ թե քիչ ուժեղ բանվոր դասակարգ¹¹:

4. Հետաքրքիր է նաև այն, որ եթե Աշոտ Հովհաննիսյանը Մայիսյան ապստամբությունը բնութագրում է որպես բանվորական, գյուղացիական և զինվորական լայն շարժում, ապա Շավարշ Ամիրխանյանը՝ որպես տարերային բնույթ կրող մասսայական գյուղացիական շարժում¹²:

⁹ Ամիրխանյան Շ., նշվ. աշխ., էջ 158:

¹⁰ ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 257, թ. 1-4, 6-14, 20-22:

¹¹ Ամիրխանյան Շ., նշվ. աշխ., էջ 159:

¹² Նույն տեղում, էջ 161:

1927-1928 թթ. կուսակցական մամուլում Աշոտ Հովհաննիսյանի քննադատությամբ հանդես եկան Գ. Վանանդեցին¹³ և Հ. Դուրգարյանը: Վերջինս քննադատում է Ա. Հովհաննիսյանի այն տեսակետը, որ ապստամբությունը բանվորական, գյուղացիական և զինվորական լայն շարժում չէր, այլ այն որակում էր որպես վաղաժամկետ ելույթ, գրեթե արկածախնդրություն, զուրկ հասունացած օբյեկտիվ պայմաններից¹⁴: Մեր կարծիքով, Ա. Հովհաննիսյանն այդ հարցում իրավացի է, քանզի ապստամբությունը չուներ բավարար սոցիալական հենարան և անհրաժեշտ ղեկավարություն: Տեղին ու դիպուկ է Ա. Հովհաննիսյանի տեսակետը, որ այդ ելույթն «անառագաստ և անդեկ» գործողություններ էր¹⁵: Տակավին ՀԿ(Բ)Կ 1-ին համագումարում (1922թ. հունվար) ելույթ ունենալով նա քննադատում էր ապստամբության ղեկավարությանն այն բանում, որ հաշվի չէին առել մայիսյան շարժման տարերային բնույթը¹⁶: Իր հերթին, Աշ. Հովհաննիսյանին քննադատելու փորձ է արել Մ. Գարսիազը: Վերջինս հակադրվելով Ա. Հովհաննիսյանի և Գ. Վանանդեցու տեսակետին, որ դա մեջլենական (մանրբուրժուական) ելույթ էր, գտնում էր, որ «Մայիսյան ապստամբությունը անկասկած սոցիալական հեղափոխություն էր»¹⁷:

Ա. Հովհաննիսյանի որոշ տեսակետների քննադատությամբ է հանդես գալիս նաև Թ. Մանդալյանը¹⁸: Մանդալյանը իր «Մայիսյան ապստամբությունը» աշխատության մեջ մեղադրում է

¹³ Վանանդեցի Գ., Մայիսյան ապստամբության գնահատման փորձի առթիվ, «Կոմունիստ», Երևան, 1927, N 6:

¹⁴ Դուրգարյան Հ., Մայիսյան ապստամբությունը Հայաստանում (Շ. Ամիրխանյանի գրքի առթիվ), «Կոմունիստ», 1927, N 9-10:

¹⁵ Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ., էջ 46:

¹⁶ ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 1, թ. 9:

¹⁷ Գարսիազ Մ., 1920 թ. Մայիսյան ապստամբության և դաշնակցության սոցիալական էության գնահատման մի փորձ (Գ. Վանանդեցու հոդվածի առթիվ), «Կոմունիստ», Երևան, 1928, N 23, էջ 59-60:

¹⁸ Մանդալյան Թ., Մայիսյան ապստամբությունը, Երևան, 1929:

Աշոտ Հովհաննիսյանին նրանում, որ նա խուսափում է Դաշնակցության սոցիալական էության պարզորոշ գնահատականը տալուց¹⁹: Քննադատում է նաև Ա. Հովհաննիսյանի այն տեսակետը, որ 1920 թ. մարտի 28-ի երկաթուղայինների համագումարն անցել է բոլշևիկների ազդեցության տակ: Միայն մի երկու հարցի առթիվ նրանց հաջողվեց ճեղք անցկացնել: Ավելին անհնարին էր անել այդ տեղորի պայմաններում, որում ընթանում էր համագումարը²⁰:

Չնայած այս անհամաձայնություններին՝ Թ. Մանդալյանը համաձայն է Ա. Հովհաննիսյանի այն մտքի հետ, որ Հայաստանում բանվորները սակավաթիվ էին և նրանց խոշորագույն մասը կապված էր գյուղի հետ և եթե մի կողմից արտացոլվում էր գյուղի տրամադրությունները բաղաբուն, մյուս կողմից գյուղ էր ներմուծվում բանվորական տրամադրությունները: Բանվորության մեծամասնությունը դժգոհ էր իր վիճակից, բայց դեռ հեռու էր բոլշևիկյան տրամադրություններից և որոշ պատրանքներ դեռ կապում էր ՀՀ կառավարության հետ: Այս ամենի հետ միասին չմոռանանք հիշատակել, Հայաստանում բոլշևիկները սկսել են ստվարանալ միայն 1919 թ. կեսերից և դեռևս շատ փոքր թվով բանվորներ ու գյուղացիներ էին ընդգրկվել նրա շարքերում, այն էլ հիմնականում երկվորներ էին²¹: Թ. Մանդալյանը համաձայն է նաև Ա. Հովհաննիսյանի այն տեսակետին, որ Արմենկոմը թերագնահատեց երկրում ծավալված դասակարգային պայքարը²²:

«Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում» ժողովածուի առաջաբանում Աշոտ Հովհաննիսյանի

¹⁹ Նույն տեղում, էջ 12:

²⁰ Նույն տեղում, էջ 30:

²¹ Նույն տեղում, էջ 14:

²² Նույն տեղում, էջ 19:

քննադատությամբ է հանդես եկել նաև Կ. Ղազարյանը²³: Նա մասնավորապես քննադատում է տարերայնության վարկածի հարցը և տարակուսանք հայտնում, որ ոչ մի հեղինակ չի բացատրում, թե «տարերային» ասելով ինչ է հասկանում, կամ էլ Արմենկոմի թույլ աշխատանքն ամենևին չի նշանակում կոմկուսի դերի թերագնահատում կամ ժխտում²⁴:

Հետաքրքիր է նաև Ա. Հովհաննիսյանի անդրադարձը հայ քաղաքական կուսակցությունների դիրքորոշմանը մայիսյան դեպքերի վերաբերյալ:

Մայիսյան ապստամբության ժամանակ առաջացավ տարանջատում հայ քաղաքական կուսակցությունների միջև: Հայ էսեռները և Հայաստանի հնչակյանները ոչ միայն համակրեցին, այլև տեղ-տեղ գործնականում պաշտպանեցին ու աջակցեցին ապստամբ բոլշևիկներին: Հայ էսեռների Կենտկոմը մայիսմեկյան տոնի կապակցությամբ հանդես էր եկել խորհրդամետ և հեղափոխական բովանդակությամբ կոչերով²⁵: Այս կապակցությամբ Ա. Հովհաննիսյանը գրում է, որ մայիսմեկյան ցույցը շարժում առաջացրեց անգամ էսեռների կազմակերպության մեջ: Ձեռնպահ մնալով զինված ապստամբությունից՝ նրանք արտահայտվում են Հայաստանի խորհրդայնացման օգտին²⁶: Այսինքն՝ էսեռները կողմնակից էին Հայաստանի «անարյուն խորհրդայնացմանը»: Այս նպատակին հասնելու ճանապարհին՝ անգամ Հայաստանի կոմունիստներին առաջարկ էին անում կազմել համատեղ խառը

²³ Առաջին մասսայական-հեղափոխական շարժումները Հայաստանում, Մայիսյան ապստամբությունը, նյութեր և փաստաթղթեր, կազմեցին՝ Կ. Ղազարյան և Մ. Ներսիսյանը, խմբագրությունը՝ Կ. Ղազարյանի, Երևան, 1932:

²⁴ Նույն տեղում, էջ 43:

²⁵ «Հառաջ», 25 հունվարի 1920թ.:

²⁶ Հովհաննիսյան Ա., Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը, Մայիսյան ապստամբությունը, «Նորք», գիրք երկրորդ, Երևան, 1923, էջ 15:

կառավարություն²⁷: Հայ ժողովրդական կուսակցության պաշտոնաթերթ «Ժողովուրդը» հայտնում է, որ Դիլիջանում էտեռները զինված աջակցություն են ցույց տվել խոռվարարներին²⁸: Բացի այդ՝ պետք է նշել, որ մայիսյան դեպքերից առաջ և դրա ընթացքում էտեռական մամուլն առատ տեղ էր հատկացնում կոմունիստների գործունեության լուսաբանմանը, այստեղից էլ կարելի է եզրակացնել, որ սխալ է էտեռներին դասել Դաշնակցության կողմնակիցների թվում²⁹:

Բացի էտեռներից, հայ քաղաքական կուսակցություններից Մայիսյան ապստամբությանը համակրել ու նույնիսկ աջակցել են հնչակյանները: Ա. Հովհաննիսյանը տեղեկացնում է, որ մայիսմեկյան շքերթի ժամանակ Հնչակյան կուսակցության խմբակը լքեց սեփական դրոշը և միացավ կոմունիստներին³⁰: Ս. Դ. Հնչակյան կուսակցության պատմագիր Ա. Կիտուրը վկայում է, որ ապստամբության ժամանակ հնչակյանները մասնակցել են ոչ միայն խմբակով, այլ զանգվածորեն՝ մասնավորապես նրա Երևանի մասնաճյուղը³¹: Իսկ հնչակյանների թիֆլիսյան կենտրոնը որոշում է կայացնում տապալել դաշնակների կառավարությունը և հաստատել խորհրդային կարգեր³²: Ինչ վերաբերում է ՀԺԿ և Հայ սահմանադիր ռամկավարներին, ապա նրանք աջակցել են իշխանություններին:

Արդյունքում չնայած Աշոտ Հովհաննիսյանի «Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը» աշխատության մեջ

²⁷ Նույն տեղում:

²⁸ «Ժողովուրդ», 12 հունիսի 1920 թ.:

²⁹ Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, Երևան, 1967, էջ 292:

³⁰ Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ., էջ 15:

³¹ Կիտուր Ա., Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության (1887-1962), հ. Ա, Բեյրութ, 1962, էջ 488:

³² Տե՛ս նույն տեղում, էջ 486:

տեղ գտած առանձին դիրքորոշումներին ու գնահատականներին, այդուհանդերձ աշխատությունը արժեքավոր սկզբնաղբյուրի դեր կարող է ծառայել Մայիսյան ապստամբության պատմության ուսումնասիրության համար, քանի որ հեղինակը լինելով դեպքերի ժամանակակից, հարուստ փաստական նյութերի հիման վրա շարադրել է Մայիսյան ապստամբության պատմությունը՝ խնդրի վերաբերյալ վերջին խոսքը թողնելով ապագա պատմաբաններին.

«Սայթակումներն անխուսափելի են, բայց և անհրաժեշտ: Քանի որ այդ գնով է միայն հնարավոր մշակել կայուն տեսակետ մոտիկ անցյալի գալիք ուսումնասիրությունների համար»³³: Կարելի է ասել, որ ականավոր մաքսիստ պատմաբանի հիմնական դիտարկումները դիմացել են ժամանակի քննադատությանը:

QANAQARA HAYRAPETYAN

THE MAY REBELLION (1920) ACCORDING TO THE INTERPRETATION OF ASHOT HOVHANNISYAN

SUMMARY

Although the research of the history of the May Rebellion had begun after Armenia became a part of the Soviet Union, the beginning of the actual scientific research started after publication of the work of Ashot Hovhannisyán, “July and October of the Armenian Rebellion”.

The work of Ashot Hovhannisyán, “July and October of the Armenian Rebellion” had been criticized by the authors and historians of that time. He had been criticized by S. Amirkhanyan, G. Vanandeci, H. Durgaryan, K. Khazaryan and many others.

³³ Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ., էջ 97:

Although there are some mistakes and omissions, the work is a valuable source for the study of the history of the May Rebellion because the author is the witness of the events and under the fresh impression he wrote the history of the May Rebellion based on rich actual events.

КАНАКАРА АЙРАПЕТЯН

**МАЙСКОЕ ВОССТАНИЕ 1920 Г. В ТРАКТОВКЕ
АШОТА ОВАНИСЯНА**

РЕЗЮМЕ

А. Ованисяна "Июнь и октябрь армянской революции" многократно подвергался критике современниками автора. Его критиковали Ш. Амирханян, Г. Ванандян, Г. Дургарян, К. Казарян и многие другие. Несмотря на некоторые неточности и недочеты, труд представляет ценный источник для изучения истории восстания, поскольку будучи очевидцем событий, имея свежие впечатления и богатый фактический материал, автор достаточно подробно изложил историю.

ՀԱՅ-ԱՂԲԵՋԱՆԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ-ՍԱՀՄԱՆԱՅԻՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՆՂԿՈՎԿԱՍՅԱՆ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ
(1922-1936 թթ.)^{*}

1922 թ. մարտին Անդրկովկասյան Դաշնության կազմավորումից հետո Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Ադրբեջանի միջև գոյություն ունեցող խնդրահարույց հարցերի շարքում առաջնայիններից էին տարածքային-սահմանային խնդիրները: Բանն այն է, որ սկզբունքային տարաձայնությունների պատճառով հանրապետությունների միջպետական սահմանների մասին ստորագրված պայմանագրերն ու համաձայնագրերը վերջնական չէին և տարակարծությունների տեղիք էին տալիս: Սրանք սահմանային շերտում գտնվող հողատարածքների, անտառների, աղբյուրների պատկանելության և օգտագործման հարցում հանգեցնում էին վեճերի, երբեմն՝ նույնիսկ ընդհարումների: Այս ամենին ավելանում էին քոչի ու գաղթականների խնդիրները, ինչն Անդրդաշնության իշխանություններին հարկադրեց հողային հաճնաժողովներից բացի ստեղծել նաև նշյալ հարցերով զբաղվող հատուկ հանձնաժողովներ: Նշված խնդիրների կարգավորման գործում առաջնային դեր ուներ Անդրդաշնության Կենտրոնական գործադիր կոմիտեն (կենտգործկոմ, ԿԳԿ): Նույն սկզբունքով՝ հանրապետություններում այդ գործառույթը վերապահված էր կենտգործկոմներին և գավգործկոմներին: Այսպես՝ Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորների խորհուրդների առաջին համագումարի կողմից 1922 թ.

^{*} Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS 13-6A402 գիտական թեմայի շրջանակներում:

փետրվարի 2-ին ընդունված Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության (ՀՍԽՀ) Սահմանադրության 37-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի խորհուրդների համագումարի և Կենտրոնական գործադիր կոմիտեի իրավասության ներքո էր «Հանրապետության սահմանների որոշումն ու փոփոխումը, այլև դրա մասերի, ինչպես և Հանրապետությանը պատկանող իրավունքների օտարումը»¹:

Անդրդաշնության գոյության առաջին տարիներին սահմանային խնդիրներով, բացի պետական մարմիններից, նախկինի նման շարունակեցին զբաղվել նաև կուսակցական մարմինները (ի դեմս ՌԿ(բ)Կ Անդրկովկասի երկրային կոմիտեի): Սահմանային վեճերը կարգավորող հանձնաժողովներ են կազմակերպել նաև Անդրդաշնության Միութենական խորհուրդը, նույնիսկ Կովկասյան կարմիր բանակի հրամանատարությունը²:

1922 թ. մայիսի 8-ին Անդրդաշնության Միութենական խորհուրդը կազմեց Հայաստանի և Ադրբեջանի սահմանային վեճերը կարգավորող հանձնաժողով: Իսկ մայիսի 15-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմն անդրկովկասյան երեք հանրապետությունների տարածքային-սահմանային վեճերը լուծող հանձնաժողովում ՀՍԽՀ ներկայացուցիչ նշանակեց Մ. Ղարաբեկյանին³: Գոյություն ունեցող հողային վեճերը կարգավորելու նպատակով 1922 թ. հոկտեմբերի 30-ին պատկառելի կազմով առանձին հանձնաժողով կազմակերպեց նաև ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմը: Հանձնաժողովի կազմում

¹ ՀՍԽՀ Սահմանադրություն, «ՀՍԽՀ ղեկրետների և որոշումների հավաքածու», 1922, N 8, էջ 63:

² Սահակյան Ա., Հայաստանը Անդրկովկասյան Դաշնության կազմում, Վանաձոր, 2013, էջ 175:

³ Նույն տեղում, էջ 176:

ընդգրկվել էին երկրամասի երեք նշանավոր ղեկավար գործիչները՝ Գ. Օրջոնիկիձեն, Ն. Նարիմանովը, Ա. Մյասնիկյանը⁴:

Անդրկենտգործկոմի նախագահության 1923 թ. փետրվարի 5-ի որոշմամբ ստեղծվեց գավառների հողային վեճերը որոշող կենտրոնական հանձնաժողով, որի նախագահ նշանակվեց ՀԱԽՀ ԿԳԿ-ի նախագահ Սարո Համբարձումյանը, ում նույն թվականի մայիսի 14-ին փոխարինեց Սարգիս Կասյանը⁵: Իսկ արդեն Անդրկենտգործկոմի նախագահության 1924 թ. հունվարի 30-ի նիստում որոշվեց նշյալ հանձնաժողովը վերանվանել «Անդրդաշնության կազմի մեջ մտնող հանրապետությունների միջև հողերի, անտառների, ջրօգտագործման վեճերը լուծող հանձնաժողով» (փաստաթղթերում կարճ տարբերակով կոչվում է նաև Հողհանձնաժողով), և հաստատել հանձնաժողովի հետևյալ կազմը. նախագահ՝ Ս. Կասյան, անդամներ՝ Ս. Յաղուբով և Ն. Խոմերիկի⁶: Հետագայում հանձնաժողովը նա անվանափոխվեց: Այստեղ միայն նշենք, որ առկա տարածքային-սահմանային վեճերին լուծում տալու նպատակով Անդրդաշնության գոյության ողջ ընթացքում վերջինի ղեկավար մարմինների նախաձեռնությամբ ու հսկողությամբ ստեղծվել և գործել են կենտրոնական ու տեղական բազմաթիվ հանձնաժողովներ: Վարչատնտեսական սահմաններ հաստատելու նպատակով ստեղծված տեղական հանձնաժողովների մեջ մտնում էին մեկական ներկայացուցիչներ շահագրգիռ հանրապետություններից և Անդրկենտգործկոմի կողմից նշանակված ներկայացուցիչը: Տեղական հանձնաժողովների կողմից պատրաստված նյութերն ուղարկվում էին միութենական

⁴ Ղազախեցյան Վ., Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը 1920-1929 թթ., Երևան, 1975, էջ 130:

⁵ Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 112, ց. 1, գ. 95, թ. 115, 131 շրջ.:

⁶ Վրաստանի ազգային արխիվ (ՎԱԱ), ֆ. 607, ց. 1, գ. 23, թ. 6:

հանձնաժողովին, իսկ նրա միջոցով՝ Անդրկենտրոնական Նախագահություն, որի որոշումը համարվում էր վերջնական⁷:

Վերը նշված հանձնաժողովների համար հատկապես խնդրահարույց էր Խորհրդային Հայաստանի և Ադրբեջանական Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության (ԱՍԽՀ) գրեթե ամբողջ սահմանային գոտում գոյություն ունեցող տարածքային-սահմանային սուր վեճերին լուծում գտնելը: Սա դժվարին խնդիր էր, քանի որ վիճելի տարածքների վերաբերյալ կողմերը սկզբունքային տարաձայնություններ ունեին: Անդրդաշնության կազմի մեջ մտնող հանրապետությունների միջև հողերի, անտառների, ջրօգտագործման վեճերը լուծող հանձնաժողովի կողմից 1925 թ. հունվարի 2-ին պատրաստված զեկուցագրի համաձայն՝ ՀՍԽՀ-ի և ԱՍԽՀ-ի ողջ սահմանային շերտում վեճեր գոյություն ունեին 2 հատվածում՝ համապատասխանաբար Դիլիջան-Ղազախի, Ջանգեզուր-Քրդստանի գավառների միջև: Համարվում էր, որ վեճեր չկային համապատասխանաբար Դիլիջանի, Նոր Բայազետի և Շամխորի, Նոր Բայազետի և Գյանջայի, Նոր Բայազետի և Քրդստանի, Դարալագյազի և Քրդստանի գավառների միջև⁸: Փաստորեն, Անդրդաշնության օրոք հայ-ադրբեջանական սահմանում առանցքային վեճերը, որոնց դեպքում կողմերը սկզբունքային տարակարծություններ ունեին, վերաբերվում էին Շնող-Այրումի շրջանի, Կապանի 21 գյուղերի և Մեղրու երեք գյուղերի պատկանելության հարցին, որին ավելացավ նաև Ալ լճերի խնդիրը:

⁷ Այս մասին մանրամասն տե՛ս Սահակյան Ա., նշվ. աշխ., էջ 175-178, Խուչատրյան Կ., Սուրխատյան Հ., Հայ-վրացական տարածքային-սահմանային խնդիրների կարգավորման գործընթացը 1920-1930-ական թվականներին, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Երևան, 2015, էջ 86-88:

⁸ ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 168, թ. 23 և շրջ.:

Ստորև կանդրադառնանք Անդրդաշնության օրոք ՀՍԽՀ հյուսիսարևելյան, արևելյան և հարավարևելյան սահմաններում հանրապետության ունեցած տարածքային կորուստներին ու մասնակի ձեռքբերումներին, ինչպես նաև ինքնավար Նախիջևանի հետ սահմանի հաստատմանը:

•••

Դեռևս 1920 թ. օգոստոսի 10-ին Թիֆլիսում Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի Հանրապետության միջև կնքված համաձայնագրի համաձայն՝ կողմերը համաձայնվել էին Ղազախ գավառում ՀՀ զորքերը թողնել այն հատվածում, որը նրանք զբաղեցնում էին 1920 թ. հուլիսի 30-ի դրությամբ⁹: Հետագայում սա ամրագրվեց 1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանում ստորագրված հայ-ռուսական համաձայնագրի 3-րդ հոդվածով: Փաստորեն, 1920-ական թթ. սկզբին Խորհրդային Հայաստանի կազմում էր գտնվում Ելիզավետպոլի նահանգի Ղազախի գավառի այն հատվածը, որը ներկայումս ընդգրկում է ՀՀ Տավուշի մարզի գրեթե ամբողջ տարածքը՝ ներառյալ Բաշքենդն (ներկայիս Արծվաշենը) իր շրջակայքով¹⁰: Հայաստանի Խորհրդայնացումից հետո նախկին Ելիզավետպոլի նահանգի Ղազախի գավառը բաժանվել էր ՀՍԽՀ Դիլիջանի և ԱՍԽՀ Ղազախի գավառների միջև:

ՀՍԽՀ հյուսիսարևելյան սահմանահատվածում հայկական և ադրբեջանական սահմանակից գյուղերի միջև առկա հողային վեճերը 1921 թ. սեպտեմբերից սուր կերպով նորից մեջտեղ եկան: Դեռևս 1921 թ. մայիսին ՀՍԽՀ արտաքին գործերի ժողկոմատը

⁹ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (բաղաբաղական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2000, էջ 248:

¹⁰ Խաչատրյան Կ., Բաղայան Գ., ՀՍԽՀ տարածքի և սահմանների ձևավորումը (1920 թ. դեկտեմբեր – 1922 թ. սկիզբ), «Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու)», N 14, Երևան, 2013, էջ 180-182:

տեղեկություններ էր ստացել ադրբեջանցի գյուղացիների կողմից սահմանային Լալիզեդ և Ուզունթալա հայկական գյուղերի հողերի բռնագավթման և Աքսիբարայի կիրճի անտառի ոչնչացման մասին¹¹: Խորհրդային Հայաստանի հյուսիսարևելյան սահմանահատվածում ադրբեջանցի գյուղացիների կողմից սահմանախախտման, հայկական գյուղերում կատարած թալանի և վիճելի հողամասերի բռնագավթման վերաբերյալ հայկական կողմի բողոքները Խորհրդային Ադրբեջանի բարձրագույն իշխանություններին էր ուղարկվում ՀՍԽՀ արտգործժողկոմատի միջոցով: Արտգործժողկոմ Ա. Մոավյանը կա՛մ Բաքվում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցիչ Ի. Դովլաթյանի միջոցով, կա՛մ էլ անձամբ խնդրի վերաբերյալ գրագրություն էր վարում Խորհրդային Ադրբեջանի արտգործժողկոմ Մ.-Դ. Հուսեյնովի հետ: Հայկական կողմին ուղղված ադրբեջանական պատասխան գրությունները նույնպես ՀՍԽՀ արտգործժողկոմատի միջոցով էր փոխանցվում Խորհրդային Հայաստանի իշխանություններին (մինչև 1922 թ. հուլիսին արտգործժողկոմատի լուծարումը)¹²: ՀՍԽՀ իշխանությունների արդարացի պահանջներն ու բողոքները փաստացի անուշադրության էին մատնվում Ադրբեջանի ղեկավարության կողմից:

1920-ական թվականներին ՀՍԽՀ Դիլիջանի և ԱՍԽՀ Ղազախի գավառների միջև առկա ամենասուր տարածքային վեճը Շնող-Այրումի շրջանի հողատարածքների պատկանելության խնդիրն էր: Ընդհանուր առմամբ, այդ շրջանում վիճելի էր համարվում 15.659 դեայատին¹³ տարածք, որից 6751 դեայատինը անտառներ էին, 3621 դեայատինը՝ ամառային արոտավայրեր, իսկ մնացած մասը՝ անասնապահական ձմեռանոցներ և գյու-

¹¹ ՀԱՍ, ֆ. 114, ց. 2, գ. 45, թ. 54-55:

¹² Նույն տեղում, ց. 1, գ. 222, թ. 2-10, ց. 2, գ. 45, թ. 83 և շրջ., գ. 98, թ. 86, 90 և շրջ., գ. 140, թ. 23-25:

¹³ 1 դեայատինը հավասար է 1,09 հեկտարի:

դատնտեսության համար նպաստավոր հողատարածքներ: Այդ տարածքի վրա գտնվում էր 34 գյուղ ու գյուղակ, ուր բնակվող թուրքերի թիվը 4124 էր (771 ծուխ): 1923 թ. ապրիլին Դիլիջանի և Ղազախի գավառների վարչատնտեսական սահմանագծում անցկացվեց, որը հաստատվեց Անդրկենտրոնի կազմում գտնվող գավառների հողային վեճերը որոշող հանձնաժողովի 1923 թ. ապրիլի 28-ի նիստում: Որոշման համաձայն Շնող-Այրումի շրջանում գտնվող 5000 դեսյատին հողատարածքը ՀՍԽՀ Դիլիջանի գավառից հանձնվեց ԱՍԽՀ Ղազախի գավառին¹⁴: Սակայն այս որոշման հիման վրա սահմանագատում չկատարվեց: 1923 թ. մայիսի 14-ին Անդրկենտրոնի նախագահության որոշմամբ Դիլիջանի և Ղազախի գավառների միջև վեճերը որոշող հատուկ տեղական հանձնաժողովի ղեկավար նշանակվեց Ս. Յաղուբովը, ում հանձնարարվեց քննություն կատարել և 2 շաբաթվա ընթացքում Կենտրոնում ուղարկել վիճելի հարցերի վերաբերյալ կայացված որոշումները¹⁵: Այդուհանդերձ, իրավիճակը շարունակում էր լարված մնալ:

1925 թ. հունիսին տարածաշրջան գործուղվեցին Հողհանձնաժողովի աշխատակիցներ Յա. Կոչետկովը և Վ. Չխենկելին, իսկ նույն թվականի օգոստոսին՝ անտառային տեղամասերի հատուկ փորձագետներ¹⁶: Բանն այն է, որ 1923-1924 թթ. Ղազախի հողաշինարարական խմբի կազմած հատակագիծը հիմնված չէր 1923 թ. ապրիլի 28-ի որոշման վրա, և Խորհրդային Ադրբեջանն ապօրինաբար տիրացել էր ավելի մեծ հողատարածքի, քան նախատեսվում էր նշված որոշմամբ: Խորհրդային Ադրբեջանի ներկայացուցիչները, ահաբեկելով անտառապետին, խախտել էին 1923 թ. որոշված սահմանը և գրավել շուրջ 7000 դեսյատին տարածք: Շա-

¹⁴ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 703, թ. 195, ֆ. 112, ց. 2, գ. 31, թ. 36:

¹⁵ ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 95, թ. 131:

¹⁶ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 703, թ. 195:

րունակելով ապօրինի գործողությունները՝ աղբբեջանցիները Ղազախի գավառի հաշվին իրենց ձեռքբերումը հասցրել էին մինչև 11.800 դեսյատինի¹⁷: ՀՍԽՀ հողագործության ժողկոմատի բազմաթիվ դիմումների հիման վրա Հայկենտգործկոմի նախագահությունը 1925 թ. հոկտեմբերի 13-ին որոշեց դիմել Անդրկենտգործկոմին՝ առաջարկելով մինչև սահմանագծումը դադարեցնել հողաշինարարությունը Շնող-Այրումի շրջանում և ապօրինի գործողությունների համար պատասխանատվության ենթարկել Ղազախի հողաշինարարական խմբին: Հայկական կոդմի կարծիքով՝ 1923 թ. ապրիլի 28-ին որոշված սահմանագիծը պետք է անցկացվեր երկու հանրապետությունների լիազորների ներկայությամբ, և միաժամանակ Դիլիջանի ու Ղազախի գավառների միջև սեպաձև մտնող համահավասար հողամասի փոխանակություն կատարել: Այսինքն՝ 4000 դես. տեղամասի դիմաց ՀՍԽՀ ԿԳԿ-ն առաջարկում էր տարածքով ու բնակչության թվով համահավասար տեղամաս ստանալու Բաշքենդի շրջակայքում: Այս դեպքում խնդիրն այն էր, որ Շնող-Այրումի շրջանի թուրք և Բաշքենդի շրջանի հայ բնակչությունը մերժում էին տեղափոխվել հարևան հանրապետություններ¹⁸: Փաստորեն, ՀՍԽՀ իշխանությունները մտավախություն ունեին, որ ազգագրական հիմքի վրա կատարված այս սահմանագատումը հետագայում կարող է կրկին բարդություններ առաջացնել վարչական վերաբաժանման ժամանակ և, բացի այդ, սեպաձև խրվելով Հայաստանի տարածքում, աղբբեջանաբնակ գյուղերը «սովորության համաձայն» ապագայում կփորձեին հայկական գյուղերի հաշվին ընդլայնել իրենց հողատարածքները:

¹⁷ ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 31, թ. 36:

¹⁸ Եռլի տեղում, թ. 32-37:

1925 թ. նոյեմբերի 2-ի նիստում Անդրկենտրոնականի հող-
հանձնաժողովը, քննելով հարցի վերաբերյալ եղած նյութերը,
եկավ այն եզրակացության, որ խնդրի վերջնական լուծման հա-
մար անհրաժեշտ է շուտափույթ նիստ հրավիրել՝ երկու հանրա-
պետությունների հողժողովուրդների մասնակցությամբ: Դրանից հե-
տո նոյեմբեր ամսվա ընթացքում հողհանձնաժողովը մի քանի
անգամ հարցը վերանայելու համար նիստեր հրավիրեց, որոնց
Ադրբեջանի ներկայացուցիչը չժամանեց: ԱՍԽՀ հողժողովում Դ.
Բունիաթզադեն ներկայացավ միայն 1927 թ. հունվարի 11-ին Ս.
Կասյանի գլխավորությամբ տեղի ունեցած Անդրդաշնության
կազմի մեջ մտնող հանրապետությունների միջև հողերի, ան-
տառների, ջրօգտագործման վեճերը լուծող հանձնաժողովի և
նույն օրը տեղի ունեցած Անդրդաշնության ԿԳԿ-ի նախագա-
հության նիստերին, որոնց ՀՍԽՀ-ի կողմից մասնակցում էր հող-
ժողովում Ա. Երզնկյանը¹⁹: Այդ որոշման համաձայն Շնող-Այրումի
շրջանի ամբողջ տարածքը (11659 դեսյատին) ճանաչվեց Ղազա-
խի գավառի մաս, իսկ շրջանին կից անտառի վիճելի տարածքը
(4000 դեսյատին)՝ Դիլիջանի մաս: Միննույն ժամանակ, նկատի
ունենալով, որ ՀՍԽՀ Բաշքենդ գյուղն այդ դեպքում կհայտնվեր
Ղազախի գավառում, որոշվեց առանձնացնել մի հողաշերտ՝
ամառային արոտավայր, որը տարածքային առումով գյուղը կկա-
պեր Դիլիջանի հետ: Սակայն հենց նույն օրը որոշումը չեղյալ հա-
մարվեց, քանի որ Հայաստանի ներկայացուցիչ Ա. Երզնկյանն այս
հարցը կապում էր ՀՍԽՀ և ԱՍԽՀ միջև Ալ լճեր ամառային արո-
տավայրի 12.000 դեսյատին տեղամասի համար ընթացող վեճի
հետ, որը նախատեսվում էր հանձնել Նոր Բայազետի գավառին²⁰:
Նշենք, որ կողմերը դեռևս 1923 թ. ապրիլից Անդրդաշնության

¹⁹ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 703, թ. 195-196:

²⁰ ՎԱԱ, ֆ. 607, ց. 1, գ. 1136, թ. 17 և շրջ.:

ԿԳԿ-ի նիստերում արձարծվող այս հարցի առնչությամբ կրկին համաձայնության չեկան: Նշյալ հարցի վերաբերյալ վերջնական համաձայնություն կայացվեց Անդրկենտգործկոմի նախագահության 1929 թ. փետրվարի 18-ի նիստում, որտեղ որոշվեց հաստատել 1927 թ. հունվարի 11-ին կայացած համաձայնությունը²¹: Նշված որոշմամբ Բաշքենդը ՀՍԽՂ-ի հետ էր կապվելու նեղ հողաշերտով, որը հետագայում անցավ Ադրբեջանին²²:

Անդրդաշնության ԿԳԿ-ն քայլեր ձեռնարկեց կայացված որոշումը կենսագործելու նպատակով: 1929 թ. ընթացքում մասնավորապես Շնող-Այրումի անտառային շրջաններում տեղադրվեց սահմանային 45 տեղանշան՝ պլանով նախատեսված 40 կմ երկարության վրա: Պատրաստվել էր նաև համապատասխան նախագիծ՝ Բաշքենդ գյուղը հարակից տարածքներով ՀՍԽՂ-ին միացնելու համար: Հետագոտվել էր նշված գյուղի և Շնող-Այրումի գյուղընկերության հողօգտագործման դրությունը, տեղում քննվել և պլանի մեջ էր ներառվել վիճելի 4844 հեկտար տարածքը: Կենտգործկոմի որոշմամբ նախատեսվում էր նաև Շնող-Այրումի շրջանի հողերից օգտագործման համար մի փոքր մաս հատկացնել Բաշքենդ գյուղի բնակիչներին: Սակայն, ինչպես ակնհայտ էրևում է Անդրկենտգործկոմի նախագահության 1929 թ. հուլիսի 20-ի նիստի որոշումից, պատճառաբանելով շրջանում հողի սակավ լինելը, մերժվեց յուրաքանչյուր շնչին գոնե 0,75 հեկտար տարածք տրամադրելու առաջարկը²³:

Սուր վեճեր գոյություն ունեին նաև Շնող-Այրումի շրջանին սահմանակից առանձին գյուղերի միջև գտնվող հողատարածքների համար, որոնց լուծումը, կապված հողհանձնաժողովի աշխատանքների ոչ ճիշտ կազմակերպման, երբեմն թույլ տրված սխալ-

²¹ ՀԱԱ ֆ. 112, ց. 1, գ. 267, թ. 78:

²² Սահակյան Ա., նշվ. աշխ., էջ 182:

²³ ՀԱԱ ֆ. 112, ց. 1, գ. 1412, թ. 37 և շրջ.:

ների և ապօրինությունների հետ, երկարաձգվում էր: Այսպես՝ 1922 թ. սահմանային վեճեր գոյություն ունեին հայկական և մուսուլմանական Թաթլու, Չախմախլի (ԱՍԽՀ) և Լալիգեղ (Լալաքենդ) (ՀՍԽՀ), գյուղերի, Կոթի (ՀՍԽՀ) և Դաշսագլի (ԱՍԽՀ) գյուղերի միջև «Կարաչալ» տեղամասի համար՝ 304 դեսյատին տարածքով, Կողբ (ՀՍԽՀ) և Շիխլի (ԱՍԽՀ) գյուղերի միջև «Չամչա» (փաստաթղթերում հանդիպում է նաև «Չոմչա» տարբերակով) տեղամասի համար՝ 940 դեսյատին տարածքով, Դովեղ (ՀՍԽՀ) և Քյամարլի (ԱՍԽՀ) գյուղերի միջև «Բաղման-ջալախ» կոչվող տեղամասի նկատմամբ և «Աջի» (ռուսերեն՝ Аджы) տեղամասը՝ 1002 դեսյատին տարածքով, Բարանա (ՀՍԽՀ) և Ղայմախլի (ԱՍԽՀ) գյուղերի միջև²⁴:

Վերը թվարկված գյուղերի միջև վիճելի հողատարածքների պատկանելության հարցը մանրամասն քննարկվեց Տավուշի, Քարվանսարայի և Ղազախի գավառների սահմանային շրջանների վեճերը կարգավորող հանձնաժողովի 1922 թ. մայիսի 27-ի նիստում, որտեղ թվում էր, թե վերջնականորեն լուծում ստացվեց քննարկվող հարցերին՝ մասնավորապես հայկական և մուսուլմանական գյուղերի միջև ծագած վեճերին, որն առավել խնդրահարույց էր: Բանն այն էր, որ մուսուլմանները գրավել էին հայերին պատկանող, բայց իրենց տիրույթների մեջ խրված հողերի մեծ մասը և հրաժարվում էին վերադարձնել: Նիստում որոշվեց հայերին վերադարձնել իրենց հողակտորները, իսկ մուսուլմաններին հնարավորություն ընձեռել մինչև բերքի հավաքումն օգտվել հայկական հողերից, որից հետո վերադարձնել: Այս և մյուս հողատարածքների հարցերին նիստում որոշակի լուծում ստացվեց, որն ամրագրվեց Անդրդաշնության Միութենական

²⁴ Նույն տեղում, գ. 168, թ. 26 և շրջ.:

խորհրդի նախագահության 1922 թ. մայիսի 29-ի նիստում²⁵: Միևնույն ժամանակ առաջարկվեց տեղերում ստեղծել առանձին հարցերի կարգավորման խառը հանձնաժողովներ:

Սակայն խնդիրն այսքանով չավարտվեց: 1922 թ. հունիսի 6-ին Ադրբեջանի ժողովրդական կոմիսարների խորհրդի միջնորդությամբ Միութենական խորհուրդը որոշեց վերանայել հողային վեճերի մասին կայացված որոշումները²⁶: Արդեն նույն թվականի հոկտեմբերին 30-ին տեղի ունեցած ՌԿ(Բ)Կ Անդրերկրկոմի նախագահության նիստում որոշվեց ստեղծել նոր հանձնաժողով՝ Գ. Օրջոնիկիձե, Ն. Նարիմանով, Ա. Մյասնիկյան կազմով²⁷: Միևնույն ժամանակ արձանագրվեց, որ Միութենական խորհրդի մայիսի 29-ի նիստի որոշումները կյանքի չեն կոչվել: Սա ակնհայտորեն ադրբեջանական իշխանությունների վարած «հետևողական» աշխատանքի արդյունքն էր: Այդ էր պատճառը, որ գյուղերի միջև գտնվող հողատարածքների հարցի լուծումը երկարաձգվեց մինչև 1920-ական թվականների վերջը: Ընդ որում, գյուղերի միջև վեճերի ծագման նախապատմությունը ներկայացնող տվյալներից ակնհայտ երևում է, որ հաճախ վեճերն առաջանում էին ադրբեջանցի խոշոր հողատերերի (փաստաթղթերում նշվում է կալվածատերեր) լքատճառով, ովքեր իրենց հողակտորները վաճառում էին հայերին, իսկ հետո առանց հիմքի հետ էին պահանջում²⁸:

1923 թ. հոկտեմբերի 18-ին տեղի ունեցած Անդրկենտրոնկոմի նախագահության նիստում որոշվեց Կողբ (ՀԽՍՀ) և Շիխլի (ԱՍԽՀ) գյուղերի միջև վիճելի համարվող «Չամչա» տեղամասը տալ շիխլիցիներին: Սակայն այս որոշման դեմ հանդես եկավ

²⁵ ՎԱԱ, ֆ. 607, ց. 1, գ. 84, թ. 1:

²⁶ Хармаидарян С., Ленин и становление Закавказской федерации 1921-1923 гг., Ереван, 1969, с. 278:

²⁷ ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 35, թ. 50 և շրջ.:

²⁸ Նույն տեղում, թ. 46 և շրջ.:

ՀՍԽՀ ԿԳԿ-ն՝ պատճառաբանելով կողբեցիների սակավահող լինելը և խնդրեց հարցը վերանայել: Արդյունքում՝ Անդրդաշնության ԿԳԿ-ի նախագահությունը 1924 թ. մարտի 17-ին որոշեց վերանայել որոշումը: Սահմանվեց, որ հարցի վերաբերյալ Կենտգործկոմի հողային վեճերը որոշող կենտրոնական հանձնաժողովի կայացրած որոշումը վերջնական և անբեկանելի կլինի²⁹: Քննելով երկու գյուղերի հողերի քանակի, չափի և բնակչության վիճակի վերաբերյալ ներկայացված նյութերը՝ հողհանձնաժողովի 1924 թ. հոկտեմբերի 27-ի նիստում որոշվեց տեղամասը հանձնել Կողբին³⁰:

Հայկական Դովեղ և ադրբեջանական Քյամարլի գյուղերի միջև վիճելի համարվող «Բաղմանչալախ» տեղամասի հարցը քննարկվեց 1923 թ. սեպտեմբերի 28-ին Դաշնության գավառների միջև սահմանները որոշող հանձնաժողովի նիստում, որտեղ որոշվեց տեղամասը հանձնել Դովեղին: Այս որոշումը դժգոհությանբ ընդունվեց քյամարլեցիների կողմից³¹: Արդյունքում՝ 1925 թ. որոշվեց տեղամասը հավասարապես բաժանել կողմերի միջև:

Հատկապես դժվար էր հայկական Բարանա և ադրբեջանական Կայմախլի գյուղերի միջև գտնվող 1002 դեսյատին տարածքով «Աջի» տեղամասի հարցը, որը 1918-1920 թթ. գտնվում էր Հայաստանի Հանրապետության կազմում³²: Տարածքին տիրելու դեպքում Ադրբեջանը հնարավորություն կունենար Հայաստանի հյուսիսարևելյան տարածքները կտրել միմյանցից: Բացի այդ՝ այստեղի անտառները բավականին ծառաշատ էին, իսկ արոտավայրերը՝ անասնապահության համար չափազանց հարմար: Ի

²⁹ ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 168, թ. 38 և շրջ.:

³⁰ Нифталнев И., Азербайджанская ССР в экспансионистских планах армян (20-е годы XX века), Баку, 2010, с. 187.

³¹ ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 168, թ. 39, գ. 143, թ. 95 և շրջ.:

³² Խաչատրյան Կ., Բաղալյան Գ., նշվ. աշխ., էջ 182:

վերջո, Անդրկենտգործկոմի հողհանձնաժողովի 1924 թ. հոկտեմբերի 31-ի որոշմամբ տեղամասի հյուսիսարևելյան մասը՝ 612 դեսյատին տարածքով, հանձնվեց ԱՍԽՀ-ին, իսկ հարավարևմտյան՝ 390 դեսյատին տարածքով, ՀՍԽՀ-ին³³: Ադրբեջանը հավակնություններ էր հանդես բերում նաև Լալիզեդ և Չախմախլի գյուղերի միջև տեղակայված 69 դեսյատին տարածքի նկատմամբ: 1922 թ. սկսած քննարկումները հանգեցրին նրան, որ 1924 թ. հոկտեմբերի 8-ին որոշվեց այն թողնել Դիլիջանի գավառի սահմաններում³⁴: Ռազմավարական կարևոր նշանակություն ուներ նաև սյդ շրջանում գտնվող և Դիլիջանի գավառին պատկանող Սոֆլու, Բարխուդարլու և Վերին Աքսիբարա (Ոսկեպար) գյուղերը՝ ընդհանուր 3104 դեսյատին տարածքով, որոնք Անդրդաշնության ԿԳԿ-ի հողային և անտառային վեճերը լուծող տեղական հանձնաժողովի 1929 թ. հուլիսի 19-20-ի որոշմամբ հանձնվեցին Դիլիջանի գավառին³⁵:

Թեև Անդրկենտգործկոմի նախագահության գործուն միջամտության արդյունքում 1929 թ. ընթացքում ՀՍԽՀ-ի հյուսիսարևելյան սահմանում առկա տարածքային վեճերի հիմնական մասը «լուծվել» էր, այդուհանդերձ գոյություն ունեին մասնակի վեճեր, որոնց լուծումը երկարաձգվեց մինչև Անդրդաշնության լուծարումը:

1930-ական թվականների սկզբներին ադրբեջանցիները հավակնություններ ներկայացրեցին ՀՍԽՀ Շամշադինի և ԱՍԽՀ Գետաբեկի շրջանների միջև գտնվող անտառային տարածքի նկատմամբ: Անդրդաշնության ԿԳԿ-ի կայացրած որոշման համաձայն 1930 թ. այդ տարածքը ՀՍԽՀ մաս էր հանդիսանում, որն ամրագրվել էր 1932 թ. հրատարակված պետական քարտեզում:

³³ Нифталиев И., ևշվ. աշխ., էջ 187:

³⁴ Նույն տեղում, էջ 192:

³⁵ Նույն տեղում:

Աղբբեջանական կողմը տարբեր քայլերի էր դիմում՝ հաստատված սահմանագծի խախտմանը հասնելու համար: Բանն այնտեղ հասավ, որ 1936 թ. հունիսին երկու կողմերի մասնակցությամբ հանձնաժողով կազմվեց, որը տեղում քննարկեց Շամշադինի և Գետաբեկի շրջանների միջև առկա հողային-անտառային վեճերը և համապատասխան որոշում կայացրեց: Արդյունքում՝ որոշվեց շրջանների սահմանափափանման համար հիմք ընդունել 1930 թ. Անդրդաշնության ԿԳԿ-ի կայացրած որոշումը³⁶:

Ի դեպ, Խորհրդային Հայաստանի հյուսիսարևելյան հատվածում 1930-ական թվականների կեսերին վիճելի էր համարվում ՀՍԽՀ Իջևանի և ԱՍԽՀ Ղազախի շրջանների համապատասխանաբար Բաղանիս և Բաղանիս-Այրում գյուղերի միջև գտնվող Թարաքյամազարի հողակտորը: Խնդիրը կարգավորելու նպատակով ստեղծված Հայկական և Աղբբեջանական ԽՍՀ կենտգործկոմների միացյալ հանձնաժողովը 1937 թ. սեպտեմբերի 13-ին որոշեց 30 հա տարածքով Թարաքյամազարի վիճելի հողամասը հանձնել Իջևանի Բաղանիս գյուղի օգտագործմանը, իսկ Իջևանի շրջանի ամառային արոտավայրերից 120 հա հանձնել Ղազախի Բաղանիս-Այրում գյուղի օգտագործմանը: Նշված որոշումը հաստատվեց ՀԽՍՀ ԿԳԿ-ի նախագահության 1937 թ. հոկտեմբերի 16-ի նիստում: Հանրապետության հողժողովումին հանձնարարվեց 10 օրվա ընթացքում իրականացնել կայացված որոշումը³⁷:

Այսպիսով՝ Անդրկովկասյան դաշնության օրոք, բազմաթիվ քննարկումներից հետո, ի վնաս հայկական շահերի և Խորհրդային Հայաստանին պատկանող տարածքների կորստի հաշվին «լուծում տրվեց» հանրապետության հյուսիսարևելյան սահման-

³⁶ ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 687, թ. 9, 13:

³⁷ Նույն տեղում, ց. 3, գ. 328, թ. 2:

ներում գոյություն ունեցող տարածքային վեճերին: Դրա հետևանքով Խորհրդային Հայաստանը և նրա իրավահաջորդը հանդիսացող Հայաստանի երրորդ հանրապետությունը հայտնվեցին ռազմավարական տեսակետից աննպաստ պայմաններում:

• • •

Հայաստանի առաջին հանրապետության տարիներին հայկական իշխանությունը տարածվում էր նաև Ելիզավետպոլի նահանգի Ջնանշիրի գավառի արևմտյան բարձրլեռնային Մեծ և Փոքր Ալ լճերի (Ալազյուլար) վրա՝ շուրջ 260 քառ. կմ տարածությամբ³⁸: 1923 թ. հայկական կողմը հարց բարձրացրեց կցելու այդ տարածքը Նոր Բայազետի գավառին, ինչը հիմնավորվում էր վարչական կառավարման նպատակահարմարությամբ: 1923 թ. ապրիլի 23-ին հարցը քննարկվեց Անդրկենտրոնական նախագահության կողմից, սակայն խնդիրը մնաց չկարգավորված: 1926 թ. օգոստոսի 10-ին ՀՍԽՆ ԿԳԿ-ն Անդրդաշնության ԿԳԿ-ին խնդրեց արագացնել հարցի կարգավորումը: Հոկտեմբեր-դեկտեմբերին Դաշնության կենտրոնական կից Հողային և անտառային վեճերը լուծող հանձնաժողովը մի շարք հարցումներ ուղարկեց ՀՍԽՆ և ԱՍԽՆ իշխանություններին: Ադրբեջանական կողմը փորձում էր հիմնավորել Քրդստանի քոչվորների՝ այդ տարածքներից օգտվելու անհրաժեշտությունը: Ալ լճերի ամառային արոտավայրի պատկանելության հարցն այնուհետև քննարկվեց Հողհանձնաժողովի 1927 թ. հունվարի 11-ի նիստում, սակայն կողմերի սկզբունքային տարաձայնությունների պատճառով համաձայնություն չկայացավ³⁹: Անդրդաշնության ԿԳԿ-ի նախագահության 1929 թ. փետրվարի 18-ի նիստում, Դաշնության կազմի մեջ մտնող հանրապետությունների սահմանային խնդիրներին առնչվող հարցե-

³⁸ Խաչատրյան Կ., Բաղայան Գ., նշվ. աշխ., էջ 177:

³⁹ ՎԱԱ, ֆ. 607, ց. 1, գ. 1136, թ. 8-9, 13, 16, 21:

րի թվում քննարկվեց նաև արոտավայրի հարցը, ուր որոշվեց ամբողջ վիճելի տարածքը հանձնել Քրդստանի գավառին⁴⁰:

Նշված որոշումը Խորհրդային Հայաստանում միանշանակ չընդունվեց: Այսպես՝ 1930 թ. նոյեմբերի 12-ին ՀՍԽՀ ԿԳԿ-ին ուղղված գրությունում հանրապետության Հողժողկոմատը բողոքում էր, որ արոտավայրի վերաբերյալ Անդրկենտրոնականի որոշումը կայացվել է առանց տեղում զննություն-ուսումնասիրություն կատարելու, տեղական գործկոմների ու ժողկոմատի կարծիքը հարցնելու: Շեշտվում էր, որ սեպի նման ՀՍԽՀ-ի մեջ մտած նշյալ տարածքը «յուր դիրքով, ջրային պայմաններով և այլն միանգամայն կտրված է Խ. Ադրբեջանի սահմանակից բոլոր շրջաններից (Քրդստան) և Բասարգեչարի շրջանի շարունակությունն ու անբաժան մասն է կազմում: Նրա ռացիոնալ օգտագործումը (խոտհարքներ ու ջրեր) կապված է Բասարգեչարի շրջանի գյուղերի հետ»: Վերջում ժողկոմատն առաջարկում էր միջնորդել Անդրկենտրոնականի առջև՝ հարցն քննհանուր կարգով վերաքննարկելու համար: Այդ նպատակով առաջարկվում էր ՀՍԽՀ հողժողկոմատի մասնակցությամբ տեղում զննություն և մանրամասն ուսումնասիրություն կատարել, լսել տեղական գործկոմների կարծիքներն ու առարկությունները⁴¹:

Սակայն ՀՍԽՀ հողժողկոմատն իր առաջարկներում հապաղել էր: Բանն այն է, որ Անդրդաշնության ԿԳԿ-ի հետուկ հանձնաժողովն Ալ լճերի տարածքում սահմանագծման աշխատանքներն արդեն ավարտել էր: Ելնելով այդ իրողությունից՝ ՀՍԽՀ ԿԳԿ-ի փոքր նախագահության 1930 թ. դեկտեմբերի 17-ին իստում որոշվեց «հարցը համարել սպառված»⁴²: Փաստենք, նշված տարածքը, բացի տնտեսական հարմարություններից,

⁴⁰ ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 267, թ. 78:

⁴¹ Նույն տեղում, գ. 551, թ. 8:

⁴² Նույն տեղում, թ. 7:

Խորհրդային Ադրբեջանին նաև ռազմավարական առավելություններ էր ընձեռում Խորհրդային Հայաստանի նկատմամբ:

•••

1920 թ. դեկտեմբերի 2-ի հայ-ռուսական համաձայնագրով Խորհրդային Հայաստանի մաս հանդիսացող Ելիզավետպոլի նահանգը Չանգեզուրի գավառը 1921 թ. հոկտեմբերին հայ և ադրբեջանցի բոլշևիկների կողմից քողարկված կերպով բաժանվեց ՀՍԽՀ-ի և ԱՍԽՀ-ի միջև: Գավառի՝ հիմնականում մահմեդականներով բնակեցված արևելյան մասը մտավ ԱՍԽՀ Ղուբաթլուի գավառի, իսկ հայաբնակ արևմտյան մասը՝ ՀՍԽՀ Չանգեզուրի գավառի մեջ⁴³:

ՀՍԽՀ-ի և ԱՍԽՀ-ի միջև գոյություն ունեցող սահմանային խնդիրներին լուծում տալուն ուղղված իրական քայլեր սկսվեցին իրականացվել 1922 թ.: 1922 թ. փետրվարի 8-ին Չանգեզուրի գավառային գործկոմին ուղղված գրությամբ ՀՍԽՀ արտգործժողկոմ Ա. Մոավյանը և ժողկոմատի քաղաքական բաժնի վարիչ Պ. Յակուլյանը տեղեկացնում էին, որ արտաքին գործերի ժողկոմատը մտադիր է առաջիկայում «վերջնականապես որոշել սահմանային հարցը Ադրբեջանի հետ» և խնդրում է համապատասխան զեկուցագիր պատրաստել՝ անդրադառնալով Չանգեզուր վերադարձած մահմեդականների քանակին, հայերի և մահմեդականների միջև եղած հարաբերություններին, Ղուբաթլուի գավգործկոմի, Քրդստանի հետ տեղական հայկական իշխանությունների ունեցած փոխհարաբերություններին, խնդրի լուծման սեփական առաջարկներ պատրաստել, ինչպես նաև տեղեկացնել, թե «Հայաստանի և Ադրբեջանի միջև որ սահմանը Չանգեզուրում պիտի

⁴³ Մանրամասն տե՛ս Սուրիապյան Հ. Կ., Չանգեզուրի գավառի բաժանումը 1921 թվականին. Չանգեզուրում Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Ադրբեջանի միջպետական սահմանի ձևավորման պատմությունից, «Վեմ», 2014, N 4, էջ 152-159:

համարել ամենից շատ համապատասխանողը տեղական պայմաններին»⁴⁴:

Բանն այն է, որ ՀՍԽՆ Չանգեզուրի և ԱՍԽՆ Ղուբաթլուի գավառների միջև շարունակական վեճեր էին ընթանում հողային և վարչական սահմանների անորոշության պատճառով: Մասնավորապես սուր հակասություններ գոյություն ունեին Տանձաբերի շրջանի և Շուտնուխի շրջանի անտառաշերտի պատկանելության հարցում: Չանգեզուրի տեղական ղեկավարները Երևան ուղարկած նամակներում ու զեկուցագրերում զգուշացնում էին, որ Տանձաբերի շրջանն Ադրբեջանին անցնելուց հետո Կապանի տարածաշրջանն «ընդմիջտ բաժանվում է Բուն Չանգեզուրից և Սիսիանից»: Շուտնուխի անտառը Չանգեզուրի համար ուներ ոչ միայն տնտեսական, այլև ռազմավարական կարևորություն: Այն գավառի բնակչության վայտի կարևոր շտեմարանն էր: Անտառի միջով էր անցնում նաև Գորիս-Կապան խճուղին:

1922 թ. հուլիսի 3-ին ՀՍԽՆ ԿԳԿ-ի նախագահ Ս. Համբարձումյանին ուղղված զեկուցագրում ներկայացնելով Ղուբաթլուի հետ սահմանում գոյություն ունեցող իրավիճակը՝ Չանգեզուրի գավգործկոմի Հողային բաժնի վարիչ Մինասյանն առաջարկում էր շտապ լուծել գավառի հողային և վարչական սահմանների հարցը: Չեկուցագրի վերջում նա մատնանշում էր, որ, առանց այս հարցերի կանոնակարգման, երկու շրջանների միջև «նորմալ կյանք և բարյացակամ հարաբերություններ լինել չեն կարող»⁴⁵: Բանն այն է, որ Ղուբաթլուի շրջանի ղեկավարությունը և նրան ձայնակցող Ադրբեջանի ԿԳԿ-ն տեղի-անտեղի Չանգեզուրի սահմանամերձ բնակավայրերում ապրող հայ գյուղացիներին պար-

⁴⁴ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 156, թ. 1 և շրջ.:

⁴⁵ ՀԱԱ, ֆ. 112, ց. 3, գ. 123, թ. 5 և շրջ.:

բերաբար մեղադրում էին սահմանախախտման և սեփական տարածքում ոչ օրինական գործունեություն ծավալելու մեջ⁴⁶:

Ադրբեջանական իշխանություններն ամենատարբեր քայլերի էին դիմում Ջանգեզուրի գավառի անգամ փոքրաթիվ մուսուլմանական բնակչություն ունեցող գյուղերն Ադրբեջանին բռնակցելու նպատակով: Մասնավորապես՝ 1921 թ. սկսած Ջանգելանի գավառը կոմունիստական իշխանություններ էր հանդես բերում Մեդրուշրջանի Ալյարա և Թդուր սակավամարդ գյուղերի նկատմամբ: Ադրբեջանական իշխանությունների հրահրմամբ նշված գյուղերի մուսուլման բնակիչները հրաժարվում էին ենթարկվել ՀՍԽՆ տեղական իշխանություններին, վճարել հարկերն ու տուրքերը: Սա այն դեպքում, երբ շրջանի ղեկավարությունն ունեցած սուղ միջոցներից սերմացու և անհրաժեշտ պարագաներ էր հատկացնում նշյալ գյուղերին⁴⁷: Նման քայլերով ադրբեջանցիները հող էին նախապատրաստում վիճելի ճանաչված տարածքների պատկանելության հարցն իրենց օգտին լուծելու նպատակով:

1923 թ. հուլիսի 7-ին ԱՍԽՆ ԿԳԿ-ն ղեկրետ հրապարակեց Լեոնսային Ղարաբաղի Ինքնավար Մարզ (ԼՂԻՄ) կազմավորելու մասին: Նույն օրը տեղի ունեցած ԼՂԻՄ-ի և Քրդստանի սահմանները որոշող հանձնաժողովի նիստում որոշվեց նաև կազմավորել ինքնավար Քրդստան, որի սահմանները պետք է որոշվեր ԼՂԻՄ-ի սահմանների հաստատումից հետո: Արդեն հուլիսի 16-ին Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի նախագահությունը որոշում ընդունեց քրդերով բնակեցված տարածքներում Քրդստանի գավառ (այսպես կոչված «Կարմիր Քրդստան») կազմավորելու մասին: Ակնհայտ էր, որ Ղուբաթլուի գավառի հիմքի վրա ստեղծվող «Կարմիր Քրդստան» անվանումով արհեստական վարչական

⁴⁶ Նույն տեղում, թ. 7 և շրջ.:

⁴⁷ ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 62, թ. 16-18, ց. 2, գ. 19, թ. 26-27:

միավորի միջոցով ադրբեջանական իշխանությունները ձգտում էին բացառել ՀՍԽՀ-ի և ԼՂԻՄ-ի միջև անմիջական ցամաքային կապի առկայությունը: Նշենք, որ 1920-ականների սկզբներին հայկական նշյալ երկու պետական կազմավորումների անմիջական ցամաքային կապը փաստող բազմաթիվ վկայություններ կան: Փաստորեն, նպատակային քաղաքականության արդյունքում Ադրբեջանը ոչ միայն նորանոր հողատարածքներ յուրացրեց տարածքային տեսակետից առանց այն էլ բզկտված Խորհրդային Հայաստանից, այլև բացառեց ԼՂԻՄ-ի հետ նրա տարածքային կապը⁴⁸:

Արխիվային փավերագրերը փաստում են, որ Խորհրդային Հայաստանում ամեննին չէին հաշտվել նախկին Ելիզավետպոլի նահանգի Ջանգեզուրի գավառի՝ ՀՍԽՀ-ի և ԱՍԽՀ-ի միջև բաժանման փաստի հետ: Ասվածի վկայությունն է 1923 թ. օգոստոսի 30-ին ՀՍԽՀ հողագործության ժողկոմատի Հոդային բաժանմունքի կողմից հանրապետության ԿԳԿ-ի համար պատրաստած զեկուցագիրը ՀՍԽՀ Ջանգեզուրի գավառի սահմանների մասին: Այն ստացել էր Ջանգեզուրի գավառի նախագահության հավանությունը⁴⁹: Փաստաթղթի վերջում դրված է հողժողկոմ Արամայիս Երզնկյանի, ժողկոմատի Հոդային բաժնի վարիչ Խաչատուր Ավդալբեկյանի և ժողկոմասի գործավարի ստորագրությունները: Ամենայն հավանականությամբ, հեղինակը Խ. Ավդալբեկյանն էր: Ջեկուցագրին կից եղել է նաև համապատասխան քարտեզ: Հայաստանի ազգային արխիվում մեզ չի հաջողվել գտնել այդ քար-

⁴⁸ Մանրամասն տե՛ս Բաբայան Դ., Կարմիր Քրդստան. կազմավորման և լուծարման աշխարհաքաղաքական ասպեկտները, «21-րդ ԴԱԸ», 2005, N 4, էջ 83-106, Խաչատրյան Կ., ԼՂԻՄ-ի կազմավորումը և նրա տարածքային կորուստները 1920-1930-ական թթ., «Հայոց պատմության հարցեր (գիտական հողվածների ժողովածու)», N 15, Երևան, 2014, էջ 195-196:

⁴⁹ ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 11, թ. 42-43:

տեղը: Ջեկուցագրի պատճենը որպես «ի գիտություն» օգոստոսի 31-ին ուղարկվել է ՀՍԽՀ ներքին գործերի ժողկոմատին⁵⁰:

Ջեկուցագրում առաջարկվում էր սահմանային վեճերը լուծող Անդրկենտրոնականի հանձնաժողովի աշխատանքներին մասնակցող ՀՍԽՀ ներկայացուցիչներին հանձնարարել Ջանգեգուրի գավառի դեպքում հասնել հետևյալ նպաստավոր սահմանագծի հաստատմանը. «Հարավից Արաքս գետը (պարսկական սահման), արևելքից (Խորհրդային Ադրբեջան)՝ Հազարու գետը Արաքսի հետ խառնվելուց սկսված մինչև Ադ-Օղլան գետի միացման կետը՝ Ծիծեռնավանքի մոտ: Վերջին կետից սահմանն արևմուտք ձգվող ուղիղ գծով միանում է Կուճի-Ղովշան (6721) գագաթի հետ և ապա 6554, 9219 և 10.482 բարձունքների ուղղությամբ ձգվող լեռնաշղթայի գծով միանում է Մըխթոբյան շղթայի հետ և Դալիդադից (11.906) սկսած հին սահմանը նախ Ջաբրայիլի և ապա Դարալագյազի ու Նախիջևանի գավառների հետ պահում է անփոփոխ՝ մինչև Կարճևանի լեռները, որտեղ սահմանագիծը լեռնաշղթայով և ուղիղ գծով Կալնեկ (7.075) գագաթի վրայով միանում է Արաքսին՝ Ջանգեգուրի գավառի մեջ թողնելով Կարճևանի հարթությունը»⁵¹:

Այնուհետև նշյալ սահմանագիծն աշխարհագրական, վարչական և տնտեսական տեսակետից նպատակահարմար լինելը հիմնավորող մի շարք տրամաբանված փաստարկներ էր բերվում: Նախ նշվում էր, որ սահմանն անցնելու է անմատչելի լեռնագագաթների և խորը ձորերի միջով, ապա՝ շեշտվում, որ մատնանշված սահմաններում վարչական տեսակետից դյուրին կլինի գավառի կառավարումը, այն հանդիսանում է մեկ տնտեսական միավոր, ուստի նպատակահարմար չէ նրա կենտրոնում ընկած

⁵⁰ Նույն տեղում, թ. 41:

⁵¹ Նույն տեղում, թ. 42:

անտառամասը երկու մասի բաժանել: Աննպատակահարմար էր համարվում «Կարմիր Քրդստանի» առանձնացումից հետո Ղուբաթլուի առանձին գավառի գոյությունը: Դրանով Կապանի շրջանը բուն Ջանգեզուրին կապող միակ ճանապարհը դուրս էր մնում Ջանգեզուրի գավառի վարչական սահմաններից, ինչն անթույլատրելի էր համարվում: Ջեկուցագրում ընդգծվում էր, որ սահմանագծի ցանկացած տարբերակի դեպքում Սիսիանի, Կապանի ու Մեղրիի շրջաններում մնալու է մահմեդական բնակչություն, «որի կրթական-կուլտուրական աշխատանքի կապը նույն ապարատի ձեռքով միանգամայն անհրաժեշտ է»: Ըստ այդմ էլ փաստաթուղթն ավարտվում էր հետևյալ տողերով. «Խորհրդային կարգերում Ղուբաթլուի շրջանը չի կարելի գատել կարմիր Ջանգեզուրից, որը վերջնականապես ազատագրվել է ազգայնական, կղերական ու կալվածատիրական տարրերից ու նրանց վարած քաղաքականությունից: Ղուբաթլուի շրջանի աննորմալ զուտումը կարող է ռեակցիա առաջ բերել Ջանգեզուրի աշխատավորության մտքերի մեջ, իսկ նրա միացումը Ջանգեզուրին կարող է միայն ուրախություն պատճառել դեռ մինչև այսօր մուլաների, աղսակալների ու կալվածատերերի ազդեցությունից չազատագրված Ղուբաթլուի շրջանի աշխատավորությանը, որի ներկայացուցիչներին գավառի իշխանության կազմի մեջ մտցնելու հեղափոխական քայլը պետք է կատարել օր առաջ»⁵²: Սակայն ՀՍԽՂ հողագործության ժողկոմատի առաջարկները կյանքի չկոչվեցին, դրանք չբնարկվեցին նույնիսկ Անդրդաշնության ԿԳԿ-ի հանձնաժողովների շրջանակներում: Գերիշխող մտայնության պայմաններում նույնիսկ տեսականորեն չէր քննարկվում միութենական հանրապետությունների սահմանների փոփոխության հարցը:

⁵² Նույն տեղում, թ. 43:

«Կարմիր Քրդստան» կազմակերպելու մասին որոշումից հետո առաջնային խնդիր դարձավ վերջինի սահմանների որոշումը, այդ թվում՝ ՀՍԽՀ Ջանգեզուրի գավառի հետ սահմանագծի հստակեցումը: 1923 թ. հոկտեմբերի 18-ին Անդրդաշնության ԿԳԿ-ի նախագահության նիստում քննարկվեց Ադրբեջանի ԿԳԿ-ի միջնորդությունը՝ Քրդստանի և Ջանգեզուրի գավառների սահմանային վեճերը կարգավորելու մասին: Կենտգործկոմի որոշմամբ այդ նպատակով ստեղծվեց համապատասխան հանձնաժողով՝ Գեորգի Ստուրոեայի նախագահությամբ և Քրդստանի ու Ջանգեզուրի գավառների գործկոմների ներկայացուցիչների մասնակցությամբ, որոնց հանձնարարվեց «լուծել նշված գավառների միջև գոյություն ունեցող բոլոր սահմանային վեճերը»⁵³: Մեկ ամիս չանցած՝ նոյեմբերի 12-ին, Անդրդաշնության ԿԳԿ-ն որոշեց նշված գավառների սահմանագիծը որոշող մեկ այլ հանձնաժողով կազմել՝ այս անգամ Սիլվեստր Թողրիայի ղեկավարությամբ⁵⁴: Ինչպես իրավացիորեն նկատում է պատմաբան Ա. Սահակյանը, այս իրողությունը «հետևանք էր այդ շրջաններում տիրող լարված դրության, որը երբեմն վերաճում էր ընդհարումների»⁵⁵:

1923 թ. դեկտեմբերի 17-ին Անդրդաշնության ԿԳԿ-ի նախագահության նիստում քննարկվեց Ս. Թողրիայի զեկուցումն իր ղեկավարած հանձնաժողովի աշխատանքների մասին: Ջեկուցման վերաբերյալ կայացված որոշումից պարզվում է, որ սահմանային խնդիրների կարգավորման սկզբունքների հարցում հանձնաժողովի անդամների միջև տարակարծություններ էին եղել: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ որոշվեց նոր հանձնաժողով ստեղ-

⁵³ ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 95, թ. 173, К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР. 1918-1925: Документы и материалы, Баку, 1989, с. 206:

⁵⁴ ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 95, թ. 186:

⁵⁵ Սահակյան Ա., նշվ. աշխ., էջ 177:

ձեւ՝ Մ. Օրախելաշվիլի (նախագահ), Ս. Լուկաշին, Ղ. Մուսաբեկով, Ս. Յաղուբով, Ս. Կասյան (անդամներ) կազմով⁵⁶: Չնայած նորաստեղծ հանձնաժողովին վերջնական որոշում կայացնելու լիազորություն էր տրված, այդուհանդերձ, այս որոշմանը ևս վիճակված էր թղթի վրա մնալ:

Սահմանագծի անորոշ դրությունն անհանգստություն էր պատճառում զանգեզուրցիներին: Խնդիրն այն է, որ չէր դադարում Քրդստանի տարածքից տարբեր ավագակախմբերի կողմից սահմանակից հայկական գյուղերի վրա կատարվող պարբերական հարձակումներն ու թալանը: Չանգեզուրի գավգործկոմի բազմաթիվ դիմումների հիման վրա՝ ՀՍԽՂ ԿԳԿ-ն 1924 թ. մարտին սահմանախախտումների վերաբերյալ եղած նյութերը փոխանցեց երկու գավառների սահմանագիծը որոշող հանձնաժողովին⁵⁷: 1924 թ. մայիսի 14-ին Անդրկենտգործկոմը Չանգեզուրի և Քրդստանի սահմանները որոշող հանձնաժողովին (նախագահ՝ Շ. Էլիավա) հանձնարարեց առկա խնդիրներին լուծում տալու նպատակով մայիսի վերջին տարածաշրջան մեկնել⁵⁸: 1924 թ. հունիսին հանձնաժողովը Չանգեզուրի և Քրդստանի գավառների սահմանագծման վերաբերյալ որոշում կայացրեց, որը 1924 թ. օգոստոսի 18-ին արժանացավ Անդրդաշնության ԿԳԿ-ի հավանությանը⁵⁹: Այդուհանդերձ, այս և նմանատիպ որոշումները գործնական քայլերի չհանգեցրին: Անդրկենտգործկոմը ձգձգում էր մասնագետ հողաչափերի գործուղումը, որոնք պետք է վերջնականապես որոշեին սահմանային գյուղերի վեճի առարկա հանդիսացող հողատարածքների պատկանելության հարցը: Այս պատճառով վեճեր և տարբեր թյուրիմացություններ էին լինում

⁵⁶ ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 143, թ. 27:

⁵⁷ Նույն տեղում, թ. 182:

⁵⁸ Նույն տեղում, թ. 269:

⁵⁹ Նույն տեղում, գ. 168, թ. 23 շրջ., 27 և շրջ.:

հայ և ադրբեջանցի գյուղացիների միջև⁶⁰: Նշված հանգամանքն առաջ էր բերում ՀՍԽՉ ղեկավարության դժգոհությունը:

Զանգեզուրի և Քրդստանի գավառների միջև սահմանների գծման համար կազմվել էր տեղական հանձնաժողով՝ Յա. Կոչետկովի նախագահությամբ և Հայաստանի ու Ադրբեջանի ներկայացուցիչների մասնակցությամբ: Հանձնաժողովը տեղում աշխատանքներ իրականացրեց 1926 թ. սեպտեմբերի առաջին կեսին, իսկ նրա կայացրած որոշումներն ամրագրվեցին 1926 թ. սեպտեմբերի 12-ին, 14-ին և 15-ին կայացած նիստերում ընդունված որոշումներով⁶¹: Նշված հանձնաժողովում՝ որպես ՀՍԽՉ հողժողկոմատի ներկայացուցիչ, ընդգրկվել էր նաև նշանավոր գրող, մասնագիտությամբ հողաշինարար Ակսել Բակունցը⁶²: Նրա կողմից Հողժողկոմատի հողվարչությանը ներկայացված զեկուցագրերը արժեքավոր տեղեկություններ են պարունակում Զանգեզուրի գավառի սահմանագծման աշխատանքների վերաբերյալ⁶³:

1922 թ. Զանգեզուրից գավառից Մեղրու գավառի առանձնացումից հետո խնդրահարույց էր նաև ՀՍԽՉ Մեղրու և ԱՍԽՉ Կարյազինոյի (Ջաբրայիլ) գավառների միջև սահմանը: Անդրդաշնության կազմում գտնվող հանրապետությունների վարչատարածքային միավորների սահմանների ճշգրտման գործընթացի շրջանակներում Անդրկենտգործկոմի քարտուղար Ա. Շահվերդովը 1925 թ. սեպտեմբերի 25-ին դիմեց Հայկենտգործկոմին՝ հարցում կատարելով Մեղրու գավառի և Կարյազինոյի գավառի Զանգելանի գա-

⁶⁰ Նույն տեղում, ց. 2, գ. 62, թ. 4, 6-9:

⁶¹ Հանձնաժողովի նշված նիստերի արձանագրությունները տե՛ս ՀԱԱ, ֆ. 132, ց. 1, գ. 437, թ. 7-11:

⁶² ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 62, թ. 18:

⁶³ Մանրամասն տե՛ս Ղազարյան Գ., Ակսել Բակունցի մասնակցությունը Զանգեզուրի գավառի տարածքում հայ-ադրբեջանական սահմանը որոշող հանձնաժողովի աշխատանքներին (1920-ական թվականներ), «Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու)», N 15, Երևան, 2014, էջ 218-226:

վառակի միջև հողային վեճերի առկայության մասին: Այդպիսին լինելու դեպքում առաջարկվում էր 5 վերստանոց քարտեզի վրա գծել ՀՍԽՂ հավակնությունները՝ կից ներկայացնելով համապատասխան հիմնավորումներ: Հոկտեմբերի 9-ին Հայկենտգործկոմը Թիֆլիս ուղարկեց ՀՍԽՂ հողագործության ժողկոմատի պատրաստած համապատասխան տեղեկանքը և կից քարտեզը: Հայտնելով, որ Մեղրու և Ջանգելանի միջև լուծված չեն սահմանային վեճերը, ՀՍԽՂ ԿԳԿ-ն ներկայացնում էր սահմանի հայկական տարբերակի հետևյալ 3 հիմնավորումները.

1. Ներկայացվող սահմանագիծը հանդիսանում է ՀՍԽՂ հողժողկոմ Ա. Երզնկյանի և ԱՍԽՂ ժողկոմխորիի նախագահ Մ. Բաղիրովի միջև կայացած Ջանգելուրի սահմանաբաժանման սկզբունքային համաձայնության շարունակությունը: Առաջարկվում է սահմանն անցկացնել լեռնագագաթները միացնող լեռնաշղթաների ջրաբաշխ գծով, ինչը հետագայում կբացառի սահմանային վեճերի հնարավորությունը:

2. Առաջարկվող սահմանից արևմուտք (ՀՍԽՂ) ընկնող տարածքները հիմնականում ձմեռային արոտատեղեր էին, որոնք փաստացի օգտագործվում էին Կապանի և Մեղրու շրջանների խոտհարքներ չունեցող գյուղերի բնակիչների կողմից: Առանց այդ արոտատեղերի կաթվածահար կլինեին նշյալ գյուղերի անասնապահությունը:

3. Սահմանը գծելիս հիմք էր ընդունվել նաև տարածքի ազգագրական պատկերը: Սահմանագծից արևմուտք էր ընկնում մահմեդականներով բնակեցված ընդամենը մեկ գյուղ՝ Նյուվադին:

Ելնելով այս ամենից՝ ՀՍԽՂ ԿԳԿ-ն Անդրկենտգործկոմին խնդրում էր համապատասխան որոշում կայացնել նշված գա-

վառների միջև վերջնական սահմանագծի հաստատման վերաբերյալ⁶⁴:

1926 թ. դեկտեմբերի 16-ին Անդրկենտրոնումի հողհանձնաժողովի նախագահ Ս. Կասյանին ներկայացված հաշվետվությունում հանձնաժողովի նախագահի տեղակալ Յա. Կոչետկովը հայտնում էր, որ իր ղեկավարած հանձնաժողովը (անդամներ՝ ՀՍԽՀ ներկայացուցիչ, Ջանգեզուրի գավառումի նախագահ Բ. Հարությունյան և Կարյազինի գավառումի նախագահ Մամեդխանով) մեկնել է վիճելի տարածք և տեղի բնակչության ներկայությամբ գննել ՀՍԽՀ ԿԳԿ-ի կողմից 1925 թ. հոկտեմբերի 9-ին առաջարկված սահմանագիծը, ինչպես նաև գրույցներ ունեցել գյուղացիության հետ, թե որ հանրապետությանն են ցանկանում միանալ: Նշվում էր, որ սահմանային շերտում մուսուլման գյուղացիները կենտրոնացած են Ողջի գետի ավազանում (20 գյուղ-գյուղակներ՝ 412 տուն, 1552 անձ), Բասուտ գետի ավազանում (1 գյուղ՝ 25 տուն, 100 անձ) և Արաքս գետի ավազանում տարածքում գտնվող 3 գյուղերում (Նյուվադի, Էյնաձոր (Այնազոր), Թղութ միասին 175 տուն, 664 անձ): Հանձնաժողովի հոկտեմբերի 14-ինիստի ընթացքում Ադրբեջանի ներկայացուցիչը պահանջեց, որպեսզի Ողջի գետի ավազանի մուսուլման բնակիչները, երկու գյուղերի միասնական գյուղխորհուրդների ցանկության համաձայն, մնան Կարյազինոյի գավառում: Իսկ հաջորդ օրը կայացած նիստի ժամանակ էլ նա պահանջեց Կարյազինոյի գավառի տարածքում թողնել Նյուվադի, Էյնաձոր և Թղութ գյուղերը՝ հիմնվելով բնակչության ցանկության վրա: Իր առաջարկը Մամեդխանովը հիմնավորում էր նրանով, որ Մեդրու գավառում չկար համապատասխան դպրոց, կարող էր լինել լեզվի հարց և այլն՝ չնայած ընդունում էր, որ նշյալ գյուղերը տնտեսական և վարչական տե-

⁶⁴ ՎԱԱ, ֆ. 607, ց. 1, գ. 577, թ. 12 և շրջ., ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 62, թ. 16 և շրջ., 18-20:

սակետից առավել շատ կապված են Մեղրու գավառի հետ: ՀՍԽՀ ներկայացուցիչն էլ իր կողմից փաստեց, որ նշյալ գյուղերի անցումը Կարյազինոյի գավառին անցանկալի վարչական և տնտեսական վիճակ կստեղծի, քանի որ գյուղերի բնակիչները տնտեսապես և վարչական տեսակետից առավելապես կապված են Ջանգեզուրի և Մեղրու գավառների հետ (աշխատում էին «Կարմիր նոյեմբեր» պղնձի գործարանում⁶⁵ և այլն), իսկ չքավոր գյուղացիների մեծամասնությունը ցանկանում է մնալ Հայաստանի տարածքում:

Վերլուծելով կողմերի առաջարկները՝ Յա. Կոչետկովը եզրակացնում է, որ ՀՍԽՀ ԿԳԿ-ի առաջարկած սահմանագիծը.

ա) Հանդիսանում է Ջանգեզուրի և Քրդստանի գավառների միջև հաստատված սահմանների շարունակությունը:

բ) Այն անցնում է բնական սահմաններով, այսինքն՝ լեռնալանջերով ու լեռնաշղթաների գագաթներով և այդ պատճառով էլ հանդիսանում է բնական սահման:

գ) Ողջի գետի ավազանի ամբողջ բնակչությունը վարչական կենտրոն (տեղական գործկոմ) կունենա Մարտունավան քաղաքում («Կարմիր նոյեմբեր» գործարանը): Նշյալ կենտրոնից ավազանի գյուղերը գտնվում էին մի քանի վերստ հեռավորության վրա, իսկ բնակիչները տնտեսական առումով սերտորեն կապված էին Մարտունավանի հետ, քանի որ նրանք հանդիսանում են աշխատող մեծ ուժ «Կարմիր նոյեմբեր» գործարանի համար, ինչպես նաև օգտվում են տեղի բուժապասարկումից, կոոպերատիվից և այլն: Այս դեպքում՝ Ողջի գետի ավազանի մուսուլմանական և հարակից հայկական գյուղերի միջև առկա հողային վեճերը

⁶⁵ Կապանի գավառակի կենտրոն նախկին Ղաթարի պղնձաձուլակսան գործարանն էր:

կլուծվեին ՀՍԽՀ-ում իրականացվող հողաշինարարական աշխատանքների շրջանակներում⁶⁶:

դ) Արաքսի ափամերձ տարածքում գտնվող Նյուվադի, Էյնաձոր, Թղութ գյուղերը ևս վարչատնտեսական առումով առավել կապված են Մեղրու հետ և առավել մոտ են վերջինին, քան Ջանգելանին: Գյուղատնտեսական մթերքների իրացումը, ֆաբրիկագործարանային ապրանքների ձեռքբերումը, բժշկական օգնությունը և մնացած ամեն ինչ այդ գյուղերը ստանում են Մեղրիից:

Յա. Կոչետկովն այնուհետև հատուկ շեշտում էր, որ ադրբեջանական առաջարկի ընդունման դեպքում կատարվի.

ա) Աղավաղված սահման, որն անցնում է կատարելապես անհարմար տեղերով:

բ) Անհրաժեշտ կլինի մուսուլման և հայ բնակիչների միջև եղած բոլոր հողային վեճերը լուծել Անդրկենտրոնականի Հողհանձնաժողովի կողմից, որը շատ դժվար է, քանի որ նշանակված Անդրկենտրոնականի հանձնաժողովը հնարավորություն չի ունենա սահմանային շերտում հողակարգավորում անցկացնել:

գ) Սահմանը կանցնի «Կարմիր նոյեմբեր» գործարանից և Կապանի շրջկենտրոնից երկու վերստ հեռավորությամբ, որը դժվարություն կստեղծի շրջանի ղեկավարման համար:

դ) Այս բոլորից բացի՝ Թղութ գյուղը (52 մուսուլման բնակիչներով) Շվանիձորի (840 հայ բնակիչներով) թաղամասերից մեկն է, և այդ գյուղերը մեկը մյուսից բաժանելն անհնար է՝ նկատի ունենալով այն, որ հողերը (այգիներն ու արոտավայրերը) իրար կցված են:

⁶⁶ Ի դեպ, 1927 թ. դրությամբ ՀՍԽՀ բոլոր գավառներում փաստացի ավարտվել էր հողաշինարարական աշխատանքները՝ բացառությամբ Ջանգելուրի գավառի Ղափանի շրջանի նշյալ վիճելի գյուղերի (Ավդալբեգյան Խ., Հողաշինարարությունը Խորհրդային Հայաստանում 1921-1927 թթ., «Գյուղատնտեսական կյանք», 1927, N 10-11, էջ 69):

Ներկայացնելով սահմանագծման հարցում հայկական և ադրբեջանական կողմերի դիրքորոշումներն ու իր եզրակացությունը՝ Յա. Կոչետկովը կից ներկայացրեց նաև առկա նյութերը⁶⁷: Ինչպես կտեսնենք, հարցի լուծման ժամանակ Անդրկենտրոնում մի ղեկավարությունը փաստացի միջանկյալ տարբերակ ընտրեց (ի վնաս ՀՍԽՂ շահերի)՝ Կապանի շրջակայքի 21 բնակավայրերը միացնելով Խորհրդային Ադրբեջանին, իսկ Մեղրու շրջակայքի 3 գյուղերը՝ Խորհրդային Հայաստանին:

Ս. Կասյանի ղեկավարած հանձնաժողովի 1927 թ. հունվարի 9-ի նիստում, ՀՍԽՂ և ԱՍԽՂ հողժողկոմներ Ա. Երզնկյանի և Դ. Բունիաթզադեի, նաև համապատասխան գավգործկոմների նախագահների ներկայությամբ, քննարկվեցին Յա. Կոչետկովի առաջարկները: Հանձնաժողովը միաձայն որոշեց վիճելի համարվող Արաքսի ափամերձ 3 գյուղերի (Նյուվադի, Էյնաձոր, Թղութ) տարածքը (9000 դեսյատին) միացնել Մեղրու գավառին: Կապանի պղնձաձուլական գործարանի մոտակայքի վիճելի համարվող 21 գյուղերի և գյուղակների հարցն առկախ թողնվեց⁶⁸: Երկու օր անց՝ հունվարի 11-ին, գումարված Անդրդաշնության ԿԳԿ-ի նախագահության նիստում քննարկվեց «Մի կողմից Ջանգեզուրի և Մեղրու (ՀՍԽՂ), մյուս կողմից՝ Քրդստանի և Կարյազինոյի (ԱՍԽՂ) գավառների միջև վարչատնտեսական սահմաններ անցկացնելու մասին» հարցը: Որոշվեց մասնակի փոփոխություններով հաստատել հողհանձնաժողովի հունվարի 9-ի նիստի որոշումները.

ա) Տեղական հետազոտող հանձնաժողովի կողմից Ջանգեզուրի և Քրդստանի գավառների միջև հաստատված սահմանը՝ Գորիս գետից սկսած հարավ մինչև Սուսանթափայի սահմանաթմբերը, համարել հաստատված:

⁶⁷ ՎԱԱ, ֆ. 607, ց. 1, գ. 1765, թ. 3-4 շրջ.:

⁶⁸ Նույն տեղում, թ. 1:

բ) Մեղրու շրջանի երեք գյուղերը, մասնավորապես՝ Նյուվադին, Էյնաձորը և Թղութը՝ իրենց անհատական հողերով, հանձնել ՀՍԽՀ Մեղրու գավառին:

Ողջի և Բասուտ գետերի ավազաններում տեղակայված 21 գյուղերի պատկանելության հարցը կրկին թողնվեց բաց: Որոշվեց տարածաշրջան առանձին հանձնաժողով ուղարկել Անդրդաշնության ԿԳԿ-ի անդամ Գ. Ստուրուայի ղեկավարությամբ (վերջինս նշանակվեց նաև Անդրկենտրոնականի հողհանձնաժողովի հողաչափ), որի խնդիրն էր լինելու ծանոթանալ կողմերի տեսակետներին և տեղում հետազոտություն կատարել՝ առավել անկողմնակալ որոշում կայացնելու նպատակով: Հանձնաժողովում պետք է ընդգրկվեին ՀՍԽՀ և ԱՍԽՀ հողագործության ժողկոմատների ներկայացուցիչներ⁶⁹:

Փաստենք մի կարևոր հանգամանք. սահմանային վեճերի առկախ մնալը դժվարացնում էր հանրապետությունների սահմանամերձ գյուղերի բնակիչների բնականոն կյանքը: Հայ գյուղացիներին և Ջանգեզուրի տեղական ղեկավարությանը գայրացնում էր վիճելի տարածքներում ադրբեջանական իշխանությունների չդադարող խժոժությունները՝ գողություններ, իրենց աշխատանքը կատարող հայ հովիվների, անտառապահների, ՀՍԽՀ-ին միանալ ցանկացող գյուղերի ազգաբնակչության հալածանքներ ու ձերբակալություններ և այլն: Ադրբեջանցիների գործողություններն ուղղված էին նրան, որ հայկական կողմը հրաժարվի այդ տարածքների նկատմամբ հավակնություններից: Եվ կարծես թե ադրբեջանցիներին ձեռնտու էր գոյություն ունեցող ստատուս քվոն: Նույնը չի կարելի ասել զանգեզուրցիների մասին: Ջանգեզուրի գավգործկոմի նախագահությունը 1925 թ. երկրորդ կեսին

⁶⁹ Նույն տեղում, գ. 1763, թ. 11 և շրջ., ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 280, թ. 3 և շրջ., ց. 2, գ. 108, թ. 494:

մի քանի անգամ դիմեց Հայկենտգործկոմին՝ միջնորդելու Անդրկենտգործկոմի առաջ, որպեսզի վերջինս կարճ ժամանակամիջոցում լուծում տա Կապանի և Ղուբաթլուի միջև գոյություն ունեցող սահմանային վեճերին, նաև միջոցներ ձեռք առնել՝ ադրբեջանցիների անօրինություններին վերջ տալու համար⁷⁰:

Նույն խնդիրը տեսնում ենք նաև համամիութենական մարդահամարի ժամանակ: 1926 թ. դեկտեմբերի 17-ին Խորհրդային Հայաստանում անցկացված մարդահամարի ընթացքում ՀՍԽՀ կենտրոնական վիճակագրական վարչության աշխատակիցների աշխատանքներին խոչընդոտել էր հարևան պետությունների հետ սահմանային վեճերը: Անդրդաշնության Կենտվիճվարի որոշման համաձայն՝ վիճելի բնակավայրում պետք է մարդահամար անցկացվեր այն հանրապետության կողմից, որի կազմում գտնվում էր տվյալ գյուղխորհուրդը: ՀՍԽՀ կենտվիճվարը չէր կարողացել մարդահամար անցկացնել հանրապետության մի շարք բնակավայրերում, ուր նման աշխատանք էին իրականացրել Ադրբեջանն ու Վրաստանը: Այսպես՝ մարդահամար չէր անցկացվել Վեդիբասարի Քյարքի գյուղում, Ջանգեզուրի Նյուվադի, Թղութ, Էյնաձոր գյուղերում, Ջանգեզուրի գավառի Կապանի գավառամասի մեկ տասնյակից ավել բնակավայրերում՝ այսպես կոչված «Ղարդուլի շրջան»-ում (Աղբենդ, Բուրանլու, Ղայալու, Դարգլու և այլն), նաև Ալավերդու տարածաշրջանի Բորմա ձմեռանոցում: Իբրև պարզաբանում՝ նշենք, որ Քյարքին իրավական տեսակետից պատկանում էր ՀՍԽՀ-ին: Իսկ Լոք-Լալվարի վիճելի հատվածում տեղակայված Բորման գտնվում էր փաստացի ՀՍԽՀ-ի հողօգտագործման տարածքում: Ինչ վերաբերում է Նյուվադի, Թղութ, Էյնաձոր գյուղերին, ապա դրանք ՀՍԽՀ Մեղրու գավառին միացնելու մասին Անդրկենտգործկոմի 1927 թ. հուն-

⁷⁰ ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 62, թ. 13 և շրջ., 23-26:

վարի 11-ի որոշումից հետո ևս Ադրբեջանի ԿԳԿ-ն պատրաստակամություն հանդես չէր բերում հայկական կողմին փոխանցելու բնակավայրերի մարդահամարի նյութերը⁷¹: Նշված հանգամանքը դանդաղեցնում էր ՀՍԽՀ կենտրոնի մարդահամարի տվյալների մշակման աշխատանքը:

1927 թ. Գ. Ստուրուայի ղեկավարած հանձնաժողովի աշխատանքի տեսանելի արդյունքը Ջանգեզուրի գավառի Տեղ և Քրդստանի Մալիբեկլի գյուղերի միջև սահմանի հստակեցումն էր: Այստեղ վեճ էր ընթանում 9 հողամասի (1065,25 դեսյատին տարածքով) պատկանելության վերաբերյալ: Գ. Ստուրուայի հուլիսի 19-ի առաջարկների հիման վրա Անդրկենտրոնականի հողային և անտառային վեճերը լուծող հանձնաժողովը նոյեմբերի 26-ին հիստում միաձայն որոշում կայացրեց սահմանագծի մասին, ինչը հաստատվեց Անդրդաշնության ԿԳԿ-ի փոքր նախագահության 1928 թ. հունիսի 7-ի նիստում: Նշված որոշմամբ վերը նշված վիճելի 9 հողամասից Ջանգեզուրի գավառին անցավ 361,30, իսկ Քրդստանին՝ 703,95 դեսյատին տարածք⁷²: Անդրդաշնության ԿԳԿ-ն անմիջապես ձեռնամուխ եղավ կայացված որոշման կատարմանը: Հուլիսի 25-ին Անդրկենտրոնականի հողային և անտառային վեճերը լուծող հանձնաժողովի նախագահի տեղակալ Եգորովը ՀՍԽՀ ԿԳԿ-ին առաջարկեց տեղում սահմանագծման աշխատանքներ կատարելու և սահմանային նշաններ դնելու նպատակով ՀՍԽՀ ներկայացուցիչ նշանակել, որը պետք է անմիջապես անցներ պարտականությունների կատարմանը: Այդ աշխատանքի համար ուղարկվեց Սողոմոն Կարապետյանը⁷³:

⁷¹ Նույն տեղում, ց. 1, գ. 280, թ. 20-25 շրջ.:

⁷² Նույն տեղում, ց. 2, գ. 1407, թ. 66 շրջ.-67, ՎԱԱ, ֆ. 607, ց. 1, գ. 2270, թ. 2:

⁷³ ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 267, թ. 40:

Պետք է փաստել, որ Անդրկենտրոնականի նախագահության 1927 թ. հունվարի 11-ի որոշումից հետո ադրբեջանցիները բոլոր միջոցներով ընդդիմանում էին, որպեսզի Արաքսի ափամերձ երեք գյուղերն անցնեն Հայաստանին: Այդ մասին վկայող փաստերը բավականին շատ են⁷⁴: Ադրբեջանական կենտրոնական իշխանությունների անմիջական հսկողությամբ և տեղերում գործող ղեկավար մարմինների հետ սերտ համագործակցությամբ Նյուվադի, էյնաձոր և Թղութ գյուղերի մուսուլման բնակչության անունից 1927-1928 թթ. դիմում-բողոքներ, նամակներ և հեռագրեր էին ուղարկվում Թիֆլիս՝ Անդրկենտրոնականին, ուր իբրև թե ցանկություն էին հայտնում միանալ Ջեբրայիլի գավառին⁷⁵: Սակայն իրականությունն այն էր, որ նշյալ գյուղերի մուսուլման բնակչության հիմնական մասը (հատկապես աղքատները) ցանկանում էին միանալ Մեղրու գավառին: Գ. Ստուրուայի հանձնաժողովի նիստերի ընթացքում նույնիսկ Ջեբրայիլի գավառի Անդրկենտրոնականի նախագահ Մամեդխանովը հանգեց այն մտքին, որ առավել նպատակահարմար է նշյալ երեք գյուղերը միացնել Մեղրու գավառին: Այս տեսակետին չհամաձայնվեց Ադրբեջանի հողագործության ժողկոմ Դ. Բունիաթգադեն, ով կտրուկ կերպով պահանջում էր նշյալ գյուղերը թողնել Ջեբրայիլի գավառի կազմում՝ հակառակ դեպքում պահանջելով հարցը կրկին քննարկել Անդրդաշնության ղեկավար շրջանակներում⁷⁶: Հարցը քննարկվեց նաև Ջեբրայիլի գավառի Անդրկենտրոնականի նախագահության 1928 թ. հունվարի 23-ի նիստում, ուր որոշվեց. «Նկատի ունենալով, որ նշված երեք գյուղերն ամբողջությամբ կտրված են դայրայի կենտրոնից (շուրջ 70 վերստ) և բացակայում է հաղորդակցությունը, դարձյալ խնդրել Ադրբեջանի

⁷⁴ ՎԱԱ, ֆ. 607, ց. 1, գ. 1149, թ. 49-50:

⁷⁵ Նույն տեղում, գ. 1765, թ. 67, 72-73:

⁷⁶ Նույն տեղում, թ. 1 շրջ.-2:

ԿԳԿ-ին այդ գյուղխորհուրդը դուրս բերել Ջեբրայիլի գավառից և միացնել Մեղրիի գավառին»⁷⁷: Ասվածը փաստում է նաև Նյուվադի գյուղի բնակիչների 1928 թ. փետրվարի 10-ի խաղարար վճիռը, որտեղ որոշվել է միավորվել Մեղրու շրջանին: Այստեղ միևնույն ժամանակ նշվում էր, որ գյուղի հարուստ կուլակներն են խոչընդոտել Մեղրու գավառին իրենց միավորմանը և ստիպել դիմումներ ուղարկել⁷⁸: Նշված հակասական դիմումները դժվարացնում էին սահմանները որոշող հանձնաժողովի աշխատանքները՝ հաճախ թյուրիմացություններ առաջ բերելով: Հայաստանի ներկայացուցիչներին ևս զարմացնում էր այդ հակասական դիմումները, քանի որ մինչ այդ վերը նշված երեք գյուղերի թուրք բնակիչները, որոնք ֆինանսավորվում էին Մեղրու գավառը կոդմի կողմից, խաղաղ գոյակցում էին հայ բնակիչների հետ: Դ. Բունիաթզադեի դժգոհություններն ու շանտաժն անհետևանք չանցավ: Հաշվի առնելով երկու կողմերի միջև գոյություն ունեցող սկզբունքային հակասությունները՝ հանձնաժողովը որոշում կայացրեց 3 գյուղերի հարցը հանել քննարկումից և փոխանցել դեկավար մարմինների որոշմանը⁷⁹:

Ինչ վերաբերում է վերը հիշատակված 21 գյուղերին (Շայիֆի, Գիրգիլի, Նաջաֆլար, Կարագյոլ, Չուխուրյուրդ, Վերին Քենլիկ, Թագաբենդ, Առաջին Քյալի, Ջանբար, Շարիկուն, Աղբենդ, Քյալի, Գյուն, Ղշլադ, Փիրվեյսալի, Շուրունլի, Բուրջանլար, Սեիդլար, Ներքին Քոլակլի, Ղազանչի, Թուլուկիտյախ), ապա դրանց պատկանելության հարցը բազմիցս քննարկվեց Անդրդաշնության կազմի մեջ մտնող հանրապետությունների միջև հողային և անտառային վեճերը լուծող հանձնաժողովի նիստերում, սակայն

⁷⁷ Նույն տեղում, թ. 76:

⁷⁸ Նույն տեղում, թ. 80, 94, 95 և շրջ.:

⁷⁹ Նույն տեղում, թ. 2:

անընդհատ վերջնական որոշման ընդունումը ձգձգվում էր, և հարցը մնում էր բաց: Տեղում գործող հանձնաժողովը, երկու հանրապետությունների ներկայացուցիչների համաձայնությամբ, մի քանի անգամ հանդիպումներ ունեցավ, նաև գրույցներ վարեց տեղի գյուղացիության հետ, սակայն անարդյունք: Դրանց, ինչպես նաև Նյուվադի, էյնսաձոր և Թոլութ գյուղերի պատկանելության հարցը, այսպես ասած, «մեկ փաթեթով» որոշվեց Անդրդաշնության ԿԳԿ-ի նախագահության 1929 թ. փետրվարի 18-ի նիստում:

Պատճառաբանելով Կարսի պայմանագիրը (13 հոկտեմբերի 1921 թ.)՝ 1920-ական թթ. կեսերին ադրբեջանցիները հավակնություններ էին հանդես բերում նաև ՀՍԽՀ-ի և ինքնավար Նախիջևանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության (ՆՍԽՀ) սահմանային գոտում գտնվող 9 բնակավայրի նկատմամբ: Դրանք էին՝ Դարալագյազի գավառի Կուրթղուլաղ, Գորադիս, Օղբին, Աղխաչ, Դիզին-Ալմալու, Ալմալու, Իթդոան, Սուլթանբեկ (միասին շուրջ 35000 դեսյատին տարածքով), Մեղրու գավառի Կարճևան գյուղերը, որոնք սահմանակից ՆՍԽՀ-ի բնակավայրերի հետ սահմանային վեճեր ունեին: Վերը թվարկված բնակավայրերը 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետության կազմում էին գտնվում: 1927 թ. հոկտեմբերին Մեղրու գավառի Կարճևան գյուղի և ՆՍԽՀ Օրդուբադի գավառի Կիլիս գյուղերի միջև վիճելի համարվող 967,5 դեսյատին տարածքում հետազոտություն կատարեց Անդրդաշնության ԿԳԿ-ի հանձնաժողովը, սակայն որոշում չկայացվեց⁸⁰:

Անդրդաշնության հանրապետությունների հողային և անտառային վեճերը լուծող հանձնաժողովը 1929 թ. հունվարի 29-ից մինչև փետրվարի 2-ն ընկած ժամանակահատվածում գումարած նիստերի ընթացքում քննարկեց և որոշում կայացրեց նաև ՀՍԽՀ-

⁸⁰ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 703, թ. 203:

ի և ՆՍԽՀ-ի միջև վիճելի համարվող բնակավայրերի և հողատարածքների հարցում⁸¹: Այն վավերացվեց Անդրդաշնության ԿԳԿ-ի նախագահության 1929 թ. փետրվարի 18-ի նիստում⁸²: Մինչ այդ 1927 թ. նոյեմբերին, տեղում որոշվել և համապատասխան արձանագրություն էր կազմվել ՀՍԽՀ-ՆՍԽՀ սահմանագծի Արագդայանի (այժմ՝ Երասխ) հատվածի վերաբերյալ⁸³:

1929 թ. փետրվարի 18-ին Անդրկենտրոնականի նախագահությունը մանրամասն քննության առավ դաշնության մեջ մտնող հանրապետությունների սահմանային գավառների միջև գոյություն ունեցող հողային և անտառային վեճերի մասին հարցը խնդիր համարելով վերջնական լուծումներ տալ կուտակված և անընդհատ հետաձգվող խնդիրներին: Նշյալ նիստին մասնակցում էին նաև Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ղեկավարները: Չնայած այս հանգամանքին՝ նիստի ընթացքում ընդունված որոշումները հետագայում միանշանակ չընդունվեցին: Ասվածն առավել քան վերաբերում է ՀՍԽՀ-ԱՍԽՀ սահմանագծին: Նշված նիստում հաստատվեց նաև ՀՍԽՀ Չանգեզուրի և ԱՍԽՀ Քրդստանի գավառների վարչատնտեսական սահմանը՝ համաձայն 1928 թ. օգոստոսի 24-28-ին կողմերի միջև կայացած համաձայնության: Ինչ վերաբերում է հիմնական վիճելի տարածքներին, ապա որոշվեց Նյուվադի, Էյնաձոր և Թղութ գյուղերն իրենց հողերով փոխանցել Մեղրիի գավառին, իսկ Ողջի և Բասուտ գետերի ավազա-

⁸¹ ՎԱԱ, ֆ. 607, ց. 1, գ. 2270, թ. 2 շրջ.:

⁸² Ադրբեջանցի պատմաբան Ի. Նիֆթալիևին զայրացրել է այն հանգամանքը, որ նշված որոշումը կայացվել էր առանց «Նախիջևանի կարգավիճակի երաշխավոր» Թուրքիայի մասնակցության և համաձայնության (Нифталиев И., նշվ. աշխ., էջ 196): Մինչդեռ փաստ է, որ ի տարբերություն 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի, Կարսի պայմանագրով «Ադրբեջանը զրկվում էր իրավական հնարավորությունից՝ ապագայում Նախիջևանի հետ կապված որևէ հարցով դիմել Թուրքիային» (մանրամասն տե՛ս Խաչատրյան Կ., Հայոսական հարաբերությունները 1920-1922 թվականներին, Երևան, 2007, էջ 141):

⁸³ ՎԱԱ, ֆ. 607, ց. 1, գ. 2279, թ. 8:

նում գտնվող 21 գյուղերը՝ փոխանցել ԱՄԽՀ Ջեֆրայիլի գավառին: Անդրկենտրոնականի հողային և անտառային վեճերը լուծող հանձնաժողովին հանձնարարվեց տեղում վերջնականապես որոշել Ջանգեզուրի և Ջեֆրայիլի գավառների սահմանագիծը՝ լուծում տալով առկա հակասություններին: Որոշվեց նաև ՀԱԽՀ կազմում թողնել Նախիջևանի հավակնության առարկա հանդիսացած վերը նշված 9 գյուղերը: Մեղրու գավառի Կարճևան և Օրդուբադի գավառի Քիլիտ գյուղերի սահմանային վիճելի համարվող հողամասը գրեթե հավասարապես բաժանվեց երկու գյուղերի միջև⁸⁴: Վերը բերված որոշումը պարզորոշ ցույց է տալիս, որ անհետևանք չանցան ադրբեջանական իշխանությունների հետևողական ճնշումներն ու շանտաժները: Չնայած հայկական կողմի ներկայացրած փաստարկներին՝ հաղթանակեց «որտեղ ադրբեջանական գյուղ, այնտեղ ադրբեջանական տարածք» սկզբունքով ուղղորդվող ադրբեջանական քաղաքականությունը: Բացի պատմական հիմքից (որի մասին ավելորդ է անգամ հիշատակելը) և վարչական նպատակահարմարությունից, նշենք նաև, որ Կապանի շրջակայքի 21 գյուղերն ամուր տնտեսական թելերով կապված էին Ջանգեզուրի գավառի հետ, քանի որ այդ գյուղերի բնակիչների զգալի մասը հանդիսանում էր Ջանգեզուրի պղնձաձուլական գործարանի աշխատողներ: Չափազանց կարևոր է նաև արձանագրել, որ ռազմավարական և կոմունիկացիոն տեսակետներով ևս Ադրբեջանն առավելություն ստացավ Խորհրդային Հայաստանի նկատմամբ. վերջինի կարևորագույն քաղաքներից մեկի արվարձանով էր անցնում երկու երկրների սահմանագիծը, իսկ Ջանգեզուրի հարավն ու հյուսիսն իրար կապող խճուղին ցանկացած հակամարտության դեպքում գտնվելու էր ադրբեջանցիների փաստացի հսկողության ներքո:

⁸⁴ ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 267, թ. 78-79 շրջ.:

Չնայած վերը բերված իրողություններին՝ պետք է ասու-
սանքով արձանագրենք, որ ՀՍԽՆ ղեկավարները չընդդիմացան
Անդրդաշնության ԿԳԿ-ի կայացրած որոշմանը: Ավելին, 1929 թ.
ապրիլի 29-ին ՀՍԽՆ ԿԳԿ-ի նախագահությունը (նախագահ Ս.
Կասյանի և քարտուղար Ռ. Դաշտոյանի ստորագրությամբ) հա-
տուկ շրջաբերական ուղղեց հանրապետության «բոլոր գավգործ-
կումներին», ուր տեղեկացվում էր, որ նշյալ որոշումը տեղերում
կիրառելու պարտականությունը դրվում է Անդրկենտգործկոմին
առընթեր հողային և անտառային վեճերը քննող հանձնաժողովի
վրա, որը պետք է իր աշխատանքներն ավարտեր 1929 թ. աշնա-
նից ոչ ուշ: Շեշտվում էր, որ որոշումն ընդունվել է կողմերի լիա-
գոր ներկայացուցիչների «միաձայն որոշմամբ, որոնք խորհրդակ-
ցությանը մասնակցել են Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի
ՍԽՆ Կենտգործկոմի ու ժողկոմխորհների նախագահների գլխա-
վորությամբ»: Վերջում գավգործկոմներին հրահանգվում էր ամեն
կերպ աջակցել Հողային և անտառային վեճերը լուծող հանձնա-
ժողովին: Ջանցառուները ենթարկվելու էին քրեական պատաս-
խանատվության⁸⁵:

Սակայն ադրբեջանցիները ոչ միայն չէին գոհանում իրենց
«ձեռքբերումներով», այլև ավելի մեծ հավակնություններ էին հան-
դես բերում: Այսպես՝ փետրվարի 18-ի որոշման հիման վրա
ԱՍԽՆ նախկին Ջեբրայիլի և ՀՍԽՆ Ջանգեզուրի և Մեղրու գա-
վառների վարչատնտեսական սահմաններ անցկացնող հանձնա-
ժողովի աշխատանքներին խոչընդոտել էին Ղուբաթլուի ան-
տառտնտեսության ներկայացուցիչ Ազիզ Կուլիևը, Ջանգելանի
շրջգործկոմի անդամ Մ. Համիդովը և Ջանգելանի շրջգործկոմի
ներկայացուցիչ Բասիմ Խալիլովը: Նրանց հրահրմամբ մուսուլ-
ման գյուղացիները սահմանային նշաններ տեղադրող հողաչա-

⁸⁵ Խաչատրյան Կ., Սուքիասյան Լ., նշվ. աշխ., էջ 93:

փին մի քանի բնակավայրում դիմադրություն ցույց տվեցին, որի հետևանքով հունիսի 27-ին սկսված աշխատանքներն օգոստոսի 12-ին արգելակվեցին: Ա. Կուլինը տեղական բնակչությանը հորդորում էր նորանոր դիմում-բողոքներ ուղարկել Թիֆլիս, իսկ Բ. Խալիլովը սպառնալիքներ էր տեղում սահմանազծման աշխատանքներին օժանդակող մուսուլման գյուղացիներին՝ մեղադրելով «հայերից կաշառք վերցնելու» մեջ: Հողաչափ Ա. Սոսելին ստիպված էր պարբերաբար նրանց հիշեցնել, որ Անդրկենտրոնականի նախագահություն բողոք ներկայացնելու դեպքում իրենց արարքների համար նրանք պատասխանատվության կենթարկվեն: Բանն այնտեղ հասավ, որ Ա. Սոսելիի դիմումի հիման վրա Անդրկենտրոնականի նախագահությունը հրահանգեց պաշտոնից ազատել Ա. Կուլինին և պատասխանատվության ենթարկել⁸⁶:

Ինչ վերաբերում է ՀՍԽՀ-ՆՍԽՀ սահմանազծին, ապա վերջինի հստակեցումն առավել ոյուրին եղավ: 1929 թ. ապրիլի 15-ին սահմանազծում կատարող հանձնաժողովի նախագահին ուղղված հրահանգում Անդրկենտրոնականի հողհանձնաժողովի նախագահի տեղակալ Վ. Չխենկելին հանձնարարեց ՆՍԽՀ և ՀՍԽՀ վարչատնտեսական սահմանների ողջ երկայնքով սահմանազծում կատարել: Հետագա բարդություններից խուսափելու համար խորհուրդ էր տրվում սկզբում որոշել Կարճևանի և Քիլիտի սահմանագիծը, և հողաչափային-տեխնիկական հանձնաժողովի աշխատակիցների աշխատանքի հիման վրա համապատասխան ակտ կազմել⁸⁷: Նշենք, որ մինչև աշուն հանձնաժողովը 110 կմ երկարությամբ սահմանազծում տեխնիկական աշխատանքներ էր կատարել՝ տեղադրելով 156 սահմանային տեղանշան, նաև կողմերի միջև բաժանել Կարճևանի և Կիլիտի միջև

⁸⁶ ՎԱԱ, ֆ. 607, ց. 1, գ. 2534, թ. 15-17 շրջ., 22 և շրջ., 28 և շրջ.:

⁸⁷ Նույն տեղում, գ. 2279, թ. 11:

վիճելի տարածքը: ՀՍԽՀ-ՆՍԽՀ սահմանագծի մնացյալ 120 կմ հատվածում, ուր աշխատանքները դեռևս ավարտված չէին, արտատվայրի (429,65 հա) վերաբերյալ վեճեր էին առաջացել: Անդրդաշնության հանրապետությունների հողային և անտառային վեճերը լուծող հանձնաժողովի 1929 թ. հոկտեմբերի 25-ի նիստում, որին մասնակցում էին նաև հանրապետությունների հողագործության ժողկոմները, որոշում կայացվեց վիճելի հարցերի վերաբերյալ և մանրամասն նկարագրությամբ հաստատվեց ՀՍԽՀ-ի և ՆՍԽՀ-ի սահմանագիծը⁸⁸:

Չնայած գործադրված ջանքերին՝ այդուհանդերձ, մինչև 1930-ական թվականների սկզբները ՀՍԽՀ-ի և ԱՍԽՀ-ի սահմանային որոշ հատվածներում հնարավոր չեղավ վերջ տալ առկա վեճերին և սահմանագծում կատարել: Դրանք էին՝ ՀՍԽՀ Կապանի և ԱՍԽՀ Ջանգելանի շրջանների միջև շուրջ 300 հեկտար հողատարածքի պատկանելության շուրջ վեճը (հայկական Հանդ և ադրբեջանական Ռազիդարա գյուղերի միջև), Ջանգելգուրի և Ղուրաթլուի անտառտնտեսությունների միջև վեճի առարկա հանդիսացող 522,5 և 1277,5 հա անտառային տեղամասերի հարցը, հայկական Խոզնավար և ադրբեջանական Հաջիլար ու Սադունլար գյուղերի միջև վեճը⁸⁹:

Անդրկենտրոնականի նախագահության 1929 թ. փետրվարի 18-ի նիստում կայացված որոշումներից և դրանց կենսագործմանն ուղղված գործուն քայլերից հետո Դաշնության ղեկավար շրջանակները հանգեցին այն համոզման, որ այլևս նպատակահարմար չէ Անդրկենտրոնականին կից գործող Հողային և անտառային վեճերը լուծող հանձնաժողովի գոյությունը: 1930 թ. սեպտեմբերի 22-ին Դաշնության ԿԳԿ-ի նախագահությունը որոշում

⁸⁸ Նույն տեղում, գ. 2270, թ. 36 շրջ.:

⁸⁹ Նույն տեղում, թ. 38 շրջ.:

ընդունեց հանձնաժողովը լուծարելու մասին: Այս որոշման հիման վրա սեպտեմբերի 30-ին Կենտրոնականի փոքր նախագահությունը որոշում կայացրեց հանձնաժողովի լուծարման կարգի մասին: Ըստ այդմ՝ հանձնաժողովի բոլոր գործերը (նաև խնդրահարույց սահմանների վերաբերյալ) փոխանցվեց Անդրդաշնության հողագործության ժողովմատին, որի իրավասությանը հանձնվեց լուծարվող հանձնաժողովի լիազորությունները⁹⁰:

1930-ականների սկզբներին շարունակում էր խնդրահարույց մնալ ՀՍԽՂ Կապանի և ԱՍԽՂ Ջանգելանի շրջանների սահմանագիծը: Խնդիրը լուծելու նպատակով Անդրդաշնության ԿԳԿ-ն հատուկ հանձնաժողով կազմեց՝ երկու շրջանների միջև եղած հողային վեճերին լուծում տալու նպատակով: Հիմք ընդունելով հանձնաժողովի առաջարկները՝ Անդրդաշնության ԿԳԿ-ի նախագահությունը 1935 թ. հունիսի 28-ի նիստում որոշում կայացրեց Կապանի և Ջանգելանի շրջանների միջև սահմանի հաստատման մասին: Ըստ այդմ՝ սահմանն անցնելու էր Բարթազ-Շյուքյուրթազ Սոբուկալա լեռնագագաթներով⁹¹: Նշյալ որոշումից անմիջապես հետո՝ օգոստոսի 12-13-ին, տեղում աշխատանքներ իրականացրեց Կապանի և Ջանգելանի շրջանների սահմանները վերջնականապես որոշող հանձնաժողովը: 1935 թ. դեկտեմբերի 9-ին Երևան ուղարկելով երկու կողմերի միջև սահմանի վերաբերյալ ստորագրված վերջնական ակտը՝ Կապանի շրջագործկումի ղեկավարությունը հայտնում էր, որ Ջանգելանի հետ «սահմանի վեճի խնդիրը լուծված է վերջնականապես տեղում»⁹²:

Փաստորեն, Անդրդաշնության ԿԳԿ-ի 1929 թ. փետրվարի 18-ի որոշման հիման վրա՝ հիմնականում Խորհրդային Հայաս-

⁹⁰ ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 240, թ. 2 և շրջ.:

⁹¹ Նույն տեղում, ց. 1, գ. 866, թ. 13:

⁹² Նույն տեղում, թ. 9-10 շրջ.:

տանի տարածքային կորուստների հաշվին, առերևույթ «կարգավորվեցին» ՀՍԽՀ-ի և ԱՍԽՀ-ի սահմանային հակասությունները: Սակայն սահմանագծային վեճերը շարունակեցին նաև Անդրկովկասյան դաշնության լուծարումից (1936 թ. դեկտեմբեր) հետո:

KAREN KHACHATRYAN, HAMO SUKIASYAN

ARMENIAN-AZERBAIJANI TERRITORIAL-BORDER ISSUES
DURING THE TRANSCAUCASIAN FEDERATION (1922-1936)

SUMMARY

On March 1922 after the formation of the Transcaucasian Federation among the questions between Soviet Armenia and Soviet Azerbaijan the territorial-border issues were the most problematic. Due to the principal disagreements these disputes continued to the dissolution of the Federation.

During the Federation the key disputes were concerning the affiliation of frontier regions the Shnogh-Ayrum section of the border, the area of Alagyolar lakes, 21 villages of Kapan and 3 villages of Meghri. The study of the archival documents obviously show that the question of affiliation of the disputed territories was decided to the detriment of the interests of the Armenian side.

As a result of territorial losses Soviet Armenia and its legal successor the third Republic of Armenia appeared from the strategic perspective in unfavorable conditions.

АРМЯНО–АЗЕРБАЙДЖАНСКИЕ ТЕРРИТОРИАЛЬНО–
ПРИГРАНИЧНЫЕ ПРОБЛЕМЫ В ПЕРИОД
ЗАКАВКАЗСКОЙ ФЕДЕРАЦИИ (1922–1936 ГГ.)

РЕЗЮМЕ

После образования в марте 1922 г. Закавказской Федерации в числе существующих между Советской Арменией и Советским Азербайджаном проблемных вопросов приоритетными стали территориально–приграничные вопросы. В связи с принципиальными разногласиями сторон, споры продолжались вплоть до ликвидации Закавказской Федерации.

Споры в основном были связаны с проблемой принадлежности приграничных районов Шнох–Айрумского участка границы, территорий Алагеларских озерков, 21 деревень Капанского и 3 деревень Мегрийского районов Арм.ССР.

Изучение архивных документов и материалов ясно свидетельствует, что вопрос оспариваемых участков в основном был решен в ущерб интересам армянской стороны. Результатом территориальных потерь стало то, что Советская Армения и ее правопреемница – Третья Республика Армения, оказались в стратегически неблагоприятных условиях по отношению к Азербайджанской республике.

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ 1970–1991 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդող առաջին երկու տասնամյակները հանդիսացան ԽՍՀՄ-ում ռազմաարդյունաբերական համալիրի (ՌԱՀ) ստեղծման հիմնադիր փուլը: Այդ տարիներին ստեղծվեց գիտական և արտադրական հզոր բազա սպառազինության բոլոր տեսակների և համակարգերի հետագա զարգացման համար: Հետպատերազմյան տարիներին Խորհրդային Հայաստանում արագացված տեմպերով սկսվում է իրագործվել ռազմական սպառման ապրանքների նոր տեսակների արտադրությունը: Առաջին հերթին զարկ է տրվում էլեկտրամեքենաշինական, սարքաշինական, էլեկտրատեխնիկական և ռադիոտեխնիկական արդյունաբերության զարգացմանը: Այդ շրջանում հանրապետությունն ամբողջությամբ ներգրավվեց Խորհրդային ՌԱՀ-ում, ձևավորվեցին ոլորտի մի շարք գործարաններ, ձեռնարկություններ և արտադրամասեր, որտեղ թողարկվում էին ռազմական նորագույն բարդ տեխնիկայի և սպառազինության համար ժամանակակից համալրող մասեր և սարքավորումներ, երկրի պաշտպանունակության ամրապնդման և Խորհրդային բանակի համար անհրաժեշտ գույք և միջոցներ:

Խորհրդային Հայաստանում տեղակայված ԽՍՀՄ ՌԱՀ-ի էլեկտրոնային, էլեկտրատեխնիկական, ռադիոտեխնիկական, հաշվողական տեխնիկայի, սարքաշինական, քիմիական և այլ գործարաններն ու ձեռնարկությունները 1970-ական թթ. սկզբից շարունակեցին ապահովել հանրապետության արդյունաբերության զարգացման բարձր ցուցանիշները: Հայաստանում հիմնվեցին Խորհրդային ՌԱՀ-ին սպասարկող նոր ձեռնարկություններ

և կազմակերպություններ: Արտադրական լրացուցիչ տարածքներ շահագործման հանձնվեցին ԽՍՀՄ փ/ա (փոստային արկղ¹) Պ-6181 կազմակերպության Երևանի փ/ա Ա-7636 և փ/ա Պ-6283, Աբովյանի փ/ա Ա-1941, Լենինականի փ/ա Գ-4067 և այլ ձեռնարկություններում: Փ/ա Պ-6181 կազմակերպության ղեկավար Ռ. Թումանյանի կողմից 1974 թ. ապրիլի 12-ին ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Գ. Մարտիրոսյանին ուղղված գրությունից տեղեկանում ենք, որ 1974-1975 թթ. կազմակերպության ձեռնարկությունները պետք է մի քանի անգամ ավելացնեին խորհրդային զենիթահրթիռային և ռադիոտեղորոշումային համակարգերի, տիեզերական տեխնիկայի սարքավորումների համար հույժ կարևոր պաշտպանական արտադրանքի՝ նոր սերնդի կիսահաղորդչային ինտեգրալ սխեմաների, ռադիոտեխնիկական իրերի, կառավարման ավտոմատացված համակարգերի (ԿԱՀ), այլ հատուկ սարքավորումների թողարկումը²:

ԽՍՀՄ պաշտպանության և պաշտպանական արդյունաբերության նախարարությունների պատվերներով ռազմական նշանակության հույժ պատասխանատու արտադրություն էր կազմակերպված Հայաստանում տեղակայված փ/ա Ա-3082, փ/ա Ա-7561, փ/ա Բ-2369 ձեռնարկություններում³: Հատուկ արտադրանք էր թողարկում Աբովյանի փ/ա Ա-1941 ձեռնարկությունը: Ռ. Թումանյանը 1973 թ. մարտի 11-ին ՀԽՍՀ Նախարարների

¹ Ռազմական ոլորտի գիտական և արտադրական գործընթացները զաղտնի պահելու, ինչպես նաև սպառազինության հատուկ արտադրություն կազմակերպելու նպատակով ՌԱՀ-ի կազմում գտնվող կազմակերպությունների և ձեռնարկությունների համար հաստատվեց տարբեր առանձնահատկություններով հատուկ ռեժիմի մի քանի մակարդակ: Ցածրը ներկայացնում էին փակ ձեռնարկությունները և, այսպես կոչված «Փոստային արկղերը», որոնք աշխատում էին մեծ քաղաքների տարածքում:

² Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 113, ց. 181, գ. 85, թ. 60:

³ Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 87, գ. 6, թ. 37, նաև՝ ֆ. 113, ց. 181, գ. 200, թ. 32, գ. 302, թ. 252:

խորհրդի նախագահ Գ. Արզումանյանին ահագանգում է, որ օդի բարձր աղտոտվածության պատճառով հաճախ ստիպված են լինում դադարեցնել ձեռնարկության առանձին արտադրամասերի աշխատանքը: Թումանյանը նշում է, որ տեխնիկական պահանջներից ելնելով ձեռնարկությունը պետք է գտնվի կանաչապատ վայրում, փոշոտ սարածքներից 1,5–2 կմ շառավղով հեռու, քանի որ հատուկ արտադրանքի մեջ փոշու հատիկն անգամ անորակ է դարձնում այն: Ուստի խնդրում է դադարեցնել Ջրաբերի ճանապարհներով ավագով և խճաքարով բեռնված բեռնատար մեքենաների երթևեկությունը և նշում, որ խնդիրը կարող է կարգավորվել Երևան–Սևան նոր մայրուղու կառուցումով⁴:

ՀԽՍՀ տարածքում ռազմավարական նշանակության գլխավոր մայրուղիների և ճանապարհների վերանորոգման ու շինարարության, դրանց օգտագործման պատրաստվածությունը բարձրացնելու, հատուկ ժամանակներում հրթիռային և ռազմական այլ տեխնիկայի թողունակությունն ապահովելու խնդիրները մշտապես կարևորվել են հանրապետության իշխանությունների կողմից: ՀԽՍՀ կառավարության 1972 թ. ապրիլի 20-ի որոշումներով և հանձնարարականներով 1972–1975 թթ. վերանորոգման աշխատանքներ էին իրականացվելու Տեղ–Գորիս ճանապարհի առանձին հատվածներում, Փամբակի լեռնանցքի 4 կիլոմետրանոց հատվածում, «Գայլի դարպասներ»–Ախբյորփի 17 կմ երկարությամբ լեռնանցքի և Ղարախաչի 5 կիլոմետրանոց լեռնանցքի հողային հատվածով ճանապարհները վերակառուցվելու էին ամուր ծածկույթով և այլն: Մինչև 60 տոննա բեռնատարողության էին ավելացվելու հանրապետության ռազմավարական նշանակություն ունեցող կամուրջները, հույժ կարևոր մայրուղիների և ճանապարհների որոշ հատվածներում տեղադրվելու էին հսկիչ

⁴ Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 181, գ. 75, թ. 3–4:

անցազրային կետեր: «Հայգիպրոսորանս» և «Երեաննախագիծ» ինստիտուտներին հանձնարարվում է համատեղ մշակել և մեկամսյա ժամկետում ՀԽՍՀ Նախարարների խորհրդի քննարկմանը ներկայացնել Երևանի շրջանցիկ ավտոմայրուղիների շինարարության նախագծի տարբերակներ⁵:

Նշենք, որ ՀԽՍՀ հակաօդային պաշտպանությունն ապահովելու նպատակով 1970-ական թթ. հանրապետություն ներմուծվեց մեծ քանակությամբ ռազմական նորագույն տեխնիկա և սպառազինություն: Հայաստանի տարածքում տեղակայված էր հակաօդային պաշտպանության N զորամասի զենիթահրթիռային N բրիգադը: Վերջինիս կազմի մեջ մտնում էր զենիթահրթիռային 9 դիվիզիոն, որոնցից 3-ը զինված էին հրթիռներով և իրականացնում էին մարտական հերթապահություն: Զենիթահրթիռային բրիգադը համալրված էր N° 75 և N° 125 համակարգերով, որոնք համապատասխանաբար ներառում էին մինչև 70 և 50 կմ թռիչքի հեռավորությամբ մարտական հրթիռներ և ռադիոտեղորոշումային կայաններ: Մինչև 1988 թ. N° 75 համակարգի հրթիռները զինված էին միջուկային մարտագլխիկներով⁶:

• • •

1973 թ. հոկտեմբերի 12-ին ԽՄԿԿ Կենտկոմ ուղղված գրությունում ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Պ. Անիսիմովը հայտնում է, որ հանրապետությունում տեղակայված են ԽՍՀՄ պաշտպանական, ավիացիոն, նավաշինության, միջին մեքենաշինության, էլեկտրոնային և ռադիոտեխնիկական արդյունաբերության տասնյակ գործարաններ, ձեռնարկություններ և կազմակերպություններ, մասնագիտացված և հատուկ կոնստրուկտորական բյուրոներ և այլն⁷:

⁵ Տե՛ս նույն տեղում, ց. 103, գ. 108, թ. 1:

⁶ Տե՛ս նույն տեղում, ց. 181, գ. 641, թ. 141:

⁷ Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 53, գ. 73, թ. 101:

ՀԽՍՀ պետականի մեքենաշինության բաժնի վարիչ Խ. Տեր-Մխիթարյանի կողմից պատրաստված և ՀԿԿ Կենտկոմ ներկայացված տեղեկանքի համաձայն՝ միայն ԽՍՀՄ էլեկտրոնային արդյունաբերության նախարարության ձեռնարկությունների գծով ՀԽՍՀ արտադրական նշանակության 1968–1974 թթ. փոխանցիկ շինարարության ցանկում ընդգրկված էին Երևանում կառուցվող փ/ա Ա–3908, Պ–6283, Պ–6402, Ա–1354, Ա–7651, Մ–5293, Ջրվեժում՝ փ/ա Բ–8744, Էջմիածնում՝ փ/ա Ա–7314, փ/ա Բ–8607, Աբովյանում՝ փ/ա Բ–2751 և Ա–1941, Լենինականում (Գյումրի)՝ փ/ա Գ–4067, Կամոյում (Գավար)՝ փ/ա Խ–5965, Ապարանում՝ փ/ա Գ–4130, փ/ա Պ–6242 ձեռնարկությունները⁸:

Սակայն Խորհրդային Հայաստանում հիմնված ոչ բոլոր ձեռնարկությունների և նոր արտադրամասերի շինարարության տեմպերն էին գոհացուցիչ: 1973 թ. սեպտեմբերի 10–ին ՀԽՍՀ Նախարարների խորհրդի Գլխավոր մոնտաժային վարչության և հատուկ շինարարական աշխատանքների կոլեգիայում լսվում է «1973 թ. արդյունաբերության հատուկ ճյուղերի կառույցների շինարարական աշխատանքների պլանների կատարման մասին»: Նշվում է, որ հանրապետության արդյունաբերության պաշտպանական ճյուղերի կառույցների՝ ԽՍՀՄ նավաշինության, ռադիո և էլեկտրոնային արդյունաբերության նախարարությունների Երևանի «Էլեկտրոն» և «Ռելե», Ջրվեժի սարքաշինական, Աբովյանի «Իզմերիտել», Աբովյանի ռադիոմասերի և կիսահաղորդչային սարքերի, Դիլիջանի «Իմպուլս» և այլ ձեռնարկություններում ու գործարաններում թեև աշխատանքներ են տարվել նոր արտադրամասերը ժամանակին շահագործման հանձնելու ուղղությամբ, սակայն շինարարությունն ընթանում է ոչ բավարար տեմպերով: Առավել լարված էր վիճակը «Ռելե» գործարանի արտադրամասե-

⁸ Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 181, գ. 7, թ. 131–135, 198:

րի շինարարության ոլորտում, անբավարար էր «Էլեկտրոն» և Աբովյանի ռադիոմասերի ու կիսահաղորդչային սարքերի գործարանների արտադրամասերի շինարարության ընթացքը: Այստեղ մոնտաժային և հատուկ շինարարական աշխատանքները կատեցված էին տարբեր շինանյութերի և սարքավորումների բացակայության պատճառով: Հաշվի առնելով արդյունաբերության հատուկ ճյուղերի կառույցների ժամանակին շահագործման հանձնելու խիստ կարևորությունը, կոլեգիան որոշում է ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցառումները շինարարությունն արագացնելու նպատակով: Պլանային առաջադրանքները տապալելու դեպքում շինարարության պատասխանատուները անհատական պատասխանատվություն էին կրելու⁹:

ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1971 թ. մայիսի 26-ի թիվ 307 և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի 1971 թ. հունիսի 14-ի թիվ 468 որոշումների համաձայն՝ 1974 թ. Երևանում (Ջրվեժում) սկսվում է միութենական «Պրոմսվյագ» («Արդկապ») գործարանի նոր արտադրամասերի շինարարությունը: Այդ մասին գործարանի տնօրեն Օ. Ղամբարյանին և ԽՍՀՄ կապի նախարար Դ. Պսուրցևին 1974 թ. հուլիսի 22-ին հաղորդում էր ԽՍՀՄ պաշտպանության նախարարության թիվ 3902 ռազմական ներկայացուցչության դեկավար փոխգնդապետ Սարգսյանը: Պարզվում է, որ գործարանին հարկավոր էին արտադրական նոր տարածքներ՝ ԽՍՀՄ պաշտպանության և կապի նախարարությունների, նաև ԽՍՀՄ Պետանվտանգության կոմիտեի (ՊԱԿ) աճող պահանջարկը «Տրեգուբեց-1» և «Տրեգուբեց-2» բարձր որակի ռադիոտեխնիկական սարքավորումներով բավարարելու համար¹⁰: Ջրվեժի «Արդկապ» գործարանի հատուկ արտադրանքը խորհրդային տարիներին առաքվել է ոչ միայն միութենական հանրա-

⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 73, թ. 17-20:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 85, թ. 72:

այետություններում տեղակայված գործարաններ և ձեռնարկություններ, այլև Բուլղարիա, Լեհաստան, Չեխոսլովակիա, Թուրքիա, Մոնղոլիա, Վիետնամ, Կորեա, Եմեն և այլ երկրներ: Արտասահմանյան երկրներ էին առաքվում նաև հանրապետության միջարք այլ ձեռնարկությունների արտադրանքը: Մասնավորապես Երևանի փ/ա Ա-7043 ձեռնարկությունը մատակարարումներ էր իրականացնում Բուլղարիա, Հունգարիա, Լեհաստան, Ռումինիա, Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետություն, Չեխոսլովակիա, Հարավսլավիա, Իրաք, Իրան, Եգիպտոս, Վիետնամ, Կորեա, Մոնղոլիա, Հնդկաստան, Ցեյլոն, Եմեն, Գվինեա և Կուբա¹¹:

1970-ական թթ. սկզբից Ջրվեժ ավանն աստիճանաբար վերածվում է ռազմաարդյունաբերական ձեռնարկությունների խոշոր հանգույցի: Վերջինս հրատապ էր դարձրել ձեռնարկությունների գործունեության գաղտնիության ռեժիմի ապահովման խնդիրը: Փ/ա Բ-8607 կազմակերպության ղեկավար Ռ. Քոչարյանը 1977 թ. մայիսի 20-ին ՀԽՍՀ Նախարարների խորհուրդ, պատճենը՝ Նախարարների խորհրդին առընթեր ՊԱԿ-ի նախագահ Հ. Միխայելյանին, ուղղված նամակում հայտնում է, որ ԽՍՀՄ էլեկտրոնային արդյունաբերության կազմի մեջ փ/ա Բ-8408 ձեռնարկությունը Ջրվեժի հանգույցում իրականացնում է արտադրության ընդարձակում: Երբաղխորհրդի որոշմամբ տրամադրված հողատարածքը, սակայն, սահմանակից է նոր կառուցվող տաքսամոտորային մարդատար ավտոմեքենաների շարժակազմի հողատարածքին: Գաղտնի ձեռնարկությանը վերջինիս այդքան մոտ գտնվելը, – հուշում է Քոչարյանը, – խոչընդոտ է հրապարակման ոչ ենթակա հատուկ արտադրատեսակների արտադրման գաղտնիության պահպանման ռեժիմի համար: Քոչարյանը դա հիմնավորում է նրանով, որ գործունեության բնույթից

¹¹ Տե՛ս նույն տեղում, թ. 50:

ելնելով տաքսու վարորդները շփվում են հանրապետություն ժամանաձ խորհրդային և արտասահմանյան քաղաքացիների հետ և կարող են բացահայտել հարևանությամբ գտնվող ձեռնարկությունների արտադրանքի նշանակությունը: «Պետական գաղտնիքները պահպանելուն ուղղված միջոցառումների կատարելագործման մասին» ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի որոշման պահանջները կատարելու և պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների հրապարակումից խուսափելու համար Ռ. Քոչարյանը խնդրում է մարդատար տաքսուարկի կառուցման համար տրամադրել մեկ այլ տարածք, իսկ վաղօրոք այդ նպատակի համար հատկացված հողատարածքը փոխանցել փ/ա Բ-8408 ձեռնարկությանը¹²:

Նշենք, որ Խորհրդային Հայաստանի անվտանգության, հանրապետությունում տեղակայված ռազմապաշտպանական ոլորտի ձեռնարկությունների և կազմակերպությունների գաղտնիության ռեժիմի պահպանման խնդիրները մշտապես գտնվել են իշխանությունների ուշադրության կենտրոնում: Այսպես, ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Ա. Քոչինյանի կողմից 1973 թ. հունիսի 25-ին ԽՄԿԿ Կենտկոմ ուղղված գրությունում մասնավորապես նշվում է. «Վերջին տարիներին ուժգնացել է հակառակորդի հետախուզական հետաքրքրությունը ՀԽՍՀ պաշտպանական արդյունաբերության զարգացող ճյուղերի, գիտահետազոտական ինստիտուտների, հանրապետության ռազմական օբյեկտների նկատմամբ: Զբոսաշրջության զարգացումը, արտասահմանյան երկրների հետ տնտեսական, գիտամշակութային կապերի զարգացումը առաջ է բերել օտարերկրացիների ներհոսքի շեշտակի ավելացում»: Նրանց մեջ բացահայտվում են հակառակորդի հետախույզներ և գործակալներ: Միաժամանակ ավելացել է Թուր-

¹² Տե՛ս նույն տեղում, գ. 186, թ. 52:

քիայից և Իրանից սահմանախախտների թիվը: Եռապատկվել են հանրապետության բնակիչների այցելությունները կապիտալիստական երկրներ: «Խորհրդային Հայաստանի դեմ պայքարում հակառակորդը սկսել է ավելի ակտիվ օգտագործել հայ ազգայնական դաշնակցություն կուսակցության թշնամական գործունեությունը: Օգտագործելով բոլոր հնարավոր ուղիները, վերջինս ուժեղացնում է իր վնասարար գործունեությունը»: Կենտրոնական իշխանություններին տեղեկացնելով, որ հանրապետության 44 շրջաններից միայն 13-ում են առկա ՊԱԿ-ի շրջանային ստորաբաժանումներ, և որ դրանք չկան անգամ Թուրքիայի հետ սահմանային Թալինի և Ախուրյանի շրջաններում, Քոչինյանը խնդրում է հակառակորդի վնասարար գործունեության դեմ պայքարն առավել արդյունավետ դարձնելու նպատակով քննարկել Թալինում, Ախուրյանում, Աբովյանում, Ալավերդիում և Երևանի 7 շրջաններում ՊԱԿ-ի նոր բաժանմունքներ կազմակերպելու, հանրապետական ՊԱԿ-ի հաստիքային կազմը 60 միավորով, այդ թվում 35 սպաներով, ավելացնելու հարցը¹³:

...

1973–1974 թթ. շահագործման են հանձնվում ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1970 թ. մայիսի 8-ի թիվ 253 որոշմամբ և ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության նախարարության 1970 թ. հուլիսի 30-ի թիվ 111 հրամանով Երևանում կազմակերպված ավտոմատացված կառավարման համակարգերի «Հրազդան» գործարանի առաջին հերթի շինարարության 38,0 հազ. քմ. արտադրական տարածքները: Այստեղ թոչող ապարատների, ավիացիոն սարքերի սերիական թողարկում է կազմակերպվում¹⁴:

¹³ Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 53, գ. 73, թ. 22–23:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 181, գ. 482, թ. 61–62:

ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության նախարարի տեղակալ Վ. Կազակովը 1974 թ. դեկտեմբերի 12-ին ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Լ. Սմիրնովին ուղղված գեկուցագրում նշում է, որ թեև Երևանի «Հրազդան» գործարանի շինարարությունն ընթանում է արագ տեմպերով, սակայն հաշվի առնելով մոտակա տարիներին հրթիռների ԿԱՀ-երի պահանջարկի կտրուկ աճը, գործարանի առաջին հերթի շինարարությունը չի կարող ապահովել արտադրանքի պահանջվող ծավալը: Ավիացիոն արդյունաբերության նախարարությունը խնդրում է թույլատրել գործարանի երկրորդ հերթի շինարարությունը գործարանի տարածքում¹⁵:

«Հրազդան» գործարանի նոր մասնաշենքերի շինարարության և արտադրության հետագա ընդլայնման ու զարգացման գործում գործարանին տեխնիկական մեծ օգնություն ցուցաբերեցին Մոսկվայի առաջին սարքաշինական, Չեռկասարի սարքաշինական և Տամբովի «Էլեկտրասարք» գործարանները: «Հրազդան» գործարանի համար տեխնիկական սարքավորումներ էր մատակարարում Էջմիածնի սարքաշինական գործարանը¹⁶:

Հայաստանում ավիասարքաշինությունը զարգացնելու նպատակով ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության նախարար Ի. Սիլանի 1981 թ. ապրիլի 6-ի հրամանով Երևանի «Հրազդան» գործարանի փորձարարական-կոնստրուկտորական բյուրոն վերակազմավորվում է Երևանի «Սիգնալ» բյուրոյի, իսկ գործարանի 2-րդ արտադրամասը՝ էլեկտրական սարքերի արտադրության Երևանի «Սելենա» գործարանի: Նույն հրամանով Արտաշատում և Հոկտեմբերյանում (Արմավիր) կազմակերպվում են «Հրազդան»

¹⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 85, թ. 123:

¹⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 200, թ. 44-45:

գործարանի մասնաճյուղեր, Չարենցավանում կազմակերպվում է «Միկրոպրոցեսոր» գործարանը¹⁷:

ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության նախարարի 1983 թ. դեկտեմբերի 27-ի թիվ 625 հրամանով Երևանի «Հրազդան» գործարանի հիմքի վրա ստեղծվում է Հայաստանի «Ավիահամալիր» արտադրական միավորումը՝ արդիական ռազմական արտադրություն կազմակերպելու նպատակով¹⁸: ԽՍՀՄ փլուզման պահին «Ավիահամալիր» արտադրական միավորումն իր կազմի մեջ ուներ 6 գործարան և մի քանի մասնաճյուղեր: Միավորումը շուտով դարձավ առաջատար ձեռնարկություն միկրոէլեկտրոնիկայի, հաշվիչ տեխնիկայի, ոռբոտատեխնիկայի, ԿԱՀ-երի նախագծման և արտադրության բնագավառում¹⁹:

Ռադիոտեղորոշումային կայանների համար շարժական ԿԱՀ-երի արտադրություն կազմակերպվեց նաև ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1977 թ. հոկտեմբերի 12-ի որոշմամբ վերակառուցված Հրազդանի լեռնաքիմիական կոմբինատում²⁰: Վերջինիս բազայի հիման վրա 1978 թ. ստեղծվեց «Հրազդանմեքենա» արտադրական միավորումը, որին 1978–1980 թթ. հատկացվեց 107,8 հազ. քմ. արտադրական տարածք, կազմավորվեց շուրջ 4000 աշխատողներով կոլեկտիվ: ԽՍՀՄ պաշտպանության նախարարության պատվերներով «Հրազդանմեքենա» միավորումը մասնակցել է ԽՍՀՄ հակաօդային պաշտպանության համակարգի (ՀՕՊ) ստեղծմանը: Այստեղ թողարկվել են ռադիոէլեկտրոնային սարքավորումներ հակաօդային պաշտպանության «ՕՍԱ», «ԿՈՒԲ», «Ս-75» զենիթահրթիռային համակարգերի ռադիոտեղորոշումային կայանների համար, խորհրդային

¹⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 302, թ. 76–77:

¹⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 482, թ. 61–62:

¹⁹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 87, գ. 6, թ. 29–30:

²⁰ Տե՛ս Саркисян А., Армяне – военные ученые, конструкторы, испытатели и производственники 20-го века, т. 2, Ереван, 2005, էջ 205–206:

զինված ուժերի տեխնիկական միջոցների ապահովման համար շարժական և ստացիոնար կապի միջոցներ²¹:

«Հրազդանմեքենա» միավորման արտադրությունը պահանջում էր բացառիկ մաքրության միջավայր գործարանի բոլոր արտադրամասերում: Սակայն գործարանի հարևանությամբ գտնվող ցեմենտի արտադրությունից օդ արտանետվող ցեմենտի փոշին անհնարին էր դարձնում վակումային հիգիենա պահանջող ժամանակակից գերձշգրիտ և գերզգայուն ռադիոէլեկտրոնային սարքավորումների պատրաստումը: 1981 թ. մարտի 17-ին ԽՍՀՄ պաշտպանական արդունաբերության նախարար Լ. Սմիրնովին ուղղված նամակում ԽՍՀՄ ռադիոարդյունաբերության նախարար Պ. Պլեշակովը նշում է, որ խնդիրը հարկ է լուծել ցեմենտի արտադրությունը Հրազդանից այլ վայր տեղափոխելու միջոցով: Նախարարն առաջարկում է արտադրությունը կենտրոնացնել հումքի ստացման հիմնական վայրում՝ Արարատ քաղաքում²²:

Ռադիոէլեկտրոնային և ռադիոտեխնիկական իրեր են արտադրվել Հրազդանի «Կեչարք» արտադրական միավորման ձեռնարկություններում: Ընդհանուր արտադրանքի ծավալում պաշտպանական պատվերներն այստեղ կազմել են 29.6 %, արտադրանքն առաքվել է Ռուսաստանում, Ուկրաինայում, Բելառուսիայում տեղակայված տասնյակ գործարաններ²³:

ԽՍՀՄ սարքաշինության, ավտոմատացման միջոցների և կառավարման համակարգերի նախարարության գծով օդային բարձիկներով և ստորջրյա թներով նավերի ստեղծման և կառուցման միութենական ծրագրում էր ներգրավված ԽՍՀՄ նավաշինության արդյունաբերության նախարարության Երևանի

²¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 660, թ. 207:

²² Տե՛ս նույն տեղում, գ. 324, թ. 4-6:

²³ Տե՛ս նույն տեղում, գ. 620, թ. 164, գ. 641, թ. 104-105:

«Էլեկտրասարք» արտադրական միավորումը: Ծրագիրը մշակվել էր ԽՍՀՄ նավաշինության արդյունաբերության նախարարության և Ռազմածովային նավատորմի կողմից: Այդ նպատակով գործարանում իրականացվեցին արտադրական տարածքների վերակառուցման աշխատանքներ, 1978–1979 թթ. միավորումը պետք է «Դվին» տեսակի տեղեկատվական համակարգերի, «Գառնի» սարքերի և նավերի ղեկավարման համակարգերի թողարկում կազմակերպեր²⁴:

«Էլեկտրասարք» հայկական արտադրական միավորման ձեռնարկությունների արտադրանքը խորհրդային տարիներին առաքվել է Ռուսաստանում, Ուկրաինայում, Լիտվայում, Էստոնիայում, Ղազախստանում տեղակայված տասնյակ նավաշինական գործարաններ²⁵: Գործարանը միլիվոլտմետրեր է մատակարարել Մոսկվայի Կրեմլի հրապարակում գտնվող Վ. Ի. Լենինի դամբարանի համար²⁶:

1970–1980-ական թթ. ռազմապաշտպանական արտադրության մեծ ծավալի աշխատանքներ են իրականացվել Երևանի «Էլեկտրոն» հայկական արտադրական միավորումում, որը տարիների ընթացքում դարձավ ԽՍՀՄ ռադիոտեխնիկական խոշոր ձեռնարկություններից մեկը: Վերջինիս արտադրական մասնաճյուղերը գործում էին Հայաստանի տարբեր շրջաններում՝ Կիրովականում (Վանաձոր)²⁷, Լենինականում, Էջմիածնում, Աբովյանում, Բերդում, Գորիսում, Կապանում: ԽՍՀՄ պաշտպանության նախարարության պատվերներով «Էլեկտրոն» միավորման ձեռնարկությունները խորհրդային տարիներին թողարկել

²⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 186, թ. 15–19:

²⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 620, թ. 166, գ. 641, թ. 82, թ. 97–101:

²⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 85, թ. 78–79:

²⁷ Կիրովականի էլեկտրոնային հաշվիչ տեխնիկայի «ԷՀՏ» գործարանը հանդիսանում էր ճակատային ավիացիայի ԿԱՀ-երի միակ արտադրողը ԽՍՀՄ-ում (տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 686, թ. 38):

են մենաշնորհային արտադրանք՝ ԽՍՀՄ ռազմաօդային ուժերի ինքնաթիռների թռիչքները և դրանց անվտանգությունն ապահովող, երկրի ցամաքային և օդային սահմաններն ու ուղիները վերահսկող ռադիոտեղորոշումային կայանների կառավարման ավտոմատացված համակարգերը համալրող ռադիոէլեկտրոնային սարքավորումներ և մասեր²⁸: Նշենք այդ համակարգերից մի քանիսը. ռազմական ավիացիայի ինքնաթիռների, այդ թվում ճակատային և կործանիչների, շարժական «Սպլավ» կառավարման ավտոմատացված համակարգ, ավիացիոն միավորումների «Դվին», նոր տիպի ավիակիրներում տեղադրվող ռազմածովային ավիացիայի «Գագոն», օդանավակայանների թռիչքների ու վայրէջքների «Ռուբեժ» և այլ ԿԱՀ-եր, օդային տեղաշարժերի ղեկավարման «Օկտավա» բաժանորդային կետ, ՀՕՊ-ի համակարգում ռադիոտեղորոշումային վաշտը կառավարող «Պոլե-Ս» համալիր շարժական կետ՝ ցածր բարձրությամբ թռչող նպատակակետեր հայտնաբերելու և ուղեկցելու համար, տիեզերական թռչող ապարատների տվյալների մշակման «Կոպյոր» շարժական համակարգ, տվյալների հաղորդման ցանցում օգտագործվող «Սևան» համակարգ, հեռագրային-հեռախոսային ուղիների ավտոմատացված «Օստրով» կայաններ՝ գորքերի «Ցենտր» կառավարման ավտոմատացված համակարգի համար և այլն²⁹: «Էլեկտրոն» արտադրական միավորման արտադրանքը խորհրդային տարիներին առաքվել է Մոսկվայում, Լենինգրադում, Սվերդլովսկում, Ջագորսկում, Ռյազանում, Պեմզայում, Տաշքենդում, Երևանում («Նեյտրոն», «Հրազդանմեքենա»), ԽՍՀՄ այլ քաղաքներում տեղակայված ռազմապաշտպանական արտադրանք թողարկող գոր-

²⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 620, թ. 179:

²⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 660, թ. 10-12:

ծարաններ, գիտաարտադրական միավորումներ, գիտահետազոտական ինստիտուտներ, գործարաններ և այլն³⁰:

Երևանի «Լույս» լույսի աղբյուրների և լուսատեխնիկական առարկաների թողարկման հայկական արտադրական միավորումը, որը մասնաճյուղեր ուներ հանրապետության տարբեր շրջաններում, պաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունների պատվերներով խորհրդային տարիներին թողարկել է ռազմական էլեկտրատեխնիկայի արտադրանք՝ ռազմական տեխնիկայի և սարքավորումների համար տարբեր տիպի էլեկտրական լամպեր, հարվածասեյսմակայուն լուսամփոփներ և այլն: Արտադրանքը մատակարարվել է Ռուսաստանի Տուլա, Իժնակ, Կովրով քաղաքներում գտնվող ԽՍՀՄ պաշտպանական արդյունաբերության նախարարության տարբեր գործարաններին և ձեռնարկություններին, Մոսկվայի մարզի Կոլոմնա քաղաքի հատուկ կոնստրուկտորական բյուրոյին և այլն³¹:

ԽՍՀՄ պաշտպանության նախարարության պատվերներով նավաշինական գործարանների համար էլեկտրական մեխանիզմներ է արտադրել Կիրովականի «Արդվին» էլեկտրամեխանիկական ձեռնարկությունը³², իսկ Էջմիածնի «Պլաստմաս» գործարանում խորհրդային վերջին տարիներին պատրաստվել են հակատանկային ականներ³³:

«ՀԽՍՀ ժողտնտեսության հետագա զարգացման միջոցառումների մասին» ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1975 թ. ապրիլի 16-ի որոշմամբ՝ ԽՍՀՄ 10-րդ հնգամյա պլանի (1976–1980) կապիտալ հատկացումներով նախատեսվում էր ՀԽՍՀ-ում, հատկապես հեռավոր շրջաններում, էլեկտրական

³⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 641, թ. 79–80:

³¹ Տե՛ս նույն տեղում, գ. 620, թ. 151, գ. 641, թ. 82:

³² Տե՛ս նույն տեղում, գ. 660, թ. 137:

³³ Տե՛ս նույն տեղում, գ. 641, թ. 177:

և կապի միջոցների արտադրանքի նոր գործարաններ և մասնաձյուղեր կառուցել: ԽՍՀՄ էլեկտրոնային արդյունաբերության նախարարության 1978 թ. հունվարի 28-ի հրամանով հաստատվում է Կամոյի (Գավառ) փ/ա Ա-3929 գործարանի կազմում Մարտունիում մասնաձյուղ կառուցելու նպատակահարմարությունը³⁴: ԽՍՀՄ կապի միջոցների արդյունաբերության նախարարության գծով նախատեսվում էր 1979-1980 թթ. Դիլիջանի «Իմպուլս» գործարանի մասնաձյուղերի շինարարությունը Կրասնոսելսկ (Ճամբարակ) և Համգաչիման գյուղերում: Մարտունիում 1980 թ. սկսվելու էր տվյալների փոխանցման ապարատուրանների գործարանի շինարարությունը³⁵:

ՀԽՍՀ Նախարարների խորհրդի 1979 թ. օգոստոսի 13-ի, 1980 թ. հունվարի 11-ի և մայիսի 11-ի որոշումներով Կապանի, Գորիսի և Աշտարակի շրջանների բնակչությանն աշխատանքով ապահովելու նպատակով նախատեսվում էր ընդարձակել Կապանում գործող կոնդենսատորների «Դիպոլ» արտադրական միավորման մասնաձյուղը, նոր մասնաձյուղեր կազմակերպել Տաթև և Օշական գյուղերում³⁶: «Դիպոլ» արտադրական միավորման ընդհանուր արտադրանքի ծավալում ռազմապաշտպանական արտադրանքի ծավալը խորհրդային տարիներին կազմել է 90,3 %: Արտադրանքն առաքվել է Ռուսաստանում, Ուկրաինայում, Բելառուսիայում, Ղազախստանում, Մոլդովայում և էստոնիայում տեղակայված շուրջ 140 գործարաններ, գորամասեր և այլն³⁷:

Ապարանի շրջանի բնակչությանն աշխատանքով ապահովելու նպատակով ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահի

³⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 200, թ. 28:

³⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 137, թ. 9:

³⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 185, գ. 281, թ. 1-2, գ. 299, թ. 1, գ. 181, գ. 292, թ. 103:

³⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 181, գ. 620, թ. 15, գ. 641, թ. 136:

1983 թ. սեպտեմբերի 16-ի կարգադրությամբ Ապարանում հիմնվում է ԽՍՀՄ ռադիոարդյունաբերության նախարարության Մոսկվայի ֆ/ա Մ-5159 կոնստրուկտորական բյուրոյի փորձարարական արտադրանքի մասնաճյուղ³⁸: Նույն նպատակով ՀԽՍՀ Նախարարների խորհրդի 1984 թ. հունիսի 2-ի կարգադրությամբ Միսիանի շրջանի Գոռհայր և Գետաթաղ գյուղերում կազմակերպվում են Երևանի «Նեյրոն» արտադրական միավորման մասնաճյուղեր³⁹: Շրջանի Դաստակերտ ավանում բացվում է Երևանի «Լույս» հայկական արտադրական միավորման մասնաճյուղ, կազմակերպվում է ԽՍՀՄ ընդհանուր մեքենաշինության նախարարության բժշկական տեխնիկայի գործարան, որի արտադրանքի ընդհանուր ծավալում պաշտպանական արդյունաբերության ճյուղի ձեռնարկությունների պատվերները կազմել են 35 %⁴⁰:

Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի (ԵրՄՄԳՀԻ-ի) արտադրական բազայի վրա Երևանի ներկայիս Դավիթաշեն վարչական շրջանում 1984 թ. կազմակերպվեց կապի միջոցների «Արաքս» արտադրական միավորումը: Դա լուրջ խթան հանդիսացավ Դավիթաշենում ենթակառուցվածքների, բնակելի և սոցիալ-կենցաղային կառույցների արագացված տեմպերով շինարարության համար⁴¹:

1980-ական թթ. սկզբներից խորհրդային ՌԱՀ-ը ծանր ժամանակներ էր ապրում, ձեռնարկություններում թույլ էր արտադրական կարգապահությունը, նվազում էին աշխատանքի արտադրողականության տեմպերը, ավելանում էր արտադրանքի խոտանը, ամբողջությամբ չէին կատարվում նախանշված առաջադրանքներն ու մատակարարումները և այլն: 1982 թ. ապրիլի

³⁸ Տե՛ս նույն տեղում, ց. 185, գ. 476, թ. 1-2, թ. 22-26:

³⁹ Տե՛ս նույն տեղում, ց. 188, գ. 506, թ. 1-2, 15-17:

⁴⁰ Տե՛ս նույն տեղում, ց. 181, գ. 620, թ. 219:

⁴¹ Տե՛ս Մարգարյան Ֆ., Կյանքի դասերը (Հուշեր), Երևան, 2001, էջ 70-71:

13-ին լույս է տեսնում ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի՝ «Ռազմական տեխնիկայի և սպառազինության որակի հետագա բարելավման միջոցառումների մասին» թիվ 300-85 որոշումը: Ի կատարումն վերջինիս, համապատասխան որոշումներ են ընդունվում նաև ԽՍՀՄ միութենական հանրապետություններում, այդ թվում Խորհրդային Հայաստանում: ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի 1982 թ. հունիսի 8-ի որոշումով խիստ հրատապ է համարվում հանրապետությունում արտադրվող ռազմական տեխնիկայի և սպառազինության որակի հետագա բարելավմանն ուղղված համալիր միջոցառումների անցկացումը, հանձնարարականներ են տրվում հանրապետության կառավարությանը, համապատասխան նախարարություններին, իրավապահ մարմիններին, դատախազությանը և այլն⁴²:

ՀԽՍՀ դատախազության կողմից 1982-1983 թթ. իրականացված ստուգումների մասին է նշվում հանրապետության դատախազ Ս. Օսիպյանի կողմից 1983 թ. դեկտեմբերի 30-ին ՀԽՍՀ Նախարարների խորհուրդ ուղարկված «Հանրապետությունում ռազմական նշանակության անորակ ապրանքների արտադրության դեմ պայքարի վիճակի մասին» զեկուցագրում: Դատախազը հայտնում է, որ ՀԽՍՀ դատախազության մարմիններն ընտրովի ստուգումներ են իրականացրել հանրապետությունում տեղակայված ռազմապաշտպանական ոլորտի ձեռնարկություններում: Արդյունքում պարզվել է, որ ոլորտի ձեռնարկություններում թեև որոշակի աշխատանքներ են իրականացվել արտադրանքի որակը բարձրացնելու համար, սակայն առանձին ձեռնարկություններում դեռևս առկա են գործընթացի խախտումներ: Առանձին պաշտոնյաներ թերի են կատարում իրենց պարտականությունները թողարկվող արտադրանքի բարձր որակը և հուսալիությունն

⁴² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 23, թ. 29-38:

ապահովելու համար, հաճախակի հաշտվում են որակի և տեխնիկական չափորոշիչների խախտման պայմանների հետ, թույլ են տալիս անորակ ապրանքների թողարկում և առաքում՝ անգամ ռազմական գերատեսչության վերահսկող մարմինների բազմակի զգուշացումներից հետո: Նշվում է, որ խախտումներ են հայտնաբերվել ԽՍՀՄ կապի միջոցների «Ռեյտ» հայկական արտադրական միավորման համակարգում: Այստեղ 1982 թ. իրացված հատուկ նշանակության ապրանքների խոտանը կազմել է 0,204 %: Անորակ սարքեր ստացող կազմակերպություններից ստացվել են հարյուրավոր վնասապահանջ բողոքներ: Միջնորդ արբիտրաժային դատարանների որոշումներով (նաև կամավոր) նրանց վճարվել է 600 հազար ռուբլի տուգանք: Հետագայում, սակայն, դարձյալ պատշաճ միջոցներ չեն ձեռնարկվել անորակ ապրանքների արտադրության պատճառները վերացնելու համար, դրանց թողարկումը նշանակալի չափերով շարունակվել է նաև 1983 թ.: «Ռեյտ» արտադրական միավորումը ստացել է ավելի քան 550 բողոք, վճարվել է 330 հազար ռուբլի տուգանք: Այսպիսով, ռազմական նշանակության անորակ լրակազմ ապրանքների մատակարարման պատճառով 1982 թ. և 1983 թ. 9 ամիսների ընթացքում միավորումից տուգանքի տեսքով բռնագանձվել է ավելի քան 900 հազար ռուբլի: Այնինչ, պետությանը հասցված նյութական վնասը փոխհատուցելու համար մեղավոր անձանցից գանձվել է ընդամենը 7450 ռուբլի, և այն էլ միայն բանվորներից:

Լուրջ խախտումներ են հայտնաբերվել «Հայէլեկտրամեքենա» արտադրական միավորումում: Ստուգման արդյունքները վկայում են, որ այստեղ կիրառվող միջոցառումները չեն նպաստում խնդիրների կարգավորմանը, առանձին դեպքերում՝ թույլ է արտադրական կարգապահությունը: Անորակ և խոտան հատուկ ապրանքների մատակարարման հետևանքով 1982–1983 թթ. միավորման կողմից վճարվել է 30 հազար ռուբլի տուգանք, որից

22.464 ռուբլին, ՀԽՍՀ Նախարարների խորհրդին առնթեր Պետարբիտրաժի 1982 թ. հոկտեմբերի 3-ի որոշմամբ, գանձվել է Լենինգրադի փ/ա Ա-3686 ձեռնարկության օգտին, սակայն մեղավորներից և ոչ մեկը նյութական պատասխանատվության չի ենթարկվել:

Որոշակի թերություններ են ի հայտ եկել «Պոզիստոր» և «Ռեզիստոր» արտադրական միավորումների էջմիածնի, Աբովյանի «Սիրիուս», Լենինականի անալիտիկ սարքերի փորձարարական «Անալիտիկսարք» և Լենինականի «Օմեգա» կոնդենսատորների գործարաններում, Պետստանդարտի շրջանային մարմինների միջոցով 1982-1983 թթ. վերջիններին ներկայացվել է 60 բողոք: 1982 թ. և 1983 թ. 6 ամիսների ընթացքում «Սիրիուս» գործարանի կողմից մատակարարված 13 հազար տարբեր տեսակի սարքերի մասեր խոտանվել և ետ են վերադարձվել: 1982 թ. և 1983 թ. 8 ամիսների ընթացքում էջմիածնի գործարանը չի մատակարարել 36.400 ռեզիստորներ: Ուշացրած մատակարարումների հետևանքով պատճառած վնասի համար Պետարբիտրաժի 1983 թ. սեպտեմբերի 14-ի որոշմամբ Կալուզայի փ/ա Մ-5895 ձեռնարկության օգտին Լենինականի «Օմեգա» գործարանից գանձվել է 15.370 ռուբլի տուգանք: Պարբերաբար անորակ աղաչափիչներ արտադրելու և մատակարարելու համար 1982 թ. տուգանվել է «Անալիտիկսարք» գործարանը, գործարանի տնօրենից բռնագանձվել է 240 ռուբլի: Սակայն անորակ աղաչափիչների արտադրությունը շարունակվել է 1983 թ., քաղաքի դատախազի կողմից գործարան է ուղարկվել տուգանքի նոր հայտ, նրա նախաձեռնությամբ գործարանի տնօրենից, գլխավոր ինժեներից և տեխնիկական հսկողության բաժնի պետից բռնագանձվել է 625 ռուբլի տուգանք:

Ռազմական նշանակության անորակ յրակազմ ապրանքների թողարկման և մատակարարման պայմանագրային պարտա-

վորությունների խախտումների առանձին փաստեր են հայտնաբերվել «Հրազդանմեքենա», «Էլեկտրասարք», «Դիպոլ», «Իզմերիտել», «Էրեբունի» գիտաարտադրական միավորման (ԳԱՄ) գործարաններում:

ՀԽՍՀ դատախազի զեկուցագրում նշվում է, որ ստուգումների այդպիսիքները և փաստերի համադրումը հիմք են տալիս եզրակացնելու, որ ռազմական նշանակության անորակ ապրանքների թողարկման և մատակարարման հիմնական պատճառն՝ արտադրական գործընթացի ոչ պատշաճ կազմակերպումն է, խոտան արտադրող աշխատակիցների շրջանում նրանց անձնական պատասխանատվության մասին տարվող բացատրական ոչ բավարար աշխատանքները, ցուցաբերվող հանդուրժող վերաբերմունքը, շատերը չեն ենթարկվում օրենքով նախատեսված կարգապահական, առավել ևս՝ նյութական պատասխանատվության, թերի է ձեռնարկությունների ղեկավարների աշխատանքը մասնագետների պատրաստման և վերապատրաստման գործում և այլն:

Վերոնշյալի մասին տեղեկացնելով հանրապետության իշխանություններին՝ Ս. Օսիպյանը նպատակահարմար է գտնում ռազմապաշտպանական ոլորտի արտադրական միավորումների, գործարանների և ձեռնարկությունների ղեկավարների ուշադրությունը հրավիրել նշված օրինախախտումների փաստերի վրա, պարտավորեցնել նրանց անհապաղ ընդունել համապատասխան միջոցներ և պարտադիր կատարել օրենքով նախատեսված բոլոր պահանջները՝ ռազմական նշանակության անորակ և խոտան ապրանքների արտադրության դեմ պայքարելու և մատակարարումների պայմանագրային պարտավորությունները կատարելու համար⁴³:

⁴³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 397, թ. 121-124:

Ս. Օսիպյանի կողմից բարձրացված հարցերը քննարկման առարկա են դառնում ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Ֆ. Պետրոսյանի կողմից 1984 թ. փետրվարի 24-ին հրավիրված խորհրդակցությունում, որին մասնակցում են ՀԽՍՀ տարածքում ռազմական ապրանքներ թողարկող «Ռելե», «Հայելեկտրամեքենա», «Պոզիստոր», «Հրազդանմեքենա», «Էրեբունի», «Դիպոլ», «Էլեկտրասարք», «Իզմերիտել», «Անալիտիկասարք» արտադրական միավորումների և ձեռնարկությունների գլխավոր տնօրենները, նրանց տեղակալները, արտադրության որակի գծով գլխավոր ինժեներները, տեխնիկական որակի հսկողության բաժնի պետերը, արտադրանքի ընդունման ռազմական ներկայացուցիչները, ՀԽՍՀ դատախազության և Պետստանդարտի աշխատակիցները: Խորհրդակցությունում լսվում են ՀԽՍՀ դատախազի առաջին տեղակալ Ն. Թովմասյանի, ԽՍՀՄ Պետստանդարտի ՀԽՍՀ վարչության պետի տեղակալ Ա. Կարապետյանի զեկուցումները հանրապետությունում արտադրվող ռազմական նշանակության արտադրանքի որակի, ձեռնարկությունների պատասխանատվության և այլ խնդիրների մասին: Պարզաբանումներով հանդես են գալիս ոլորտի պատասխանատուները և ձեռնարկությունների ղեկավարները: Խորհրդակցության արդյունքներ ամփոփում է ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Ֆ. Պետրոսյանը:

Խորհրդակցության և ընդունված որոշումների մասին ՀԽՍՀ Նախարարների խորհրդի ծանր արդյունաբերության բաժնի կողմից պատրաստված տեղեկանքը բաժնի պետի տեղակալ Գ. Հարապետյանի ստորագրությամբ 1984 թ. մարտի սկզբին ներկայացվում է ՀԽՍՀ դատախազություն⁴⁴:

⁴⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 125-126:

Ի կատարումն ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1980–1990 թթ. համապատասխան որոշումների՝ ՀԿԿ Կենտկոմի բյուրոն յուրաքանչյուր տարվա սկզբին հաստատում էր ՀԿԿ Կենտկոմի և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի որոշումները՝ ռազմական տեխնիկայի և սպառազինության թողարկման պլանի և առաքումների, ռազմապաշտպանական արտադրամասերի շինարարության մասին⁴⁵:

ԽՍՀՄ ռադիոարդյունաբերության և էլեկտրատեխնիկական արդյունաբերության ձեռնարկություններում ռազմական տեխնիկայի և նրանց համար լրակազմ ապրանքների արտադրական կարողություններ ստեղծելու նպատակով 1980–ական թթ. հանրապետությունում շինարարական աշխատանքներ են տարվել մի շարք արտադրական միավորումներում և ձեռնարկություններում՝ «Հրազդանմեքենա», Կիրովականի «ԷՀՏ», Գորիսի սարքաշինական գործարան, «Էլեկտրոն» հայկական արտադրական միավորման Կապանի և Լենինականի մասնաճյուղեր, Երևանի «Ֆերիտ» փորձարարական գործարան⁴⁶, «Հայէլեկտրամեքենա», Երևանի «Կոմետա» ԿԳՀԻ մասնաճյուղ և այլն: ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1987 թ. հուլիսի 6–ի թիվ 764–174 որոշման հավելվածի համաձայն՝ ՀԿԿ Կենտկոմը և ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը պարտավորեցնում են արտադրական միավորումների և գործարանների ղեկավարներին

⁴⁵ Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 126, գ. 23, թ. 1–3, 29–38, գ. 24, թ. 1–3, գ. 25, թ. 1–3, գ. 27, թ. 36–40 և այլն:

⁴⁶ «Ֆերիտ» գործարանը խորհրդային տարիներին ռազմական հատուկ տեխնիկայի և սպառազինության համալրման համար արտադրել է ֆերիտային տարբեր սպրանքներ, հաշվիչ տեխնիկա, էլեկտրական հանգույցներ և այլն: Արտադրանքն առարկել է Մոսկվայում, Կիմովսկում, Պրավդինսկում, Տաշքենդում տեղակայված ռազմաարդյունաբերության ձեռնարկություններ, նաև՝ Երևանի «Հրազդանմեքենա» գործարան (տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 620, թ. 180, գ. 641, թ. 78):

ժամանակին ապահովել նշված կառույցների շինարարությունը և հսկողություն սահմանել 1987–1990 թթ. համար նախատեսված առաջադրանքների կատարման ընթացքի նկատմամբ⁴⁷:

Խորհրդային տնտեսությանը բնորոշ բացասական երևույթներն առավել խորացան 1980–ական թթ. կեսերից, երբ երկրի տնտեսությունը, այդ թվում ՌԱՀ–ը, ծանր ժամանակներ էին ապրում: Դրանք վերացնելուն ուղղված խորհրդային իշխանությունների ձեռնարկած քայլերը, սակայն, հիմնականում արդյունավետ չէին և դրական տեղաշարժերի չհանգեցրեցին: Էլ ավելի խորանալով՝ դրանք շարունակվեցին մինչև ԽՍՀՄ փլուզումը: Խորհրդային ՌԱՀ–ի ոլորտում տիրող ծանր դրությունը չբարելավեց նաև «Արդյունաբերության պաշտպանական ճյուղերի աշխատանքների արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների մասին» ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1984 թ. նոյեմբերի 22–ի որոշումը, ի կատարումն որի՝ ՀԿԿ Կենտկոմի բյուրոն 1985 թ. հունվարի 7–ին ընդունեց համապատասխան որոշում⁴⁸:

1980–ական թթ. երկրորդ կեսին բոլոր առումներով ծանր էր դրությունը հատկապես Խորհրդային Հայաստանում: Արդյունաբերական արտադրանքի 65 կարևորագույն տեսակներից չէր կատարվում գրեթե յուրաքանչյուր երկրորդի պլանը: 1988 թ. պայմանագրային մատակարարումներով հանրապետությունը վերջին տեղն էր գրավում ողջ ԽՍՀՄ–ում: 1981–1985 թթ. միջին տարեկանի համեմատությամբ 1986–1987 թթ. արդյունաբերության մեջ խոտանի պատճառով առաջացած կորուստներն աճել էին 27 %–ով⁴⁹:

1987 թ. նոյեմբերի 11–ին ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրճյանին ուղղված գրությունում ԽՍՀՄ ՀՕՊ գորքերի

⁴⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 27, թ. 6–9, գ. 28, թ. 35–42:

⁴⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 26, թ. 1–16:

⁴⁹ Տե՛ս «Սովետական Հայաստան», 17 սեպտեմբերի, 1988, թիվ 225–226:

գլխավոր հրամանատար, բանակի գեներալ Խ. Տրետյակը նշում է, որ «Հայէլեկտրամեքենա» արտադրական միավորման կողմից թերի է կատարվում ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1986 թ. դեկտեմբերի 31-ի թիվ 1581-431 որոշմամբ ՀՕՊ գործերի վերագինման համար գենիթային «Ս-300Պ» հրթիռային համակարգերի և ԿԱՀ-երի ընթացիկ տարվա պլանով նախատեսված ինքնավար էլեկտրասնուցման միջոցների մատակարարումները: Այդ պատճառով Լենինգրադի «Բոլշնիկ գործարան» արտադրական միավորումում և Կույբիշևի «Ստրոմմեքենա» գործարանում չէր կատարվում հրթիռների արձակման սարքերի արտադրության պլանը: Վտանգված էր նաև 1987 թ. մատակարարումների հաստատված պլանը: Տրետյակը նշում է, որ «Ս-300Պ» հրթիռների համակարգերի շահագործման փորձը ցույց է տալիս, որ առավել անհուսալի են հենց ինքնավար էլեկտրասնուցող միջոցները, ինչը հետևանք է «Հայէլեկտրամեքենա» արտադրական միավորումում արտադրանքի որակի բարձրացման և հուսալիության նկատմամբ ցուցաբերվող թերի վերաբերմունքի:

ԽՍՀՄ ՀՕՊ գործերի գլխավոր հրամանատարին լուրջ անհանգստացնում էր նաև ԽՍՀՄ պաշտպանության նախարարության կարիքների համար ԿԱՀ-երի նոր միջոցների արտադրության, մատակարարումների բնագավառում «Հրազդանմեքենա» և «էլեկտրոն» հայկական արտադրական միավորումներում տիրող ծանր դրությունը: Տրետյակը խնդրում է Հայաստանի իշխանությունների աջակցությունը՝ բարձրացված խնդիրները շտապ կարգավորելու համար⁵⁰: Դրանք քննարկման առարկա են դառնում «Հայէլեկտրամեքենա» արտադրական միավորման կուսակցական կոմիտեի 1987 թ. դեկտեմբերի 30-ի նիստում, որին մասնակցում է ՀԿԿ Կենտկոմի արդյունաբերության բաժնի վարիչ Վ. Ավե-

⁵⁰ Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 87, գ. 6, թ. 8-9:

տիսյանը: Միավորումում արտադրական գործընթացի թերացումների և մատակարարումների չկատարման հիմնական պատճառ է նշվում գործարանի տեխնոլոգիական ոչ բավարար ապահովվածությունը, սարքավորումների և հաստոցների բարոյական և ֆիզիկական մաշվածությունը, ձեռնարկության հզորություններին չհամապատասխանող պլանների ընդունումը և այլն⁵¹: Նիստի քննարկումների և արդյունքների հիման վրա 1988 թ. հունվարին մշակվում և ընդունվում է «Հայէլեկտրամեքենա» միավորման ձեռնարկություններում արտադրանքի որակը և հուսալիությունը բարձրացնելու միջոցառումների համալիր ծրագիր⁵²:

Ռազմապաշտպանական արտադրանքի բնագավառում ծանր էր դրությունը նաև հանրապետության մյուս ձեռնարկություններում, մասնավորապես «Աստրո» ԳԱՄ-ի «Օրբիտա» գործարանում⁵³: ԽՍՀՄ պաշտպանական արդյունաբերության նախարարի տեղակալ Պ. Ֆինոգենովին և ՀԿԿ Կենտկոմի արդյունաբերության բաժնի վարիչ Ռ. Ստեփանյանին ուղղված «Օրբիտա» գործարանի կոլեկտիվի խորհրդի 1988 թ. նամակում նշվում է ռազմական տեխնիկայի համար «1ՊՆ65» ջերմային նշանառուի շարային թողարկման 1987 թ. արտադրական պլանի և մատակարարումների տապալման մասին, ինչի պատճառով գործարանի արտադրատնտեսական գործունեությունը ճանաչվել է անբավա-

⁵¹ Տե՛ս նույն տեղում, թ. 6-7:

⁵² Տե՛ս նույն տեղում, թ. 10:

⁵³ «Աստրո» ԳԱՄ-ի կազմում 1976 թ. կազմակերպված «Օրբիտա» գործարանում ԽՍՀՄ պաշտպանության և պաշտպանական արդյունաբերության նախարարությունների պատվերներով արտադրվել են հատուկ նշանակության սարքեր՝ հրետանային զենքի տոպոգեոդեզիական հաշվարկիչների լրակազմեր, գիշերային տեսանելիության սարքեր և այլն: Գործարանի ընդհանուր արտադրանքի մեջ ռազմապաշտպանական նշանակության արտադրանքը կազմել է ավելի քան 50%: Այստեղ արտադրված հատուկ նշանակության արտադրանքն առաքվել է Ռուսաստանում և Ուկրաինայում տեղակայված ռազմաարդյունաբերական տարբեր ձեռնարկություններ (տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 620, թ. 177-178, գ. 641, թ. 70):

րար: Նկատի ունենալով գործարանի ֆինանսական ծանր դրությունը՝ աշխատանքային կոլեկտիվը խնդրում է վերանայել արտադրատեսակի 1988 թ. արտադրական պլանը և նախատեսված 90 հատից իջեցնել 20-ի⁵⁴:

ՀԽՍՀ առանց այն էլ ծանր սոցիալ-տնտեսական դրությունը վատթարացավ 1988 թ. սկզբներից, երբ Խորհրդային Ադրբեջանի իշխանությունների կողմից իրականացված ազգային խտրականության քաղաքականության, Սումգայիթում և այլուր կազմակերպված վայրագությունների արդյունքում սկսվեց հայության բռնագաղթը դեպի Խորհրդային Հայաստան: Բազմահազար փախստականների առկայությունը հանրապետությունում, Ադրբեջանի կողմից կիրառված Հայաստանի տնտեսական շրջափակումը, երբ հանրապետությունը զրկվեց բեռնափոխադրումների շուրջ 85 %-ից, և արտահանման ենթակա շատ արժեքավոր ապրանքներ, այդ թվում ռազմական նշանակության, մնում էին պահեստներում, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրով պայմանավորված հանրապետությունում ծավալված գործադուլային շարժումը վերջնականապես կաթվածահար արեցին երկրի տնտեսությունը: Գործադուլներին մասնակցում էին նաև Հայաստանի տարածքում տեղաբաշխված արդյունաբերության պաշտպանական ճյուղերի ձեռնարկությունների կոլեկտիվները: Այսպես, օրինակ, 1988 ամռանը գործադուլներ հայտարարեցին Երևանի «Ռելե», «Հրազդան», «Բազալտ», «Ֆերիտ», «Սելենա», «Էլեկտրոն», «Էրեբունի» ԳԱՄ-ի «Մասիվ», «Նորք» գործարանների, «Աստրո», «Ազատ», «Լազերային տեխնիկա», «Անի» ԳԱՄ-երի, ԵրՄՄԳՀԻ-ի, Երևանի ֆիզիկայի ինստիտուտի, «Կոմետա» կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտի Երևանի մաս-

⁵⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 6, թ. 31-34:

նաճյուղի, «Նեյտրոն», «Նեյրոն» կազմակերպությունների և հատուկ կոնստրուկտորական բյուրոների հազարավոր աշխատակիցներ⁵⁵:

Հայաստանի անասելի ծանր դրությունն աղետալի դարձեց 1988 թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի ավերիչ երկրաշարժը, երբ մասնակի կամ ամբողջությամբ քանդվեցին և դադարեցին գործել արդյունաբերական ավելի քան 170 գործարաններ, ձեռնարկություններ և արտադրամասեր⁵⁶: Դրանց մեջ զգալի թիվ էին կազմում նաև ռազմապաշտպանական ոլորտի ձեռնարկությունները. Լեւնինականի էլեկտրատեխնիկական և միկրոէլեկտրաշարժիչների, Երևանի «Արդկապ» գործարանի Ստեփանավանի մասնաճյուղը, Կիրովականի, Սպիտակի, այլ բնակավայրերի տասնյակ ձեռնարկությունները⁵⁷:

•••

1985–1991 թթ. ԽՍՀՄ-ում իրագործվող «վերակառուցման» քաղաքականությունը, որը սպասված արդյունքները չտվեց, բերեց խորհրդային ՌԱՀ-ի ամբողջական վերափոխմանը, սկսվեց ռազմական արդյունաբերական ոլորտի ձեռնարկությունների փոխարկումը քաղաքացիական արտադրության (կոնվերսիա): Վերակառուցման տարիներին մշակված կոնվերսիայի ծրագրերում բացահայտ առաջնությունը տրվեց սպառողական ապրանքների և կենցաղային տեխնիկայի թողարկմանը: Ինչպես նկատում է հետազոտող Ա. Ֆիլիտովը, «Սառը պատերազմի տարիներին ևս ՌԱՀ-ը թողարկում էր խաղաղ արտադրանք (հակառակ դեպքում ԽՍՀՄ քաղաքացիներն ուղղակի չէին կարող գոյատևել), սակայն դա, որպես կանոն, ցածր որակի և սահմանափակ անվանացանկի արտադրանք էր, ըստ էության՝ հիմնական արտադրության

⁵⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 21, թ. 58:

⁵⁶ Տե՛ս Хачатрян К., Великий друг армянского народа – Н.И. Рыжков, Ереван, 2004, էջ 114:

⁵⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 103–104:

թափոններ: Խորհրդային ՌԱՀ–ը, միանգամայն մրցունակ լինելով ռազմական արտադրանքի ոլորտում, բոլորովին մրցունակ չէր բնակչության համար լայն օգտագործման ապրանքների արտադրման ոլորտում»⁵⁸:

Հայաստանի ռազմապաշտպանական ձեռնարկություններում կոնվերսիայից բխող միջոցառումներ կազմակերպելու և իրականացնելու նպատակով ՀԽՍՀ Նախարարների խորհրդի կողմից ստեղծվում է հատուկ հանձնաժողով՝ Մ. Մինասբեկյանի նախագահությամբ: Վերջինս 1989 թ. դեկտեմբերի 1–ին Նախարարների խորհուրդ է ներկայացնում արդյունաբերության պաշտպանական ճյուղերի մի շարք ձեռնարկությունների հաջորդական կոնվերսիայի մասին առաջարկությունների փաթեթ: Հանձնաժողովը նշում է, որ ներկայումս հանրապետության պաշտպանական արդյունաբերության 9 ճյուղերում գործում են միութենական ենթակայությամբ 22 արտադրական միավորումներ և ձեռնարկություններ, որտեղ արտադրվող ապրանքների ընդհանուր ծավալը կազմում է հանրապետության ամբողջ մեքենաշինության արտադրանքի շուրջ կեսը: Հանձնաժողովի նախնական տվյալներով՝ այդ միավորումներից և ձեռնարկություններից 1990 թ. միայն 5–ը կարող էին իրականացնել ժողովրդական լայն սպառման ապրանքների թողարկում: Դրանք են՝ «Ավիահամալիր», «Սևան», «Արարատ» ԳԱՄ–երը, «Բազալտ» և «Արաքս» գործարանները: Մասնավորապես՝ «Բազալտ» գործարանում միջոցառումներ են մշակվել արտադրական կարողությունների մի մասը լայն սպառման ապրանքների («Ծովային մարտ» էլեկտրոնային խաղեր, կենցաղային անհատական «Սպեկտոր» համակարգիչներ, սառնախցիկներ և այլն) արտադրության փոխադրե-

⁵⁸ Филитов А., Конец холодной войны и распад СССР: проблема закономерности и альтернативности, "Историческое пространство. Проблемы истории стран СНГ", Москва, 2011, с. 247–248.

լու ուղղությամբ: Նմանօրինակ աշխատանքներ են իրականացվում «Սևան» ԳԱՄ-ում և «Արարատ» ԳԱՄ-ի Գորիսի մասնաճյուղում: Այստեղ 1990 թ. նշմարվում է բժշկական սարքավորումների և ժողովրդական սպառման մի շարք ապրանքների (մազնիտոֆոններ, հեռախոսներ, կենցաղային հաշվիչ մեքենաներ և այլն) արտադրության կազմակերպում: Համատեղ արտադրություն կազմակերպելու նպատակով ձեռնարկությունները բանակցություններ են վարում օտարերկրյա մի շարք գործընկերների հետ⁵⁹:

Հանձնաժողովի կարծիքով՝ պետք չէր նախատեսել կոնվերսիայի անցկացում ԽՍՀՄ էլեկտրոնային, պաշտպանական արդյունաբերության, կապի նախարարությունների, Հաշվիչ տեխնիկայի և ինֆորմատիկայի պետկոմի ձեռնարկություններում, որոնք արտադրատեխնիկական մեծ հնարավորություններ ունեն ռազմապաշտպանական պահանջարկ ունեցող բարձրորակ ապրանքներ թողարկելու համար:

Ելնելով ուսումնասիրությունների արդյունքներից, ՀԽՍՀ Նախարարների խորհրդի կոնվերսիայի հարցերով հանձնաժողովն առաջարկում է՝

1. Հանրապետության տարածքում տեղակայված պաշտպանական ճյուղերի ձեռնարկությունների կոնվերսիա անցկացնելու նպատակով 1990 թ. փետրվար-մարտ ամիսներին հրավիրել հանրապետական խորհրդակցություն՝ պաշտպանական ճյուղերի ձեռնարկությունների ղեկավարների, գիտական, նախագծակոնստրուկտորային կազմակերպությունների, տնտեսագիտական ուղղվածության ինստիտուտների, արտաքին տնտեսական գերատեսչությունների, ՀԽՍՀ առևտրի նախարարության ներկայացուցիչների մասնակցությամբ:

⁵⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 620, թ. 14-16:

2. Պաշտպանական ճյուղերի ձեռնարկությունների ղեկավարներին հանձնարարել մինչև 1990 թ. հունվարի 10-ը ՀԽՍՀ Նախարարների խորհրդի կոնվերսիայի հարցերով հանձնաժողովին առաջարկություններ ներկայացնել 1990–1995 թթ. ժողովրդական լայն սպառման ապրանքների թողարկմանն անցնելու հնարավորությունների մասին:

3. ՀԽՍՀ Նախարարների խորհրդի կոնվերսիայի հարցերով հանձնաժողովին հանձնարարել մինչև 1990 թ. փետրվարի 1-ն ընդհանրացնել ներկայացված նյութերը և առաջարկությունների փաթեթ նախապատրաստել ՀԽՍՀ Նախարարների խորհրդի համար:

4. ՀԽՍՀ Պետսյլանին հանձնարարել 1989 թ. դեկտեմբերին մասնագետներ գործուղել Բելառուսական, Լիտվայի և էստոնական ԽՍՀ-ներ՝ անցկացված կոնվերսիայի փորձն ուսումնասիրելու համար⁶⁰:

Կոնվերսիայի շրջանակներում ՀԽՍՀ իշխանությունները փորձում էին հանրապետությունում կազմակերպել լայն սպառման նոր ապրանքների արտադրություն: Այսպես՝ 1990 թ. մայիսին ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահ Ն. Ռիժկովին ուղղված նամակում ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Վ. Մարգարյանցը նշում է, որ ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1990 թ. ապրիլի 28-ի թիվ 23 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ նախատեսվում է ընդլայնել համագործակցությունը «Այ-Բի-Էմ» ֆիրմայի հետ և ԽՍՀՄ-ում կառուցել անհատական օգտագործման համակարգիչների արտադրության գործարան: ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը խնդրում է քննարկել համակարգիչների արտադրությունը ԽՍՀՄ կապի նախարարության «Արարս» կոմուտացիոն տեխնիկայի գործարանում (որի շինա-

⁶⁰ Տե՛ս նույն տեղում, թ. 16–19:

րարությունը կավարտվի 1992 թ.) կազմակերպելու հնարավորությունը: Վ. Մարգարյանցը նշում է, որ գործարանը կառուցվել է արբանյակային կապի միջոցներ արտադրելու համար, սակայն կոնվերսիայի հետևանքով ապրանքների թողարկումը հանվել է արտադրությունից, ուստի ոչ մեծ կապիտալ ներդրումներով կարելի է ավարտել շինարարությունը և գործարանը վերակառուցել անհատական համակարգիչների արտադրության՝ կրթական հաստատություններին համակարգիչներով ապահովելու նպատակով⁶¹:

1991 թ. մայիսի 17-ին ԽՍՀՄ ռադիոարդյունաբերության նախարար Վ. Շիմկոյին ուղղված նամակում ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ տեղակալ Վ. Ամիրբեկյանը նշում է, որ ՀՀ կառավարությունն ամուր կանգնած է այն տեսակետին, որ ամրացվի և զարգացվի գիտատեխնիկական և արտադրական կապերը միութենական նախարարությունների և գերատեսչությունների միջև՝ պարտավորությունները կատարելու համար: 1991–1995 թթ. սպառազինության թողարկման հաստատված ծրագրերին համապատասխան՝ ԽՍՀՄ պաշտպանության նախարարության պատվերներով «Հրազդանմեքենա» արտադրական միավորումում պետք է իրականացվի ՀՕՊ-ի ԿԱՀ-երի համար «Օսնովա-1» և «Պոլե» ապրանքների թողարկում, որը կազմում է ընդհանուր արտադրանքի 70 %-ը: Սակայն, – շարունակում է Ամիրբեկյանը, – երկրում իրականացվող կոնվերսիայի պայմաններում վերը նշված ապրանքների արտադրման հեռանկարը պարզ չէ, ուստի խնդրում եմ պարզաբանել և վերջնական պատասխան տալ «Հրազդանմեքենա»-ում հատուկ նշանակության ապրանքներ թողարկելու հեռանկարի մասին⁶²:

⁶¹ Տե՛ս նույն տեղում, թ. 7–8:

⁶² Տե՛ս նույն տեղում, թ. 22–23:

ԽՍՀՄ մայրամուտին, Հայաստանի անկախության առաջին օրերին կառավարության կարգադրությամբ անցկացվեց հանրապետության պաշտպանական արդյունաբերության ձեռնարկություններում և գիտաարտադրական կազմակերպություններում խորհրդային տարիներին արտադրված (նաև ներկայում արտադրվող) ռազմապաշտպանական ապրանքների մասին հարցում: ՀՀ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Գ. Վարդանյանի ստորագրությամբ բոլոր այդ ձեռնարկություններ ուղարկված 1991 թ. հոկտեմբերի 14-ի թիվ 0784 գրությամբ խնդրվում է ՀՀ Նախարարների խորհրդին հայտնել ապրանքի անունը, նրա նշանակությունը, քանակը և տոկոսն ընդհանուր արտադրանքի մեջ, նաև՝ ինչպե՞ս են կատարվում պատվերները, և եթե չեն կատարվում՝ ինչո՞ւ:⁶³ ՀՀ պետնախարար Վ. Չիտեչյանի ստորագրությամբ 1992 թ. հունվարի 29-ի թիվ 024 լրացուցիչ գրությամբ խնդրվում է ՀՀ կառավարությանը տվյալներ ներկայացնել նաև թողարկված և թողարկվող արտադրանքի արտաքին առաքումների մասին⁶⁴:

Հանրապետության ձեռնարկությունների և կազմակերպությունների ղեկավարների պատասխան գրությունների բովանդակությունից ակնառու երևում է, թե որքան ծանրակշիռ ներգրավվածություն է ունեցել Հայաստանը խորհրդային ՌԱՀ-ում: Մյուս կողմից՝ ԽՍՀՄ փլուզման շրջանում համամիութենական պաշտպանական պատվերների, ֆինանսների փաստացի բացակայության, ռազմական նշանակության բազմաթիվ ապրանքների արտադրությունից հանելու և այլ պատճառներով խորհրդային ՌԱՀ-ի հայաստանյան ձեռնարկությունների և կազմակերպությունների գերակշիռ մասը 1992 թ. սկզբի դրությամբ

⁶³ Տե՛ս նույն տեղում, թ. 82:

⁶⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 641, թ. 66:

կամ պարապուրդի մեջ էր կամ նրանց ծանրաբեռնվածությունը գտնվում էր ծայրահեղ ցածր մակարդակի վրա⁶⁵:

Այսպիսով, Խորհրդային Հայաստանում ռազմապաշտպանական միջոցառումների անցկացումը նպաստեց հանրապետության պաշտպանունակության և անվտանգության ամրապնդմանը, իսկ ռազմաարդյունաբերության զարգացումը լուրջ խթան հանդիսացավ երկրի տնտեսության և արդյունաբերության զարգացման, սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման, բնակչության աճի և զբաղվածության ապահովման, կենսամակարդակի բարձրացման, գիտատեխնիկական աննախադեպ ստաջրնթացի համար: Հայաստանի ամբողջ տարածքում ձևավորեցին ոչ միայն արտադրական մեծ հզորություններ, այլև տասնյակ արդյունաբերական կենտրոններ:

Հանրապետության արտադրական բոլոր հզորությունների շուրջ 40 %-ն այս կամ այն չափով սպասարկում էր Խորհրդային ռազմական արդյունաբերությանը: ՀԽՍՀ-ն ապահովում էր համամիութենական ՌԱՀ-ի բարձրտեխնոլոգիական, ինտելեկտուալ հատվածը: Հանրապետությունը ԽՍՀՄ-ում առաջատար դիրքեր էր զբաղեցնում համակարգչային, միկրոէլեկտրոնային, ռադիոէլեկտրոնային, օպտիկաֆիզիկական, ՀՕՊ-ի և ավիացիոն-տիեզերական համակարգերի համալրման բաղադրիչների մշակման և արտադրության ոլորտում: Դրանում ընդգրկված տասնյակ ձեռնարկություններում, գիտահետազոտական և գիտաարտադրական կազմակերպություններում մշակվել և թողարկվել է համամիութենական ռազմական և տիեզերական ռադիոէլեկտրոնիկայի ընդհանուր ծավալի 30-40 %-ը:

Ռազմապաշտպանական ոլորտի զարգացվածության ընդհանուր մակարդակով Հայաստանը՝ Խորհրդային Ռուսաստա-

⁶⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 620, գ. 641, գ. 660 և այլն:

նից, Ուկրաինայից և Բելառուսիայից հետո ԽՍՀՄ-ում զբաղեցնում էր 4-րդ պատվավոր տեղը: Էլեկտրատեխնիկանան մեքենաշինության արտադրության ծավալով Հայաստանը 2-րդն էր, իսկ սարքաշինությամբ՝ 5-րդը: ԽՍՀՄ ՌԱՀ-ի համակարգում ներգրավված Խորհրդային Հայաստանի աշխատողների ընդհանուր թվական աստիճանը, համեմատած հանրապետության բնակչության թվի հետ, հասնում էր գրեթե 1 %-ի, և այդ ցուցանիշով Խորհրդային Հայաստանը զիջում էր միայն նույն Ռուսաստանին, Ուկրաինային և Բելառուսիային:

Իրավամբ, հետպատերազմյան տարիներին Հայաստանի տնտեսության և արդյունաբերության, գիտության աննախադեպ զարգացումը մեծ չափով պայմանավորված էր հանրապետության ռազմապաշտպանական ոլորտի ձեռնարկությունների գործունեությամբ:

KAREN KHACHATRYAN

THE MILITARY-DEFENCE INDUSTRY SOVIET

ARMENIA IN 1970-1991

SUMMARY

The rapid development of the economy and industry of Soviet Armenia in the analyzed period was mainly induced by the activities of electro machine, electrical engineering, instrument-making, radio-electronic and chemical sectors of industrial enterprises which were producing goods for military and defense purposes. During this period the republic was fully engaged in the fast-growing Military-Industrial Complex (MIC) of the USSR. In order to meet the needs of the Soviet MIC Soviet Armenia was producing electronic computers,

management systems, means of radio-electronic and space communication and other military goods for replenishing the latest rocket and missile technology, Soviet submarines and spacecrafts. The latter fostered the improvement of military technology and armament, the increase of combat capability of the USSR Armed Forces, the strengthening of country's defensive capacity and the sustainable development of the Soviet Military-Industrial Complex.

At the same time it is worth mentioning that during the last years of the USSR the military-defense enterprises of the republic had serious drawbacks in the implementation of production and supply which was typical for whole Soviet MIC.

КАРЕН ХАЧАТРЯН

ВОЕННО-ОБОРОННОЕ ПРОИЗВОДСТВО В СОВЕТСКОЙ АРМЕНИИ В 1970–1991 ГГ.

РЕЗЮМЕ

Развитие экономики и промышленности Советской Армении в исследуемый период было преимущественно обусловлено деятельностью предприятий электромашиностроительной, электротехнической, приборостроительной, радиоэлектронной, химической отраслей промышленности, выпускающих продукцию военно-оборонного назначения. В этот период республика была полностью вовлечена в военно-промышленный комплекс (ВПК) СССР. В Советской Армении было налажено производство электронных вычислительных машин, автоматизированных систем управления, средств радиоэлектронной и космической связи, других изделий для комплектования новейшей ракетной и реактивной

техники, советских подводных лодок и космических аппаратов, для нужд советского ВПК. Последнее способствовало усовершенствованию военной техники и вооружения, укреплению боеготовности Вооруженных Сил СССР и обороноспособности страны, устойчивому развитию советского ВПК.

Одновременно надо отметить, что в последние годы существования СССР военно-оборонные предприятия республики имели серьезные недостатки в осуществлении производства и плановых поставок, что было свойственно для всего советского ВПК.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայաստանում կառավարման նոր համակարգի ձևավորման գործընթացը սկիզբ առավ 1990 թ. օգոստոսի 23-ին ընդունված Անկախության հռչակագրից հետո: 1991-1994 թթ. ընթացքում հանրապետական մակարդակով քաղաքական համակարգը որոշ ձևափոխումների ենթարկվեց, ձևավորվեցին իշխանության բարձրագույն մարմինները, սակայն տեղերում պահպանվեց տեղական խորհուրդների համակարգը: Այդ պատճառով պետության կառավարման համակարգն անկատար էր համարվում: Բացի այդ մտավախություն կար, որ հին իշխանության տեղական մարմինները չեն սատարում նոր իշխանություններին և տեղերում խոչընդոտում են իշխանության հանրապետական մարմինների որոշումների իրագործմանը: Այսպես՝ դեռևս 1992 թ. երկրի նախագահը նշում էր, որ «Տեղական իշխանություններն այսօր համարյա դուրս են մեր պետական կառուցվածքից: Եվ եթե նկատի ունենանք նաև այն հանգամանքը, որ տեղական իշխանությունները մեծ մասամբ ներկայացված են նախկին համակարգի պաշտոնյաներով, ապա պարզ պետք է լինի, թե ինչպիսի հակասություններ են առաջացել հանրապետական ու տեղական իշխանությունների միջև: Եթե խորհրդարանը կարողանար կարճ ժամանակի ընթացքում լրացնել այս բացը, որոշակի իրավական դաշտ ստեղծեր տեղական ինքնակառավարման համակարգի համար, այսինքն վերջապես ընդուներ տեղական ինքնակառավարման մասին օրենքը, ապա մենք շատ լուրջ քայլ արած

կլինեինք մեր պետական կառույցների կատարելագործման հարցում»¹:

1991-1994 թթ. պատերազմական վիճակը մեծապես խոչընդոտեց պետական շինարարությանը: Այդ պայմաններում աննպաստակահարմար էր արմատական փոփոխությունների իրագործումը: ՀՀՇ-ի դիրքորոշումը Սահմանադրության ընդունման հարցում նույնպես խիստ զգուշավոր էր, իսկ Սահմանադրության բացակայության պայմաններում խորքային փոփոխությունների գնալը նպաստակահարմար չէր:

Կառավարման համակարգի բարեփոխման նոր փուլ սկսվեց զինադադարից հետո: Բարեփոխումներն ընթանում էին ներքադաքական պայքարի սրման պայմաններում: Թեպետ Սահմանադրության բովանդակության շուրջ քաղաքական ուժերի միջև լուրջ բախումներ եղան, սակայն այն ընդունվեց 1995 թ. հունիսի 5-ի հանրաքվեով: ՀՀ Սահմանադրության ընդունումով դադարում էր 1978 թ. ընդունված ՀԽՍՀ Սահմանադրության գործադրումը և երկրում բարեփոխումների նոր փուլ էր սկսվում:

Բարեփոխումների համատեքստում հատկապես արմատական էին տեղական կառավարման և ինքնակառավարման համակարգի ձևավորմանն ուղղված քայլերը: Բարեփոխումների ուղղվածությունը ներկայացվեց Սահմանադրության 7-րդ գլխում, որն սյդպես էլ վերնագրված էր՝ «Տարածքային կառավարումը և տեղական ինքնակառավարումը»:

Սահմանադրության համաձայն ստեղծվելու էին նոր վարչատարածքային միավորներ՝ մարզեր և համայնքներ²: Համայնքներում իրականացվելու էր տեղական ինքնակառավարում: Երեք տարի ժամկետով համայնքի սեփականությունը տնօրինելու, համայնքային նշանակության հարցեր լուծելու համար ընտրվելու

¹ Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի, Երևան, 2006, էջ 285:

² ՀՀ Սահմանադրություն, 1995 թ., հոդված 104:

էին տեղական ինքնակառավարման մարմիններ. համայնքի ավագանի՝ հինգից տասնհինգ անդամով, համայնքի ղեկավար՝ քաղաքապետ, գյուղապետ: Ընտրված համայնքի ղեկավարը պետք է ձևավորեր իր աշխատակազմը: Սահմանդրության 3-րդ հոդվածի համաձայն տեղական ինքնակառավարման մարմիններ ընտրվելու էին ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

Համայնքի ավագանու լիազորություններն էին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ համայնքի բյուջեի հաստատումը, բյուջեի կատարման վերահսկումը, տեղական տուրքերի և վճարների սահմանումը³:

Ուրվագծվեց նաև տարածքային կառավարման համակարգը: Հանրապետությունը բաժանվելու էր մարզերի, որոնք ղեկավարելու համար կառավարությունը նշանակելու էր մարզպետներ: Նրանք պետք է իրագործեին կառավարության տարածքային քաղաքականությունը: Երևանը ստանում էր մարզի կարգավիճակ, իսկ Երևանի քաղաքապետին վարչապետի ներկայացմամբ նշանակում և ազատում էր Հանրապետության Նախագահը: Տեղական ինքնակառավարումը Երևանում պետք է իրականացվեր թաղային համայնքների միջոցով:

Նախանշվեցին նաև տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման փոխհարաբերությունները՝ մարզպետին իրավունք էր վերապահվում օրենքով նախատեսված դեպքերում պաշտոնանկ անել համայնքի ղեկավարին: Համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու դեպքում կառավարության որոշմամբ երեսնօրյա ժամկետում նախատեսվում էր անցկացնել արտահերթ ընտրություն, իսկ մինչև ընտրությունը քաղաքապետի

³ Նույն տեղում, հոդված 106:

պաշտոնակատար էր նշանակելու վարչապետը, իսկ գյուղապետ՝ մարզպետը:

Սահմանադրության անցումային դրույթներով նախատեսվեց, որ մինչև տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների մասին օրենսդրության ընդունումը պատգամավորների գյուղական, ավանային, քաղաքային, շրջանային խորհուրդները և նրանց գործադիր մարմինները պետք է շարունակեին իրականացնել օրենքով սահմանված լիազորությունները: Մինչև տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մասին օրենսդրության ընդունումը պատգամավորների քաղաքային և շրջանային խորհուրդների նախագահներին անվստահություն հայտնելու իրավունքը վերապահվում էր Ազգային ժողովին:

ՀՀ նախագահի 1995 թ. հուլիսի 25-ի հրամանագրով նշանակվեց ՀՀ տարածքային կառավարման գծով առաջին նախարարը՝ Ռուբիկ Բարսեղյանը (26.06.1995 թ. – 8.11.1996 թ.)⁴: Մինչ նախարարության ստեղծումը տարածքային կառավարման հարցերով զբաղվում էր ՀՀ կառավարության գործերի կառավարչության տարածքային կառավարման վարչությունը:

1995 թ. օգոստոսի 4-ին ՀՀ վարչապետը ընդունեց «ՀՀ նախագահի 1995 թվականի հուլիսի 25-ի «ՀՀ կառավարության կառուցվածքը և գործունեության կարգը սահմանելու մասին» հրամանագրի կատարմանն ուղղված միջոցառումների մասին» որոշումը⁵: ՀՀ ֆինանսների նախարարությանը հանձնարարվեց վարչապետին առաջարկություններ ներկայացնել նախարարությունների կազմի վերաբերյալ:

⁴ ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը ստեղծվել է 2005 թվականին՝ ՀՀ նախագահի ապրիլի 27-ի ՆՀ-74Ն հրամանագրով:

⁵ ՀԱՍ, ֆ. 113, ց. 174, գ. 16:

Որոշվեց «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությանը և կառավարության կողմից ԱԺ ներկայացնել 1995 թ. հոկտեմբերին, «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ 1996 թ. 1-ին եռամսյակում, իսկ «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ 1996-ի սեպտեմբերին⁶:

ՀՀ վարչապետի 1995 թ. սեպտեմբերի 8-ի որոշմամբ հաստատվեց ՀՀ կառավարության քարտուղարությունը և տարածքային կառավարման գծով նախարարի աշխատակազմը ընդգրկվեց քարտուղարության կազմում⁷: Սեպտեմբերի 12-ին ՀՀ վարչապետի մեկ այլ որոշմամբ⁸ սահմանվեցին տարածքային կառավարման գծով նախարարի խնդիրները՝ համապատասխան օրենքների նախագծերի նախապատրաստում, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման գործընթացի իրականացման ապահովում և մարմինների աշխատանքի վերահսկողություն, արդյունավետ աշխատանքի համար մարզպետներին ցուցումների ներկայացում և այլն: Քանի որ նախարարության աշխատակազմը դեռևս բացակայում էր, տարածքային կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը վերաբերող ՀՀ օրենքների, ԱԺ որոշումների և այլ օրենսդրական ակտերի նախագծերի պատրաստման համար ստեղծվեցին աշխատանքային խմբեր:

1995 թ. հոկտեմբերի 3-ին «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքի նախագիծը կա-

⁶ «ՀՀ կառավարության կողմից 1995-1999 թվականներին ՀՀ ԱԺ ներկայացվող ՀՀ օրենքների նախագծերի մասին» ՀՀ վարչապետի որոշում, 24 օգոստոսի 1995 թ., N 89, ՀԱԱ, ֆ. 113, ց. 174, գ. 81:

⁷ ՀԱԱ, ֆ. 113, ց. 174, գ. 148:

⁸ ՀՀ վարչապետի 1995 թ. սեպտեմբերի 12-ին N163 որոշում ՀՀ տարածքային կառավարման գծով նախարարի մասին ժամանակավոր կանոնադրությունը հաստատելու մասին, ՀԱԱ, ֆ. 113, ց. 174, գ. 153:

նավարությունից ուղարկվեց ՀՀ Ազգային ժողով: 1995 թ. հոկտեմբերի 23-ին ՀՀ Ազգային ժողովը սկսեց այդ նախագծի քննարկումը⁹: Նախագիծը մշակվել էր Քաղաքաշինության նախարարության տարածքային զարգացման վարչության նախաձեռնող խմբի կողմից, իսկ ՀՀ Ազգային ժողովում վարչապետի որոշմամբ այն պետք է ներկայացնէր ՀՀ տարածքային կառավարման գծով նախարար Ռ. Բարսեղյանը:

Հանրապետության վարչատարածքային կառուցվածքի, տարածքային կառավարման համակարգի ձևավորման ուղղությամբ հայեցակարգային դրույթները շարադրված էին 4 էջանոց հետևյալ փաստաթղթում՝ «Տեղեկանք «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ»: Տեղեկանքում հիմնավորվում էր մարզերի ստեղծման անհրաժեշտությունը: Այդ պահին Հայաստանում գոյություն ունեցող 37 շրջաններն իրենց կառավարման ապարատով պահելը շատ ծախսատար էր պետության համար: Տեղեկանքում նշվում էր, որ շրջանները խիստ անհամաչափ են զարգացած. «...շրջանների միջև բնակչության թվաքանակի վարիացիան կազմում է մինչև 25 անգամ, շրջանի բնակչության մեկ շնչին ընկնող համախառն արտադրանքը՝ մինչև 100 անգամ, իսկ արդյունաբերական ապարանքների արտադրանքի ծավալը՝ մինչև 250 անգամ»¹⁰: Մտավախություն կար, որ այդ տարբերությունները գնալով կխորանար: Հայաստանի վարչատարածքային նոր բաժանմամբ նախատեսվում էր կրճատել տարբերությունները և ապահովել տարածքների ներդաշնակ ու համաչափ զարգացումը: Որոշվեց ստեղծել 10 մարզ: Տեղեկանքում շարադրված էին վարչատարածքային բաժանման սկզբունքները.

⁹ ՀՀ Ազգային ժողովի արխիվ, 1995 թ. հոկտեմբերի 23-25:

¹⁰ ՀԱԱ, ֆ. 113, ց. 180, գ. 759, թ. 134:

1. Տարածքային կառավարման մարմինները պետք է ի վիճակի լինեն լուծել բնակչության կենսապայմաններին վերաբերող հարցերը:

2. Բաժանելիս հաշվի առնել տարածքի ռեսուրսային բազան, որը 20 տարվա ընթացքում թույլ կտար մասնագիտացնել մարզերը «...հանրապետության սոցիալ-տնտեսական կյանքի վերարտադրության ընդհանուր համակարգում, լուծում տալ աշխատանքի հասարակական բաժանման խնդիրներին և այդ բազայի վրա ապահովել մարզի զարգացումը...»

3. Առավելագույնս հաշվի առնել հանրապետության տնտեսական շրջանացման 7 գոտիները և պատմաաշխարհագրական 8 շրջանները:

4. Հաշվի առնել շրջանների առանձնահատկությունները, խուսափել շրջանների տրոհումից:

5. Մարզերին տալ այնպիսի գործառույթներ, որոնք հնարավորություն կտային ղեկավարել մարզի կյանքի բոլոր ոլորտները մեկ կենտրոնից:

6. Քաղաքացու կենսական խնդիրները (աշխատանք, կրթություն, առողջապահություն, բնակարանային ապահովություն և այլն) պետք է լուծվեին մարզի տարածքում:

7. Հանրապետության պաշտպանության խնդիրների արդյունավետ կազմակերպում¹¹:

Մարզերի մեջ մտնող շրջանների տրոհումը ցանկալի չէր, քանի որ մտավախություն կար, որ նախկին կառուցվածքի և վարչատարածքային կապերի փոփոխումը լրացուցիչ անհարմարություններ կստեղծեր բնակչության համար:

Նախատեսվում էր, որ յուրաքանչյուր մարզ պետք է ունենար իր տնտեսական ուղղվածությունը և Հայաստանի Հանրապե-

¹¹ Նույն տեղում, թ. 135:

տության ընդհանուր կառավարման համակարգում որոշակի առաքելություն: Օրինակ՝ Սյունիքն առանձնացվել էր որպես լեռնամետալուրգիական արտադրության ուղղությամբ մարզ, Գեղարքունիքի մարզում, հաշվի առնելով Սևանա լճի անկայությունը, պետք է զարգացվեր տուրիզմը և ստեղծվեր հանգստի գոտի, Երևանի հարևանությամբ ստեղծվող Կոտայքի մարզի առաքելությունն էր իր արդյունաբերական ձեռնարկությունների շնորհիվ բեռնաթափել մայրաքաղաքը:

Այս բոլոր հանգամանքների հաշվառմամբ հեղինակային խումբն առաջարկել էր հանրապետության տարածքը բաժանել 10 մարզերի: Սյունիքի մարզի մեջ մտնելու էին Մեղրիի, Կապանի, Գորիսի, Սիսիանի նախկին շրջանների տարածքները, մարզկենտրոնն էր Կապան քաղաքը: Վայոց ձորի մարզը ընդգրկելու էր Վայքի և Եղեգնաձորի նախկին շրջանների տարածքները, մարզկենտրոնը լինելու էր Եղեգնաձորը: Արարատի մարզի մեջ էին մտնում Արարատի, Արտաշատի, Մասիսի շրջանները, մարզկենտրոնը՝ Արտաշատը: Արմավիրի մարզի մեջ մտնում էին Արմավիրի, Բաղրամյանի և Էջմիածնի տարածքները՝ Արմավիր մարզկենտրոնով: Արագածոտնի մարզը կազմվում էր Թալինի, Աշտարակի, Ապարանի և Արագածի նախկին շրջաններից՝ Աշտարակ մարզկենտրոնով: Կոտայքի մարզն ընդգրկում էր Հրազդանի, Նաիրիի, Կոտայքի շրջանները՝ Հրազդան մարզկենտրոնով: Գեղարքունիքի մարզի մեջ էին միավորվում Կրասնոսելսկի, Վարդենիսի, Մարտունու, Կամոյի, Սևանի նախկին շրջանները՝ Գավառ մարզկենտրոնով: Շիրակի մարզն ընդգրկում էր Անիի, Արթիկի, Ախուրյանի, Ամասիայի և Աշոցքի շրջանները՝ Գյումրի մարզկենտրոնով: Գուգարքի մարզն ընդգրկում էր Սպիտակի, Գուգարքի, Ստեփանավանի, Տաշիրի, Թումանյանի շրջանները՝ Վանաձոր մարզկենտրոնով: Ուտիքի մարզն ընդգրկում էր Իջևա-

նի, Տաուշի, Նոյեմբերյանի շրջանների տարածքները՝ Իջևան մարզկենտրոնով:

Մարզկենտրոնները ընտրելիս հաշվի էին առել քաղաքների արդյունաբերական հզորությունները և ենթակառուցվածքների զարգացման աստիճանը:

Վերանայվեցին նաև բնակավայրերի տեսակները: Խորհրդային տարիներին Կոմունիստական կուսակցության գաղափարախոսության համաձայն նախատեսվում էր գյուղի և քաղաքի միջև տարբերությունների աստիճանական վերացում, դասակարգային տարբերությունների համահարթեցում: Դրան էր միտված գյուղում խորհրդային տնտեսությունների ստեղծումը, որոնց աշխատակիցները համարվում էին ոչ թե գյուղացիներ, այլ գյուղատնտեսության ոլորտում աշխատող բանվորներ: Այդ նույն պատճառով գյուղերում սկսվեց քաղաքային տիպի բնակարանների շինարարությունը, և քաղաքների և գյուղերի կողքին ստեղծվեցին բանավաններ, ավաններ և քաղաքատիպ ավաններ: Բնակչության բաժանումը ըստ վերոնշյալ բնակավայրերի տեղեկանքում ներկայացվում էր որպես բնակավայրերի նկատմամբ հստակ խտրականություն: ՀՀ Սահմանադրության համաձայն նախատեսվում էր ունենալ միայն քաղաքային և գյուղական համայնքներ: Հայաստանում մինչև բարեփոխումը կար 929 գյուղ և 46 քաղաք: Գյուղերի թվում կային այնպիսիք, որոնց բնակչության թվաքանակը շատ փոքր էր առանձին տեղական ինքնակառավարման մարմին ստեղծելու համար: Տեղեկանքում սահմանվեց 911 համայնք, որից 865 գյուղական և 46 քաղաքային համայնք¹²:

Մինչև օրինագծի ներկայացումը մարզերի և համայնքների ձևավորման համար ուսումնասիրվել էին վիճակագրական վարչության տվյալները, տնտեսության զարգացման մակարդակը,

¹² Նույն տեղում, թ. 138:

պատմաագագրական գործոնները: Միավորվող գյուղերի առնչությամբ խորհրդակցություններ էր անցկացվել տեղերում և ստացվել էր տեղական խորհուրդների գործկումների համաձայնությունը: Առանձին դեպքերում օրենքի նախագծում բնակավայրերի անվանափոխումներ կատարվեցին: Անվանումների ճշտման հարցում ներգրավվել էին նաև ՀՀ Գիտությունների ակադեմիան և Լեզվի պետական տեսչությունը: Վարչատարածքային բաժանումը կատարվում էր բնակավայրերի պաշտպանության խնդիրների հաշվառմամբ:

Մինչ այդ ՀՀ կառավարության կառուցվածքի, հանրապետական և տեղական կառավարման մարմինների փոխհարաբերությունների վերաբերյալ խորհրդատվություն էր ստացվել նաև «Եվրոպական փորձագիտական ծառայություն» կազմակերպության փորձագետներից, ուսումնասիրվել էր մի շարք եվրոպական երկրների փորձը:

Չնայած նախապատրաստական մեծ աշխատանքին՝ ՀՀ Ազգային ժողովում օրենքի ընդունումը հարթ չընթացավ: Բանավեճի առարկա դարձան մարզկենտրոնների ընտրության սկզբունքները: Պատգամավորներից շատերին անհամոզիչ էր թվում արդյունաբերական հզորությամբ քաղաքները մարզկենտրոն դարձնելը, քանի որ այդ պահի դրությամբ շատ քաղաքների արդյունաբերական հզորությունն արդեն անկում էր ապրել: Օրինակ՝ Գեղարքունիքի մարզի համար հարց բարձրացվեց Գավառ քաղաքի մասին, որի արդյունաբերության հզորությունը շեշտակի նվազել էր, առաջարկվում էր մարզկենտրոն դարձնել Սևանը: Սյունիքի համար տարակուսանք էր առաջացնում Կապանի ընտրությունը, քանի որ պատմականորեն մարզի կենտրոնը միշտ եղել էր Գորիսը: Առաջարկվում էր Արարատի մարզի կենտրոնը դարձնել Էջմիածինը և այլն:

Քննարկում ծավալվեց նաև մարզերի անվանման շուրջ, հատկապես՝ Գեղարքունիքի և Ուտիքի մարզերի: Ուտիքի փոխարեն առաջարկվեց մարզն անվանել Գարդման կամ Տավուշ: Բացի այդ՝ Նոյեմբերյանի հետ կապված մտավախություն կար, քանի որ Խջևանի հետ կապող միակ ճանապարհը անցնում էր Ադրբեջանի Ղազախի շրջանով (նշվում էր նաև, որ Նոյեմբերյանը պատմականորեն եղել է Գուգարքի կազմում, այլ ոչ թե Ուտիքի):

Մարզերի կենտրոնները որոշելիս հաշվի էր առնվում նաև դրանց միմյանցից համաչափ հեռավորության ապահովումը, այսինքն, որ երկու մարզկենտրոններ իրար մոտ չհայտնվեին: Օրինակ՝ Գեղարքունիքի կենտրոն կարող էր դառնալ նաև Սևանը, որն իր արդյունաբերական հզորությամբ քիչ էր գիջում Գավառին, սակայն այդ դեպքում երկու կենտրոններ՝ Կոտայքի կենտրոն Հրազդանն ու Սևանը միմյանց մոտ էին հայտնվում, իսկ դա խոչընդոտում էր համաչափ զարգացման տեսլականին:

Մարզային կառուցվածքի համատեքստում քննարկվում էր բնակավայրերը միմյանց և մարզկենտրոնի հետ կապող տրանսպորտի և կապի միջոցների առկայության հարցը:

Քննարկվող հարցերը շատ էին և բազմազան, սակայն իշխանությունները շտապողականություն էին դրսևորում կառավարման տեղական համակարգը բարեփոխելու ուղղությամբ: Դրա համար կային լուրջ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ:

Տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման համակարգի կարգավորմանն ուղղված օրենքներն ամբողջացնելու էին պետության կառավարման համակարգը, նպաստելու տեղերում նոր իշխանության կառույցների վերջնական ձևավորմանը: Ձեռնարկվող աշխատանքը, իրոք, չափազանց լայնածավալ էր: Օրենքի ընդունումից հետո կառավարությունը պետք է ձեռնամուխ լիներ համայնքների և մարզերի քարտեզագրմանը:

Մարզի կարգավիճակ ստացող Երևանը պետք է բաժանվեր թաղային համայնքների և դրա համար նույնպես հանձնաժողով էր ստեղծվել: «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքով ընդամենը դրվում էր տարածքային կառավարման համակարգի անկյունաքարը: Համակարգը պետք է ամբողջանար մի շարք այլ օրենքների ընդունմամբ՝ «Տարածքային կառավարման մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» և «Տեղական ինքնակառավարման մարմիններում ընտրության կարգի մասին»: Համակարգի ձևավորման հետ էր կապվում նաև իրավապահ և հարկային մարմինների ձևավորումը: Այդ համակարգի ձևավորմանը պետք է հետևեին նաև այլ օրենքներ՝ բուջեի և հարկային քաղաքականության, ոստիկանության, դատական, դատախազության մարմինների մասին:

Շտապողականության համար կային նաև որոշ սուբյեկտիվ գործոններ: 1995 թ. հուլիսի 5-ի ՀՀ ԱԺ ընտրությունները ցույց տվեցին, որ տեղերում ՀՀԾ-ի և նրան սատարող ուժերի հեղինակությունն անկում է ապրել: Պետության առաջին դեմքերի ելույթներում այդ ընթացքում անընդհատ հնչում էր այն կարծիքը, որ պահպանվել է տեղական խորհուրդների համակարգը՝ իր նախկին ղեկավարներով, կոմունիստական նոմենկլատուրայով և որ իշխանություններին դիմադրությունը գալիս է այդ կառույցներից: Տեղական խորհուրդների ղեկավարներին սաստելու միտում ուներ նաև 1995 թ. սեպտեմբերի 13-ին ԱԺ-ի նիստում կազմակերպված շրջանային խորհուրդների պատգամավորների անձեռնմխելիության մասին քննարկումը: Խոսքը գնում էր այն մասին, թե որպես ժողովրդի ընտրյալներ նրանք պետք է ունենային ԱԺ պատգամավորների նման անձեռնմխելիություն, թե՛ ոչ: Արդեն այդ քննարկման ընթացքում Երևացին այն հակասությունները, որ առաջացել էին կենտրոնի և տեղական խորհուրդների

միջև¹³: Խորհուրդների և կառավարության գրագրությունից երևում է, որ տեղերում ՀՀ կուսակցության անդամները ճնշման տակ էին պահում տեղական խորհուրդների գործկոմներին¹⁴:

Բարձրացված հարցերի մի մասն արդարացի էր, սակայն երբեմն հնչում էին մեղադրանքներ, որոնք չէին համապատասխանում իրականությանը: Ավելի հաճախ կառավարությունն աջակցում էր ՀՀ-ի անդամներին: 1996 թ. կայանալիք նախագահական ընտրությունների ընթացքում իշխող ուժերին հուսալի հենարաններ էին անհրաժեշտ տեղերում: Նշանակովի պաշտոնների դեպքում դա ավելի հեշտ էր ապահովել: Մարգպետներին նշանակելու էր կառավարությունը, Երևանի քաղաքապետին՝ ՀՀ նախագահը: Ուստի իշխանությունները շտապում էին տեղերում ունենալ վստահելի մարդկանց: Չնայած օրենքի նախագիծը մի շարք հարցերին լուծում չէր տալիս՝ սահմանային բնակավայրերի հատուկ կարգավիճակ տալու հարցը, մարզերի ճիշտ սահմանների որոշումը և այլն, սակայն այն, այնուամենայնիվ, քվեարկության դրվեց: Բոլոր չլուծված հարցերին առաջարկվեց լուծում տալ հետագայում՝ նոր համակարգի ներդրման անցումային շրջանում:

1995 թ. հոկտեմբերի 25-ին ՀՀ ԱԺ պետական-իրավական հանձնաժողովի օրենսդրական նախաձեռնությամբ ՀՀ կառավարությունն Եզրակացության համար ուղարկվեց «Տարածքային կառավարման մասին», իսկ դեկտեմբերի 8-ին՝ «Անցումային դրույթներ տեղական ինքնակառավարման և տարածքային կառավար-

¹³ ՀՀ ԱԺ արխիվ, 1995 թ. սեպտեմբերի 13-15 նիստերի արձանագրությունների մատյան, էջ 89:

¹⁴ Տես՝ ՀԱԱ, ֆ.113, ց. 180, գ. 886, թ. 1 (Ժողովրդական պատգամավորների Աշտարակի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի նախագահի նամակը ՀՀ վարչապետին), ֆ. 113, ց. 180, գ. 890, թ. 62 (Ջեկուցագիր ՀՀ Արտաշատի խորհրդի հայտարարության մեջ բերված փաստերի ստուգման վերաբերյալ):

ման մասին և տեղական ինքնակառավարման մարմինների հարաբերությունների մասին» օրենքների նախագծերը:

«Վարչատարածքային բաժանման մասին» օրենքի նախնական տարբերակում, հաշվի առնելով պատգամավորների առաջարկները, փոփոխություններ մտցվեցին: Առաջարկություններ էին եղել մարզերի քանակի վերաբերյալ, մարզերի անվանափոխումների, մարզկենտրոնների ընտրության, մարզերի տարածքների փոփոխության: Կառավարությունը խիստ կարևորում էր տարածքները չկիսելու սկզբունքը և մարզերի տարածքների փոփոխման, շրջանների տրոհման հարցում անդրդվելի մնաց: Շրջանները մտնում էին մարզերի մեջ ամբողջությամբ: Ջիջումներ չեղան նաև մարզերի քանակի փոփոխման հարցում: Սակայն օրենքի նախագծում պատգամավորների առաջարկով փոփոխվեցին որոշ բնակավայրերի անվանումներ: Հաշվի էին առնվել նաև անվանափոխությունների հետ կապված Գերագույն խորհրդի բոլոր որոշումները և բնակավայրերի անվանումները ճշտվել տեղական իշխանությունների հետ: Ի վերջո փոփոխվեցին 3 բնակավայրերի անվանումները՝ Էջմիածինը վերանվանվեց Վաղարշապատ, Հոկտեմբերյանը՝ Արմավիր, Կամոն՝ Գավառ¹⁵:

Սյունիքի և Գեղարքունիքի մարզկենտրոնների հարցը կառավարությունում հատուկ դրվեց քվեարկության և որոշվեց անփոփոխ թողնել: Հաշվի առնելով ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի պատմաբանների կարծիքը՝ Գուգարքի մարզը վերանվանվեց Լուռու մարզ, Ուտիքի մարզը՝ Տավուշի մարզ, Այրա-

¹⁵ Կամո քաղաքի վերանվան մասին հատուկ մեկնաբանություն էր տվել ՀՀ ԳԱԱ փոխնախագահ Գագիկ Սարգսյանը: Նա առաջարկում էր այն վերանվանել Խալդավան (ուրարտական Խալդ աստծո անունով), Նոր Դուրույնք (քանի որ Բայազետը գտնվել է Դուրույնք բերդ – քաղաքի տեղում (Կոզովիտ գավառում), կամ Փառական (Գեղարքունիքի պատմական բնակավայրերի թվում եղած Փառականի անունով) (տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 180, գ. 862՝ ՀՀ կառավարության գրազրույթունը ՀՀ ԳԱԱ հետ՝ կից փաստաթղթերով):

րատի մարզը՝ Արարատի մարզ: Պատմաբանների հիմնական առարկությունը կապված էր նրա հետ, որ նշված մարզերը չէին ընդգրկում պատմական Հայաստանի վերոհիշյալ մարզերի ամբողջ տարածքը և ճիշտ չէր լինի պատմական մարզի անունով կոչել դրա մի մասը:

ՀՀ վարչատարածքային բաժանման մասին օրենքը դրվեց քվեարկության: Օրենքին կողմ քվեարկեց 85 պատգամավոր, դեմ՝ 39-ը, ձեռնպահ՝ 32-ը¹⁶:

ՀՀ ԱԺ-ում հատկապես բուռն քննարկման արժանացավ երկրորդ նախագիծը: Ինչպես վերը նշեցինք, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքը նախատեսված էր ընդունել 1996 թ. առաջին եռամսյակին: Օրենքի նախագիծը արդեն շրջանառության մեջ էր դրված, 1995 թ. դեկտեմբերին դրա վերաբերյալ նախարարություններն արդեն կարծիք էին հայտնում¹⁷: Այդ պայմաններում «Անցումային դրույթների» քննարկումը խիստ բացասաբար ընդունվեց: Այդ օրենքով վերացվում էին շրջանային խորհուրդները: Շրջանային գործկոմները շարունակեցին գործել մինչև մարզպետարանների ձևավորումը: Շրջանային գործկոմները որոշ կրճատումներով պետք է դառնային ենթամարզպետարաններ: Շրջանային գործկոմների տեղակալները դառնում էին մարզպետերի տեղակալներ: Նախագծով գյուղական և քաղաքային խորհուրդները հռչակվում էին ՏԻՄ-եր և գործում էին մինչև «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի ընդունումը: Մինչև օրենքի ընդունումը գործելու էին «Գյուղական, քաղաքային խորհուրդների մասին» օրենքները՝ այնքանով, որքանով չէին հակասում քննարկվող օրենքին: Փաստորեն, խորհուրդները պիտի

¹⁶ ՀՀ ԱԺ արխիվ, 1995 թ. նոյեմբերի 6-8-ի նիստերի արձանագրություններ:

¹⁷ Տես՝ ՀԱԱ, ֆ. 113, ց. 180, գ. 873, թ. 211 (ՀՀ էկոնոմիկայի նախարարության դիտողությունները «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի վերաբերյալ, 7.12.1995), ֆ. 113, ց. 180, գ. 873, թ. 223 (ՀՀ արդարատատության նախարարություն, 8.12.2015):

Ժամանակավորապես կատարեին ավագանու դերը, իսկ գործկոմի նախագահը կդառնար համայնքի ղեկավար: Երևանի խորհուրդները լուծարվելու էին, լուծարման կարգը պիտի որոշեր կառավարությունը: Երևանի շրջգործկոմները պետք է համարվեին Երևանի քաղաքապետարանի ենթաբաժիններ:

Օրենքով նախատեսվում էր ՏԻՄ-երի ինքնուրույնություն: Մարզպետը կարող էր կարգադրություններ անել համայնքի ղեկավարին միայն պետական կարևորության հարցերում (քաղաքաշտպանության, հակահամաճարակային խնդիրներ և այլն): Դրա հետ մեկտեղ մարզպետը կարող էր անվստահություն հայտնել համայնքի ղեկավարին և պաշտոնանկ անել նրան:

«Տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների հարաբերությունների կարգավորման անցումային դրույթներ»-ով նախատեսվում էր, որ համայնքների ղեկավարները կազմում են խորհուրդ (150-200 մարդ), որը պետք է գործեր մարզպետին կից: Դա դիտարկվում էր որպես մի մեխանիզմ, որը պետք է մարզպետին ստիպեր հաշվի նստել ՏԻՄ-երի ղեկավարների հետ:

Ոչ բոլոր խորհրդարանական խմբակցություններն էին համաձայն տարածքային կառավարման ներկայացվող տարբերակին: Օրինակ՝ ԱԻՄ-ն առաջարկում էր ընտրովի մարզպետ և մարզային ավագանի (կազմված 25-40 հոգուց)¹⁸: Առաջարկում էր նաև քննարկումից հանել Ժամանակավոր դրույթները, և մինչև ղեկտեմքերի վերջը ընդունել տեղական ինքնակառավարման մասին օրենքը:

Ըստ էության պայքար էր գնում «եվրոպական մայրցամաքային տեղական կառավարման մոդելի» կողմնակիցների, որը նախատեսում էր ամբողջական տեղական ինքնակառավարման

¹⁸ ՀՀ ԱԺ արխիվ, 1995 թ. ղեկտեմքերի 13-ի նիստի արձանագրություն, էջ 93:

համակարգ և «անգլոսաքսոնական մոդելի» կողմանկիցների միջև, որը բնորոշվում էր տեղերում ինքնակառավարման և պետական կառավարման համակարգերի զուգորդմամբ, պետական նշանակովի մարմինների գերակշռությամբ՝ ընտրված ինքնակառավարման մարմինների նկատմամբ:

Տեղական ինքնակառավարման մոդելի շուրջ բանավեճը վաղուց էր գնում: Այն առավել սրվել էր Սահմանադրության նախագծի քննարկման շրջանում: Դեռևս 1994 թ. Լևոն Տեր-Պետրոսյանն առաջարկվող մոդելը համարում էր «ամենալուրջ նվաճումներից մեկը»: Նա նշում էր, որ «Վարչատարածքային միավորների ձևավորումը, որպես կանոն, արդյունք է ավատական մասնատվածության հետևանքով առաջացած պատմական գործընթացների կամ բազմազգ պետությունների բնակչության տեղաբաշխումից բխող բաժանումների: Չի կարելի բացառել, իհարկե, որ վարչատարածքային միավորների ձևավորման գործում որոշ դեր են խաղացել նաև աշխարհագրական և տնտեսական գործոնները: ... Տարածքային ինքնակառավարումն, այսպիսով, թեկուզ ամենաժողովրդավարական երկրներում, ոչ թե բխում է համապետական շահերից կամ կառավարման նպատակահարմարությունից, այլ պարզապես պահպանվում է որպես պատմական բեռ, որը երբեմն հանգեցնում է պետական և տեղական շահերի լուրջ բախումների: Տարածքային ինքնակառավարումը՝ օժտված յուրահատուկ տեղական շահերով, սեփական բյուջեով և այլ առանձնաշնորհումներով, անխուսափելիորեն իր խորքում պարունակում է ֆեդերացիայի տարր, որն անհարիր է ունիտար պետությունների ձևավորման հարաճուն ձգտումներին»¹⁹:

Այժմ տեղերում կառավարման նոր համակարգի սուեղծման շրջանում այդ բանավեճը վերսկսել էր: Իշխանությունների հաս-

¹⁹ Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի, էջ 426:

ցեին մեղադրանքներ էին հնչում տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորումն ու ներդնումը ձգձգելու հարցում: Ընդդիմությունն այն կարծիքին էր, որ իշխանությունները դա անում են, քանի որ համոզված չեն, որ տեղական ընտրություններում կհաղթեն: ԱԻՄ-ը նույնիսկ առաջարկում էր քննարկումից հանել «Տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների հարաբերությունների կարգավորման անցումային դրույթներ» օրենքի նախագիծը և արագացնել ինքնակառավարման համակարգի ներդրմանն ուղղված օրենքների ընդունումը:

«Բարեփոխումներ» պատգամավորական խումբը կողմ էր օրենքի նախագծին: Սակայն հանդես եկավ որոշ դրույթների դեմ՝ պաշտպանելով «Շամիրամ» խմբակցության առաջարկը: Խոսքը գնում էր մարզպետների լիազորությունների մասին, որը սահմանվում էր օրենքի 7-րդ կետում: Ըստ այդմ՝ մարզպետների լիազորությունները սահմանվում էին այդ օրենքով, նախագահի հրամանագրով, կառավարության որոշումներով, վարչապետի որոշումներով: Պատգամավորները դրանում սուբյեկտիվ մոտեցումների վտանգ էին տեսնում և առաջարկում օրենքով ամրագրել մարզպետի լիազորությունները:

Ի վերջո, թեժ քննարկումներից և որոշ ուղղումներից հետո՝ դեկտեմբերի 14-ին, «Տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների հարաբերությունների կարգավորման անցումային դրույթների մասին» օրենքն ընդունվեց (113 կողմ, 20 դեմ, 8 ձեռնպահ)²⁰:

Տեղական իշխանության խորհրդային մարմինների լուծարման գործընթացը կազմակերպվեց մեծ արագությամբ: 1996 թ. փետրվարի 23-ին ՀՀ կառավարության ընդունած որոշմամբ պատգամավորների շրջանային, Երևանի քաղաքային և Երևան

²⁰ ՀՀ ԱԺ արխիվ, 1995 թ., դեկտեմբերի 14-ի նիստի արձանագրություն, էջ 125:

քաղաքի շրջանային խորհուրդների գործադիր կոմիտեների լուծարման գործընթացի կազմակերպման ու վերահսկողության իրականացման նպատակով ստեղծեց կառավարական լուծարքային հանձնաժողով և հաստատվեց դրա կազմը: Լուծարքային հանձնաժողովներ ստեղծվեցին տեղերում, որոնցում ընդգրկվեցին պատգամավորների համապատասխան խորհուրդների գործադիր կոմիտեների նախագահները, նրանց տեղակալները, քարտուղարներն ու ֆինանսական վարչությունների (բաժինների) պետերը, անցկացվեց գույքագրում: Գույքը հանձնելով մարզպետարաններին, խորհուրդների գործկոմների ենթակայության տակ գտնվող կազմակերպություններն ու ձեռնարկությունները՝ մինչև ՀՀ կառավարության կողմից մարզային ենթակայության կազմակերպությունների ու ձեռնարկությունների ցանկի հաստատումը, անցան համապատասխան մարզպետի ենթակայությանը: Այդ ամբողջ գործընթացի կոորդինացումը դրվեց մարզպետների վրա:

ՀՀ ԱԺ-ում լսվեց նաև «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» օրենքի նախագիծը: Նախագծի շուրջ բուռն քննարկում կազմակերպվեց ընտրական գրավի չափի, դա ետ վերադարձնելու, ընտրական հանձնաժողովների ձևավորման մոդելի, համայնքների բնակիչների թվի և այլ հարցերի շուրջ: Ի վերջո «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց 1996 թ. մայիսի 14-ին:

1996 թ. հուլիսին «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո՝ նույնպես ամսին կայացած ՏԻՄ-երի ընտրությունների արդյունքում, Հայաստանում սկսեց ձևավորվել տեղական ինքնակառավարման համակարգը:

Հետագա տարիներին բարեփոխումները շարունակվեցին: 1997 թ. հուլիսի 21-ին ընդունվեց ստեղական ինքնակառավարման

Ֆինանսական հիմքերի ամրապնդման համար կարևոր «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը: 1998 թ. հունվարի 9-ին ընդունվեց «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքը, որով սահմանելով տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու թույլատրելի չափերը, հիմք ստեղծվեց տեղական նախաձեռնության և տնտեսական ու քաղաքական ինքնուրույնության համար: Պետական բյուջեից համայնքային բյուջեներին կատարվող հատկացումները կարգավորվեցին «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով (1998 թ. դեկտեմբերի 23):

Անցած տարիներին նշված օրենքները մի քանի անգամ լրամշակվել են, քանի որ Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգի երկու տասնամյակի փորձը ցույց է տալիս, որ նրա կայուն և հաստատուն զարգացման համար անհրաժեշտ է մշտապես կատարելագործել տվյալ ոլորտին վերաբերող օրենսդրական դաշտը, այն համապատասխանեցնել առկա իրողություններին՝ կատարելով համապատասխան փոփոխություններ օրենքներում և այլ իրավական ակտերում: Այդ է պատճառը, որ 2002 թ. նույնիսկ ընդունվեց «Տեղական ինքնակառավարման մասին» նոր օրենք, որում համապատասխան յրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ մի քանի տասնյակ իրավական ակտեր են ընդունվել:

2005 թ. ՀՀ Սահմանադրության 7-րդ գլխում կատարված փոփոխություններն ուղղված էին տեղական ինքնակառավարման համակարգի կատարելագործմանը, ժողովրդավարացմանը, օրենսդրությունը Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի սկզբունքներին համապատասխանեցնելուն, ինչպես նաև ՀՀ և ԵՄ համագործակցության շրջանակներում ձևակերպված առաջարկություններով ու հանձնարարականներով առաջնորդվելուն:

Մասնավորապես կատարվեցին հետևյալ հիմնական փոփոխությունները.

- համայնքներին պատվիրակված լիազորությունների պարտադիր ֆինանսավորումը պետական բյուջեից, համայնքների կողմից տեղական հարկերի և տուրքերի, ինչպես նաև մատուցվող ծառայությունների դիմաց վճարների սահմանման իրավունքը (հոդ. 106),

- տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ժամկետ սահմանվեց 4 տարին (հոդ. 107),

- Երևանը ստացավ համայնքի կարգավիճակ (հոդ. 108),

- տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության օրինականությունն ապահովելու նպատակով՝ իրավական հսկողության իրականացումը (հոդ. 108.1),

- կառավարության կողմից համայնքի ղեկավարի պաշտոնանկության դեպքում՝ սահմանադրական դատարանի եզրակացության պարտադիր լինելը (հոդ. 109),

- համայնքները, հանրության շահերից ելնելով, կարող են միացվել միմյանց կամ առանձնացվել, ինչպես նաև կարող են ստեղծվել միջհամայնքային միավորումներ՝ օրենքով սահմանված կարգով (հոդ. 110) և այլն:

Տեղական պետական կառավարման և ինքնակառավարման ամենաթույլ կողմը այսօր մնում է թույլ զարգացած տնտեսությունը, ֆինանսական միջոցների սղությունը, միզրացիայի բարձր մակարդակը: Այն նպատակները, որ տարածքային կառավարման համակարգի հեղինակները դրեցին համակարգի հիմքում, ըստ էության ապահովված չեն: Մարզերի համաչափ, համակողմանի զարգացման ծրագիրը, որի արդյունքում նրանք պետք է հակակշիռ դառնային Երևանին, չիրագործվեց: Ինքնակառավարման համակարգը դեռևս լիարժեք չի գործում միջին դասի փոքրաթիվության, քաղաքացիական ցածր ակտիվության,

ադրատության բարձր մակարդակի պատճառով: Ներկայիս բարեփոխումները կասմետիկ բնույթի են, քանի որ ամենևին չեն լուծում նշված արմատական հիմնախնդիրները:

LILIT ZAKARYAN

FROM THE HISTORY OF FORMATION OF THE
TERRITORIAL ADMINISTRATION AND SELF-
GOVERNANCE SYSTEMS IN THE REPUBLIC OF ARMENIA

SUMMARY

The article presents the history of formation of the territorial administration and self-governance systems in the Republic of Armenia. Debates on the RA Law "On Administrative-Territorial Division of the RA" and raised issues are evidence of the complexity and radical nature of the reform. The system should become complete by adoption of a number of laws – "On Territorial administration", "On Local self-governance" and "On Election Procedure in Self-Governmental Bodies". Adoption of these laws abolished the last remnants of the Soviet power. Instead of 37 regional councils of deputies 10 regions were created, the types of settlements were modified; the whole concept of the territorial division was reviewed. From 1995-1997, the grounds for formation of local self-governance system were laid.

ИЗ ИСТОРИИ ФОРМИРОВАНИЯ СИСТЕМЫ
ТЕРРИТОРИАЛЬНОГО ПРАВЛЕНИЯ И МЕСТНОГО
САМОУПРАВЛЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

РЕЗЮМЕ

В статье представлена история формирования в Республике Армения систем территориального управления и местного самоуправления. Дебаты вокруг закона «Об административно-территориальном делении Республики Армения», поднятые проблемы свидетельствуют о сложности и радикальном характере реформ. Для завершения формирования административно-территориальной системы Республики Армения должны были быть приняты и другие весьма важные законы – «О государственном управлении в Республике Армения», «О местном самоуправлении» и «О выборах в органы местного самоуправления». Принятием этих законов были упразднены последние пережитки советской власти в Армении. Вместо 37-ми районных советов народных депутатов было создано 10 марзов, были внесены изменения в типах поселений, пересмотрена концепция местного управления. В 1995-1997 годах были созданы основы для формирования системы местного самоуправления в Армении.

ՀԱՄՈՍՈՒՔԻԱՍՅԱՆ, ԱՐՄԵՆՈՒՇԻ ՄԱՐԱՆԳՈԶՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 2005-2015 ԹԹ. (ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ)

Հայ նշանավոր հոգևորական, հասարակական գործիչ ու գիտնական Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը (1941-2003) հայաստանյան գործունեության ընթացքում սերտորեն զործակցել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հետ: Նրա օժանդակությամբ ինստիտուտում կազմակերպվել են գիտաժողովներ, հրատարակվել բազմաթիվ աշխատություններ:

Մեսրոպ Սրբազանի մահվանից (2 դեկտեմբերի 2003 թ.) հետո Պատմության ինստիտուտը նրա անունով է կոչել ինստիտուտի առաջին և երկրորդ հարկերում տեղակայված գիտական կենտրոնը, որը ներառում է նիստերի դահլիճը, տպարանը և Սրբազանի՝ ինստիտուտին նվիրած ավելի քան 2000 անձնական գրքերը ներառող գրադարանը:

2004 թ. Նյու Յորքի Հայ կրթական և մշակութային միության և Մեսրոպ Սրբազանի քյոռջ՝ Հոփլսիմե Աշճյան-Սերոբյանի նվիրաբերած գումարներով Պատմության ինստիտուտում 2005 թ. ստեղծվեց տպարան: Նորաստեղծ տպարանը սկզբում ուներ 2 աշխատակից՝ Լևոն Մուրադյանը և Գայանե Բոբոխյանը: 2007 թ. նրանց միացավ Անահիտ Պողոսյանը: 2013 թ. տեխնիկական խմբագրի աշխատանքում Գ. Բոբոխյանին փոխարինեց Նինետա Ադամյանը (2012-2015 թթ.): 2015 թ. հունվարից տպարանի տեխնիկական խմբագրի պարտականությունները կատարում են Նունե Բարթիկյանը և Արմենուհի Մարանգոզյանը:

Լևոն Մուրադյանի գլխավորությամբ 2005 թվականից սկսած ինստիտուտի տպարանը «Մեսրոպ արք. Աշճեան» մատենաշարով հրատարակում է ինչպես ինստիտուտի աշխատակիցների, այնպես էլ հանրապետության այլ պատմաբանների և

հայագետների աշխատությունները: Հրատարակված գրքերը քարեգործական նպատակով քաժանվում են հեղինակներին, գրադարաններին և համապատասխան մասնագետներին:

«Մեսրոպ արք. Աշճեան» մատենաշարի առաջին թվահամարը կրող գիրքը Մեսրոպ Սրբազանի կյանքին ու գործունեությանը նվիրված «Մեր դժուար ժամանակների մեծ հայր. Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյան» ժողովածուն է (Երևան, 2007), ուր տեղ են գտել սրբազանի նամակները, խոհերը, հարցազրույցները, նրա մասին հոգևորականների, գրողների, գիտության ու մշակույթի ճանաչված գործիչների հուշերը: Սակայն փաստացի լույս տեսած առաջին գիրքը ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» տարեգրքի հինգերորդ համարն է (Երևան, 2005): Այստեղ հրատարակվել են ինստիտուտի կողմից 2004 թ. հունիսի 17-19-ին կազմակերպված «Հայաստանի պատմական ժողովրդագրության հիմնահարցեր. Հայկական լեոնաշխարհը հայ էթնոսի բնօրրան» գիտաժողովում ընթերցված զեկուցումները: Այս գիտաժողովի նպատակն էր ի մի բերել պատմական ժողովրդագրության բնագավառում ինստիտուտում կատարված հետազոտությունների արդյունքները:

«Մեսրոպ արք. Աշճեան» մատենաշարով լույս են տեսել ժամանակակից հայ պատմագիտության ձեռքբերումներ հանդիսացող բազմաթիվ աշխատություններ: Դրանց թեմատիկան չափազանց ընդգրկուն է. վերաբերում է Հայաստանի հին, միջնադարյան, նոր և նորագույն ժամանակաշրջանների պատմության զանազան կնճռոտ խնդիրների: Հրատարակված ավելի քան 130 գրքերին ծանոթությունը պատկերացում է տալիս վերջին տասնամյակում Պատմության ինստիտուտի հիմնական գիտահետազոտական ուղղությունների մասին:

Տպարանի գործարկումով ինստիտուտը հնարավորություն ստացավ առանց ընդհատումի տպագրել «Հայոց պատմության

հարցեր» տարեգրքի համարները, կազմակերպած գիտաժողովներում ընթերցված գեկուցումները, ինչպես նաև աշխատակիցների ուսումնասիրությունները: Անդրանիկ համարից (1997 թ.) սկսած տարեգրքում տպագրվում են ինստիտուտի Երիտասարդ գիտաշխատողների խորհրդի ամենամյա գիտական նստաշրջաններում ընթերցված լավագույն գեկուցումները, նաև ավագ սերնդի պատմաբանների հոդվածները: Նրա 16 համարներում տպագրվել է շուրջ 350 հոդված, որոնք վերաբերում են Հայոց պատմության զանազան հիմնախնդիրների: Ուշադրության արժանի են նաև Պատմության ինստիտուտի կազմակերպած գիտաժողովների նյութերի ժողովածուները, ուր ուսումնասիրություններ են հրատարակել ոչ միայն ինստիտուտի ավագ և երիտասարդ աշխատակիցները, ասպիրանտներն ու հայցորդները, այլև հանրապետության այլ գիտական ու գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչները: Լույս են տեսել նաև պարբերականների մատենագիտական ցանկեր, վաստակաշատ պատմաբանների, հայագետների կենսամատենագիտություններ, հոդվածների ժողովածուներ, ուսումնաօժանդակ նյութեր:

Արժեքավոր ուսումնասիրություններ են հրատարակվել Հայաստանի հին, միջնադարյան, նոր և նորագույն ժամանակաշրջանների վարչաքաղաքական, ռազմական, սոցիալ-տնտեսական ու մշակութային պատմության ամենատարբեր հիմնախնդիրների, հայկական պարբերական մամուլի, գաղթավայրերի ու Սփյուռքի պատմության, Հայ առաքելական Եկեղեցու, նրա նշանավոր ներկայացուցիչների, պատմական տարբեր ժամանակափուլերում հարևան ու հեռավոր պետությունների հետ Հայաստանի հարաբերությունների վերաբերյալ:

Հրատարակությունների շարքում օրինաչափորեն մեծ թիվ են կազմում Հայկական հարցի զարգացումներին և Հայոց ցեղասպանությանն ու նրա հետևանքների վերացման հիմնահար-

ցերին, XIX դարի վերջին և XX դարի սկզբին ծավալված հայ ազգային-ազատագրական պայքարին ու ավանդական կուսակցությունների գործունեությանը վերաբերող գրքերը: Շուրջ մեկ տասնյակ գրքեր են հրատարակվել Հայաստանի պատմական ժողովրդագրության վերաբերյալ, ուր ներկայացված է XVI-XIX դարերում և XX դարասկզբին Հայաստանի սրևմտյան և արևելյան մասերի հայ բնակչության շարժընթացը: Այս գիտաճյուղը ինստիտուտի համեմատաբար նոր, սակայն արդեն ավանդույթներ ունեցող գիտահետազոտական հեռանկարային ուղղություններից է:

Առանձին ուսումնասիրություններ են հրատարակվել Հայոց պատմության աղբյուրագիտության և պատմագրության թեմաներով: Հատուկ հիշատակության արժանի են ավելի քան մեկ տասնյակ աղբյուրագիտական բնույթի գործերը (անտիպ սկզբնաղբյուրների հրատարակություններ, խորհրդային տարիներին չհրատարակված հուշագրություններ, փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ):

Շեշտենք, որ տպագրված աշխատություններում ոչ միայն ճշմարտացի, գիտության արդի պահանջներին համապատասխան հետազոտված են Հայաստանի պատմության հիմնահարցերը, այլև դրանց որոշ մասը միտված է բացահայտելու և արժանի հակահարված տալու հայրենի պատմության կեղծարարներին: Այս տեսակետից կարևոր են Արցախի պատմության վերաբերյալ հրատարակված գրքերը:

Ամփոփելով՝ նշենք, որ, բազմաթիվ դժվարություններ հաղթահարելով, անցնող 10 տարիների ընթացքում ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը ծավալել է բեղուն հրատարակչական գործունեություն՝ տպագրելով ավելի քան 130 գիրք ու գրքույկ: Դրանց շարքում նկատելի թիվ են կազմում երիտասարդ պատմաբանների ուսումնասիրությունները: Կյանքում կենսագործվում է 2002 թ. պաշտոնը

ստանձնելու ժամանակ ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանի տված խոստումը. «Ինստիտուտի աշխատակցի ոչ մի պատրաստի աշխատանք գրադարակում չի մնա»: Իսկ այդ ամենն իրականություն է դառնում տպարանի փոքրաթիվ անձնակազմի քրտնաջան աշխատանքի շնորհիվ: Տպարանի հիմնադրման տասնամյակը լավ առիթ է ինստիտուտի ողջ անձնակազմի անունից շնորհակալություն հայտնելու տպարանի նախկին և ներկա աշխատակիցներին:

HAMO SUKIASYAN, ARMENUHI MARANGOZYAN

THE PUBLISHING ACTIVITY OF THE INSTITUTE OF
HISTORY OF NAS RA IN 2005-2015 (A BRIEF REVIEW)

SUMMARY

Since 2005 one of the key directions of activity of NAS RA is the publishing work . In the past 10 years the printing house of the institute has published more than 130 books and booklets in the "Arch. Mesrob Ashjian" book series. They concern the divers issues of the ancient, medieval, new and modern periods of the History of Armenia, as well as the relations of Armenia with neighboring and distant countries. Published books give an idea about the main research directions of the institute in the last decade.

ИЗДАТЕЛЬСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ИНСТИТУТА
ИСТОРИИ НАН РА В 2005-2015 ГГ. (КРАТКИЙ ОЧЕРК)

РЕЗЮМЕ

С 2005 года одной из основных направлений работ Института истории НАН РА является типографная деятельность. На протяжении 10-ти лет основанная в институте типография “Месроп арх. Ашчян” издала более 130-ти книг и брошюр.

Опубликованные работы дают представление об основных направлениях научно-исследовательских работ института в последнее десятилетие.

ՀԱՎԵԼՎԱԾ

«ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ» ՄԱՏԵՆԱՇԱՐՈՎ
ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԳՐՔԵՐԻ ՑԱՆԿ (2005-2015 թթ.)

1. Մեր դժուար ժամանակների Մեծ հայր. Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճեան, Երևան, 2007, 344 էջ:
2. Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), № 5, Երևան, 2005, 181 էջ:
3. Կուստանդյան Էմմա, Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թվականներ), Երևան, 2005, 176 էջ:
4. Սահակյան Արման, Սեբաստիայի նահանգի վարչաժողովրդագրական պատկերը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, Երևան, 2005, 114 էջ:

5. Խսանլարի Կարեն, Հայ բնակչության էթնոկրոնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետությունում, Երևան, 2005, 118 էջ:
6. Ղուսաբյան Ջոիրապ, Կրակոտ և անտեսանելի ճակատում (հուշեր սնցյալից), Երևան, 2005, 108 էջ:
7. Մանուկյան Եվգենյա, Հայ ժողովրդի ազգահավաքման գործընթացը Արևելյան Հայաստանում 19-րդ դարի 20-ական թթ. վերջերին – 30-ական թթ. սկզբներին, Երևան, 2005, 216 էջ:
8. Մելքոնյան Աշոտ, Նյութեր Ախալցխայի և Ախալքալաքի դպրոցների պատմությունից (19-րդ դար – 20-րդ դարի սկիզբ), Երևան, 2005, 178 էջ:
9. Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), № 6, Երևան, 2005, 339 էջ:
10. Ղամբարյան Արմենուհի, Հայկական հարցը 1912–1914 թթ. և Մեծ Բրիտանիան, Երևան, 2006, 232 էջ:
11. Մելքոնյան Աղասի, Հայաշխարհի գողտրիկ. Ջավախք, Երևան, 2006, 332 էջ:
12. Մուրադյան Հակոբ, Կարսի նահանգի վարչաժողովրդագրական նկարագիրը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Երևան, 2006, 236 էջ:
13. Բարխուդարյան Վլադիմիր, Համառոտ ուրվագիծ Ռուսական կայսրության հայկական դպրոցների պատմության (18-րդ դ. վերջ – 20-յդ դ. սկիզբ), Երևան, 2006, 72 էջ:
14. Ղազախեցյան Վլադիմիր, Հայաստանը 1920–1940 թթ., Երևան, 2006, 564 էջ:
15. Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), № 7, Երևան, 2006, 278 էջ:
16. Անանյան Արամ, Հայոց ցեղասպանության հիմնախնդիրները հայ-թուրքական հարաբերություններում (1991–2004 թթ.), Երևան, 2006, 122 էջ:

17. Տերոյան Վարազդատ, Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, Երևան, 2006, 436 էջ:
18. Սուն-Ցրգի, Երկ ուղմական արվեստի մասին, Երևան, 2006, 68 էջ:
19. Բարթիկյան Հրաչ, Հայ-բյուզանդական հետազոտություններ» հ. III, Երևան, 2006, 316 էջ:
20. Սարգսյան Վահե, Սամցխե-Ջավախք-Թուրքը հայ-վրացական հարաբերությունների հոլովույթում (1980-ական թթ. վերջ – 1990-ական թթ.), Երևան, 2006, 376 էջ:
21. Պետրոսյան Սարգիս, Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, Երևան, 2006, 473 էջ:
22. Գեղամյան Գուրգեն, Սահակյան Ռուբեն, Դրվագներ հայ օղաչունների Արցախում մղած հերոսական պայքարից, Երևան, 2006, 77 էջ:
23. «Արծուի Վասպուրական» ամսագրի մատենագիտություն (1855-1856, 1858-1864 թթ.), կազմող՝ Էմմա Կոստանդյան, Երևան, 2006, 46 էջ:
24. Чальян Марина, Освещение арцахского движения в армянской англоязычной прессе США (февраль 1988 – август 1990 гг.), Ереван, 2006, 252 с.
25. Թորոսյան Համլետ, Էջմիածնի վանական տնտեսությունը XV–XVIII դարերում, Երևան, 2007, 266 էջ:
26. Аветисян Грант, Генералы армяне в Российской империи, Ереван, 2007, 240 с.
27. Խաչատրյան Կարեն, Հայ-ոուսական հարաբերությունները 1920–1922 թվականներին, Երևան, 2007, 260 էջ:
28. Ջաքարյան Լիլիթ, Խորհրդահայ գյուղի մայրամուտը (սոցիալ-տնտեսական փոփոխությունները խորհրդահայ գյուղում 1980-ական թթ.), Երևան, 2007, 124 էջ:

29. **Киракосян Джон, Алексей Дживелегов и его историко-публицистическое наследие**, Ереван, 2007, 264 с.
30. **Melkonyan Ashot, Javakhk in the 19th century and the 1st quarter of the 20th century**, Yerevan, 2007, 356 p.
31. Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), № 8, Երևան, 2007, 377 էջ:
32. Բայբուրդյան Վահան, Նոր Ջուղա, Երևան, 2007, 154 էջ:
33. Հունանյան Արծվի, Պատմական արդարությունն ընդդեմ ուրացության, Երևան, 2007, 108 էջ:
34. Մելիքյան Կարինե, «Narratio de rebus Armeniane» հայ-քաղկեդոնական երկը վաղ-միջնադարյան հայոց էկեղեցու պատմության կարևոր սկզբնաղբյուր, Երևան, 2007, 165 էջ:
35. Վարդանյան Վրեժ, Պահլավունիները հայոց պետականության և հոգևոր անաղարտության պահապաններ, Երևան, 2008, 234 էջ:
36. Կոստանդյան Էմմա, Գարեգին Սրվանձտյանց (կյանքը և գործունեությունը), Երևան 2008, 200 էջ:
37. Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), № 9, Երևան, 2008, 303 էջ:
38. Մելիք-Թանգյան Ներսես, Շուշուց դեպի հին Նախիջևան, Երևան, 2008, 115 էջ:
39. Պարթենիոս Աթենացի. Պատմություն հունաց և հայոց տարածայնության, առաջաբանը, թարգմ. և ծանոթ. Հրաչ Բարթիկյանի, Երևան, 2008, 188 էջ:
40. Կոստանդյան Էմմա, Մկրտիչ Խրիմյան. հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, 2008, 459 էջ:
41. Հայկական ոստիկանության կազմակերպումը և գործունեությունը Վանի նահանգապետության շրջանում (1915 թ. մայիսի 8 – հուլիսի 17): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմող՝ Ռուբեն Սահակյան, Երևան, 2008, 130 էջ:

42. Սարուխանյան Նորայր, Ալեքսեյ Ջիվելեզովը որպես պատմաբան և Հայկական հարցը, Երևան, 2008, 95 էջ:
43. Մուրադյան Հակոբ, Կուրսային և ավարտական աշխատանքների մեթոդական ցուցումների ու Հայոց նոր պատմության (XVII դ. II կես – 1918 թ.) թեմաների ձեռնարկ, Երևան, 2008, 102 էջ:
44. Ակադեմիկոս Աբգար Ռուբենի Հովհաննիսյանի տպագիր աշխատությունների մատենագիտություն, Երևան, 2009, 35 էջ:
45. Հայկական հարցի միջազգայնացման 130-ամյակը և պատմության դասերը: (գիտաժողովի նյութեր), Երևան, 2009, 132 էջ:
46. Ավետիսյան Սուրեն, Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի (Ամերկոմ) գործունեությունը Հայաստանում 1918–1930 թթ., Երևան, 2009, 227 էջ:
47. Հայոց պատմության հարցեր (գիտական հողվածների ժողովածու), № 10, Երևան, 2009, 310 էջ:
48. Հովսեփյան Մարիամ, ՀՅԴ Կ.Պոլսի պարբերական մամուլը (1909–1924 թթ.), Երևան, 2009, 194 էջ:
49. Դեպի խորքը լեռան (ժողովածու՝ նվիրված Սիլվա Կապուտիկյանին), Երևան, 2009, 312 էջ:
50. Ասրյան Արմեն, Արամ Մանուկյան. կյանքը և գործունեությունը, Երևան, 2009, 114 էջ:
51. Связан Генрик, История страны Алуанк, Ереван, 2009, 222 с.
52. Ղարիբջանյան Ստեփան, Էջեր Երևանի պետական համալսարանի գիտական կյանքի տարեգրությունից (1920–1930-ական թթ.), Երևան, 2010, 64 էջ:
53. Բոյաջյան Հովակիմ, Պողոս Նուբար փաշան և բարենորոգումների խնդիրը Արևմտյան Հայաստանում (1912–1914 թթ.), Երևան, 2010, 208 էջ:
54. Բախչինյան Արծվի, Հայությունը Սկանդինավյան երկրներում, Երևան, 2010, 280 էջ:

55. Արամ Մանուկյան, ազգային և պետական գործիչը (հողվածների ժողովածու), Երևան, 2010, 119 էջ:
56. Սարգսյան Սուրեն, 1885–1908 թթ. հայ ժողովրդի ազգային–ազատագրական պայքարը արմենական գործիչների գնահատմամբ, Երևան, 2010, 120 էջ:
57. Ստեփանյան Գևորգ, Բաքվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 2010, 246 էջ:
58. Ջավախքը Հովհաննես Մկրտչյանի հուշերում, առաջաբանը և ծանոթ. Աշոտ Մելքոնյանի, Երևան, 2010, 157 էջ:
59. Ամիրջանյան Հասմիկ, Լոռին XVIII դարի վերջին և XIX դարի առաջին երեսնամյակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 2010, 164 էջ:
60. Վարդանյան Վրեժ, Գրիգոր Նարեկացին և հայրենի Վասպուրական աշխարհը, Երևան, 2010, 148 էջ:
61. Կարապետյան Մուրադ, Ռուսական կայսրության բանակի հայ զորապետերի, հայկական կազմավորումների և Հայաստանի Հանրապետության ռազմական պատմության աղբյուրագիտական ուրվագծեր (19-րդ դարի վերջ – 20-րդ դարի սկիզբ), Երևան, 2010, 139 էջ:
62. Poghosyan Varoujean, Les massacres des Arméniens de Marache en 1920, Yerevan, 2010, 163 p.
63. Հայոց պատմության հարցեր (գիտական հողվածների ժողովածու), № 11, Երևան, 2010, 358 էջ:
64. Մեղիքյան Վահան, Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում: Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը (1917 թ. նոյեմբեր – 1918 թ. փետրվար), Երևան, 2010, 263 էջ:
65. Արծրունի Գրիգոր, Հրապարակախոսական հատընտիր, Երևան, 2010, 336 էջ:

66. Պողոսյան Բենիամին, Թուրք-ամերիկյան հարաբերությունները և ԱՄՆ կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը 1991–2007 թթ., Երևան, 2011, 78 էջ:
67. Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյան, Կենսամատենագիտություն, Երևան, 2011, 216 էջ:
68. Մելքոնյան Աշոտ, Կենսամատենագիտություն, Երևան, 2011, 80 էջ:
69. Ալեքսանյան Հովհաննես, Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917–1941 թթ., Երևան, 2011, 221 էջ:
70. Մեծ եղեռն: Դատապարտումից հատուցում (հողվածների ժողովածու), Երևան, 2011, 106 էջ:
71. Ստեփանյան Գևորգ, Բաքու քաղաքի հայության պատմությունը (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 2011, 651 էջ:
72. Դանիելյան Նորայր, Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի պատմահոգևոր համակարգը և Աստվածաշունչը, Երևան, 2011, 224 էջ:
73. Ղազախեցյան Վլադիմիր, Կենսամատենագիտություն, Երևան, 2011, 38 էջ:
74. Աբրահամյան Հրանտ, Կենսամատենագիտություն, Երևան, 2011, 29 էջ:
75. Թինոյան Դավիթ, Կիլիկիո հայոց թագավորությունը և ինքնիշխան կազմավորումները 1320–1424 թթ., Երևան, 2011, 193 էջ:
76. Հայության պայքարը ԼՂԻՄ-ը խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմողներ՝ Կարեն Խաչատրյան, Հրանտ Աբրահամյան, Երևան, 2011, 174 էջ:
77. Армения в документах Государственного департамента США 1917-1920 гг., сост.: Гаянэ Махмурян, Ереван, 2011, 560 с.

78. Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), № 12, Երևան, 2011, 273 էջ:
79. Из истории армяно-украинских, венгерских и молдавских отношений (сборник статей и материалов), сост.: Карен Хачатрян, Ованес Алексанян, Ереван, 2012, 223 с.
80. Հարությունյան Կարինե, Լեոնային Ղարաբաղի ինքնավար մարզը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին 1939–1945 թթ., Երևան, 2012, 139 էջ:
81. Խասիոտիս Իոաննիս, Պատմական ավանդույթ և քաղաքական իրապաշտություն: Հունական քաղաքականությունը Հայկական հարցի վերաբերյալ (1876–1996), թարգ. Հրաչ Բարթիկյանի, Երևան, 2012, 65 էջ:
82. Բարթիկյան Հրաչ, Կենսամատենագիտություն, Երևան, 2012, 38 էջ:
83. Հովհաննիսյան Գեղամ, Հնչակյան կուսակցության պատմություն (1887–1915 թթ.), Երևան, 2012, 352 էջ:
84. Арутюнян Климент, Маршал инженерных войск Сергей Христофорович Аганов, Ереван, 2012, 141 է.
85. Սուրիաայան Համո, Երրորդ գյուղից մինչև Երևանի Սիլիկյան թաղամաս (պատմության, տնտեսության, մշակույթի էջեր), Երևան, 2012, 208 էջ:
86. Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), № 13, Երևան, 2012, 338 էջ (200 օրինակ):
87. Թաջիրյան Էլիզաբեթ, Նոր Ջուղայի հայ գաղթօջախը 17–18-րդ դդ. եվրոպական աղբյուրներում, մաս I, Երևան, 2012, 129 էջ:
88. Հայաստանի քաղաքակրթական ավանդը Մետաքսի ճանապարհի պատմության մեջ: Միջազգային գիտաժողովի նյութեր (2011 թ. նոյեմբերի 21-23), Երևան, 2012, 423 էջ:

89. Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920-ական թթ.), հ. 3, Եվրոպայի և Ամերիկայի հայկական գաղութները, Երևան, 2013, 372 էջ:
90. Ա-Դո (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան), Ռուսական ցարերը և Հայկական հարցը, առաջաբանը և ծանոթ. Ռուբեն Սահակյանի և Ռուբեն Գասպարյանի, Երևան, 2013, 162 էջ:
91. Բուքանյան Եղիշե, Իմ անցյալի հուշերից. Վասպուրականի ողբերգությունը, ներած. և ծանոթ. Ռուբեն Սահակյանի և Ռուբեն Գասպարյանի, Երևան, 2013, 121 էջ:
92. Աբրահամյան Հրանտ, Լեոնայի Ղարաբաղի Հանրապետություն. սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքը 2000-2008 թթ., Երևան, 2013, 288 էջ:
93. Կոստանդյան Էմմա, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2013, 538 էջ:
94. Ակոպով Արկադի, Տայք. վարչաժողովրդագրական պատկերը XVI դարից XIX դարի I երեսնամյակը, Երևան, 2013, 212 էջ:
95. Գասպարյան Ռուբեն, Հողվածների և հրապարակումների ժողովածու, Երևան, 2013, 344 էջ:
96. Վարդանյան Արգիշտի, Աղվանքի պատմաաշխարհագրական քննություն, Երևան, 2013, 207 էջ:
97. Тунян Валерий, Пристрастие Азербайджана к истории Армении: Мифы и реалии, Ереван, 2013, 265 с.
98. Հայոց պատմության հարցեր (գիտական հողվածների ժողովածու), № 14, Երևան, 2013, 286 էջ:
99. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը 70 տարում (հրատարակության ընթացքում է):
100. Հայ պարբերական մամուլի պատմություն, հ. 2 (1900-1922 թթ.), Երևան, 787 էջ:
101. Ղազարեան Հայկ, Կեսարիոյ նախճիրները (էջեր օրագրես), Երևան, 2014, 168 էջ:

102. Մարության Արմեն, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Երևան, 2014, 332 էջ:

103. Անգլիական օգնության կոմիտեի (Անգլկոմ) գործունեությունը Հայաստանում 1920-ական թվականներին (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմող՝ Սուրեն Ավետիսյան, Երևան, 2014, 137 էջ:

104. Հայաստանը և արաբական աշխարհը. պատմություն և արդի խնդիրներ (երիտասարդական միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու), Երևան, 2014, 216 էջ:

105. Դումիկյան Ալիսա, Հայոց հին և վաղմիջնադարյան պատմության հիմնահարցերը XIX դարի ֆրանսիական հայագիտության մեջ, Երևան, 2014, 236 էջ:

106. Հայկական տպագրությունը դարերի միջով (հոդվածների ժողովածու), Երևան, 2014, 154 էջ:

107. Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), N 1-14 (1997 – 2013 թթ.): Մատենագիտություն, կազմող՝ Համո Սուքիասյան, Երևան, 2014, 44 էջ:

108. Հարությունյան Կլիմենտ, Ջավախքահայերի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941–1945 թթ.), Երևան, 2014, 284 էջ:

109. Մարգարյան Երվանդ, Միհրականությունը հին աշխարհի քաղաքական և կրոնահոգևոր համակարգում. Կոմմազենե, Հայաստան, Հոռմ, Երևան, 2014, 276 էջ:

110. Ղազարեան Հայկ, Կեսարիոյ նախճիրները (էջեր օրագրես), Երևան, 2014, 174 էջ:

111. Ղազարեան Հայկ, Կեսարիոյ նախճիրները (էջեր օրագրես), Երևան, 2014, 178 էջ:

112. История Армении: Краткий курс. сост.: Арменуи Гамбарян, Ереван, 2014, 287 с.

113. Խաչատրյան Ժենյա, Կարնոհայերի պարային մշակույթը Ջավախքում (XX-XXI դարեր), Երևան, 2014, 250 էջ:
114. Ավետիսյան Գուրի-Եթեր, Իմ Շիրազը (չարխափան հուշամատյան), Երևան, 2014, 158 էջ:
115. Օճաք աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 17, Բյուզանդական աղբյուրներ, Ջ. Միքայել Աստալիատես, Պատմություն, թարգմ. և առաջաբանը՝ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 2014, 314 էջ:
116. Ghazaryan Hayg, Kayseri katliamlari (Günlüğümnden sayfalar), Yerevan, 2014, 92 p.
117. Հայության կոչերն ու դիմումները ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար (1988–1989 թթ.): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմողներ՝ Հրանտ Աբրահամյան, Կարեն Խաչատրյան, Երևան, 2014, 295 էջ:
118. Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), № 15, Երևան, 2014, 298 էջ:
119. Գևորգյան Ջոհրաբ, Կիլիկիայի հայկական պետությունը միջերկրածովյան առևտրի համակարգում (XIII-XIV դդ.), Երևան, 2015, 272 էջ:
120. Եսոյան Մյասնիկ, Հայկական հարցը Սիրիայի արաբալեզու մամուլում 1908-1914 թվականներին, Երևան, 2015, 162 էջ:
121. Բարխուդարյան Վլադիմիր, Ալեքսանյան Հովհաննես, Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմություն, Երևան, 2015, 441 էջ:
122. Նելսոն Ստեփանյան (Նելսոն Ստեփանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2015, 164 էջ:
123. Վասիլյան Ջարմինե, Կյանքը անհայտի քառուղիներում, Երևան, 2015, 112 էջ:
124. Հովհաննիսյան Արծրուն, Բանակաշինությունը Հայաստանի Երրորդ Հանրապետությունում, Երևան, 2015, 355 էջ:

125. History of Armenia: A Brief Course, compiled by Armenuhi Ghambaryan, Yerevan, 2015, 272 p.

126. Խառատյան Ալբերտ, Արևմտահայ մամուլն իր պատմության ավարտին (1900-1922), Երևան, 2015, 354 էջ:

127. Սարուխանյան Նորայր, Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի պատմագիտական ժառանգությունը, Երևան, 2015, 285 էջ:

128. Սահակյան Ռուբեն, Արևմտյան Հայաստանի ռազմաքաղաքական և վարչատնտեսական իրավիճակը (1914 թ. հուլիս – 1917 թ. փետրվար), Երևան, 2015, 428 էջ:

129. Խոյեցյան Սեդա, Լեհական օրագիր, Երևան, 2015, 176 էջ:

130. Անդրանիկ Օզանյան – 150 (հողվածների ժողովածու), Երևան, 2015, 210 էջ:

131. Կոստանդյան Էմմա, Դրվագներ Մադաքիա արք. Օրմանյանի կյանքից ու գործունեությունից, Երևան, 2015, 341 էջ:

132. Խաչատրյան Կարեն, Հայաստանը ԽՍՀՄ ռազմաարդյունաբերական համալիրի համակարգում (1922-1991 թթ.), Երևան, 2015, 345 էջ:

133. Հայոց պատմության հարցեր (գիտական հողվածների ժողովածու), № 16, Երևան, 2015, 357 էջ:

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վահե Սարգսյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ

Էդուարդ Դանիելյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի Հին դարերի պատմության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր

Ալիսա Դումիկյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի Հին դարերի պատմության բաժնի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու

Տաթև Մկրտչյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ

Արգիշտի Վարդանյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու

Աստղիկ Ղազարյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի Հին դարերի պատմության բաժնի աշխատակից

Հենրիկ Խաչատրյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ

Վարդան Ալեքսանյան

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Պատմության և քաղաքագիտության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու

Արտաշես Շահնազարյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Արամազդ Մկրտչյան

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քաղաքագիտության ամբիոնի հայցորդ

Նարեկ Հակոբյան

Մաշտոցի անվան անվան հին ձեռագրերի ինստիտուտ-Մատենադարանի ասպիրանտ

Մյասնիկ Եսոյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայ պարբերական մամուլի և հասարակական-քաղաքական մտքի պատմության բաժնի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու

Վլադիմիր Ղազախեցյան

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Քանաքարա Հայրապետյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ

Կարեն Խաչատրյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի փոխտնօրեն,
Նորագույն պատմության բաժնի ստաջատար
գիտաշխատող, ԳԱԱ ԳԿՄԿ Պատմության և
միջազգային հարաբերությունների ամբիոնի
վարիչ, պատմական գիտությունների թեկնա-
ծու, դոցենտ

Համո Սուքիասյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի Նորագույն
պատմության բաժնի գիտաշխատող, պատմա-
կան գիտությունների թեկնածու, դոցենտ

Արմենուհի Մարանգոզյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայ պարբե-
րական մամուլի և հասարակական-քաղաքա-
կան մտքի պատմության բաժնի աշխատակից

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՎԱՀԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Մ.թ.ա. VIII Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ – VII Դ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ
ԳԱՀԱԿԱԼԱԾ ՎԱՆԻ ԱՐՔԱՆԵՐԻ ՀԱԶՈՐԴԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ 3

ԷՂՈՒԱՐԴ ԴԱՆԻԵԼՅԱՆ, ԱԼԻՍԱ ԴՈՒՄԻԿՅԱՆ

ԱՆԳԼԱԼԵԶՈՒ ՈՐՈՇ ԱՐԵՎԵԼԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ,
«ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ի ՖՐԱՆՍԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ,
ՉՉՐԱՏԱՐԱԿՎԱԾ «ԳԱՆՁԱՍԱՐԻ ԵՎ ՀԱՎԱՊՏՈՒԿԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ԸՆԴԴԵՄ
ԱԴՐԲԵԶԱՆԱԿԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 14

ՏԱԹԵՎ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՄԱՅԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ
ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 46

ԱՐԳԻՇՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԲՈՒՆ ԱՂՎԱՆՔԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՇՈՒՐՋ 63

ԱՍՏՂԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԾՆՆԴՅԱՆ
ՎԱՅՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ 71

ՀԵՆՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՍԱՍԱՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ
ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ, ՎԻՐՔՈՒՄ ԵՎ ԲՈՒՆ
ԱՂՎԱՆՔՈՒՄ (V Դ.) 81

ՎԱՐԴԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍՈՂՈՄՈՆ ՄԱՔԵՆԱՅՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՇՈՒՐՋ (VIII ԴԱՐ) 98

ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼԻՑ ԿՈՂՄԵՐԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ
ԱԴՐԲԵԶԱՆԱԿԱՆ ՆԵՆԳԱՓՈԽՄԱՆ ՇՈՒՐՋ 118

ԱՐԱՄԱԶԴ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ՀՆՉԱԿՅԱՆՆԵՐԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄ (XIX Դ. ՎԵՐՋ – XX Դ.
ՍԿԻԶԲ) 141

ՆԱՐԵԿ ՀԱԿՈՒԲՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՇԱՐՈՒՆՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԻ
ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 1912 Թ.
ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ
ՀԱՄԱՐ 155

ՄՅԱՄՆԻԿ ԵՍՈՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ԱՐԾԱՐԾՈՒՄԸ
ԿԱՀԻՐԵԻ «ԱՐԵՎ» ԹԵՐԹԻ ԱՐԱԲԵՐԵՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ
ԷԶԵՐՈՒՄ 168

ՎԼԱԴԻՄԻՐ ՂԱԶԱԽԵՅՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹՈՒՐԲ–ԱԴՐԲԵԶԱՆԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ (1918-1920 ԹԹ.) 182

ՔԱՆԱՔԱՐԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

1920 թ. ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆ ԱՇՈՏ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ 211

ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏԵՐՅԱՆ, ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ-ՍԱՀՄԱՆԱՅԻՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ
ՕՐՈՔ (1922-1936 թթ.) 222

ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏԵՐՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ 1970-1991 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ... 267

ԼԻԼԻԹ ԶԱՔԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ 304

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ, ԱՐՄԵՆՈՒԶԻ ՄԱՐԱՆԳՈԶՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
2005-2015 թթ. (ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ) 327

CONTENTS

VAHE SARGSYAN

TO THE PROBLEM OF THE SUCCESSION OF THE BIAINIAN
KINGS IN THE SECOND HALF OF THE 8th – THE FIRST HALF
OF THE 7th CENTURY B.C. 3

EDUARD DANIELYAN, ALISA DUMIKYAN

SOME ENGLISH-LANGUAGE ORIENTOLOGICAL WORKS,
FRENCH TRANSLATION OF «ASHKHARHATSOYTS»,
UNPUBLISHED COLLECTION «GANDZASAR AND
HAVOTSPTUK» VERSUS AZERBAIJANI FALSIFICATIONS 14

TATEV MKRTCHYAN

THE CULTURE OF INCANTATION
IN ANCIENT AND MEDIEVAL ARMENIA 46

ARGISHTI VARDANYAN

ON THE EASTERN BORDER OF PROPER AGHVANK 63

ASTGHIK GHAZARYAN

ON THE ISSUE OF MOVSES KHORENATSI'S
OF BIRTH PLACE 71

HENRIK KHACHATRYAN

ESTABLISHMENT OF THE REGIME OF SASSANID PERSIA IN
THE EASTERN PART OF GREAT ARMENIA, KARTLI AND
PROPER ALBANIA (V C.) 81

VARDAN ALEKSANYAN

ON SOLOMON MAKENATSY'S ACTIVITIES (8th CENTURY) 98

ARTASHES SHAHNAZARYAN

ABOUT PERVERSIONS OF NATIONAL BELONGING OF
SCIENTIFIC-CULTURAL FIGURES OF EASTERN REGIONS
OF ARMENIA 118

ARAMAZD MKRTCHYAN

THE ROLE OF THE ARMENIAN CHURCH IN THE FRAMEWORK
OF A POLITICAL CONCEPT OF HENCHAKYAN IN THE END OF
THE XIX CENTURY – BEGINNING OF THE XX CENTURY 141

NAREK HAKOBYAN

THE IMPORTANCE OF HOVHANNES ARSHARUNI'S
LETTERS AS SOURCES FOR STUDYING THE PROBLEM OF
REFORMS IN 1912 155

MYASNIK ESOYAN

THE COVERAGE OF THE ISSUE OF THE ARMENIAN GENOCIDE
IN THE ARABIC MONTHLY «AREV» 168

VLADIMIR GHAZAKHETSYAN

TURKISH-AZERBAIJANI POLITICS OF THE GENOCIDE
OF ARMENIANS (1918-1920) 182

QANAQARA HAYRAPETYAN

THE MAY REBELLION 1920 ACCORDING TO THE
INTERPRETATION OF ASHOT HOVHANNISYAN 211

KAREN KHACHATRYAN, HAMO SUKIASYAN

ARMENIAN-AZERBAIJANI TERRITORIAL-BORDER ISSUES
DURING THE TRANSCAUCASIAN FEDERATION (1922-1936) ... 222

KAREN KHACHATRYAN

THE MILITARY-DEFENCE INDUSTRY SOVIET ARMENIA
IN 1970-1991 267

LILIT ZAKARYAN

FROM THE HISTORY OF FORMATION OF THE TERRITORIAL
ADMINISTRATION AND SELF-GOVERNANCE SYSTEMS
IN THE REPUBLIC OF ARMENIA 304

HAMO SUKIASYAN, ARMENUHI MARANGOZYAN

THE PUBLISHING ACTIVITY OF THE INSTITUTE OF HISTORY
OF NAS RA IN 2005-2015 (A BRIEF REVIEW) 327

СОДЕРЖАНИЕ

ВАГЕ САРГСЯН

О ВОПРОСЕ ПОСЛЕДОВАТЕЛЬНОСТИ ЦАРЕЙ ВАНСКОГО ЦАРСТВА, ПРАВЯЩИХ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ VIII В. – ПЕРВОЙ ПОЛОВИНЕ VII В. Д.Н.Э. 3

ЭДУАРД ДАНИЕЛЯН, АЛИСА ДУМИКЯН

НЕКОТОРЫЕ АНГЛОЯЗЫЧНЫЕ ВОСТОКОВЕДЧЕСКИЕ ТРУДЫ, ФРАНЦУЗСКИЙ ПЕРЕВОД «АШХАРАЦУЙЦА», НЕОПУБЛИКОВАННЫЙ СБОРНИК “НАДПИСИ ГАНДЗАСАРА И ԽԱՅՈՇՊՏՈՒԿԱ” ПРОТИВ АЗЕРБАЙДЖАНСКИХ ФАЛЬСИФИКАЦИЙ 14

ТАТЕВ МКРТЧЯН

КУЛЬТУРА ЗАКЛИНАНИЙ
В ДРЕВНЕЙ И СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ 46

АРГИШТИ ВАРДАНЯН

О ВОСТОЧНОЙ ГРАНИЦЕ СОБСТВЕННО АГВАНКА 63

АСТХИК КАЗАРЯН

К ВОПРОСУ О МЕСТЕ РОЖДЕНИЯ МОВСЕСА ХОРЕНАЦИ ..71

ГЕНРИК ХАЧАТРЯН

УТВЕРЖДЕНИЕ РЕЖИМА САСАНИДСКОЙ ПЕРСИИ В ВОСТОЧНОЙ ЧАСТИ ВЕЛИКОЙ АРМЕНИИ, КАРТЛИ И СОБСТВЕННО АЛБАНИИ (V В.) 81

ВАРДАН АЛЕКСАНИЯН

О ДЕЯТЕЛЬНОСТИ СОЛОМОНА МАКЕНАЦИ (VIII ВЕК) 98

АРТАШЕС ШАХНАЗАРЯН

ОБ АЗЕРБАЙДЖАНСКОЙ ФАЛЬСИФИКАЦИИ
НАЦИОНАЛЬНОЙ ПРИНАДЛЕЖНОСТИ
НАУЧНО-КУЛЬТУРНЫХ ДЕЯТЕЛЕЙ ВОСТОЧНЫХ
КРАЕВ АРМЕНИИ 118

АРАМАЗД МКРТЧЯН

РОЛЬ АРМЯНСКОЙ ЦЕРКВИ В РАМКАХ ПОЛИТИЧЕСКОЙ
КОНЦЕПЦИИ ГНЧАКЯНОВ (КОНЕЦ XIX ВЕКА –
НАЧАЛО XX ВЕКА) 141

НАРЕК АКОБЯН

ИСТОЧНИКОВЕДЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ ПИСЕМ ОВАНЕСА
АРШАРУНИ ДЛЯ ИЗУЧЕНИЯ ВОПРОСА РЕФОРМ
1912 ГОДА 155

МЯСНИИК ЕСОЯН

ОСВЕЩЕНИЕ ВОПРОСА ГЕНОЦИДА АРМЯН НА СТРАНИЦАХ
АРАБСКОГО ИЗДАНИЯ ЕЖЕМЕСЯЧНИКА «АРЕВ» 168

ВЛАДИМИР КАЗАХЕЦЯН

ТУРЕЦКО-АЗЕРБАЙДЖАНСКАЯ ПОЛИТИКА ГЕНОЦИДА
АРМЯН (1918-1920 ГГ.) 182

КАНАКАРА АЙРАПЕТЯН

МАЙСКОЕ ВОССТАНИЕ 1920 Г. В ТРАКТОВКЕ АШЮТА
ОВАНИСЯНА 211

КАРЕН ХАЧАТРЯН, АМО СУКИАСЯН

АРМЯНО–АЗЕРБАЙДЖАНСКИЕ ТЕРРИТОРИАЛЬНО–
ПРИГРАНИЧНЫЕ ПРОБЛЕМЫ В ПЕРИОД ЗАКАВКАЗСКОЙ
ФЕДЕРАЦИИ (1922–1936 ГГ.) 222

КАРЕН ХАЧАТРЯН

ВОЕННО–ОБОРОННОЕ ПРОИЗВОДСТВО В СОВЕТСКОЙ
АРМЕНИИ В 1970–1991 ГГ. 267

ЛИЛИТ ЗАКАРЯН

ИЗ ИСТОРИИ ФОРМИРОВАНИЯ СИСТЕМЫ
ТЕРРИТОРИАЛЬНОГО ПРАВЛЕНИЯ И МЕСТНОГО
САМОУПРАВЛЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ 304

АМО СУКИАСЯН, АРМЕНУИ МАРАНГОЗЯН

ИЗДАТЕЛЬСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ИНСТИТУТА
ИСТОРИИ НАН РА В 2005–2015 ГГ. (КРАТКИЙ ОЧЕРК) 327

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» տարեգրքին հոդվածներ ներկայացնելու չափորոշիչները.

- Հեղինակի անունը, հայրանունը, ազգանունը, գիտական աստիճանը, կոչումը, աշխատանքի (ուսման) վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն:

- Հոդվածները ներկայացնել մինչև 15 էջ ծավալով, հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերով (10-15 տող): Տառատեսակը հայերենի դեպքում՝ Sylfaen, այլ լեզուների՝ Times New Roman, տեքստի տառաչափը՝ 12, տողատակում՝ 9, միջտողային հեռավորությունը՝ 1.5, լուսանցքները՝ վերևից՝ 2, ներքևից՝ 2.5, ձախից՝ 3, աջից՝ 1:

- Գիտական աստիճան չունեցող հեղինակները պարտադիր պետք է ներկայացնեն հոդվածի մասին երաշխավորական գրություն գիտական ղեկավարից կամ գիտական (գիտակրթական) հաստատության համապատասխան մասնագիտական ստորաբաժանման կողմից:

- Հոդվածները պարտադիր ուղարկվում են գրախոսության, գիտական նորույթ չպարունակող կամ նախկինում հրատարակված հոդվածները չեն տպագրվում:

«Հայոց պատմության հարցեր» տարեգրքի բոլոր համարները էլեկտրոնային տարբերակով տե՛ս

<http://serials.flib.sci.am/openreader/test/index.html>

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ)

THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA
(A COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES)

ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ
(СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ)

16

Համակարգչային շարվածքը և ձևավորումը՝ Ա. Մարանգոզյանի
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության՝ 01.11.2015 թ.
Տպարանակը՝ 200 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan
<http://www.academhistory.am>